

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ
Տ. ՎՐԹԱՆԵՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱԶՆՈՐԴԻ ԹԵՄԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Յամի Տեառն 2021

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՈՒՂԱՓԸՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՕՐՈՇՈՒՄ

ՅՕՐԻՆԵԱՅ

ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ ԼՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԸԻՈՐԳ
ՊԸՏՐԻԸՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Ի ԲԸՀԸՆԸՅԸՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՆԵՐՍԵՍԻ ՄՐԲԸԶԸՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ
ԸՄԵՆԸՅՆ ՀԱՅՈՑ


Ի ՊԸՏՐԻԸՐԳՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԸՂԷՄԻ
Տ. ՅՈՎՀԸՆՆՈՒ ԼՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՄԱՆԸԻ
ՎԵՀԸՓԸՆՈՒ ՊԸՏՐԻԸՐԳԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ՅԱԿՈԲԵՅ ԼՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ


Ի ՏՊԸՐԱՆԻ ԵՐԻՅ ԵՂԸՐՅ ԸՐԸՊԵԱՆ



**Եթե դուք կացջի՛ք ՚ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք, եւ ծանիջի՛ք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ. (Յօհ. ր. 31):*



**Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի, եւ զիրաւունս քո ես ո՛չ մոռացայ. (Սաղ. ճԺը. 30):*



ՆԱԽԱՀԱԽԻՂ

Մարդիկ 'ի բնէ անտի սովորեցան ձեռն օգնականութեան խնդրել յընկերէն՝ որ եւ իցէ կարելոր պիտանաւորութեան մը մէջ: Ինչպէս որ Ձեր բարենախանձ Ազգասիրական վառվրոտն Հոգին ալ՝ հակառակորդին անդունն բերանոյն դառնաշունչ փշուածքէն տագնապելով՝ յանբաւական տկարէս պատասպարելու դիտաւորութեամբ ճշմարտութիւնը ո՞ր կողմը ըլլալը հետազօտելու թեւակոխեցիք:

Արդ՝ թէպէտ անբաւական իսկ եմ այսպիսի ծանր գործի մը ձեռնամուխ ըլլալու, բայց այսու ամենայնիւ երկնաւոր վարդապետին ազդու հրամանէն ստիպուելով՝ պարտ անհրաժեշտ համարեցայ ձեր բանաւոր խնդրոյն պատասխանելու, ըստ այնմ թէ «Մի՛ երկնշիր՝ այլ խօսեաց՝ եւ մի՛ լռեր»». Գործ. Ժ. 9:

Բայց չէ թէ Ձեր սրտի խաղաղութեանը վրդովիչ մը թընշաղ ամպի նման՝ յանդուգն որոտմամբ գոռալու, այլ զոր ինչ արդարութիւնը կը պահանջէ՝ եւ կամ հարկը կըստիպէ խօսելու, համոզուած ըլլալով երանելի Առաքելոյն Պօղոսի խրատէն, ըստ այնմ թէ, «Ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձերմէ մի ելցէ, այլ որ ինչ բարին է, ի շինուած պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ, որ լսենն»». Եփէ. Գ. 29:

Քանզի ոմանք թէպէտ եւ ճշմարտութեան մատակարար ճանչցուած են, յանզգաստից բերաննուն թռուցած խօսքերովնին առաւել քակելու կը ծառայեն, քան թէ շինելու: Անոր համար Սրբազան Առաքեալը կը զգուշացունէ յասելն՝ թէ «Իւրաքանչիւր ոք զգո՛յճ լիցի՝ թէ որպէս շինիցէ»: Ա կորն. Գ. 10: Մանաւանդ կը պարծենայ եւս՝ ըսելով թէ «Ձի առաւել եւս պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ՝ զոր ետ մեզ տէր ՚ի շինել եւ ո՛չ ՚ի քակել զձեզ, ո՛չինչ ամաչեցից»: Բ կորն. Ժ. 8: Վասն զի ի՞նչ օգուտ կրնամ քաղել, երբ տմարդութեամբ եղբօրս սիրտը կը վիրաւորեմ, չէ՞ որ ընդդէմ աստուածային սիրոյ պայմանին կը մեղանչեմ, որովհետեւ «Սէր երկայնամիտ է, քաղցրանայ, սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարհաւածէ, ո՛չ հպարտանայ, ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ զիւր, ո՛չ գրգռի, ո՛չ խորհի զչար»: Ա կորն. ԺԳ. 4:

Արդ՝ ո՛վ բարենախանձ Աստուածասէր համակրօն Հարազատդ մեր, ուղիղ դատմանդ դիտակը ձեռքդ առած՝ աղէկ մը աչքէ անցո՛ւր Սրբազան Առաքելոյն վերոյիշեալ խօսքերը, եւ անկից ետքը դարձո՛ւր աչքերդ մէկ մ՛ալ անոր վրայ՝ որ զանազան իւրեանցածին երկպառակ խռովութիւններէն զրգոռած ըսելու կը յանդրգնի՝ թէ «Հայք այս օրուան օրս հերձուածող եւ հերետիկոս են»: սարսափելի՛ եւ զազի՛ր զրպարտութիւն:

Ո՞ր սիրտ կրնայ տոկալ ասանկ դառնութեան, եւ ո՞ր խիղճ կրնայ տանիլ այսպիսի ատելութեան. բայց ո՛վ Բարեպաշտ եւ Աստուածասէր Հարազատդ մեր՝ ուրախ եղիր որ թոյլ եւ ցամաք աղեղէ մը թուալ այն նետը, ու չկարողացաւ հասնիլ իւր նպատակին: Թոյլ եւ ցամաք կը համարիմ անանկ բերանը՝ Սրբազան Առաքելոյն սա խօսքերը յիշելով, ինչպէս որ կորնթացուց Եկեղեցւոյն կը գրէ. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց՝ եւ սէր ո՛չ ունիցիմ, եղէ ես իբրեւ պղինձ, որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ ղօղանջեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, եւ գի-

տիցեմ զխորհուրդս ամենայն՝ եւ զամենայն զիտուիին. եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ, եւ սէր ո՛չ ունիցիմ, ոչինչ եմ»։ Խ Կորն. ԺԳ. 13

Ես աստանօր կը ցաւիմ ըսելու, որ բնաւ չեմ ուզեր լսելու. վասն զի զանազան անընտել եւ խռովացոյց սրտամաշուք ձայներ շարունակ ականջներնուս թըմբուկները թնտացունելով՝ զմեզ առ հասարակ կը վշտացունեն. մինչեւ անգամ սրբագա Առաքելոյն խօսքը կրկնելու կը պարտաւորիմք. ըստ այնմ թէ՛ «Բազում անգամ վիշտս ՚ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ... վիշտս ՚ի սուտ եղբարց»։ Ը Կորն . ԺԳ. 26:

Որովհետեւ ամեն ատեն զանազան կրօնամոլ խռովութիւններ փոթորկող մառախլապատ ամպեր իրենցմէ միայն երեւան գալով, տակաւին նոյն իսկ իրենց մէջն անգամ շարունակող երկպառակ շփոթութիւնները՝ առ հասարակ դրացեաց դրանդիքը կը սասանեցընեն։ Իսկ մէք լուսաւորչաւանդ նիգերով՝ մեր բնակութեանց մուտքերը պնդապինդ ամրացուցած, ճշմարտութեան և իրաւանց բոցավառ ջահերը մեր տանը լուսանցքէն դուրս կը ցոլացունեմք, որ մեր հակառակորդին ձեռքի գէնքը միմիայն ջախջախած եղէգ մը ըլլալը յայտ յանդիման տեսնելով՝ խըրախոյս բառնան մերազնեայք ըսելու՝ թէ «Զի մի՛ այսուհետեւ իցեմք տղայք խռովեալք եւ տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան»։ Եփես. դ. 14: «Այլ ամենայն ինչ յանդիմանեալ ՚ի լուսոյ՝ յայտնի լինի, զի ամենայն ինչ՝ որ յայտնի է, լոյս է»։ Անդ. Է. 13:



ՊԼՏԵՍՈՒԼՆԵՒ ԽՆԴՐՈՅՆ
ԼՈՒՍԵԼԻՈՐԶԱԿՐՕՆ

ՀԱՅԸԶԳԻ ԵՒ ՀԱՒԵՏԱՐԻՄ
ՈՒՂՂԱՓԸՌՈՒ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ

ՄԵԾԸՀԱԵՍ ՅԵՐԳԵԼԻՈՅՆ

ԳԼՈՒԽ Ը

Ստիպեցայ՝ պարտաւորեալ գովելի եւ ճշմարտասէր իրաւախոն խնդիրէդ, ո՛ր Համագգի եւ Համակրօն հարազատ մեր եւ սիրելի ՚ի տէր, եւ փութացայ գրով յայտնել իմ մտացս խորհրդածութիւննը այն կրիւք գծեալ տետրակին վրայով, որուն վերնագիրն է, «Վենետիկու Մխիթարեան անանուն տետրակին դէմ»:

Յիրաւի Հոգեհարազատ Սիրելի իմ, բընաւ շէր կարծուէր, որ ասանկ մէկ քաջավարժ լեզուագիտութեան մէջ՝ եւ ներքին ու արտաքին մակացութեան մէջ ալ բազմահմուտ՝ եւ մանաւանդ Եւրոպացւոց կենցաղաւէտ քաղաքականութեանը եւ աշխարհաշէն մարդասիրութեանը քաջածանօթ եւ անօսրամիտ բարեհամբաւեալ Մխիթարեան Միաբանութեանը ուխտէն, այսպէս թանձր անխոհեմութեան եւ ատելութեան ամենադառն պտուղ կը քաղուի, վասն զի Քրիստոսական է այս վճիռը. «Զի ո՛չ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար. եւ ո՛չ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի. զի իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրմէ՛ ճանաչի. զի ո՛չ եթէ ՚ի փշոց քաղեն թուզ, եւ ո՛չ ՚ի մորենուոյ կթեն խաղող. մարդ բարի ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի. եւ մարդ չար ՚ի չարէն բղխէ զչար. քանզի ՚ի յաւելուածոյ սրտի խօսի բերան նորա».

Ղ.Պ-Կ. գ. 43:

Ես արդարեւ շատ կը ցաւիմ, ու ինծի հետ բազումք կան վշտակից, որ Մխիթարեան Պատուելիք այսչափ ժամանակէ ի վեր, եւ շատուշատ աշխատանքներով իրենց ստացած եւ ունեցած խոհեմութեան եւ ազգա-

սիրութեան համարումնին նշաւակեցին ու աղտոտեցին, եւ անխոհեմութեան եւ ատելութեան տգեղ անուններ վրանին բերին. որովհետեւ ամենքը որ այս յիշեալ անպիտան տետրակը ուշադրութեամբ կը կարդան, եւ անձին առանձին ասոր վրայով դատաստան կընեն, եւ այլ եւս պիտի ընեն ամենքը, որոց աչք ի գլուխ են. կըսեն ու պիտի ըսեն. ոհ այս ի՞նչպէս նորատեսիլ անխոհեմութիւն է. այլք թէ՛ ո՛վ շարաշար եւ ոգեկորոյս ատելութիւն Մխիթարեանց. զի ոչ որպէս երբեմն դիմակօք (խարդախ սիրով) ծածկելով իրենց ատելութեան տգեղ տեսութիւնը. այլ բացայայտ իբրեւ դէմ յանդիման կացեալ, այժմ այս տետրակովնին կանարգեն բոլոր մեր Հայոց Ուղղափառ եւ բարեպաշտ Ազգը՝ իրեն լուսաւորչակրօն եւ ճշմարիտ ուղղափառութեամբը՝ այս եղանակ գրելով, Փարիզու մէջ հաստատեալ Մուրատեան եւ Ռաֆայէլեան դպրոցներուն մէջ առած Հայոց տղայոց համար. «որ (Մխիթարեանք) Հայոց տղայքը այն դաշամբ առնելով՝ պզտիկ հասակէն ուղղափառ վարդապետութեամբ կը կրթեն, եւ ուղղափառ կը մեծցընեն, որ աս սերմունքը իրենց մեծ օգուտ կրնայ ըլլալ, ետքը ճշմարտութեան մէջ մնալու

կամ զայն ճանչնալու եւ դիւրաւ ընդունելու: Բայց չի մնան պիտի եղեր ոմանք սորվածնուն մէջ, սուրբ աւետարանի սերմանացանին հունտերն ալ՝ որը ճամբան ինկալ՝ որը ապառաժ քարին վրայ»։ Տէգ. Եր. 37:

Ո՛վ բան անհեթեթ եւ ատելութեան զարթուցիչ, ո՛վ խարդախութեան յայտարար գրիչ. զկնի այսորիկ ե՛կ տե՛ս, այլ իմն բան եւ խօսք ընդ դէմ ազգասիրութեան. մանաւանդ թէ ընդ դէմ հոգեւոր ազնուականութեան եւ կատարելութեան, բայց մի՛ վշտանար եւ մի՛ վհատիր ո՛վ համազգի եւ համակրօն սիրելի իմ. այլ միայն ողբա՛ ՚ի վերայ Մխիթարեանց, եւ համարձակ ասա՛ նոցա, ո՛վ անըզգոյշ եւ անխոհեմ գրութիւն. կրկնելով այս քանի մի տող խրատը մեր սուրբ վարդապետին Ներսէսի լամբրոնացւոյն. «Ո՛վ մտացի դու, եւ ո՛ւր ուսար վիրօք զվէրս բժշկել: Պօղոս բամբասելոյն ընդ դէմ օրհնեաց. ըզհալածիլն յանձն ա՛ռ, ՚ի հայհոյելն աղաչեաց, եւ այնպիսի մաղթանօք զտիեզերս աշակերտեաց. զքեզ հետեւող նորին՝ ո՞ ուսոյց չարի չար հատուցանել: Ո՛չ գիտես թէ զհուրն՝ ջուր շիջուցանէ, եւ ո՛չ հուրն. զըմբոստանալն՝ խոնարհութիւնն նուաճէ, եւ ո՛չ ընդդիմահարութիւնն. չարն բարեաւն յաղ-

թի, եւ ո՛չ շարեան: Ապա թէ դու առ այս հեղգաս, հեզ լինել տկարանաս, սիրել վերջանաս, զիա՛րդ ՚ի հակառակամարտէն զնոյն պահանջես»։ Ափ. 37:

Եւ ապա եկո՛ր մտի՛կ ըրե այս մեր ազգին դէմ սիրտ կսկծցընելու խօսքը, որ ըսեր են Մխիթարեան Պատուելիք. որով կարծեն յաղթել իրենց թշնամիները: «Գոհութիւն աստուծոյ (Մխիթարեանք) ինչ հերետիկոս ըլլալին հելէ մէյմը հասկըցանք, իմացանք ալ միանգամայն՝ որ ինչ հերետիկոս ալ են նէ, հելէ հայ շեն եղեր»։ Տէփ. Էր, 54:

Ո՞վ անխոհեմ դրութիւն, եւ մեղադրելի դատումն շարաշար. այս ո՛րչափ մեծ սխալիլ է, չեմք բնաւ լսած որ մէկ մարդ մը իրեն ոխերիմ թշնամիին բռնութեանը ու հալածանքին սուրէն ազատելու հնարքը եւ փրկուելու ճանապարհը գտնալու, եւ զանի յաղթելու մէջ տեղը երբ կը տարակուսի, յայնժամ յանկարծ անզուսպ կրիւք մը կը յարձակուի իրեն համազգի սիրելեաց եւ բարեկամաց վրայ, եւ երկսայրի սրով կը խոցոտէ եւ կը վիրաւորէ ամենքը, ու կը դառնայ անոնցմէ ներումն կըխնդրէ ասելով. «Հիմակուց ներում կըխնդրեմ, եւ անով մտերիմ բարեկամութիւննիս շենք արեր»։

Եր, 6: Ես ալ հիմա համարձակ կըսեմ՝ դու ալ եւս ներում ա՛րա բա՛րեկամ: Այս չէ՞ մի արդեօք խորամանկութեան ձեւ, քաղցրութեամբ խոցել եւ համբուրիւ մատնել, եւայլն եւայլն: Բայց մի՛ երկմտիք. գիտե՞ք՝ երբոր մարդոյս միտքը խռովայոյզ խորհուրդներով կամբոխի՝ եւ ատելութեան կիրքերով սիրտը կայլալի՛ հարկաւ շատ շփոթ ընտրութիւններ ու դատումներ կընէ, չորոշէր բարին ՚ի չարէն՝ վատն յազնուականէն՝ եւ անարգն ի պատուականէն, այլ խառն ի խուռըն դատաստան կընէ, ճշմարտութիւնը սրտութեան հետ՝ բարին չարին հետ՝ արդարը մեղաւորին հետ՝ լոյսը խաւար, խաւարը լոյս վճռելով: Ընդ այս ի՞նչ պէտք է զարմանալ, մարդ չէ՞ մի, հարկաւ կը սխալի կամ ի կրից բռնութենէն՝ եւ կամ ի չարագրգիռ թելադրութենէն՝ եւ կամ թէ իրեն շփոթ ըմբռնման մտաց դատումէն:

Ասոր համար է որ սուրբ գիրք եւ Աստուածաբանք վճռած են որ մի միայն անսըխալ միշտ՝ եւ ճշմարտութիւն յաւիտենական Աստուած է: «Որում չի՞ք փոփոխութիւն եւ շրջելոյ ստուեր», Յակ. ա. 17: Իսկ ամենայն մարդ է սխալական, թո՛ղ չի սրտմըտին Մխիթարեան Պատուելիք, ըստ որում են

մարդիկ, թո՛ղ նային ի Նախահայրն մեր, որ թէպէտ էր ի դրախտին ազինայ զուարճացեալ եւ փառաւորեալ աստուածային այցելութեամբ, բայց սխալեցաւ սկզբնաշարին շարագոգիր խաբէական թելադրութեամբը, եւ զրկեցաւ այն աստուածաշնորհ փառքերէն, եւ անկաւ անհնազանդութեան եւ պատուիրանազանցութեան կորստական մեղաց մէջ սերնդովն հանդերձ:

Ուրեմն մարդն՝ ըստ որում մարդ միշտ է սխալական, մէկը չ'կարէր ըսել ու յանդգնիլ յանձնապաստանութեամբ, թէ ես չեմ սխալիր, կամ այս ոք մարդ անսխալ է, թէ եւ առաքելութեան պաշտօնի ալ մէջ գտնւած ըլլայ, ասոր համար է որ այս խրատը կուտայ սրբազան Պօղոս Առաքեալն. «Որ համարիցի հաստատուն կալ՝ զգո՛յ՛ջ լիցի, գուցէ անկանիցի»․ ա Վորն. Ժ. 12:

Ասոր փորձառութիւնը ունեցաւ սրբազան Առաքեալն Պետրոս, որ յանձնապաստան ըլլալով համարձակեցաւ ըսելու Յիսուսի տեառն մերոյ. «Թէպէտ եւ ամենեքին գայթակղեսցին ՚ի քէն, սակայն ես ո՛չ գայթակղեցայ»:

Բայց ո՛ր մնաց այս համարձակախօսութիւնը յանձնապաստանութեան, Կայիափա

քահանայապետին մէկ տկար դռնապանէն վախնալով, ո՛չ եթէ միայն իրեն եղբայրները, այլ եւ սոսկալի երդմամբ եւ նզովիւք ուրացաւ Յիսուսի Քրիստոսի աշակերտ ըլլալը. Մատ. Իդ. 27: ՅօԼ. Ժը. 25:

Հիմա շատ մեծ զարմանք է արդե՛օք, որ Մխիթարեան Պատուելիք խաբուելով կամ լաւ եւս է ասել խփելով խղճմտանքներնուն տեսութիւնը՝ կուրանան ըսելնին, որ շատ անգամ ալ շատերնիս լսեր եմք անոնցմէ՝ թէ «Հայ՝ կաթուղիկ՝ ամենը մէկ է, խտրութիւն չի կայ»: Ահա՛ լսէ՛ ու մի՛ սքանչանար, լսէ՛ սոսկալի երդումնին, որ այս օրվան օրս ամեն Մխիթարեանք երդում կրնեն եղեր, թէ «Հայք այսօրվան օրս հերձուածող եւ հերետիկոս են», Եր. 98:

Այս տեղս ի՞նչ ըսեմք, հակասական հակադրութիւն չէ՞ մի, այդ վերի խօսքը՝ վարի խօսքին հետ բաղդատելու ըլլամք, հարկաւ մեկըզմեկու հետ հակադրեալ պիտի գրտնամք, տեսէք բերնով ի՞նչ կըսէին. «Հայ՝ կաթուղիկ՝ ամենը մէկ է, խտրութիւն չի կայ»: Իսկ հիմակ ալ գրիչնին կըսէ, եւ երդում ալ կրնեն, որ «Հայք այսօրվան օրս հերձուածող եւ հերետիկոս են»:

Հիմակ այս երկու հակասական խօսքե-

րուն որի՞ն ականջ դնենք, ու մտիկ ընենք, այս մեր ականջով լսածնո՞ւս, եթէ տեսրակին մէջ գրով տեսածնուս. կարծեմ՝ որ վրկայներ շատ պիտի գտնանք, մանաւանդ իրաւաբանները պիտի վկայեն, որ բերնէ ելած խօսքը առաւել վաւերական է եւ ընդունելի, որովհետեւ մարդոյս բերանը սրտին ու մտքին թարգմանն է. «ի յաւելուածոյ սրտի խօսի բերան»:

Բայց գրիչն շատ անգամ ազատօրէն չըկարէր գրել աշառութիւն եւ ականածութիւն ընելով, եւ կամ երկիւղ մը ունենալով բռնաւորէ մը: Անանկ է նէ եկո՞ր անշուշտ ըսենք որ Մխիթարեան Պատուելիք սրբտովնին ու մտքովնին առաջի մեր ականջալուր խօսքերնուն վրայ պիտի ըլլան, որովհետեւ մենք այն խօսքը շատ հեղ իրենցմէ լսած եմք, եւ մէկըզմէկու ալ ըսած եմք, թէ լսեցէ՛ք ի՞նչպէս ճշմարիտը կը խօսին:

Մանաւանդ ես՝ որ յամի Փրկչին 1820 Երանաշնորհ Պօղոս Պատրիարքի ժամանակը Սամաթիոյ սուրբ Գէորգ Եկեղեցին քարոզիչ էի. Հոգեգալստեան կիրակի օրը հոն գտնուեցան Հայր Թովմայն՝ Հայր Մեսրոպն՝ եւ Հայր Սերովբէն, մէկ քանի ալ ուսումնական անձինք կային քովս, որոնցմէ տիրացու Անդրանիկ Վարժապետը մէկ քանի խօսքէն

վերջը՝ դարձաւ ըսաւ, Վե՛րապատուելիք՝ ալ այսուհետեւ Հոգւոյն սրբոյ շնորհին քակեցաւ միջնորմն խտրութեան Հայութեան եւ կաթողիկոսութեան: Անոնց մէջէն դարձաւ Հայր Սերովբէն ըսաւ, Այդ ի՞նչ ըսել է սի՛րելի, ընդ դէմ քրիստոնէական ճշմարտութեան է այդպիսի խօսքերը. ուրանա՞նք մի քրիստոնէական ճշմարտութիւնը, եւ չե՞նք մի լսեր Պօղոս Առաքեալին քարոզութիւնը՝ որ կըսէ. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք, չի՛ք խտիր». Գաղ. գ. 27: Յանուն ամենասուրբ Երրորդութեան մկրտեալ քրիստոնեայ եմք, ի՞նչ ըսել է Հայ, ի՞նչ ըսել է կաթողիկ, ամենը մէկ է, բնաւ չի կայ խտրութիւն. բայց սէրերնիս պաղած էր, ահա՛ աղբիւրն սիրոյ Սուրբ Հոգին Աստուած նորանոր արծարծեց մեր մէջը, եւ յոյս ունիմք որ միշտ այս աստուածային սիրոյ բորբոքը անշիջանելի պիտի պահեմք, եւայլն եւայլն:

Այս բանս իմ առանձնական օրագրիս մէջ դրած ունենալով, հիմակ այս տեղս հարկը պահանջեց որ գրեմ, եւ կարծեմ որ յիշեալ Հ, Ս, Ճ, Պատուելին ինքն ալ եթէ կենդանի է՝ եւ Հոգւոյն սրբոյ ճշմարտութիւնը կենդանի պահեր է նէ սրտին մէջ՝ պէտք է

որ վկայէ: Ուրեմն Մխիթարեանց սրտերնուն ու միտքերնուն մէջ եղածը խտրութիւն չի կայ է. բայց գրիչնին որ կըսէ, երդում կընենք, որ Հայք այսօրուան օրս հերձուածող եւ հերետիկոս են, ամենուն յայտնի կերեւնայ, որ իրենց միաբանութիւննին պաշտպանուի, անձնական անդորրութիւննին չը վնասուի, եւ իրենց վանական վայելչութիւննին անկորուստ պահուի. ուրեմն երկիւղիւ եւ ահամայ է:

Անանկ է նէ աղօթք ընենք՝ որ Մխիթարեանք այդպիսի մթացուցիչ խղճի մտաց կիրքերէն եւ հոգեկորոյս ատելութենէն հեռի մնան, որով մեր Հայոց սուրբ Եկեղեցւոյ ճշմարիտ ուղղափառութիւնը անբիծ աչօք տեսնալու, ազատ լեզուաւ քարոզելու, եւ ճշգրիտ գրչաւ մատենագրելու յաջողութիւնը գտնան:

Քանզի այն Երանելի Պետրոս առաքեալը՝ երբ այն ճշմարտատեաց եւ խռովայոյզ Կայիափայի Քահանայապետին սոսկալի գաւթէն դուրս ելաւ, այն ժամանակը կարողացաւ յայտնելու Յիսուսի, որ այն երդումը նզովը եւ ուրացութիւնը սրտովն չէր, այլ ահամայ երկիւղէն. վասն որոյ արտասուքն իրեն զղջումն յայտնեց, եւ Յիսուսի ներողութեանը

արժանացաւ: Ո՛վ աստուածահաճոյ արթնութիւն խղճի մտաց, որով կըստանայ հոգին՝ Աստուծոյ անյիշաչար ներողութիւնը: Իսկ ո՛վ շարաչար եւ կամակոր յամառութիւն դիւրակործան կրից, որով անորոշ կը մնայ շարը՝ բարիէն, ճշմարիտը՝ սուտէն, եւ հոգւոյն փրկութիւնը միշտ վտանգի մէջ է. ինչպէս որ անմիտ է այն նաւապետը, որ իրեն նաւը թող կուտայ սաստիկ փրշած հովերուն դէմ, եւ ծովուն կատղած ալիքներուն մէջ, մի՛ թէ այն լեռնացեալ ալիքներուն բռնութիւնը՝ այն առանց ղեկավարի մնացեալ նաւը կը թողու՞ մի իրեն նաւահանգիստը անվտանգ ժամանելու: Ասոր համար է որ, հոգեւոր եւ բարոյական բանաստեղծը կերգէ. «Յարձակումն բնութեան է առաջնորդ կոյր, կոյր է նմանապէս եւ կամքն. վա՛յ եթէ կոյր կուրի առաջնորդեսցէ»:



ԳՒՈՒԽ Բ

Շատ մեծ խրատ է այն Պատուելիին գրածը, որ իմաստութեամբ լցված միտքերուն կուտայ, որպէս զի շրլլայ թէ՛ իմաստունները առանց կշռութեան բանի եւ առանց խոհե-

մութեան անզուսպ կրիւք խօսիլ եւ կամ գրել ունենան, եւ յետոյ ամօթով ըլլան: «Լռելու տեղն որ գիտե նէ, խօսելունն ալ գիռէ. զի գիտէ որ խօսքը մարդուս ստակին պէս է, իր կամ ուրիշին մէկ շահուն համար գործածելու է, անօգուտ տեղը ցանելը՝ խենդաբար մսխել կըլլայ նէ, պէտք եղած տեղը չ'գործածելն ալ գէշ եւ ամօթալի ագահութիւն եւ տմարդութիւն կըլլայ: Բայց խօսի ալ նէ, իրեն փառք չ'փրնտըռեր նոր կարծիքի մը տէր ըլլալով, որ ուրիշներէն դուրս նոր բան մը գրուցած ըլլայ եւ անոնց հակառակի: Իրաւցընէ տարբեր կարծեաց մ'ալ տէր ըլլայ նէ, չ'ջանար կարծիքի բռնաւորութեամբ մը ուրիշը բռնի իր խելքին քաշելու, մտածելով որ չըլլայ թէ ինքն ալ սխալած ըլլայ: Կարծիքի համար մէկը չարհամարհէր ու չ'դատապարտէր. զի թէ ուրիշը դատապարտութեան արժանի համարի նէ՝ իր կարծիքէն չըլլալուն համար, ինքն ալ նոյն դատապարտութեան տակ կիյնայ՝ դիմացինին կարծիքէն չըլլալուն համար: Ուրիշին խօսքին մէջ չի մտներ, բայց եթէ հարցուի, եւ ինչուկ որ աղէկ մը չ'հասկընայ բանը, պատասխան չի տար, կարծիքը չ'զրուցէր, եւ հակառակ կողմին չէ թէ միայն ար-

համարհութիւն չի ցցունէր, այլեւ շոյելով մը կանցնի: Չ'գիտցած բանն որ ըլլայ, շամընար խոստովանիլ իր տգիտութիւնը այն կտորին մէջ, զի մէկ մարդ ամեն բան չ'կրնար գիտնալ, եւ ո՛չ ալ դրած է միտքը՝ թէ ինք ամէն բան գիտէ: Կը զգուշանայ ո՛չ միայն սնոտի վիճաբանութենէ, հապա նաեւ ո՛չ հարկաւորէն ալ, գիտնալով՝ թէ որչափ դժուարին բան է մարդ զմարդ համոզելը ապացուցական փաստերով, մանաւանդ թէ որ դիմացինը անձնահաճութեամբ կամ տրգէտ երեւնալուն վախէն կամակորեալ յամառի նէ: Խոհեմութեան կշիռքով կշռըված կը հանէ բերնէն ամեն մէկ խօսքը, որ յետոյ չ'զղջայ՝ ուրիշին կամ իրեն վնասելուն եւ ամօթ ըլլալուն համար, որ երկուքն ալ ետքէն կարկտան չը վերցընող բաներ են: Որչափ որ ճշմարտութեան մեծարանքը եւ վայելչութեան պարտքը կը ներեն նէ, ամենուն բնաւորութեանը պատշաճ կերպով կը յարմարէ խօսքը՝ անոյշ ձեւով եւ քաղաքավար զրուցվածքով, գիտնալով որ աս է իրեն ալ իր իմաստութեանն ալ յարգ բերողը: Չուզէր եւ չ'ջանար եղածէն եվել իմաստուն եւ զարմանալի երեւնալ՝ դիմացինին չափէն վեր մեծ մեծ բաներ խօսելով, որ շատ անգամ

ծաղրը ըլլալու պատճառ կըլլայ»։ Եւ այլն։
 Հ. Արաբ. բ։ Բազմավէպ. 1847. Էջ 117:

Բայց ի՞նչ օգուտ է՝ ասել եւ ո՛չ առնել, զայլս խրատել եւ ինքնին անփորձ մնալ։ Այս վերոյգրեալ բանասիրականը յիրաւի ամեն աշխարհական ուսումնական ազնուականներու բարոյական գրութեան եւ խօսակցութեան մէջ, գործածելու ընդունելի եւ բարի միջոցներ է, բայց առաւել հոգեւորաց արժան է՝ ասանկ խոհեմութեան քաղցր ու բարի վայելչութիւն բանեցնեն իրենց գրաւոր ու ատենաբանական խօսքերուն մէջ. չէ թէ անարգ եւ անուանարկ զազիր և ապարդիւն խօսքերով լեցունեն տետրակներնին ու խօսակցութիւննին, ասով ո՛չ դատը կը վաստկուի, եւ ո՛չ ալ՝ սիրտերու մէջ եղած խռովութեան եւ ատելութեան վէրքերը կը բժշկուի. բայց զի՞նչ պտուղ այսպիսի անկարգութեան եւ անխոհեմ եւ անպատշաճ բանից հոգեւորական դասուց, եւ չար օրինակ նենգասիրութեան կրօնաւորաց։

Արդարեւ շարաշար գայթակղութիւն է ժողովրդոց, եւ պակասութիւն հաւատոյ, որոյ վախճանն է գահավիժիլ՝ ի յաւիտենական կորուստն. ըստ այնմ, «Դուք էք աղ

երկրի, ապա թէ աղն անհամի՝ ի՞նչ յաղիցի, ո՛չ իմիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ եւ կոխան լինել ՚ի մարդկանէ»։ Մատթ. ե. 13:

Իրաւունք չունի՞ն ժողովուրդները ըսելու, այս ի՞նչ հոգեւորականութիւն է, այս ի՞նչ կարգաւորութիւն է, մենք որ ասանկ եղբայրատեցութիւն ընեմք, հայհոյեմք մէկըզմէկու՝ անուանարկ խօսքերով մեկզմէկու անուն կոտրեմք, խռովութիւն ատելութիւն ունենամք՝ մեզի արձակում չեն տար, ու ծանր ծանր ապաշխարանք կը դնեն, եւ փրկարար Սուրբ Հաղորդութեան մերձենալու հրաման չեն տար. ասոնք ի՞նչպէս այն սոսկալի խորհուրդին կը մերձենան՝ կենդանարար պատարագ կը մատուցանեն: Ջերմեռանդ ժողովուրդը կըսէ, որ երբ մեզի արձակում տալու կըլլան Սուրբ Հաղորդութեան արժանի ըլլալու, կը հրամայեն Պօղոս Առաքելոյն խրատէն առնելով շատ մը խղճմտանաց զարթուցիչ խօսքեր. «Փորձեսցէ մարդ զանձըն իւր, եւ ապա ՚ի հացէ անտի կերիցէ, եւ ՚ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ո՛չ խտրէ զմարմին տեառն»։ ա Կորն. ժա. 28:

Մի՛ թէ այս ամեն պարտաւորութիւնը միայն ժողովրդո՞ց վրայ է կըսեն, կարգաւորները ի՞նչու վրանին չեն առներ այս հրամանը Յիսուսի փրկչին մերոյ, եւ կամ ինչո՞ւ մտիկ չեն ըներ. «Եթէ մատուցանիցես ըզպատարագ քո՝ ի վերայ սեղանոյ, եւ անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն. թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն, ե՛րթ նախ հաշտեա՛ց ընդ եղբօր քում, եւ ապա եկեալ մատուցի՛ր զպատարագն քո». Մատթ. Ե. 23:

Ի՞նչ ըսենք՝ ինչո՞ւ համար չեն լսեր այս անժխտելի հրամանը Յիսուսի, արդե՛օք զանցառութեան բամպակիվ գոցե՞ր են ականջնին. եւ կամ թէ թերեհաւատութեան կապարիւ լեցուցե՞ր են լսողութիւննին, թո՛ղ այս տեղս Սուրբն Օգոստինոս խօսի ու վըճռէ սուրբ Աւետարանին վերոյիշեալ բնաբանին վրայով՝ յասելն. «Առանց սրբութեան խղճի մտաց պատարագելն՝ առաջի խորհրդական սրբոյ սեղանոյն ո՛չ է այնքան սրբագործութիւն՝ այլ մանաւանդ սրբապղծութիւն»:

Ո՞ր սուրբ հոգեւոր ժողովը, ո՞ր եկեղեցւոյ քահանայապետը, ո՞ր աստուածաբաններու վճիռը հրաման կուտայ կամ թոյլ կու-

տայ, խռովութիւն ունեցող եւ ատելութեան հոգի ունեցող քահանայի մը պատարագ մատուցանելու, մի՛ թէ մարդասպանը Սրբարար Քրիստոսական խորհուրդներուն մերձենալու հրաման ունի՞, չէ՞ որ իրեն հաւատակից եւ կրօնակից եղբայրը ատեցողը մարդասպան է՝ եւ Կայենի նման է, ասանկ վճիռ կընէ Սըրբազան եւ Աստուածաբան Աւետարանիչը Յօհաննէս ասելով. «Ամենայն որ ատեայ զեղբայր իւր, մարդասպան է, եւ գիտէ՞ք՝ զի ամենայն մարդասպան ո՛չ ունի կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ», ա Կաթող. գ. 15:

Ասանկ ատելութիւն սիրողներուն՝ եւ եղբայրսիրութեան օրէնքը չ'պահողներուն համար՝ կըսէ Յակոբ Առաքելոյն եղբայրը Յուդա առաքեալը. Վա՛յ է նոցա, զի ըստ ճանապարհին Կայենի գնացին», ա. 11:

Ալ ի՞նչ կը փնտռենք ասանկ ոխակալութիւնով եւ ատելութիւնով պարաւանդեալ կաշկանդեալ սիրտերէն, ո՞ր կարգի եւ ո՞ր ուխտի կարգաւորներէն եւ քահանայներէն կուզեն թող ըլլան, ատելութեան եւ ոխակալութեան ոգի ունի՞ն մի, միշտ գայթակղութիւն են ժողովրդոց եւ եկեղեցւոյն տըրտմութիւն:

Ալ ասանկներէն չ'յուսանք պիտի ուղիղ շիտակ որոշումներ, վասն զի ատելութեան կրիւք՝ ամբօխեալ մտօք՝ եւ ռխակալութեամբ զգածեալ սրտիւք չեն կարեր ուղիղ որոշել արդարը մեղաւորէն, չարը բարիէն, լոյսը խաւարէն, ուղղափառը չարափառէն, ճշմարիտ եւ ուղղակիօն հաւատացեալը հերձուածողէն եւ հերետիկոսէն, չեն ունենար ազնիւ՝ համեստ՝ եւ սուրբ խորհուրդներ մըտաց, եւ չեն կարող խոհեմութեան խօսքերով խրատաբան հանդիսանալ, կերեւի որ չունին երանական կենաց հաղորդ ըլլալու յոյս: Վասն զի ռխակալութիւնով չունին արդարութեան կշիռն ձեռքերնին, եւ ատելութեան կրից խաւարին մէջ մնալով, ճշմարտութեան լոյսը հեռացուցեր են իրենցմէ, ասոր համար իրաւամբք կըսէ Կասիանոս, «Որքան ռխն մնայ 'ի սիրտն, ո՛չ կարեմք ունել զենթադատութիւն ուղիղ ընտրութեան, եւ ո՛չ զնկատումն համեստ խոկման, եւ ո՛չ զխոհեմ խրատ, ո՛չ եմք մասնակից կենաց, ո՛չ պահող արդարութեան, եւ ո՛չ ընդունակ հոգեւոր եւ ճշմարիտ լուսոյն»:

Աւետարանական է այս ճշմարտութիւնը, «Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեալ զլոյս, եւ ո՛չ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմա-

նեսցին գործք նորա: Իսկ որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ աստուծով գործեցան».
ՅօՒ. գ. 20:

Հիմակ այս տեղս իմ մտացս մէկ մեծ զարմանք եւ տարակուսանք եկաւ ո՛ր բարեմիտ ընթերցող եւ խուսաւորչակրօն ուղղափառ Սիրելի իմ, պիտի հարցնեմ ճշմարտասէր ուսումնական սիրելեացս հոգեւոր որդւոցս, մանաւանդ իրաւասէր Աստուածաբան եղբարց իմոց, եթէ այս ի՞նչ բազմաժամանակեայ խոռովութիւն է եւ անդադարելի ատելութիւն այս երկուց կողմանց, այսինքն Գոլէշցւոց միաբանութեան եւ Մխիթարեանց, կը խնդրեմ որ այս տարակուսութիւնս լուծանի: Չէ՞ որ այս երկու կողմն ալ կը քարոզեն միշտ՝ թէ կրօնքնիս մէկ է՝ Հոռվմէական եկեղեցւոյն հաւատքը ունիմք, վարդապետութիւննիս մէկ է, կարդացած Աստուածաբանութիւննիս կընդունի Հոռվմէական եկեղեցին, եւ հոգեւոր գլուխնիս Հրոռվմայու Եկեղեցւոյն Քահանայապետն է, եւայլն եւայլն:

Ապա այս ի՞նչ անմիաբանութիւն է եւ աշխարհալուր խոռովութիւն, Բաբելոնեան հնոցի բորբոքեալ հրոյն պէս չըսեմ, որովհե-

տեւ այն առ ժամանակեայ էր, եւ շափով ելանէր բոցն 'ի քառասուն և յինն կանգուն. Գան. գ. 47: Իսկ ասոնց ատելութեան եւ խռովութեան բոցը անշիջանելի կերեւի եւ շափաւորեալ չէ, այլ այնչափ կը բարձրանայ, որ Կայենի ատելութեան գործին պէս՝ մինչև յերկինս պիտի հասնի:

Պիտի համարձակիմ ըսելու՝ որ Սիկիլիա կղզիին մէջ Ետնա լեռանը անուանի հրաբուխին պէս՝ անշիջանելի եւ բարձրաստիճան է Ասոնց սրտին մէջ ունեցած ատելութեան եւ խռովութեան սարսափելի կրակը եւ զարհուրելի բոցը, եւ ասոնցմէ տե՛ս ի՞նչ ահարկու երկրաշարժութիւններ կը պատճառի ժողովրդոց մէջ՝ ամենքը խռովութեամբ վեր ուվար եղած՝ հայհոյանք անյիշելի՝ եւ սուկալի կագ կռիւ անխափան:

Այս ի՞նչ միաբանութիւն է կրօնից, եւ այս ի՞նչ հերձուածողութիւն շարաշար կրից: «Եւ էին հերձուածք 'ի մէջ նոցա», Յօճ. թ. 16: Ես հիմակ պիտի սորվիմ ասանկ անմիաբանութեան պատճառները, ուղղադատ եւ իրաւասէր միտքերէն, եւ վկայութեամբ սուրբ գրոց:

Ա. Անմիաբանութեան եւ ատելութեան

մայր է անձնասիրութիւնը, ուր տեղ որ կը թագաւորէ այս շար կիրքը՝ այն տեղ հարկաւ կը պատճառի ատելութիւն, ռիսակալութիւն եւ շարակամութիւն: Ասոր համար կը վկայէ, «Առ միութիւն երկուստէք՝ օգնէ՛ իսպառ արհամարհութիւն իրաց ժամանակաւորաց, յորս մեծապէս սխալէ անձնասիրութիւնն յետին թշնամի միութեան»։ Իգն. ը. 1: Զէ՞ որ 'ի սկզբանէ աշխարհի ամեն ատելութիւն եւ կռիւ այս երկու բառէն ծնաւ, իմ և քո. փառքերու եւ պատիւներու կուգայ նէ, կըսէ անձնասէրը այս իմ է, քո չէ՛. անարգութեան եւ արհամարհութեան կուգայ նէ՝ կըսէ, այս քո է, իմ չէ՛:

Այս խռովայոյզ և շարագրգիռ մոլութիւնը, այսինքն իմ են քո են, այնքան զօրացած էր Յունաստանի մէջ, որ միշտ եղբայր եղբօր հետ եւ բարեկամ բարեկամի հետ ունէին ռիսերիմ թշնամութիւն, անհաշտելի ատելութիւն եւ մահառիթ կրօններ: Ասոր համար Պիլթագորաս փիլիսոփայն նոր օրէնք մը դրաւ Յունաստանի մէջ. բնաւ վերնա՛ ըսաւ այս իմ՝ քո՛ խօսքը, թէ՛ պատիւ եւ թէ՛ անարգութիւն, թէ՛ յաջողութիւն բաղդի եւ թէ՛ անյաջողութիւն ամենուն վրայ պիտի համարվի, ամեն-

քը զուգապատիւ ճանաչուին: Պիւթագորասին այս քաղաքական օրէնքովը երբ ըսկսաւ Յունաստան կառավարիլ՝ մէջերնին հաստատեցաւ սէրը եւ խաղաղութիւնը, կըլլար որ մէկին կարգը կամ բազդը կը բերէր իշխանութեան մը վրայ ելլել՝ հասարակաց կը համարուէր այն, եւ հասարակութիւնը անոր փառքը եւ մեծութեան պատիւը իրենց կը համարէին, այնուհետեւ եւ ո՛չ թշնամութեան եւ ո՛չ ատելութեան ձայն և խօսք կը լսուէր մէջերնին, այլ միշտ հաստատ բարեկամութիւն եւ երջանիկ եղբայրսիրութիւն կը թագաւորէր սրտերնուն մէջը: Ասոր համար Պօղոս սրբազան Առաքեալը խրատ կուտայ ամենուս, օրինակ տալով Յիսուս փրկիչնիս մեզի, «Այլ իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ՚ի բարիս վասն շինութեան, քանզի եւ Քրիստոս ո՛չ եթէ՝ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս եւ գրեալ է, նախատինք նախատչած քոց անկան ՚ի վերայ իմ»։ Հո՞ով. Ժե. 2:

Բ. Պատճառ ատելութեան եւ խռովութեան ՚ի մէջ հոգեւորական միաբանութեան, պակասութիւն աստուածապարգեւ սիրոյն է. «Զի ուր ո՛չ գոյ սէր աստուածային՝ անդ ո՛չ գոյ միաբանութիւն հոգեւոր

եղբայրութեան», կըսէ Ոսկեբերան:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսը այս սիրոյ սուրբ շաղկապով սրբազան Առաքելոց եղբայրսիրութիւնը միաւորեց, անոր համար այս պատուէրը տուաւ հրամայելով. «Հաստատուն կացէ՛ք ՚ի սէր իմ». ՅօՀ. ժե. 9: Իսկ իրեն ճշմարտութենէն հեռի կեցողներուն, խռովութիւն ատելութիւն սիրողներուն ըսաւ. «Գիտեմ զձեզ՝ զի զսէրն աստուծոյ ո՛չ ունիք». ՅօՀ. ե. 42: Գիտեմ պիտի ըսես բա՛րեմիտ ընթերցող, այո՛ւ այս կրօնաւորներն ալ շատ աղէկ գիտեն՝ որ Քրիստոսի աշակերտութեան եւ առաքելութեան եւ քրիստոնէութեան ճշմարիտ նշանը եղբայրսիրութիւնն է, եւ այսպէս ալ կը քարոզեն եւ օրինակներով եւ բազում վկայութեամբ կապացուցանեն:

Ես ալ հիմակ կըսեմ, ի՞նչ օգուտ կունենամք այս սիրոյ քարոզը տալովնիս, ի՞նչ արդիւնք կըստանամք այս սիրոյ խօսքերը եւ բառերը լսելովնիս. երբոր անոր պտուղը շունենամք, հարկաւ այն անպտուղ թզենիին պէս անէծք պիտի առնեմք ՚ի Քրիստոսէ. Մատթ. իա. 19: Պիտի հարցնես հիմակ ինձի, սիրոյ պտուղները ի՞նչ է. չե՞ս մի գիտեր. սորվէ՛ Պօղոս սրբազան Առաքեալէն՝ որ կըսէ՛.

«Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ, սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարհաւածէ, ո՛չ հպարտանայ, ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ զիւր, ո՛չ զըրբըրի, ո՛չ խորհի զչար, ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն, ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ», ա. Աորն. ժգ. 4: «Սէր ընկերի իւրումէ շար ո՛չ առնէ», Հոռմ. ժգ. 10:

Ահա՛ ասոնք են սուրբ եւ քրիստոնէական սիրոյն պտուղները, հիմակ նայէ՛ երկուց կողմանց ելած այն տեսրակները, նայէ՛ ըսի, բայց ո՛չ կողմնականութեան եւ աշառութեան մտօք, այլ ուղղադատ աչօք նկատէ՛, կը տեսնա՛ս մի կամ կերեւի՛ մի այս սիրոյ պրտուղները, ո՛չ թէ միայն շերեւիր, այլ ընդհակառակն՝ երկայնամտութեան փոխանակը կը տեսնաս կագ, կուի, բարկութիւն, փոխանակ քաղցրութեան սիրոյ՝ սոսկալի տեսիլքներ դառնութեան, ատելութեան, նախանձու, հպարտութեան եւ յանդգնութեան. ասոնց պէս ամեն հակառակութեան օրինակն կերեւի ատոնց մէջ, ապա ասոնցմով կիմացուի՝ որ սիրոյ պակասութիւնը բերէր է այդ ամենայն եղբայրատեցութիւնը եւ հակառակասիրութիւնը:

Գ. Այս երրորդ պատճառը անմիաբանութեան եկեղեցականացն կարծեմ որ՝ շատ մեծ զարհուրելի զգացմունք պիտի տայ սրտերնուս, որովհետեւ Ոսկեբերանը կըսէ. «Որ եթէ կատարեալ քրիստոնէից մէջ անկանի վրդովմունք, խռովութիւնք, եւ շարաշար ատելութիւնք՝ նշան է սոսկալի, եթէ Տէր Աստուած հեռացեալ է անտի շնորհօք՝ եւ բարութեամբ իւրով. զի Աստուած ատէ զերկպառակութիւն եւ սիրէ զխաղաղութիւն միաբանական սիրոյ». գ. Յորդ. Ա.է. Սէկ:

Արդ՝ եթէ կատարեալ քրիստոնեայ ժողովրդոց մէջ անկանի այս խռովութիւնը, Աստուած կատէ, կը մերժէ իրեն ամենացանկալի շնորհքներէն ու բարութիւններէն. ապա ո՞րչափ առաւել աստուածային դատապարտութեան եւ պատժոյն պարտաւոր պիտի ըլլան այն խռովասէր եւ վրդովիչ կարգաւորները, որ իրենց բարոյական օրինակ ժողովրդոց ըլլալու պաշտօնին մոռցեր են՝ վրդովման, խռովութեան եւ ատելութեան շար օրինակ ըլլալու միջոցներու մէջ կը գըտնըվին, ո՛չ թէ միայն գործով այլ որոմնացան տետրակներով ալ կը սերմանեն իրենց սրտերնուն մէջ եղած խռովութեան

եւ ատելութեան շար որոմը, իրենց պարզամիտ ժողովրդոցը մէջ. եւ ասով բաւական չ'ըլլալով կը համարձակին մեր ուղղափառ սուրբ եկեղեցւոյ բարեմիտ ժողովրդոցը մըտացը մէջն ալ սերմանել այն անպիտան եւ ապականիչ սերմն որոման, վրդովիչ եւ խանգարիչ խաղաղութեան եւ սիրոյն Քրիստոսի. Մատթ. ժգ. 25:

Տեսա՞ր ճշմարտասէ՛ր յարգելի՛ երրորդ պատճառն խռովասիրութեան. իսկ եւ իսկ Աստուծոյ շնորհքներէն հեռանալն երեւցաւ: Ահա ասանկ անմիաբանութեան եւ եղբայրատեցութեան երբոր լուր մը առաւ Արբազան Առաքեալն Պօղոս կորնթացւոց եկեղեցւոյն մէջէն, այս սաստիկ գիրը գրեց Փիլիպպէէն՝ այսպէս սկսելով: «Վասն այնորիկ զայս ՚ի հեռուստ գրեմ, զի մի՛ յորժամ եկից՝ սաստկութեամբ վարեցայց՝ ըստ իշխանութեանս, զոր ետ ինձ տէր ՚ի շինել եւ ո՛չ ՚ի քակել: Այսուհետեւ եղբարք, ո՛ղջ լերուք՝ հաստատուն կացէք՝ մխիթարեցարո՛ւք՝ միաբան լերուք՝ խաղաղութիւն արարէ՛ք, եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ ձեզ»: Բ Առն. ժգ. 10: Ըսել կուզէ այս ժշմարիտ առաքեալը Քրիստոսի՝ թէ կուզէ՞ք ո՛վ կորնթացիք, որ դուք ալ տա-

ճար աստուծոյ ըլլայք, եւ Աստուած բնակի ձեր մէջ. թողէ՛ք անմիաբանութիւնը՝ հեռացուցէ՛ք խռովութեան առիթները, որ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ բնակի ձեր մէջը, ապա թէ ո՛չ՝ հեռի է ձեզմէ:

Հիմակ խօսքերնուս հաստատութիւնները տեսանք, ու իմացանք ատելութեան եւ խրոտովութեան պատճառները մէկզմէկէ ահարկու, ապա ինչո՞ւ կրսպասենք ասանկ ատելութեան եւ խռովասիրութեան ոգի ունեցող սիրտերէն՝ բարի եւ ճշմարիտ խորհուրդներ եւ խօսքեր: «Մի՛ թէ քաղիցե՞ն ՚ի փրշոց խաղող՝ կամ ՚ի տատասկէ թուզ», Մաթ. է. 16:

Արդ՝ այս տեղս ՚ի վերջոյ հարկ կըլլայ ինծի ըսելու, եւ կարծեմ որ ինծի հետ Աստուածիմաստ հոգեւոր եղբարքս՝ եւ ուսումնական ճշմարտասէր ընթերցող հոգեւոր որդիքս ալ պիտի ըսեն, ո՞ Մխիթարեան Պատուելիք՝ այն ձեր հանած անպիտան եւ անօգուտ տետրակէն յառաջ՝ պէտք էր որ մէկ մը բարոյականի սկզբունքները միտքերնիդ բերէիք, եւ կամ թէ այն ՚ի լատինականէն թարգմանած Հայր Մկրտիչ վարդապետի Աւգերեանց՝ տարեկան առած բարոյականի աս մէկ մասը կարդայիք, եւ ապա ձեռն ՚ի

գրիչ լինէիք, որ արդարև առաւել հոգե-
ւորականաց հարկաւոր եւ արժանաւոր բարձր
աստիճան բարոյական է: «Չարաշար զայլս
դատել՝ է զանձին շարութիւն արտայայտել:
Սարդ է ժանտ, որ թոյն քաղէ ՚ի ծաղկանց,
ուստի մեղուն մեղր հաւաքէ: Ապականեալ
ստամոքս զամենայն ինչ ՚ի մաղձ փոխէ:
Տեառն է դատել, դու զի՞ խառնես զքեզ
՚ի պաշտօն իշխանութեան նորա: Քննիչ է
երիկամանց, եւ զննիչ խորհրդոց. մերս տե-
սութիւն շանցանէ ընդ մի թիզ, եւ զկեղե-
ւանս իրաց եւ եթ նշմարեմք, եւ տակաւին
դատաւոր նստիմք տիեզերաց, աստի յառաջ
զան անբաւ ռխակալութիւնք»։ Երէւ. 158:

Պէտք էր անգամ մի ալ յիշէին այս Պատ-
ուելի Մխիթարեանք սուրբ Վարդապետին
մերոյ Եղիշէի այս կարճ եւ ազդու բարոյա-
կան խրատը. «Որպէս զի չի՞ք յանիրաւու-
թենէ արդարութիւն, եւ ՚ի ստութենէ ճըշ-
մարտութիւն. այնպէս եւ ո՛չ ՚ի խոռվասէր
մտաց ակնկալութիւն խաղաղութեան»։
Տիպ Պօլսոյ. Էր. 90:



ԳԼՈՒԽ Գ

Ամենասխալ դատումներուն մէկն ալ այս է՝ որ առանց խղճի մտաց եւ առանց ճշմարտասիրութեան՝ կարի համարձակութեամբ կը խօսին ու կը գրեն այդ ատելութեան եւ ոխերիմ թշնամութեան հոգւով տողուած տետրակներնուն մէջը, թէ «Այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են»:

Այս նախադասութեանը վրայ շատ պիտի զարմանամք՝ ու շատ ալ պիտի ծիծաղիմք. մանաւանդ որ ծաղրելու եւ ծանակելու նիւթ մը պիտի ըլլայ ամեն լուսաւորեալ ուսումնականաց մտաց առջեւը, որ եւ ամենքս ալ չէինք կարծէր՝ որ ասանկ մէկ լուսաւորեալ դարի մը մէջ, ասանկ մէկ շարաշար դատում մը եւ ատելութեան ոգիէ բռնաբարեալ ասանկ մէկ դժնդակ շարախօսութիւն մը պիտի յայտնի լսեմք Մխիթարեան Պատուելիներէն, եթէ «Այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են»:

Ապա երեկեան օրը ի՞նչ էին. կը հետեւի՝ որ երեկեան օրը միաբան եւ ուղղափառ էին, զոր օրինակ, այսօրուան օրս այս ծովը խռովեալ է, ուրեմն երէկ հանդարտ էր. այսօր-

ուան օրս այս վաճառականը սնանկացեալ է, ուրեմն երէկեան օրը հարուստ էր. այս անձն այսօրուան օրս հիւանդ է, ուրեմն երէկ առողջ էր. այսօրուան օրս օդը խառնակ է, ուրեմն երէկ պարզ էր. «Այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են», ուրեմն երէկեան օրը Հայք միաբան եւ միակրօն ուղղափառ էին. կերելի՛ որ այս պատուելիները աշխարհագրութեան միտքերնին տալով՝ Հայոց հաւատքը եւ ուղղափառութիւնը յարմարէր են եղանակներուն փոփոխութեանը, գարնանային՝ ամառնային՝ աշնանային՝ եւ ձմեռնային ժամանակներուն պէս: Ուսումնականին մէկն ալ ինծի կըսէ՝ որ չէ՛ այդպէս, այլ գիտե՛ս, որ այս պատուելիները քաջ ծանօթ են բնական գիտութեան. ուստի շատ բան ֆիզիզապէս կը դատեն. մեր ուղղափառութիւնն ալ կարծեմ որ բնական գիտութեան մտօք դատելով, անշուշտ փոփոխութեան տակ պիտի ձգեն, ինչպէս որ ունին փոփոխութիւն մարմնաւոր էակաները:

Մէկ ուսումնասէր երիտասարդ մի ալ ներեցէ՛ք կըսէ՝ շնորհ ըրէ՛ք ինծի՝ հրաման տուէ՛ք, որ ես ալ խօսիմ, շատ անգամ պատահեր եմ այդ Պատուելիներուն, եւ հետեր-

նին ալ ճանապարհորդակից եղեր եմ, երբեմըն առագաստաւոր նաւով եւ երբեմն շոգենաւով. միշտ կը դիտէին նաւուն մէջ եղած կողմնացուցին (փոստուլային), որ միշտ նաւին ընթացքին փոփոխութիւնը ցոյց կուտայ, գուցէ՝ որ այն կողմնացոյցը երեւակայելով՝ դատում են ըրեր մեր Հայոց ուղղափառութիւնը փոփոխելով ՚ի հերետիկոսութիւն, եւ մեր սուրբ եկեղեցւոյ միակրօնութիւնը ՚ի հերձուածողութիւն: Բայց աստուածաբանները ճշմարիտ եւ ուղղափառ սուրբ հաւատքը անփոփոխ կը ճանչնան ու կը քարոզեն, որ ինչպէս Աստուած է անփոփոխ՝ ապա եւ ուղղափառ ճշմարիտ հաւատք առ Աստուած՝ պէտք է որ անփոփոխ ըլլայ. ասոր համար քարոզեց մեզի սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր. «Զի անփոփոխելի է աստուած, եւ փոփոխումն ունին արարածքն, որպէս տղայն յերիտասարդութիւն, եւ երիտասարդն ՚ի ծերութիւն, եւ ծերն յապականութիւն: Եւ որպէս գարունն յամառն, եւ ամառն յաշունն, եւ աշունն ՚ի ձմեռն, որ խափուցանէ զամենայն կենդանեաց զյորդորումըն, եւ զտնկոց եւ զբուսոց: Եւ արեգակն փոփոխումն ունի ըստ ժամանակի սահմանելոյն աստուծոյ զերկայնութիւն աւուրց եւ

զպակասութիւն»։ Յաճախ՝ Էրէս, 269:

Երբոր Հայոց եկեղեցին իրեն քրիստոնէութեան սուրբ հաւատքը սխալական եւ փոփոխական մարդոյ վրայ հաստատած ըլլար, եւ կամ սխալական ու փոփոխական այս մարդէն կամ այն մարդէն պիտի սորվիմ ըսեր իմ հաւատքս՝ այն ժամանակը կարելի էր, որ ըսէին՝ թէ ինչպէս մարդն է փոփոխական. ահա՛ Հայք ըստ որում ՚ի մարդոյ ուսանին հաւատքնին, եւ ՚ի մարդոյ են հաստատեալ հաւատք իւրեանց, վասն որոյ փոփոխեցան, թէպէտ երէկեան օրը ուղղափառ էին, բայց «Այսօրուան օրս հերձուածող եւ հերետիկոս են»:

Քրիստոնէական հաւատքը մարդէ մը չէ՛, այլ յաստուծոյ է, եւ մեք մարդոյ հաւատք չունիմք, հաւատք աստուծոյ ունիմք սուրբ գրոց առաջնորդութեամբ, եւ ասանկ սորվեցանք սուրբ Լուսաւորչէն մերմէ. «Ճըշմարտութիւն հաւատոց լոյս է աչաց մտացն շարժմանց՝ խորհրդոցն յիշատակաց. զգեցեալ զլոյսն գիտութեան եւ իմաստութեան շնորհաց սուրբ հոգւոյն, որ զառաջնորդական զմիտան լուսաւորէ, եւ գրովք սրբովք յանդիման կացուցանէ զաներեւոյթսն, իբրեւ ՚ի տեսիլ աչաց արեգականն լոյս.... Զի

լուսաւորեալք ուղիղ հաւատովք յանսկիզբն էութիւնն, ՚ի մշտնջենաւոր լոյսն, յանփոփոխ ճշմարտութիւնն, ՚ի կենդանարար կենդանութիւնն, մի՛ եւ խոտորեսցուք ՚ի յունայնաբանութիւնն, եւայլն»։ Յաճախ. Էր, 25:

Տեսէ՛ք ո՛վ Մխիթարեան Պատուելիք, Օգոստինոս մեծ Վարդապետն եկեղեցւոյն Լատինացոց ի՞նչպէս խորունկ եւ նուրբ մտածեց, որ չ՛լինի թէ Հռովմայու եկեղեցին սխալի՝ հաւատքնին Պետրոս Առաքեալին վրայ դնելով, եւ կամ անկէց սորվեցանք ըսելով՝ անոր յաջորդները հայր հաւատոյ ճանչնան, վասն որոյ կը գրէ յաղագոս Էպիսկոպոս Գրիգորիոս, ո-թե-գասաներորդ Գրիգոր մեծ. «Այլ արդ մեք որ քրիստոնեայքս եմք եւ կոչիմք, ո՛չ ՚ի Պետրոս հաւատամք, այլ յայն՝ յոր Պետրոս հաւատաց. շինեալք Պետրոսի բանիւքն որ զՔրիստոսէ. եւ ո՛չ ՚ի տաղից ոմանց դեղեալք, ո՛չ պատրեալք կախարդութեամբք, այլ նորա բարերարութեամբքն գտեալք օգնութիւն: Պետրոսի վարդապետն Քրիստոս՝ վարդապետութեամբքն որ տանի յաւիտենական ՚ի կենաս, նա ինքն եւ մեր վարդապետ է»։ Գլ. ծղ. Էր. 354:

Ո՛վ մեծ վարդապետդ Օգոստինոս, ինչու՞

սուրբ Առաքելոյն Պետրոսի համար վճիռ կընես ասելով. (ո՛չ ՚ի Պետրոս հաւատամք), պատճառ անշուշտ այս պիտի ըլլայ. որովհետեւ Պետրոս սրբազան Առաքեալը թէպէտ աշակերտ Քրիստոսի էր, թէպէտ ընտրեցաւ ՚ի Քրիստոսէ՝ յառաքելութիւն, ինչպէս միւս առաքեալներն ալ, բայց ըստ որում մարդ՝ երբեմն պակասութիւն հաւատոյ ունեցաւ, եւ Քրիստոսէն ալ յանդիմանութիւն լսեց, ինչպէս որ կը գրէ Մատթէոս Աւետարանիչը. երբ առաքեալները տեսան, որ Յիսուս ծովուն վրայէն քալելով կերթար, ամենքը մէկգմէկ անցան, եւ այնպէս կարծեցին որ՝ մէկ երեւակայեալ առաջօք տեսիլք մի է, եւ այն ծովին վրայէն քալող գնացողը Յիսուսը չէր, ասոր համար Յիսուս ասոնց ինքրզինքը յայտնեց աս ամենագոր ձայնովը. «Քաջալերացարուք՝ ես եմ մի՛ երկնչի՛ք»:

Այս տեղս Պետրոս առաքեալը համարձակեցաւ ըսելու Յիսուսի, Տէր՝ թէ որ դուն ես, հրաման ըրէ ինձի, որ ես ալ այդ ծովուն վրայէն քալելով գամ քեզի. Յիսուս ալ հրաման ըրաւ ըսելով, (ե՛կ). սկսաւ Պետրոս կատարեալ հաւատով երթալ ծովուն վրայէն դէպ ՚ի Քրիստոս. բայց երբոր մէկ

կողմէն հով մը փչեց, սկսաւ Պետրոս վախնալ՝ ու իրեն ունեցած հաւատքէն պակսիլ. եւ ասով ալ հաւատքէն պակասեալ գտնուեցաւ, վասն որոյ իրեն վրայի առաջին քաջութիւնը կորսնցուց, եւ սկսաւ քիչ քիչ ծանրանալ ու ընկըղմիլ, յայնժամ սկսաւ աղաղակել առ Յիսուս ասելով. «Տէ՛ր փրկեա՛ր զիս». Յիսուս ալ իրեն ամենակարող ձեռքը երկնցուց անոր՝ ու յանդիմանելով ըսաւ. «Թե՛րեհաւատ՝ ընդէ՛ր երկմտեցեր». Մաթ. ժդ. 26: Այս նուրբ եւ կատարեալ աստուածաբանական վճիռը չէ՛ որ միայն մեծ վարդապետն լատինացուց Օգոստինոս կընէ, այլեւ սուրբն կիւրեղ Երուսաղէմի Հայրապետն ալ կը հաստատէ այս կերպով խօսելով եւ գրելով. «Մարդ էր քեզ եւ մեզ նման Պետրոս յարենէ եւ մարմնոյ կարգեալ, եւ նովին կերակրովք կենդանացեալ: Այլ իբրեւ ասաց տէր Յիսուս ե՛կ առ իս, հաւատաց վաղվաղակի, եւ սկսաւ ՚ի վերայ ջուրցն գնալ: Քան զամենայն հաստատութիւնս յատակաց զհաւատսն ՚ի վերայ ջուրցըն ունէր տարածեալ, եւ զծանրութիւն մարմնոյն ՚ի թեթեւութիւնս հաւատոցն բարձեալ թռուցեալ տանէր: Այլ մինչդեռ զհաւատսն յանձին ուներ, ՚ վերայ ջուրցն հաստատութեամբ զգնացս փոփոխէր, եւ

իրբեւ յերկուացան, յայնժամ ընկղմել սկսաւ. զի ընդ թուլանալն ՚ի հաւատոց, զիջանել սկսաւ եւ ծանրութիւն մարմնոյն».
 Առջ. Ընթ. էր. 80:

Ապա հաստատուն գիտեմք, եւ մեր եկեղեցական մատեանք վկայեն՝ որ ուղղափառ եկեղեցի ազգիս Հայոց հաստատուն ունի իրեն ճշմարիտ սուրբ հաւատքը ՚ի վերայ ճշմարտութեանն աստուծոյ, եւ ՚ի վերայ փրկագործ տնօրէնութեանն խորհրդոցն քրիստոսի. ինչպէս որ Յիսուս Քրիստոս պատուիրեր է. «Հաւատացէ՛ք յԱստուած, եւ յիս հաւատացէ՛ք». Յօհ. Ժդ. 1: Եւ սրբազան Առաքեալն Պետրոս ՚ի Յիսուսէ Քրիստոսէ ուսեալ՝ կը քարոզէ. «Հաւատք ձեր եւ յոյս իցեն յԱստուած». ա. Աաթո. ա. 22: Ուրեմն Հայոց ուղղափառ եկեղեցին իրաւունք ունի սրբազան Պօղոս Առաքելոյն հետ ձայնակից ըլլալով՝ աղաղակել. «Վասն որոյ եւ զայս շարշարանս կրեմ, այլ ոչինչ ամօթ համարիմ, քանզի գիտեմ յո՛ հաւատացեալն եմ, եւ հաստատեալ եմ. թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն». բ. Տիմ. ա. 12:

Ուրեմն համարձակ կըսեմ եւ պիտի ալ

հաստատեմ սուրբ Հոգւոյն աստուծոյ շնորհիւր, որ Հայոց ուղղափառ եկեղեցին շունեցաւ հերձուածողութիւն մը եւ հերետիկոսութիւն մը բնաւ, ոչ երէկեան օրն, եւ ո՛չ ալ այսօրուան օրս, եւ ո՛չ ալ պիտի ունենայ վերնախնամ տեսչութեամբն աստուծոյ, վասն զի իրեն ուղղափառ սուրբ եւ ճշմարիտ՝ հաւատքը հաստատած է Յիսուսի Քրիստոսի անփոփոխելի եւ անալլալելի ճշմարտութեանը եւ վարդապետութեանը վըրայ. ապա որպէս Յիսուս Քրիստոս է մըշտնջենաւոր ճշմարտութիւն ըստ առաքելոյն Պօղոսի. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան». Եբր. ԺԳ, 8:

Սոյնպէս եւ Հայոց եկեղեցւոյն հաւատքը անփոփոխ եւ անալլալելի ճշմարտութեամբ հաստատ կայ եւ մնայ երէկ եւ այսօր նոյն եւ յաւիտեան. Հայոց եկեղեցին չ'խաբուիր նորաձայն եւ օտար վարդապետութեանց. եւ չ'ընդունիր նորահնար կրօնքներու հեղինակութիւնը, եւ շատ ալ իրաւունք ունի, որովհետեւ քրիստոսական չեն անոնք, եւ քրիստոսամերձ սրբազան Առաքելոց աւանդութիւններով հաստատեալ չեն այն ամենայն:

Այս տեղս միտքս եկաւ Հ. Գաբրիէլ ա-

Թոռակալ վարդապետի ճշմարտասէր հոգևով գրածը, որ կըսէ. «Յիսուս Քրիստոս ո՛չ է այլայլելի յիւրում ինքնութեան եւ ՚ի վարդապետութեան, միշտ ճշմարիտ էր, եւ է, եւ եղիցի. ապա եւ հաւատք՝ որ առ նա, անայլայլելի պահեսցին անխառն յօտար ուսմանց. Քրիստոս միայն եւ մշտնջենաւոր հիմն է ճշմարիտ վարդապետութեան կենաց. յոր միայն հաստատիլ արժան է. արտաքոյ նորա չի՞ք այլ հաւատք ճշմարիտ, որպէս ինքն անփոփոխելի է, նոյնպէս անխոտոր հաւատս ուսուցանէ եւ պահանջէ». ՍԵԿՆ. Պօղոսի. Լաթ. Գ. Էր. 365:

Ահա՛ այս մեր ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյ պաշտպան՝ եւ քրիստոսական սուրբ կրօնքներնու հաւատարիմ աւանդապահ եղան սուրբ Հարք եւ Քահանայապետք մեր սուրբ եկեղեցւոյն. վասն որոյ սրբազան Հայրապետն մեր Գրիգորիս, համարձակ գրէ առ Մանուէլ Թագաւորն Յունաց. եթէ «Ո՛չ նորոգ եմուտ ՚ի մեզ ուղղափառութիւնս, այլ ՚ի հարցն առաջնոց իջանէ, որում ո՛չ եղեալ ուշ թշնամիքն զրպարտեն զմեզ յահուր եւ անպատկառ բարբառօք». Ընդ. Էր. 118:

Ապա ուրեմն ո՛վ ճշմարտասէր եւ հարա-

զատ որդի ուղղափառ սուրբ եկեղեցւոյ մեր սիրելի. հարկաւ պիտի ըսենք որ կամ ատելութեան կրիւք եւ կամ յակամայից բռնաբարեալ, եւ կամ թէ զօձիս ազատել ՚ի ձեռաց հակառակորդաց իւրեանց, գրեալ են Մխիթարեան Պատուելիք. եթէ «Այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են»:



Գ Լ ՈՒ Խ Դ

Այդ վերոյգրեալ անորոշ նախադասութիւնը զմեզ պարտաւոր կընէ, որ հարցունենք իրենց. Այսօրուան օրս, ըսելով ո՞ր ժամանակը մեզի պիտի յայտնեն կամ ցոյց տալու են, թէ ո՞ր օրուրնէ սկսան Հայք հերձուածող եւ հերետիկոս ըլլալու: Չեմ կարծեր՝ եւ բնաւ չեմ յուսար, որ այս իրաւագէտ եւ խորախորհուրդ պատուելիները մեկէն ՚ի մէկ առանց խորհելոյ պիտի ըսեն, որ Քաղկեդոնի ժողովքէն բաժնուած ըլլալով «Այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են»:

Թէ որ այս ժողովքը առաջարկելով հաստատել ուզեն իրենց այն անտեղի եւ զրր-

պարտական վատ խօսքերնին: Ճիշդ կըսեմ՝ որ շատ ամօթապարտ պիտի ըլլան իրաւունք եւ արդարութիւն ճանչցող իմաստութեամբ լեցուն միտք ունեցող մարդկանց առջեւը, մանաւանդ որ պարտաւոր պիտի ըլլան աստուծոյ անաչառ դատաստանին: «Որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի», Մատթ. Է. 22: Զոր օրինակ մէկ մարդ մը կարող է արդեօք համարձակիլ մէկ ուրիշ մարդու մը ըսելու, թէ ինչո՞ւ դուն շատ ժամանակ է որ ալ մեր տունը գալէդ կըտրուեցար. չ'ամչնար ու չ'պատկառիր արդեօք, երբոր լսէ անկէց. ի՞նչ կըսես ո՛վ մարդ, խելքդ գլուխդ ժողվէ՛, ես ձեր տունը բնաւ չեմ եկեր, եւ ձեր տանը շեմին վրայ ոտք կոխած չունիմ, բայց միայն բարեկամութիւն ունիմ: Եւ մէկ վաճառական մը երբ որ ուրիշ վաճառականի մը հետ ո՛չ ընկերութիւն է ըրած՝ եւ ո՛չ ալ առուտուր, բայց միայն բարեկամութիւն կամ սիրելութիւն ունեցած ըլլան, յիմարութիւն ըրած չըլլա՞ր մի, երբ որ ըսէ անոր՝ բա՛րեկամ ինչո՞ւ կըտրեցիր ինձմէ ընկերական եւ առեւտրական հաղորդակցութիւնդ. իրաւունք չո՞ւնենար մի ըսելու այն ժամանակը, ո՛վ յիմար դու՝ գնա՛ խելքդ վրայ բե՛ր. ե՞րբ քեզի հետ ընկերութիւն կամ առ եւ տուր ըրած եմ, որ

հիմակ ալ բաժնըված կը համարիս քեզմէ։ Յիրաւի ստոյգ գիտեմ՝ որ դուն մեծ վաճառական ես, եւ վաճառականութեան կանոնները քաջ գիտես, եւ մեծ համարում ունիս վաճառականաց մէջ. բայց ես քեզի հետ չեմ ըրած ընկերութիւն վաճառականութեան. եւայլն, եւայլն։

Ըստ սմին օրինակի, Հայք ե՞րբ մերձաւոր եւ հաղորդ գտան Քաղկեդոնի ժողովոյն, որ հիմակ ալ անկէց բաժնուած կամ որոշուած պիտի համարվին, այն ժամանակը Հայոց կողմանէ ո՞ր եպիսկոպոսը՝ ո՞ր քահանայն՝ ո՞ր դպիրը՝ եւ կամ ո՞ր իշխանը հրաւիրեցաւ անոնցմէ, եւ գլտնըվեցաւ այդ ժողովքին մէջը կամ անձամբ եւ կամ գրով, որոյ պատճառը յայտնի եղած է, եւ այս տեղս ալ պիտի յիշատակեմք։ Բայց նայէ՛ Նիկիոյ սուրբ ժողովին մէջը հանդիսացաւ սուրբն Արիստակէս փոխանակ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ եւ Տրդատայ թագաւորին, ըստ որում յատուկ հրաւիրանաց հրովարտակ խրկած էր Կոստանդիանոս թագաւորն, ինչպէս կը գրէ Մովսէս Խորենացին։ «Յայնժամ գայ հասանէ հրովարտակն ինքնակալին Կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ, զի զսուրբն Գրիգոր առեալ ընդ

իւր ՚ի ժողովն երթիցէ, զոր ո՛չ առ յանձն Տրդատ... բայց եւ ո՛չ Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի մի՛ զառաւել պատիւն վասն խոստովանական անուանն ՚ի ժողովոյն կրիցէ, որպէս զի այսպէս փափաքանօք եւ մեծաւ փութով կոչեն: Այլ նոքա առաքեն փոխանակ իւրեանց զԱրիստակէս, հանդերձ ճշմարիտ խոստովանութեամբ երկոցունց՝ գրով»։ Խոբ. 176:

Եւ այսպէս սուրբ Հայրապետն մեր մեծն Ներսէս պարթեւ հաղորդ գտաւ սուրբ ժողովոյն Կոստանդնուպօլսոյ, եւ պատուեցաւ մեծ Թէոդոս թագաւորէն. Խոբ. 220:

Այսպէս ալ սուրբ հայրապետն մեր Մեծըն Սահակ պարթեւ յատուկ գրով օրինաւոր հաղորդութիւն ունեցաւ Եփեսոսի սուրբ ժողովոյն, որոբհետեւ, այն օրերը մեր Հայոց աշխարհին մեծամեծ գործքերով պարապուած էր, վասն որոյ ո՛չ կարաց անձամբ գտանիլ անդ. Պատ. Գրիգ. Ժող. ՚ի Վիլննա. 168: Եւ ՚ի վերջանալ սուրբ ժողովոյն հարկաւոր ծանօթութիւններ տալու համար սրբոյն Սահակայ եւ սրբոյն Մեսրոպայ յատուկ սիրոյ գիր գրեցին այս սուրբ Եպիսկոպոսները՝ Կիրեզ աղեքսանդրացի, Պրոկղոս Կոստանդնուպօլսեցի՝ եւ Ակակ մելիտինոյ: Խոբ. 260:

Ահա՛ այս երեք սուրբ ժողովոց մեր Հայոց Հայրապետաց եթէ անձամբ եւ եթէ գրով հաղորդ եւ մերձաւոր ծանօթ ըլլալնին յայտնի կը գրէ Գրիգորիս Կաթողիկոսն մեր ասելով. «Ո՞չ չոգաւ Արիստակէս ՚ի սուրբ ժողովն Նիկիոյ, եւ կամ թէ մեր սուրբն Ներսէս ո՞չ վարեցաւ այսու օրինակաւ, եւ ո՞չ գտաւ առ մեծին Թէոդոսիւ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի վանումն հոգեմարտին Մակեդոնի, հաղորդ սոցա եւ համախորհուրդ: Եւ կամ թէ մերն Սահակ սուրբ Հայրապետ ո՞չ եղեւ գրով ձեռին իւրոյ հաղորդ սուրբ ժողովոյն Եփեսոսի»։ Եւայլն. Ընդ. 195:

Արդ՝ ի՞նչ պատճառաւ չ'մերձեցաւ հեռի մնաց մեր Հայոց ազգը Քաղկեդոնի ժողովքէն. եւ ինչու՞ համար այն ժողովքի եպիսկոպոսներէն՝ եւ կամ Մարկիանոս եւ Վաղենտիանոս կայսերքը՝ որ ասոնց ժամանակը եւ ասոնց հրամանաւը Քաղկեդոնի ժողովը գումարեցաւ. փոյթ շունեցան՝ եւ կամ լաւ եւս է ասել, թէ չ'համարձակեցան հրաւիրելու կամ կանչելու մեր Հայոց ազգին եպիսկոպոսներէն մէկը՝ եւ կամ քաջատոհմ անձերէն, մի՛ թէ Յունաց հետ խոսվութիւն մը ունեի՞նք, եւ կամ թէ վերոյիշեալ կայսերաց հետ արդե՛օք թշնամու-

Թիւն մը ունեցա՞նք, ո՛չ բնաւ. ապա ի՞նչ է այս հեռի մնալնուս պատճառը, ասոր ստոյգ եւ ճշմարիտ պատճառը ցոյց կուտան մեզի սուրբ Վարդապետքն մեր Եղիշէ՝ եւ Թովմայ արծրունի: Որովհետեւ Քաղկեդոնի ժողովքէն քիչ ժամանակ յառաջ, զարհուրելի բռնութիւնը բարբարոս եւ անգութ պարսից, եւ ասոնց գաղտնաբար յարձակումը Հայաստանը պաշարեր էր. քրիստոնէութիւնը իսպառ Հայաստանէն բնաջինջ ընելու համար. վասն որոյ սաստիկ տանջանք եւ անխնայելի մահ կըսպառնային մեր Հայոց ազգին. եւ սուրբ եկեղեցիները քանդելով այրելով հիմնայատակ կընէին. ուստի սուրբ Հոգւոյն զօրութեամբ քաջ արիացեալ՝ եւ զինուորեալ պատրաստեցան դէմ կենալու ամեն մէկ բռնութեան եւ սոսկալի յարձակման կռամոլութեանն պարսից՝ մեր Հայոց ազգը. Պարագլուխ եկեղեցականացն եղաւ Սուրբն Յովսէփ կաթողիկոսն երջանիկ՝ եւ սուրբն Սահակ եպիսկոպոսն Ռշտունեաց, եւ երանելին Ղեւոնդ երէց, եւ քաջ արանց զօրավարաց արի անձանց զօրագլուխ եղաւ սուրբ Նահատակն Քրիստոսի քաջն Վարդան: Ահա՛ այս անտանելի նեղութեան Հայոց

ազգիս ժամանակը կըսէ սուրբ վարդապետնիս Եղիշէ. սուրբ եւ երջանիկ Հայրապետն մեր Յովսէփ կաթողիկոսն շատ եպիսկոպոսներով գիր մը գրեց առ փոքրն Թէոդոս Կայսրն Յունաց, որ օգնութեան հասնի այս Հայոց ազգին սուրբ հաւատքը անվտանգ մնալու համար, եւ Պարսից բռնութեանը յաղթելու համար. օրինակ այս. «Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք եւ ամենայն զօրք Հայոց, Վասակ Մարզպան եւ Ներշապուհ ռմբոսեան հանդերձ Սպարապետաւս եւ ամենայն մեծամեծ նախարարօքս՝ առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմասցի ողջոյն մեր առ քեզ եւ ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու եւ ցամաքի, եւ չի՛ք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ: Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց, ունելով զԵւրոպէ՝ անցին եւ տիրեցին եւ Ասիացւոց կողմանցն ՚ի սահմանացն Սերաց մինչեւ ՚ի կողմանս Գաղերովնի, եւ ո՛չ ոք գտաւ ստամբակեալ եւ ելանել ըստ ձեռն նոցա... Եւ մեք ՚ի ձեր քաջութիւն արութեանդ խիզախեալ, էր ինչ՝ որ ընդդէմ

դարձաք նոցա հրամանացն, եւ բազում այն է՝ որ արդ առաջի պատրաստեալ եմք: Ընտրեցաք զմահ՝ աստուածպաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ. եթէ դուք եւս ՚ի ձեռն առջիք զմեզ, ահա՛ կրկին կենաց դիպեցաք եւ ո՛չ միանգամ մահ: Եւ եթէ սակաւիկ մի հեղգայք, գուցէ բազում եւ այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա». Եղի. եր, 122:

Երբոր այս աղերսանաց գիրը մատուցաւ Թէոդոսի Արքային եւ կարդացին, հարցուց արքայն նախարարներուն ասոր ճարը, եւ սկսաւ հոգ տանիլ մեծ յօժարութեամբ, որ չըլլայ թէ անօրէն հեթանոսներէն յափշտակվի արեւելեան եկեղեցիները. բայց այն օրերը բարեպաշտ եւ ողորմած արքային Թէոդոսի կենաց վախճանը հասաւ, եւ ասոր տեղը թագաւորեց Մարկիանոս կայսր: Եւ որովհետեւ այս Մարկիանոս ունեցաւ երկու շար խորհրդական անձինք, որք էին Անատոլայ սպարապետն եւ Յփխարիս ասորի. կայսրը ասոնց վատ ու շար խորհուրդներուն միտքը տալով՝ մէկդի ձգեց մեր երանելի սուրբ Հայրապետին Յովսեփայ աղաշանքը՝ իրեն անձնական շահասիրութեամբն, որ կը պատմէ Եղիշէ. «Եւ թագաւորէր փոխանակ նորա

Մարկիանոս կայսր, եւ ՚ի ձեռն վատթար արանց խրատտուաց ծառայից իւրոց՝ Անատոլայ որ սպարապետն էր, եւ Եփեսարիոս ասորի, երկոքեանն անարգք եւ ՚ի վատթար արանց, միանգամայն եւ անաստուածք: Եւ ՚ի սոցա բանս եղեալ թագաւորին, ո՛չ կամէր անսալ միաբանեալ ուխտին Հայոց, որ ամենայն ուժով իւրեանց ընդդէմ կացեալ էին շարութեան հեթանոսացն: Անարիս այս՝ լաւ համարէր զուխտ հեթանոսացն պահել վասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան»։ Եր, 75:

Երբ տեսան Սրբազան եւ երջանիկ Եպիսկոպոսները եւ քրիստոնէական հաւատոյ զօրութեամբ արիացեալ զօրքն Հայոց՝ եւ զօրապետ քաջն Վարդան, որ օգնականութիւն մը շառին Մարկիանոս կայսերէն Յունաց, յոյսերնին բոլորովին կտրեցին արտաքին օգնութենէն մարդկան, եւ կատարեալ հաւատով, հաստապինդ յուսալով աստուծոյ ամենակալ եւ ամենակարող զօրութեանն, սկսան մէկզմէկու քաջալերութիւն տալ ասելով. շատ կարելի ու դիւրին է Աստուծոյ՝ քիչով շատերու գործ կատարել, եւ իրեն մեծամեծ եւ սքանչելի զօրութիւնը յայտ-

նել, որպէս գրէ Եղիշէ. «Եւ իբրեւ այս այսպէս հաստատեցաւ եւ հատաւ օգնակա-նութիւն յուսոյ նոցա ՚ի մարդկանէ, դարձեալ սուրբ եպիսկոպոսքն քաջալերել սկսան զանձինս եւ զգօրսն ամենայն... Եւ ասէին, պատրաստ եմք ՚ի սպանանիլ եւ ՚ի մեռանիլ, դիւրին է աստուծոյ սակաւուք զբազմաց գործ գործել, եւ անարգօք զմեծամեծ իրս կատարել»։ Երէ», 75:

Ահա՛ աստուածային զօրութեամբ արիացեալ երջանիկ սուրբ Եպիսկոպոսները եւ երէցները, մեծահաւատ նախարարները եւ զօրապետները, դաս դաս զօրքերով եւ քաջագօր Վարդանին արիութեամբը պաշտպանեցին քրիստոնէութիւնն հազար եւ երեսուն եւ վեց վկայից նահատակ ըլլալով, եւ քրիստոնէութեան ճշմարիտ լոյսը մշտավառ պահեցին Հայաստանու մէջ: Այս միջոցները վերոյիշեալ Մարկիանոս կայսրն Յունաց՝ Քաղկեդոնի ժողովքը կը հաստատէ Յունաց եպիսկոպոսներով, Եւտիքէս հերետիկոսի հերձուածոյն եւ մոլորութեանը համար:

Հիմակ գանք՝ դատաստան մը ընենք այս տեղ. Մարկիանոս կայսրը եւ Քաղկեդոնի մէջ գտնուած եպիսկոպոսները ի՞նչ երեսով

եւ ի՞նչ համարձակութեամբ Հայաստանու եպիսկոպոսաց կամ երիցանց եւ կամ ազնուականաց մէկու մը ժողովոյ հրաւէր խըրկելով պիտի կանչեն, որ ո՛չ գրով եւ ո՛չ ալ անձամբ եւ բնաւ ամենեւին մէկ առիթով մը օգնութիւն եւ պաշտպանութիւն չըրին մեր Հայոց ազգին, որ տասն եւ ինն տարիի չափ քառասուն եւ երկու անգամ կռամոլ բարբարոսներուն պատերազմացը մէջ դէմ կեցան, եւ հաւատոյ զօրութեամբ զինուորեալ իրենք իրենց մէկզմէկու քաջալերութիւն եւ արիութիւն տալով՝ քրիստոնեութեան հաւատքը պաշտպանեցին եւ պահպանեցին Հայաստանու մէջ, ինչպէս որ կը գրէ Մատթէոս ուռհայեցի պատմիչն մեր համառօտ մը՝ քաջ եւ սուրբ Վարդան զօրապետին համար, թէ «Տայր պատերազմ ընդ Պարսս զամս ինն եւ տասն յաղթեալ քառասուն եւ երկու պատերազմաց մինչեւ զկատարումն իւր մարտիրոսութեամբ»:

Հայոց ազգին այս մեծ քաջութեանը ընդդէմ կռապաշտութեան պարսից, եւ պահպանութեանը ու պաշտպանութեանը քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ՝ քաջ վերահասու եղած էին յառաջ քան Քաղկեդոնի ժողովքին ժամանակը՝ եթէ կայսրն Մարկի-

անոս եւ եթէ նախարարք նորին՝ եւ եթէ եկեղեցականք՝ Յունաց ազգէն եւ իրենցմէ յատուկ գրով ալ օգնութիւն խնդրուած ըլլալը միտքերնին էր, եւ իրենք ալ բնաւ նպաստ մը եւ օգնականութիւն մը չընելնին աղէկ գիտէին, ուրեմն համարձակ ըսենք՝ որ խոհական մտօք ակնածութիւն ընելով՝ ամօթ մեծ համարեցան ժողովքին կանչելու Հայոց ազգէն:

Եւ որովհետեւ այն պիղծն եւ շարգոյնն Եւտիքէս ալ ազգաւ Յոյն էր, եւ Յունաց եկեղեցւոյն մէջ երէց էր՝ եւ առաջնորդ երեւելի մենաստանի մը Կոստանդնուպօլսոյ մէջ, ասոր շարաշար մոլորութիւնը քննելու եւ դատելու յատկապէս Յունաց եկեղեցւոյն արժանի էր, որովհետեւ իրենց մէջ տարածվիլ սկսեր էր. եւ ապա հրատարակել անոր թիւր եւ շարաշար մոլար վարդապետութիւնը, որ ամէն ուղղափառ եկեղեցիքն Քրիստոսի անոր հերձուածողութիւնը եւ հերետիկոսությունը գիտնալով՝ ամենքն ալ նզովեն եւ բանադրեն եւ զգուշանան անոր պիղծ ու մոլար վարդապետութենէն:

Ահա՛ այս վերոյիշեալ առիթներով եւ իրաւամբ ազգ մեր Հայոց հեռի մնաց Քաղկեդոնի ժողովքէն, ասոր համար այս ծանօ-

Թուփիւնը կուտայ մեզի ճշմարտապատում Վարդապետն Թովմայ արծրունի, երբոր հըրեշտակակրօն Սուրբ Աղան անուն Վանահայրին հայրը Վասակ արծրունին՝ իրեն Տաճատ եւ Գոտոր անուն երկու եղբարքը Պարսիկներուն խառնակութենէն եւ խարդախութենէն ազատ մնալու համար առաւ իրեն հետը չուեց գնաց ՚ի Կոստանդնուպօլիս Մարկիանոս թագաւորին քովը: Եւ կայսրը շատ սիրով եւ մեծամեծ պատուով ընդունեց, եւ բարձր յարգութիւններով մեծարեց ասոնք, որովհետեւ Հայաստանու մէջ քաջ ախոյեան Կռապաշտներուն դէմ հանդիսացողներէն էին ասոնք ալ:

Օր մը այս Մարկիանոս կայսր աղերսելով մը առաջարկեց այն Արծրունեաց ազնուական երեք եղբարց Վասակայ՝ Տաճատայ՝ եւ Գոտերայ, որ երեք սուրբ ժողովոյն հետ ընդունին Քաղկեդոնի ժողովքն ալ, այս առաջարկութեանը պատասխան տուին, որ մենք Պարսիկներուն նեղութենէն ազատ չ'մնալով եւ շատ անհանգիստ ըլլալով չ'ունինք սուրբ գիրքերուն կրթութիւնը, որով ընտրենք հաւատքի խոստովանութեան կանոնադրութիւնները, բայց երբ մենք մեր Հայաստան աշխարհի մէջն էինք, մեր հո-

գելոր առաջնորդները խոստովանութեան կանոնի մէջ չառին ընդունելու այդ ձեզմէ ըսուածները, վասն որոյ չեմք կրնար մենք մեզի ընդունիլ շուտով, որն որ կը հրամայէ թագաւորական ձեր մեծութիւնը. բայց հրաման ըրէ՛ մեզի՝ որ գրեմք ՚ի Հայաստան հոգելոր մեր առաջնորդներուն, ու հարցունենք՝ եւ անոնցմէ պատասխանը առնեմք:

Այս խօսքին մէջը այս ազնուական Արծրունիք երեք եղբարք աղերսական եւ մեղադրական ձեւով մը այս խօսքը Մարկիանոս թագաւորին համարձակ առաջարկեցին՝ թէ ո՛ր կայսր, ինչո՞ւ համար երբ Քաղկեդոնի ժողովքը ըրիք, բնաւ մեր Հայոց ազգէն մէկը կանչելու հարկաւոր չ'սեպեցիք: Կայսրը այս հարցմանը պատասխան այդ գտաւ ու ըսաւ. վասն զի Հայոց հոգելոր առաջնորդները պարսիկներուն նեղութեան վնասը կը կրէին այն ժամանակը: Այն քաջ Արծրունի ազնուականները շատ խոհական մտօք հարցում ըրին, եւ Մարկիանոս ալ կարճ խօսքով ծածկեց իրենց կողմի եղած պակասութիւնը. այս պատմութիւնը կընէ Թովմայ Արծրունին այսպէս սկսելով. «Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ՚ի Քաղկեդոնի Ուրջ եպիսկո-

պոսաց, առ որով վկայեաց սուրբն Վարդան եւ Վահան արծրունի: Իսկ Վասակ Արծրունի հայր Աղանայ սրբոյ՝ առեալ զՏաճատ եւ զԳոտեր զեղբայր իւր գնաց առ կայսր, մեկուսի եղեալ ՚ի շփոթմանց Պարսկական վրդովմանցն եւ աւերման աշխարհին. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ՚ի խաղաղութեան մեծաշուք պատուով ՚ի բարձ եւ ՚ի պատիւ յառաջ ածեալ իբրեւ զքաջամարտիկ ախոյեանս որ ՚ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի՝ եւ սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ շափ ճգնեալ նահատակեցան, եւ զխոստովանական անուն ձայն ՚ի վերայ եղեալ կարդային: Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ եւ զՏաճատ եւ զԳոտեր՝ որք էին ՚ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեայ, զի ըզժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: Նոքա պատասխանեալ ասեն. վասն զի մեք ՚ի պարսկական հինիցն անդուլ եւ անպարապ գոլով ՚ի բաց լքաք զկրթութիւն գրոց սրբոց առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ Առաջնորդքն մեր ո՛չ ետուն տեղի ընդունել զասացեալսն ՚ի սահմանին խոստովանութեան: Արդ ո՛չ կարեմք փոյթ ընդ

փոյթ շողմարար հաճութեամբ թագաւորիդ՝ յանձն առնուլ, զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ, այլ հրամայեսցէ մեզ գրել ՚ի Հայս, եւ հարցանել առաջնորդացն Հայոց, եւ ընդունել զպատասխանիս, այլ եւ զայս եւս եդին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրեւ ժողովն գումարէր, ո՛չ զոք ՚ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ՚ի միաբանութիւն հաւատոց: Պատասխանի ետ Մարկիանոս եւ ասէ, վասն զի Առաջնորդքն Հայոց զՊարսկական շփոթմանցն զվտանգ կրէին»։ Երէս. 89:

Այս մտքով կը գրէ Տղայ կոչեցեալ եղբորորդի Ներսէսի շնորհալուոյն սուրբ Հայրապետն մեր Գրիգոր կաթողիկոսն առ Հաղբատացիս եւ առ ձորոյ գետացիս մեր Հայոց ազգին հեռի մնալուն համար Քաղկեդոնի ժողովքէն: «Արդ՝ քննելի է եթէ ո՞ ոք ՚ի մերոց սրբոց հարցն հանդիպեցաւ անդ, եւ կամ յունմէ՞ արդեօք տեղեկացաք զնոցայն աղանդ եւ զմերս ճշմարտութիւն, եւ կամ որո՞վ լեզուաւ ուսոյց եւ ետ մեզ գիտնակորոս սուրբ եւ զՏիմոթէոս կուզն եւ զՊետրոս գայլըն, մի՛ թէ անեցի՞ք էին սոքա, եւ կամ ձորոյ գետացիք կամ Վաղարշապատեցիք եւ Դրվնեցիք, կամ Հայադաւան լեզուաւ եւ ազ-

գաւ»։ ԸնդՀ. Էր, 195:

Արդ՝ այս վերոյիշեալ Դէոսկորոսն՝ Տիմոթէոս կուզն՝ Պետրոս գայլն՝ եւ Յակոբ ծանծալոս անուանեալն եւ այլ խոռվասէրք եւ Եւտիքական հերետիկոսութեանն պաշտպանք, ո՞րչափ շփոթութեան շար որոմն սերմանեցին ասդին անդին՝ եւ մանաւանդ Հայաստանու մէջ, մինչեւ որ այն ժամանակները Յունաց ազգէն կը լսէինք այս վատ անունը մեր վրայ գրպարտութեամբ խօսուած, Հայք են Մանծալոսեանք. եւ մեր ուղղափառ եւ բարեպաշտ Հայոց ազգին համար խոսք մը ընելու ժամանակնին կը կոչէին Մանծալոսեանք, այսպէս են Մանծալոսեանք, եւ կամ այնպէս, եւայլն:

Այս խոցոտիչ սրտի եւ ատելութեան պատճառ գրպարտութիւնը կը լսէր մեր Լուսաւորչակրօն ուղղափառ Հայոց ազգը՝ եւ կը համբերէր, մինչեւ որ Աստուած ընտրեց մեզի շնորհագարդ եւ Ազգասէր Սրբազան Հայրապետն մեր ն Ջաքարիա կաթողիկոսն, որ նստաւ յաթոռ Հայրապետութեան յամի տեառն 854. եւ այն զազիր եւ ատելի անունը Մանծալիկեանք՝ մեր Հայոց ազգին վրայեն վերցուց յատուկ գիր գրելով առ Փոտ Պատրիարքն Յունաց, որ եւ կոչի Ֆո-

դիոս բռնօթոս բաթարիոս, այս գրին մէջը մեր հայոց սուրբ եկեղեցւոյն ուղղափառութիւնը յայտնի ընելէն վերջը կըսէ. «Չեմք մեք աշակերտ Յակոբայ Մանծալոսի, յորմէ Յակոբիկք անուանին, եւ ո՛չ Յուլիանեայ աղիկառնացւոյ, եւ ո՛չ Պետրոսի անտիոքացւոյ, եւ ո՛չ Եւտիքեայ, այլ սրբոյն Գրիգորի լուսաւորչի՝ վկայի եւ ճգնաւորի»:

Տեսանէ՞ս ո՛վ համակրօն ուղղափա՛ռ Սիրելի, մեք չեմք աշակերտք հերետիկոսութեան հետեւող, եւ շփոթութիւն տուող մաքուր միտքերուն եւ ստապատիր խօսողներուն, այլ ճշմարտութեան քարոզ բազմաչարչար վկային Քրիստոսի մեծ քահանայապետին մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչի եմք աշակերտեալք, որ նա ինքն քարոզեց մեզի, որ բանակուի շրլանք պարապ խընդիրներու մէջ, եւ ականջ չիտանք այնպիսի խօսքերուն, որ զմեզ սուրբ եւ ուղղափառ հաւատքէն կը մոլորեցուցանեն եւ կը խոտորեցուցանեն, ինչպէս կը կարգամք Սուրբ լուսաւորչի մերոյ շորրորդ ճառին մէջ, որ մեզի քարոզեց. «Կշռել եւ խորհիլ եւ առնել զայն՝ որ ՚ի հաճոյս աստուծոյ աւարտի ճըշմարիտ վկայութեամբ սուրբ գրոց: Եւ մի՛ անկանիլ ՚ի բազմախոյզ խնդիրս, որք վրիպե-

ցուցանեն ՚ի սուրբ հաւատոց» . Յաճա. Եր, 37:

Ապա սոյն այս լուսաշաւիղ ճանապարհը ճշմարտութեան ունեցան Սրբազան Հայրապետներնիս հեղինակ ունելով զսուրբ Գրքիգոր մեծ Քահանայապետն եւ լուսաւորիչն մեր, որով ոչ յաջ եւ ո՛չ յահեակ խոտորելով սուրբ եւ ճշմարիտ հաւատոյ ուղղափառութիւնը պաշտպանեցին. եւ վկայեալ հերետիկոսները եւ հերձուածողները նզովեցին, եւ մերժեցին եւ ընդդէմ մոլորութեան նոցին բազում բանս ճշմարտութեան գրեցին. եւ ազատ պահեցին մեր սուրբ եկեղեցին անոնց չարաչար հերետիկոսութենէն եւ պիղծ աղանդներէն: Թէպէտ Հայոց ազգը Քաղկեդոնի ժողովքին մէջ չ'գտնուեցաւ, եւ հեռի մնաց անկէց, որոյ պատճառն ալ վերը յայտնեցինք. եւ շատ այլ եւ այլ շփոթութիւն տուող ձայներ ալ լսեց. բայց ամենը մէկ դի ձգեց, միայն ունկնդիր եղաւ ամենուն, եւ ՚ի վերջոյ վերահաս ըլլալու համար աղէկ քննեց, եւ իմացաւ ամբարշտութիւնը եւ չարաչար մոլորութիւնը Եւտիֆէսի, եւ այլոց ամենայն հերետիկոսաց, վասն որոյ անուննին տալով եւ սոսկալի մոլորութիւննին յիշելով իրաւամբ կը նզովէ եւ կը բանադ-

րէ միշտ զնոսա, եւ այլ եւս շատ ժողովներ ալ եղած է. անոնց մէջ գտած կանոնադրութիւնները եւ սահմանադրութիւնները, որ երեք սուրբ տօնելի եւ տիեզերական ժողովոց Նիկիոյ՝ Կոստանդնուպօլսի՝ եւ Եփեսոսի համեմատ որ տեսեր է, եւ գտեր է՝ կը ճանաչէ եւ կընդունի, եւ անոնց հերքածը եւ նզովածը կը հերքէ եւ կը նզովէ. վասն որոյ այս մեր Հայոց եկեղեցւոյ այս ունեցած ուղղադատ ճշմարտասիրութիւնը կը յայտնէ, եւ աշխարհալուր կը քարոզէ եղբայրն սրբոյն Ներսէսի շնորհալուոյն՝ ազգասէր եւ հոգելից սրբազան Կաթողիկոսն Գրիգորիս բացայայտ գրելով առ Կիռ Մանուէլ կայսրն Յունաց այսպէս. «Վասն զի գումարեալ ժողովք հարց սրբոց՝ որք ՚ի ժամանակս ժամանակս եղեն ՚ի սուրբ եւ ՚ի կաթողիկէ եկեղեցիս ընդդիմամարտք զանազան հերձուածոց, յայտնի փայլին ՚ի մէջ մեր՝ թէ ո՞չք եւ վասն որո՞յ պատճառի շարժեցան յայն. եւ սրբոց հարցն որք միաբանեցան յիւրաքանչիւր ժողովս՝ ուղղափառութեանն ձայնակցիմք, եւ զնզովեալսն ՚ի նոցանէ նզովեմք: Որք արդարեւ յարդամեցին զդժուարինսն՝ ՚ի դիւրինս, եւ զառապարն ՚ի հարթ ճանապարհս, եւ խլեցին զորոմն ապականիչ՝ որք են գայլք ՚ի հանդերձս

գառանց. յորոց զգուշացուցին զբանաւոր հօտս ոչխարաց: Եւ ՚ի սոցանէ առաջին եւ տիեզերական ժողովն՝ որ ՚ի Նիկիա, ՚ի ժամանակս աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, որք զհամագոյութեանն հաւատ հաստատեցին ընդդէմ Արիանոսացն, եւ էր մի ՚ի սրբոյ ժողովոյն Արքեպիսկոպոսն Հայոց մեծն Արիստակէս որդի սրբոյն Գրիգորի. յորմէ ընկալեալ զուղղափառ դաւանութիւն Նիկիական ժողովոյն՝ զգուշացաւ եկեղեցի մեր եւ անփորձ մնաց յԱրիանոսացըն աղանդոյն մինչեւ ցայսօր: Եղեւ ժողով ՚ի Կոստանդնուպօլիս ընդդէմ հոգեմարտիցն, ընդ որս էր եւ մերն Հայրապետ սուրբըն Ներսէս, որում եւ աշակերտեալք՝ ամրացաք ՚ի Մակեդոնի աղանդոյն: Եւ երրորդ ժողով յԵփեսոս ընդդէմ Նեստորի՝ (որ) ըստ պատահման ժամանակին ունէր զաթոռ Արքեպիսկոպոսութեանն Կոստանդնուպօլսի. սա ո՛չ Աստուածածին դաւանէր զսուրբ Կոյսն, եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ո՛չ յերկուց բնութեանց միաւորեալ, այլ շարադրութեամբ յարակցեալ. ընդդէմ որոյ ժողովեալ երկերիւր սուրբ հարցն յԵփեսոս, արտաքս ձգեցին զնորին շար հերձուածն յեկեղեցույ, եւ ետուն մեզ զուղղափառ հա-

ւատ ժողովական թղթովք սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի. զորս ընկալաւ Հայրապետն Հայոց մեծն Սահակ, եւ խորշեցոյց զեկեղեցի մեր ՚ի Նեստորի շար հերձուածոյն: Գտանին եւ այլ եւ այլ ժողովոց կանոնադրութիւնք ՚ի մէջ մեր եւ ընդունելի են՝ որք զզանազան կարգս եկեղեցւոյ հաստատեցին՝ եւ զպէս պէս հերձուածս հերքեցին. որպէս եւ Անկիւրեայ ժողովն ՚ի հերքումն Լիկիանոսի ամբարշտութեանն, որ ՚ի զոհս կռոցն բռնադատէր զերիցունսն. եւ Կեսարեայն ընդդէմ յուռթից կանանց. եւ Նէոկեսարեայն ընդդէմ անխտիր պոռնկութեան. եւ Գանգրեայն ընդդէմ Օստացւոց հերձուածոյն. եւ Լաւողիկեայն ընդդէմ շորեքտասաներորդացն. եւ Սարգիկեայն ՚ի պէտրս եկեղեցական կարգաց: Յայս ուղղափառ ժողովոցս եւ որք սոցին հանգոյն՝ ուսաք զհաւատոյ դաւանութիւն, եւ ՚ի նոցին կանոնադրութենէ զգործոց պարկեշտութիւն՝ եւ զմեղաց խտրութիւն՝ եւ զեկեղեցական կարգաց վայելչութիւն. որոց եւ առաջնորդութեանն հայրենի դաստիարակութեամբք ուղեկից լինիմք զգուշացեալք առ ՚ի յո՛չ խոտորել յաջ եւ ո՛չ յահեակ յարքունական պողոտայէն՝ զոր ցուցին մեզ. վասն այնորիկ

եւ համարձակութեամբ նզովեմք զառ ՚ի նոցանէ նզովեալ հերձուածողան. զԱրիոս՝ որ ո՛չ ասաց զորդի ՚ի բնութենէ հօր. զՄակեդովն՝ զի հայհոյեաց զհոգին սուրբ. զՊօղոս շամշտացին եւ զՆեստոր նորին հերձուածոյն նորոգիչ՝ որք մարդ դուզնաքեայ ասացին զԱստուածն մեր եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, յարակցութեամբ եւ հաճութեամբ շարայարեալ յԱստուած՝ եւ ո՛չ անճառ եւ սքանչելի միաւորութեամբ. նզովեմք եւ զամբարիշտն Եւտիքէս՝ որ զմիութիւն աստուածութեանն եւ մարմնոյն շփոթմամբ դաւանէր, եւ ո՛չ յատկութեամբ ՚ի հայեցողութիւնն բնութեանց: Ընդունիմք իսկ եւ երգակցիմք սուրբ եւ աստուածազգեաց հարցըն՝ որք այսոցիկ հերձուածոցս մահու չափ ճգնեալ հակառակ կացին. եւ զուղղափառ հաւատ աստուածաշունչ վարդապետութեամբն իւրեանց գրով ետուն մեզ, զորս առեալ ընկալաք, եւ միշտ ընթերցմամբ ՚ի նոցին աշակերտութիւնն փութամք գտանիլ անմոլար»։ Ընդհ. Էր, 113:

Այս ճշմարտութեան հոգևով էր Յօհան իմաստասէր Հայրապետն մեր, որ ունի ըսքանչելի ատենաբանական ճառեր զարմանալի վարդապետութեամբ զարդարուած.

սա՝ մերժեց հերքեց Հայաստանէն Պօղիկեանց շարագոյն աղանդը, եւ Յուլիանեայ Աղիկառնացւոյ պիղծ մոլորութիւնը ընդդէմ զինեալ նոցա ազդու բանիւ ճշմարտութեան: Եւ գրեց զանազան կանոնադրութիւններ եւ պէս պէս պատշաճաւոր մեկնութիւններ մեր սուրբ եկեղեցւոյն ժամակարգութեան եւ ծիսից վրայով, այս երանելւոյն է այն հրաշալի Շարականը՝ որ այսպէս կ'սկսանի. Անսկիզբն բանդ Աստուած, եւայլն:

Այս ամենայն այլովքն հանդերձ յայտնի է ամենայն եկեղեցականաց եւ իմաստասիրաց: Սոյնպէս է եւ Վահան հայրապետն մեր՝ որ ինչպէս ինքն ընտիր էր, եւ լաւ շատերուն մէջ վարուք եւ բարուք, այնպէս ալ լաւ եւ ընտիր հանդիսացաւ խոհական եւ ճշմարտասէր մտօք, որոյ գովութիւնն տայ Մատթէոս ուռհայեցի պատմիչն մեր յասելն. «Ձեռնադրեցին զլաւն ՚ի բնաւիցս գերանելին զՎահան, եւ թէ՛ սուրբ հայրապետն Հայոց Վահան»:

Ասոնց մէջ գերազանց կը հանդիսանայ Հրեշտակակրօն սուրբ Վարդապետն մեր Գրիգոր նարեկացի, որ բաց ՚ի զանազան հոգեբուղիս սրտաշարժ հրաշալի բանից խնկելի աղօթից, եւ աստուածաբանական զարմանալի

ճառից, ցուցանէ մերս Հայոց եկեղեցւոյ ուղղափառ հաւատոյ խոստովանութիւնը եւ պարտաւորութիւնը բարի վարուց եւ գործոց, որոյ վերնագիրն է. «Գրիգորի Նարեկացւոյ՝ բան վասն ուղիղ հաւատոյ եւ խըրատ վարուց եւ գործոց»:

Ահա՛ այս երջանիկներուն վկայութիւնները առնելով սուրբն Ներսէս լամբրոնացի Աստուածիմաստ արքեպիսկոպոսն Տարսոնի Կիլիկեցւոց, ատենաբանելով ՚ի մէջ մեծի ժողովոյն եկեղեցականաց յայտնի կ'ապացուցանէ խաղաղասէր հոգւով Հայոց սուրբ եկեղեցւոյն ուղղափառութիւնը՝ յասելն. «Ահաւասիկ յայտ եղեւ Հա՛րփ սուրբփ, թէ չի՛ք ինչ ՚ի մէջ մեր վասն առ Քրիստոս խոստովանութեանս հակառակութիւն. որք ՚ի մի շաւղաց վերայ ընթացաք, եւ ընթանամք: Այլ ընդէ՛ր ասեն, ո՛չ ոք զայս մինչեւ ցայսօր յայտնեաց, այլ մանաւանդ եւ զնորին հակառակն. Աստուծոյ է այս քննելի, մանաւանդ թէ եւ բազումք ասացին ՚ի մերոցս՝ առաջնոց սրբոց եղեալ հետեւողք: Սակայն բարք մարդկան հակառակասէր է, զայնս որ ճշմարտութեանն էր ջատագով եւ խաղաղութեանն՝ անգոսնեցին, եւ զառ թշնամութիւն մարզիչ բանսն՝ սիրեցին եւ գրեցին:

Ապա թէ ոչ՝ ու՛ր դիցուք զբանսն Յօհաննու իմաստասիրին եւ հայրապետին. որ զայս առ մեզ վկայութեամբ հարցն սրբոց ստուգէ: Զեզրի հայրապետին եւ զիւրոյ ժողովոյն զհաւանութիւնն. զՎահանայ հայրապետին զհամաձայնութիւնն առ մեծ եկեղեցին Հոռոմոց, եւ զնորին հետեւողաց թագաւորացն եւ վարդապետաց. յորոց մի էր եւ իմն Աստուածաշնորհ՝ եւ յոքունց գերազանց՝ հրեշտակն ՚ի մարմնի Գրիգոր Նարեկացի: Ուր եւ զորոյ աչօք տեսէք, եւ բանիցն աշակերտ էք, եւ հիմանն արկելոյ շինիչք, զսրբոյ Հօրն մերոյ Ներսէսի՝ զայսմ հետեւողութիւնն».

Արեւս, Էրեւ ՅԾ:

Այս ստուգութիւնները՝ այս արժանահաւատ եւ ճշմարտաճառ Հայրապետաց սրբոց վաւերական վկայութիւնները աշխարհալուր կը քարոզեն, որ Հայոց եկեղեցին ազատ եւ մաքուր մնացեր է ամեն մէկ հերձուածողութենէ եւ հերետիկոսութենէ, իբրեւ ոսկի անարատ եւ իբրեւ գանձ անկապտելի պահած ունի իրեն ուղղափառութիւնը եւ բարեպաշտութիւնը. ինչպէս կըսէ Կովտին. «Նախադասութիւնն յայտնի լինի մեզ վկայութեամբ, յորժամ յիրագէտ եղելոցն եւ ՚ի հաւատարմաց հաստատի».

Հապոթ ա. Էր, 86:

Եւ եթէ ըստ տեառն անժխտելի բանի, «Ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան». Մաթ. ժը. 16: Ուրեմն այսչափ ընդունելի ամենեցուն եւ ճշմարտաբան վկայից բանք՝ պիտի համոզեն ամեն իրաւասէր արդարաքնին եւ ճշմարտասէր միտքերը՝ որ այսօրուան օրս Հայք ո՛չ հերձուածող են եւ ո՛չ ալ հերետիկոս, այլ ուղղափառ են եւ բարեպաշտ:

Իսկ եթէ ոմանք շահասիրութեամբ եւ աշառութեամբ՝ կամակորութեամբ եւ կամ իմաստասիրութիւնը իմաստակութեան փոխելով՝ ՚ի մասնաւորէ ընդհանուր դատումն ընելով սխալ եզրակացութիւն մը հանեն, ու ըսեն վերստին, թէ «այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են»: Այնուհետեւ հարկաւ Հայոց ազգը անանկներուն վրայ պիտի կարգայ Եսայի մարգարէին խօսքը. «Վա՛յ այնոցիկ՝ որք ասիցեն զչարն բարի, եւ զբարին չար, ոչք դնիցեն զլոյսն խաւար, եւ զխաւարն լոյս, ոչք դնիցեն զդառն քաղցր, եւ զքաղցրն դառն». Ե. 20:

Եւ ասով ալ բաւական չ'ըլլար Հայոց ազգը, այլ իրեն ուղղափառութեամբը եւ բարեպաշտութեամբը համարձակ Սրբազան

Պօղոս Առաքեալին հետ ձայնակից ըլլալով կը բողոքէ. «Վկայ է ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգւով իմով յաւետարանի որդւոյ նորա». *Հռով. ա, 9:*

Այսօրուան օրս յիրաւի Հայոց ազգը շունի մարմնաւոր հարստութիւն եւ ճոխութիւն մարմնաւոր փառաց, եւ մերկացեալ աշխարհային վայելչութենէն շատերը Հայոց ազգէն իրենց բարեբեր աշխարհէն և սիրելի հայրենիքէն գաղթական եղած են, եւ Աստուծոյ ողորմութեամբն պատսպարեալ կան ՚ի ներքոյ խնամարկութեան եւ հովանաւորութեան մարդասէր եւ բարերար ինքնակալ թագաւորաց. բայց այսօրուան օրս Հայոց ազգը մասնաւորապէս խեղճ չէ՛. ինչպէս որ ըսեր են սխալմամբ, եթէ «Մխիթարեանք կը կարեկցին եւ կողբան իրենց ազգին խեղճութեանցը վրայ». *Ջաֆ, ԳԵԳ, Էր, 14:* Վասն զի Ասիայի եւ Եւրոպայի մէջ եւ ամէն տեղ մարմնաւոր շնորհքներ եւ խնամքներ կընդունին, եւ կը վայելեն ինքնակալ բարեխնամ Կայսերներէն՝ եւ բարեսէր Պայազատներէն՝ եւ մեծատոհմ Ազնուականներէն ամեն տեղ իրենց հնազանդութեամբը եւ հաւատարիմ ծառայութեամբը եւ բարեկիրթ քաղաքավարու-

Թեամբը:

Եւս եւ այսօրուան օրս Հայոց ազգը հոգեւորապէս ալ խեղճ չէ՛, որովհետեւ ուղղափառութեան լոյսը անշիջանելի պահեր է իրեն սուրբ Եկեղեցւոյն մէջը. եւ ՚ի բանս հաւատոյ՝ մոլորութիւն մը շունի՝ եւ պիտի շունենայ Աստուծոյ շնորհիւն, վասն զի ասոր համար յատուկ արժանահայց մաղթանք եւ աղօթք ըրած է բազմերախտ Քահանայապետն եւ լուսաւորիչն մեր սուրբ Գրիգորիոս, վասն որոյ Յօհան ծործորեցի սուրբ վարդապետն մեր այսօրուան օրս մեր Հայոց ազգին այս հոգեւոր երանութիւնը կուտայ. «Եւ թէպէտ ըստ այսմ ամենայնի ողբոց ես արժանի, եւ զի զմարմնական ճոխութիւնս քո օտարք վտարեցին, եւ մանկունք ուխտի քո ՚ի գերութիւն վարեցան, եւ զուարճալի զարդ քո կողոպտեցաւ, եւ անճառելի խորհուրդն գնոց այսօր վաճառի, եւ երկնաւորն աստիճան յերկրասիրաց յափշտակի: Այլեւ ՚ի մեծն եւ ՚ի գլխաւորական բարիսն երանելի ես եւ յոյժ խնդալի, վասն զի ուղղափառ հաւատոյ քո լոյս ո՛չ նուաղեցաւ, ՚ի բարի սերմունս ցորենոյդ՝ որոմն ո՛չ խառնեցաւ, զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ո՛չ պղտորեաց.

՚ի ստուգութեան եւ ՚ի ճշմարտութեան հացըն քո կենդանական՝ մեռելական խմոր եւ հերձուած քացախութեան շարութեանն ո՛չ զանգեցաւ. յոսկի անբիծ հաւատոյն, եւ յարծաթ լուսատեսիլ բանին՝ պղինձ ժանտահոտ եւ կապար սեւաթիւր ո՛չ գտաւ. եւ այսոքիկ խնդրուածովք մեծ նահատակին Քրիստոսի սրբոյ Գրիգորի քեզ շնորհեցան, որ է գլուխ մեզ ամենայն բարեաց, եւ հիմն կենաց յաւիտենականաց». Յաճախ. ՚ի ներքող լոս. եր, 338:

Ուրեմն կը համարձակի Հայոց ազգը աղօթիւք եւ ճշմարտաճառ քարոզութեամբ մեծի Քահանայապետի եւ Լուսաւորչի սրբոյն Գրիգորի հերքել եւ մերժել այն զըրպարտութիւնը, որ կը լսէ ատելութեան հոգւով գրուած ու խօսուած, եթէ «այսօրուան օրս Հայք հերձուածող եւ հերետիկոս են»: Ո՛չ թէ միայն բանիւ լոկով եւ դառնակսկիծ խօսքերով՝ ատելի կրիւք եւ վատաբանելով, այլ խաղաղ եւ ճշմարտասէր հոգւով բացայայտ առնելով իրեն ուղղափառութիւնը եւ բարեպաշտութիւնը, ուղղափառ եւ ճշմարտասէր քրիստոնեայ ազգաց քարոզելով, որ ինչպէս Հայոց ազգը յառաջագոյն էր ուղղափառ եւ բարեպաշտ, եւ

այսօրուան օրս ալ ուղղափառ եւ բարեպաշտ է նոյն Հայոց ազգը, որ պիտի տեսնան յայս հինգերորդ գլխէն սկսեալ շնորհիւ սուրբ Հոգւոյն Աստուծոյ:



Գ Լ ՈՒ Վ Ե

Գիտեմք՝ որ միշտ յաղթող կը հանդիսանայ ճշմարտութիւնը, ո՛վ որ իրեն կողմը օգնական ունի ճշմարտութիւնը, եւ համաձայն է խօսքը ճշմարտութեան, անշուշտ պիտի իրաւունք ստանայ. եւ զրպարտութեան՝ նախատանաց եւ արհամարհութեան մէջ ալ պարզերես եւ յաղթող պիտի փառաւորի. ուրեմըն մեր բարեպաշտ եւ ուղղափառ Հայոց ազգը թո՛ղ չ'տրտմի եւ չ'քանի, թո՛ղ բարեզգեսց սիրտը չ'կոտրի ու չ'ցաւի, թո՛ղ արիանայ քաջալերի, որովհետեւ կենդանի սուրբ հաւատոյ եւ ուղղափառութեան ճշմարտութիւնը ունի, եւ անով պիտի հաստատէ իրեն ուղղափառ եւ բարեպաշտ ըլլալը: Ապա թո՛ղ քարոզէ աստուածիմաստ Դաւիթ մարգարէին պէս՝ Հայոց ազգն ալ ճշմարտութեան զօրութեամբը արիացեալ, ախոյեան հանդիսացեալ՝ ընդդէմ հակառա-

կորդաց իւրոց բողոքել առ աստուածային ճշմարտութիւնն՝ համարձակ ասելով. «Տաց պատասխանի ոչք նախատեն զիս բանիւք, զի ես ՚ի բանս քո յուսացայ: Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ»։ Սաղմոս. ճԺբ. 42:

Քրիստոսական սուրբ եկեղեցւոյն մէկ հրաշալի յատկութիւնն ալ այս պիտի ըլլայ, որ միշտ անոր ճշմարտութեանը եւ ուղղափառութեանը դէմ ելլող պիտի գտնուի, բայց սուրբ եկեղեցւոյն ճշմարտութիւնը ո՛չ մարդկային մտաց հանճարով հաստատեալ է, այլ վերին աստուածային յայտնութենէն սուրբ գրոց միջնորդութեամբ է հաստատեալ. վասն որոյ մարդկային շարաշար բարբարոսական բռնութիւններէն՝ եւ մանաւանդ դատումներէն եւ հակառակութենէն չ'երկրնչիր եւ չ'յաղթահարիր ուղղափառ քրիստոնէութիւնը. «Եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն»։ Մար. ԺԿ. 18: Այս մտօք եւ շատ իրաւամբ վկայելով այս մեր բանիցն ճշմարտութեան համեմատ կը խօսի կորովամիտն Կղօղիոս Ֆլէօրի ՚ի մատենագրութեան Աւնցաղ խորայեւացոյ ես խրեպոնէից. «Եթէ ո՛չ յաստուծոյ էր քրիստո-

նէութիւն, անհնար էր նմա ընդդէմ կալ
ահագին բախմանն շուրջանակի, այլ յայտնի
արար Աստուած թէ բնակէ յեկեղեցւոջ իւ-
րում, եւ ոչինչ ՚ի յեղափոխութեանց մարդ-
կան ունին դղորդել զնա»։ Մասն, Դ. ԵՊԴ. Է։

Այո՛ արդարեւ Հայոց բարեպաշտ ազգն
ալ շատ ու շատ հալածանքներ բռնութիւն-
ներ քաշեց անհաւատ կռապաշտներէն՝
բարբարոսներէն՝ քրիստոնէական սուրբ եւ
ճշմարիտ հաւատոյ համար, որ մարդ լսելովը
միայն կափշի ու կը սարսափի, որոնցմէ մէկն
ալ այս է, որ կը պատմէ Թովմայ արծրունին՝
Բ Շապուհ Պարսից արքային համար ասե-
լով. «Շապուհ արքայից արքայի թագաւոր-
եալ բազում եւ անչափ շարիս հասուցանէր
՚ի վերայ Հայոց աշխարհիս եւ Ասորեստան-
եայց եւ Պաղեստինացւոց... եւ զբովանդակ
թոյնս անբժշկականս իժից եւ քարբից եհեղ
՚ի վերայ քրիստոնէից. յորմէ բազում սուրբք
՚ի Քրիստոս վկայեցան, եւ որպէս ասի աւելի
քան զքառասուն հազար սրբոց արանց, որք
վկայեցին վասն Քրիստոսի. բազումք յեպիս-
կոպոսաց՝ ՚ի քահանայից եւ յայլ կարգէ յե-
կեղեցական զնդէ, բազմագոյնք եւ յազա-
տաց աշխարհիս, եւ ՚ի տիկնանց նոցա անհնա-
րին եւ դառն տանջանօք, զոր սարսափեմ եւ

հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահրնար մեքենաւոր շարշարանաց»։ Եբ, 69:

Պատմութեանց ծանօթ ուսումնական ազգասէր հոգեւոր եղբարց եւ որդւոց մերոց յայտնի է, որ մեր Հայոց ազգը ո՛րչափ զանազան վիշտեր, հալածանքներ եւ բազմատեսակ շարշարանքներ կրած է՝ թէ յարտաքուստ եւ թէ ՚ի ներքուստ Պօղոս Առաքելոյն ըսածին պէս. «Վիշտս ՚ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ՚ի հեթանոսաց, վիշտս ՚ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ՚ի ծովու, վիշտս ի սուտ եղբարց»։ Ը Աորն. Ժա. 26: Բայց այսպիսի բազմատեսակ վիշտերուն մէջ հաստատուն պահեց իրեն աստուածապարգեւ ուղղափառ սուրբ հաւատքը եւ բարեպաշտութիւնը:

Ահա՛ այս ամենայն ճշմարտութեան վերահասու եղաւ Վերապատուելի Հ, Միքայէլըն շամչեան, որովհետեւ Հայոց զանազան պատմութեանց քաջ ծանօթացաւ, եւ հաւաքեց երեք հատորի մէջ պարունակելով ամենը՝ որչափ ձեռնհաս եղեւ գտանել աստի եւ անտի, եւ տեսեալ միանգամայն Հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը ճշ-

մարտասիրական եւ ազգասիրական հոգւով ազատ յամենայն կրից ատելութեան եւ շահասիրութեան՝ վկայեաց ասելով եւ գրելով Վահան հաւատոյ գրքին յառաջաբանութեանը մէջ. յորոյ իսկական գաղափարէն առեալ ցուցանեմք աստանօր, որ նախ ասէ. «Քանզի յաւուրց անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ յոյր ձեռն ընկալաւ ազգ Հայոց զսուրբ հաւատս ուղղափառութեան, նովին հաւատով անփոփոխ եկաց մնաց մինչեւ ցայսօր. զի զնոյն հաւատ ուսուցին եւ որդիք եւ թոռունք նորին եւ ամենայն հարք, եթէ կաթողիկոսունք եւ եպիսկոպոսունք». եւ այլն: Եւ ապա սակաւ ինչ յառաջ գնացեալ վերստին ասէ. «Առ այժմ շատ իսկ է այսչափս առ ՚ի կատարումն դիտման մերոյ, այսինքն՝ յայտ առնել՝ թէ եկեղեցին Հայաստանեայց ՚ի զանազան վիճակս յաջողութեան եւ ձախողութեանց. թեպէտ բազմապատիկ ալեկոծութիւնս կրեաց, բայց ո՛չ փոփոխեցաւ ՚ի շաւղէ ուղղափառ հաւատոց եւ բարեկարգութեանց, զոր ընկալաւ ՚ի սուրբ Լուսաւորչէն. այլ անխախտ պահեաց եւ պահէ զնոյն մինչեւ ցայժմ:

Ուրեմն մեր ուղղափառ խոստովանութիւնը հաւատոյ թո՛ղ այս տեղս ալ յայտնի

ըլլայ եւ աշխարհ ամենայն թո՛ղ լսէ, մանա-
 ւանդ հաւատակից եւ կրօնակից եղբայրներ-
 նիս, եւ ուղղափառ քրիստոնեաները եւ քը-
 րիստոսի հարազատ աշակերտները՝ հոգեւոր
 եւ ճշմարտասէր հովիւները լսեն եւ ուրախ
 ըլլան, եւ հակառակասէր շահախնդիր եւ
 մարդահաճոյ թշնամիներնիս ամօթապարտ
 ըլլան, թո՛ղ մեր վրայ ալ սրբազան Պօղոս ա-
 ռաքեալը աղօթք ընէ ու աստուծոյ գոհու-
 թիւն տայ, որ մեր հաւատոյ ճշմարտու-
 թիւնը ամեն աշխարհի մէջ քարոզված է,
 ինչպէս որ Հոովմայեցւոց հաւատացելոց
 համար կը գրէ. «Գոհանամ զաստուծոյ իմոյ
 ՚ի ձեռն յիսուսի Քրիստոսի վասն ձեր ամե-
 նեցուն, զի հաւատք ձեր պատմեալ են ընդ
 ամենայն աշխարհ»։ Հոով. ա. 8:

Արդ՝ սկիզբն եւ առաջին հիմն մերս ուղ-
 ղափառ հաւատոյ դնեմք աստ Ամենասուրբ
 Երրորդութեան վրայով ունեցած ուղղափառ
 եւ ճշմարիտ խոստովանութիւննիս. որովհե-
 տեւ առաջին եւ գլխաւոր հիմն հաւատոյ
 քրիստոնէութեան՝ է ճանաչումն եւ դա-
 ւանումն սրբոյ Երրորդութեան եւ միոյ աստ-
 ուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
 սրբոյ. եւ այս պաշտելի եւ երկրպագելի ա-
 նունով՝ մկրտութեան շնորհքներուն արժա-

նի եղած եմք, եւ Քրիստոնեայ անուանած
 եմք, ինչպէս որ Յիսուս հրամայեց իրեն սրբ-
 բազան Առաքելոյ եւ աշակերտաց ասելով,
 «Գնացէ՛ք այսուհետեւ, աշակերտեցե՛ք զա-
 մենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յա-
 նուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ».
 Մատ. Իշ. 19:

Ասոր համար մեծ Քահանայապետն մեր
 սուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ իրեն սքանչելի
 քարոզութեան առաջին հիմն դրաւ Ամե-
 նասուրբ եւ երկրպագելի Երրորդութեան
 ուղղափառ խոստովանութիւնը՝ սկսելով այս-
 պէս. «Մի է բնութիւն եւ գոյութիւն ա-
 մենասուրբ Երրորդութեան, եւ իւր է ինք-
 նութիւնն եւ յիւրմէ գոյութենէ: Զի ՚ի
 սկզբանց ունի զպատճառն գոլ Հայր զՈրդ-
 ւոյ եւ զսուրբ Հոգւոյ: Իսկութիւն անծին
 եւ էութիւն անսկիզբն, եւ մշտնջենաւորու-
 թիւն անսահման, եւ ճշմարտութիւն անփո-
 փոխ: Կեանք է եւ կենդանացուցիչ ամե-
 նայն կենդանեաց. Հայր է որդւոյն, եւ բըղ-
 խող Հոգւոյն: Աստուած է արարիչ ամենայն
 արարածոց երեւելեաց եւ աներեւութից».
 ա Ճատ. Յաճախ. 1:

Այս սուրբ հաւատոյ լուսաշաւիղ ճանա-
 պարհը ունեցան Հայոց սուրբ եկեղեցւոյն

եպիսկոպոսապետները եւ եպիսկոպոսները եւ վարդապետները, յորոց մի էր եւ սուրբն Ներսէս Շնորհալի Հայրապետն մեր, որ երբ Հայոց ուղղափառ խոստովանութիւնը գրեց առ կայսրն Յունաց Ալեքս, անդանօր հիմն եւ առաջին մասն ուղղափառ խոստովանութեան Հայոց եկեղեցւոյն դրաւ երկրպագելի եւ Ամենասուրբ Երրորդութեան՝ դաւանումը ասելով, «Խոստովանիմք զամենասուրբ զերրորդութիւնն՝ զՀայր եւ զՈրդի եւ ըզսուրբ Հոգին, յերիս անձնաւորութիւնս բաժանեալ, եւ ՚ի մի բնութիւն եւ յաստուածութիւն ժողովեալ: Հայր անձին եւ անըսկիզբն յառաջ քան զյաւիտեանս. Որդի ծընեալ ՚ի բնութենէ հօր անախտ եւ անմարմին նախ քան զժամանակս, Հոգին սուրբ բղխումն ՚ի հօրէ՝ ո՛չ ըստ որդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւրաբար՝ ինքեան միայնոյ քննելի օրինակն եւ յարարածոց անգիտելի: Եւ ո՛չ էր երբեմն Հայր՝ յորժամ ո՛չ էր ընդ նմին Որդի եւ Հոգի, այլ որպէս Հայր միշտ Հայր՝ եւ ո՛չ յետոյ ստացեալ զանուն հայրութեան, նոյնպէս եւ Որդի՝ միշտ Որդի ընդ հօր իւրոյ մշտնջենաւոր. այսպէս եւ Հոգին սուրբ՝ միշտ Հոգի աստուծոյ. անմեկնելի ՚ի հօրէ եւ յորդւոյ, մի

էութիւն, մի իշխանութիւն, մի կամք, եւ մի արարչագործ զօրութիւն յերիս անձնաւորութիւնս իմանի: Ո՛չ մեծութիւն եւ ո՛չ փոքրկութիւն, ո՛չ բարձրութիւն եւ ո՛չ խոնարհութիւն, ո՛չ առաւելութիւն եւ ո՛չ նըլազութիւն, այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն սուրբ Երրորդութեանն դաւանի. որով գոյացան յոչէից եղեալքս ամենայն. երկինք՝ երկնաւորօքն, եւ երկիրս երկրաւորօքս. երեւելի եւ աներեւոյթ արարածք յառաջին եղեալ արարչութեան».

Ընդհ. Էր, 56:

Այս մեր սուրբ եկեղեցւոյ Ամենասուրբ Երրորդութեան վրայով ունեցած հաւատոյ խոստովանութիւնը ուղղափառ է. վասն զի ինչպէս որ սրբազան եւ ուղղափառ Հայրապետները իրաւամբ հերքեցին եւ նզովեցին չարաչար մոլորութիւնները եւ հերետիկոսութիւնները ամենաչար Սաբելի լիբէացւոյն եւ պիղծ հերետիկոսապետին Մակեդոնի: Նոյնպէս եւ մեր սուրբ եկեղեցին կը հերքէ եւ կը նզովէ Սաբել եւ Սաբելեանները, Մակեդոնը եւ Մակեդոնեանները:

Ինչ էր Սաբելի Ընդհանուր-Մի-նը:

Սարսափիմ ըսելու, այս պիղծն ուրացաւ Ամենասուրբ Երրորդութեան երեք աստուածային անձանց անբաժանելի միութիւնը, ու կը բարբանջէր՝ թէ Աստուած է մի միայն, եւ մեկ անձն ունի, որ Հայր ալ կըսուի՝ Որդի ալ կըսուի՝ եւ Հոգի ալ կըսուի, այս հերետիկոսութիւնովը կուրանայր Հօր աստուծոյ՝ եւ Որդւոյն աստուծոյ՝ եւ Հոգւոյն սրբոյ անձանց զանազանութիւնը: Վասն որոյ Սաբելեանները Յիսուսի Քրիստոսի մարդեղութիւնը, չարչարանքը՝ եւ մահը կուտային Հօր աստուծոյ, չարաչար եւ մոլար մտօք մեկնելով Յիսուսի այս խօսքը. «Ես եւ հայր իմ մի եմք»: Ուստի կոչեցան հայրաչարչար: Եւ սոքա նախ դատապարտեցան եւ նզովեցան յամի տեառն 318. ՚ի Սիւնհոգոսի Աղեքսանդրիոյ, եւ ապա յայլ եւ այլ ժողովս, տե՛ս յաստուածաբանութեան Թովմայի, ճառ սուրբ Երրորդութեան, ա Պրակ:

Ինչ էր պղծոյն Մակեդոնի Ընդհանուր-Մի-նը:

Ո՛վ սոսկալի հայհոյութիւն, այս չարագոյնն ալ՝ այլ իմն մոլորութիւն ունեցաւ Ամենա-

սուրբ Երրորդութեան վրայով, նմանելով Արիոսի հերետիկոսապետին, ուրացաւ սրբոյ Երրորդութեան աստուածային երեք անձանց համագոյութիւնը, վասն որոյ պիղծ բերանովն կը բարբանջէր Հոգւոյն սրբոյ համար՝ թէ փառակից եւ հաւասարապատիւ չէ հօր Աստուծոյ՝ եւ Որդւոյն աստուծոյ հետը, այլ օտար եւ պաշտօնեայ է Հօր աստուծոյ եւ Որդւոյն աստուծոյ, եւ արարած ասէր՝ չարաչար եւ մոլար մտօք մեկնելով Յիսուսի այս խօսքը. «Այս են յաւիտենական կեանք՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս»։ ՅԾԷ. ԺԷ. 3:

Այս սոսկալի հայհոյութիւնը ընելով սուրբ Հոգւոյն համագոյ ճշմարտութեանը դէմ, անուանեցան Մակեդոնեանք հոգեմարտ, ինչպես Մովսէս խորենացին ալ կը գրէ. «Սա դարձոյց զամենայն Հարս սուրբս, որք յաղագս ուղղափառութեանն արտասահմանեալ էին ՚ի մետաղս, ըսն որս եւ զմեծն Ներսէս ածեալ առ իւր ՚ի Բիւզանդիոն, պահէ մեծաւ պատուով, մինչեւ ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութեանցն, զի ոչ տէր խոստովանէր զՀոգին սուրբ, եւ ո՛չ

երկրպագելի եւ ո՛չ փառաւորելի ընդ Հօր եւ ընդ Որդւոյ, այլ օտար յաստուծոյ բնութենէն եւ ստացական եւ ծառայ եւ պաշտօնեայ, եւ ազդումն ինչ, եւ ո՛չ էութիւն անձնաւոր: Եւ ժողովեալ սուրբ հարքն ՚ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռօմայ, Նեքտառիոս Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս Աղեքսանդրու, Մելիտոս Անտիօքու, Կիւրղոս երուսաղէմի, Գրիգորիոս Նիւեսայ, Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նագիանզու, Անփիլոքսիոս Իկոնիու, եւ այլ եպիսկոպոսք, միանգամայն հարիւր եւ յիսուն Հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն եւ զամենայն հոգեմարտան»։ Գրք՝ Գ. Գլ. ԼԶ: Այս պիղծն Մակեդոն նախ դատապարտեցաւ եւ նզովեցաւ ՚ի Սիւնհոգոսըն Աղեքսանդրիոյ ՚ի ներկայութեան սրբոյն Աթանասի յամի տեառն 362. եւս եւ ՚ի սուրբ ժողովն Կոստանդնուպօլսոյ յամի տեառն 381:

Արդ՝ իմացանք համառօտիւ երկու հերետիկոսապետներու, այսինքն Սաբելի լիբէացւոյն եւ Մակեդոն հայհոյիչին շարաշար հերետիկոսութիւնները, որոց մոլորութեան դէմ գրողներն ալ շատերէն մէկ քանին այս տեղս կը գրեմք, եւ մեր սուրբ եկեղեցւոյն ուղղափառութիւնն ալ կը յայտնեմք: Ընդ-

դէմ Սաբէլեանց, նախ՝ գրեաց սուրբն Դիոնեսիոս Աղեքսանդրացին երկար առ Դիոնէսիոս Հայրապետն Հռովմայ, եւ քան զայս բացայայտ կը գրէ Գրիգոր աստուածաբանն ասելով. «Երկիրպագանեմք Հօր եւ Որդույ եւ սուրբ Հոգւոյն, զառանձնաւորութիւն որոշեմք, բայց զաստուածութիւնն միաւորեմք, ո՛չ ՚ի մի գերեսեանն հաւաքեմք՝ զի մի՛ զՍաբելին ախտանայցեմք, եւ ո՛չ որոշեմք յերիս այլազգիս եւ օտարոտիս՝ զի մի՛ զԱրիոսին մոլիցիմք»։ Առ որս յաղա՞հս Հա—սարոյ. Ճառք. բ։

Ահա՛ այս ուղղափառութիւնը մեզի քարոզեց սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր ասելով այսպէս. «Կատարեալ է Հայր՝ անձամբ եւ զօրութեամբ, գիտութեամբ եւ բարերարութեամբ, եւ զամենայն՝ իւր անձին իսկութեամբն ունի։ Կատարեալ է Որդի՝ անձամբ եւ զօրութեամբ, գիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, եւ զամենայն՝ հայրածին իսկութեամբն ունի։ Կատարեալ է եւ սուրբ Հոգին՝ անձամբ եւ զօրութեամբ, գիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, եւ զամենայն՝ իւր

անսկիզբն էութեամբն ունի: Մի է բնութիւն աստուածութեանն եւ անփոփոխ իսկութեանն, մի արարչութիւն է եւ մի բարերարութիւն, մի տէրութիւն եւ մի զօրութիւն»։ Յաճ. ճառ. ք. Էր, 6:

Եւ սուրբն Ներսէս Շնորհալին առ Մանուէլ կայսրն Յունաց գրէ. «Խոստովանիմք եւ զերիս զայս անձնաւորութիւնս ՚ի մի աստուածութիւն ժողովեալ եւ միաւորեալ, ո՛չ յայլ եւ յայլ բնութիւնս բաժանեալս ՚ի միմեանց, ըստ Արիոսի՝ արարած եւ ժամանակ ի ներքս մուծանելով, այլ մի բնութիւն, մի տէրութիւն, մի զօրութիւն, մի փառք Ամենասուրբ Երրորդութեանն՝ հաւատացեալ ճանաչեմք: Եւ ո՛չ դարձեալ հրէականին հետեւողի Սաբելի կիբէացւոյ ձայնակցելով՝ զերիսն ՚ի մի հաւաքել անձնաւորութիւնս, այլ բաժանեմք անբաժանաբար եւ միաւորեմք որոշմամբ՝ ըստ ուղղափառ Հարցն դաւանութեան: Քանզի երիս դաւանեմք զանձինս՝ եւ ո՛չ առաւել կամ նուազ քան զերիսն. եւ բնութիւն մի՝ եւ ո՛չ յերիս բաժանեալս ըստ անձնաւորութեանցն, որպէս եւ ծանեաւ Եկեղեցի՝ ՚ի սերոբէիցն սրբաբանութեանց՝ զերիս սրբասացութիւնսն ՚ի մի հաւաքելով տէրութիւն եւ աստուածութիւն»։ ՌնդԸ. Էր, 77:

Սոյնպէս եւ Գրիգորիս կաթողիկոսն մեր գրէ առ Միքայէլ Պատրիարքն Յունաց. «Հաւատամք եւ խոստովանիմք զպաշտելի եւ զերկրպագելի սուրբ զԵրրորդութիւնն՝ մի աստուածութիւն յերիս անձնաւորութիւնս բաժանեալ, որոյ անուանքն զյատկութիւնն հաստատեն, Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգիս». Ընդ. Եր, 120:

Եւ սուրբն Գրիգոր Նարեկացի. «Երբեակ անձնաւորութիւն համայն անքննին, տրոհեալ ՚ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ, իսկ միաւորեալ համագոգութեամբ: Նոյնագոյ բնութեամբ տիրապէս անշփոթ եւ անանջրպետ՝ միով կամօք եւ կցորդութեամբ». Գլ. ԺԳ, 1:

Եւս եւ յերգս արեւագալին ՚ի յորդորական երգեմք. «Երեք անձինք եւ մի բնութիւն մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդութիւնն»:

Արդ՝ միասնական սուրբ Երրորդութեան համագոյութեանը համար՝ որ ընդդէմ մոլորութեան Մակեդոնի հերետիկոսապետին, Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյ հարիւր յիսուն սրբազան Հայրապետները միաբան հաճութեամբ գրեցին այսպէս. «Հաւատամք ՚ի մի Աստուած Հայր ամենակալ յարարիչն

երկնի եւ երկրի, ամենայն երեւելեաց եւ աներեւութից, եւ ՚ի մի տէր Յիսուս Քրիստոս յՈրդին աստուծոյ. ծնեալ ՚ի հօրէ յառաջ քան զամենայն յաւիտեանս. Աստուած ճշմարիտ յաստուծոյ, ճշմարտէ, ծնունդ եւ ո՛չ արարած, համագոյ Հօր, որով ամենայն ինչ եղեւ..., եւ ՚ի Հոգին սուրբ տէր եւ կենդանարար ի Հօրէ բղխեալ, որ ընդ Հօր եւ ընդ Որդուոյ երկրպագի, եւ ՚ի միասին փառաւորի, որ խօսեցաւ ՚ի ձեռն մարգարէիցն»։ եւ այլն։

Այս ուղղափառ հաւատքը համագոյ միասնական սուրբ Երրորդութեան՝ այս ժողովքներէն յառաջ մեր մեծ Քահանայապետն սուրբ Գրիգոր Լուսաւորիչն քարոզեց մեզի ըսելով. «Զի հաւատով ճշմարտեսցուք ՚ի մի Աստուած Հայր եւ տէր եւ արարիչ ամենայնի, եւ ՚ի միածին Որդին որ ՚ի հօրէ, եւ առ հօր, եւ ընդ հօր, եւ ՚ի սուրբ Հոգին՝ որ ՚ի նորին էութենէ, եւ նովաւ արար զամենայն, արարածս։ Որ է մի տէրութիւն, մի զօրութիւն, մի իշխանութիւն, մի մեծութիւն, մի գիտութիւն, մի խորհուրդ, մի պետութիւն, մի անսկզբնական զօրութիւն. երեք կատարեալ անձինք, մի կատարեալ կամք, անպատում անքննին միութիւն Եր-

րորդութեանն, մի իսկութիւն, մի էութիւն, մի աստուածութիւն: Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի, երեք անձինք, մի զօրութիւն աստուածութեան». Ագաթ:

Եւ սուրբն Գրիգոր նարեկացի. «Խոստովանիմք եւ դաւանիմք՝ պաշտեմք եւ երկըրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն: Աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ». Գլ. ԼԷ:

Ներսէս Շնորհալի սուրբ Հայրապետն մեր ՚ի Շարականի Բ աւուր հոգեգալստեան հարցն. «Որ համապատիւ հօր եւ որդւոյ քարոզեցին զքեզ աստուածաբանքն եկեղեցւոյ յոր մկրտիմք եւ դաւանիմք, համագոյ Երրորդութիւն անբաժանելի»:

Սարգիս Շնորհալի իմաստասէր սուրբ Վարդապետն մեր ՚ի մեկնութիւն Յակոբայ առաքելոյն. Ղառ ի: «Թէպէտ եւ անձնաւորութեամբն որոշեալ են Որդի եւ Հոգի ՚ի Հօրէ, սակայն աստուածութեամբն ո՛չ բաժանին, եւ ո՛չ բնութեամբն եւ ո՛չ էութեամբն»:

Արդ՝ արժան է որ մենք յայտնենք այս տեղս ալ պարզ խօսքերով Որդւոյն աստուծոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի մարդե-

ղութեան վրայով ունեցած ուղղափառ հաւատքնիս, որ Նիկիական հանգանակին նոյն եւ իսկն է, ո՛չ այլայլած եմք եւ ո՛չ ալ փոփոխած. ինչպէս որ գրուած է, եւ մեր սուրբ եկեղեցին ալ անով կը պարծենայ. «Հաւատամք եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին աստուծոյ՝ ծնեալն յաստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յաստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ո՛չ արարած», եւ այլն:

Ասելով եւ ո՛չ արարած՝ կը մերժէ շարաշար մոլորութիւնը հերետիկոսապետին Արիոսի, որ միայն Հայր Աստուածը կըսէր ճշմարիտ Աստուած. իսկ Որդւոյն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի համար կը բարբանջէր պիղծ բերանովը, թէ արարած էր հօր աստուծմէ եւ անոր ստացական որդի եղաւ կըսէր. եւ ո՛չ համագոյ եւ համապատիւ Հօր աստուծոյ. եւս եւ ամենաչարն Արիոս կը ժանտաբանէր՝ թէ էր երբեմն, յորժամ ո՛չ էր Որդին աստուծոյ. որ այս մոլորութեան շարութեամբը ուրացաւ այս խօսքերը Յիսուսի փրկչին մերոյ. որ գրուած է աւետարանին մէջը. «Ես եւ Հայր իմ մի եմք», Յօճ. Գ. 30: Եւ թէ՛ «Չամենայն ինչ՝ զոր ունի հայր,

իմ է», Յօժ. ԺԿ. 15:

Այլ միայն չարաչար եւ իրեն մոլորութեանը համեմատ կը մեկնէր Յիսուսի այս խօսքը «Զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած», Յօժ. ԺԷ. 3:

Այս ամենապիղծ չարին Արիոսի մոլորական հայհոյութեան բարբանջումը եւ ասոր գարշելի վախճանը համառօտ մը կը յիշէ քերթողահայրն մեր սուրբն Մովսէս խորենացի. «Ընդ այն ժամանակս երեւեցաւ Արիոս աղեքսանդրացի, որ ուսոյց չարաչար ամբարշտել, ո՛չ գոլ որդի հաւասար Հօր, եւ ո՛չ ՚ի բնութենէ եւ յէութենէ Հօր, եւ ո՛չ ծնեալ ՚ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար ոմն եւ արարած եւ կրտսեր. եւ յետ ժամանակի գոյացեալ, որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտս այս Արիոս ՚ի գարշելիսն ընկալաւ զսատակումն», Գեղ. Բ. ԳԷ ՅԹ:

Եւ այս հերետիկոսապետն Արիոս նզովեցաւ Նիկիոյ սուրբ ժողովքին մէջ. եւ մեր առաքելական կաթողիկէ սուրբ Եկեղեցին ալ կը նզովէ միշտ այսպէս ըսելով. «Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ո՛չ էր Որդի. կամ էր երբեմն յորժամ ո՛չ էր սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին աստուծոյ՝ եւ կամ զսուրբ

Հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթողիկէ եւ առաքելական սուրբ Եկեղեցի»:

Վասն զի մեր մեծ քահանայապետէն սուրբ՝ Գրիգոր լուսաւորչէն յառաջագոյն սորված ենք՝ Որդւոյն Աստուածոյ Յիսուսի Քրիստոսի համագոյ փառակից եւ իսկակից ըլլալը Հօր աստուծոյ եւ Հոգւոյն սրբոյ հետը, եւ ինչպես որ կը կարգամք՝ այնպէս ալ կը խոստովանիմք. «Բայց ինքն իւրով կամօք արար զամենակեցոյց գալուստն իւր, եւ կատարեաց զկամս հօր իւրոյ: Առաքեցաւ աստուած յաստուծոյ սուրբ Որդին, էառ զմարմին ՚ի կուսէ մարդ կատարեալ Աստուածութեամբն. զաստուածութեան զօրութիւնն յայտ արար, եւ զմարմնոյ տկարութիւնն ցուցանէր».

Մատթ. 11: 19:

Եւ Գրիգորիս կաթողիկոսն մեր երեսուն եւ երկու սրբազան եպիսկոպոսաց մերոյ ժողովին մէջ՝ այսպէս վճռեց՝ եւ միաբան այսպէս գրեցին. «Համարձակութեամբ նզովեմք զԱրիոս, որ ո՛չ ասաց զօրդի ՚ի բնութենէ Հօր».

Ռնդ. Էր, 114: Ուրեմն Հայոց եկեղեցին միաբան եւ համախոհ գտաւ Նիկիոյ սուրբ ժողովոյ երեք հարիւր տասն եւ ութն Սրբազան Հայրապետաց վճռոյն:

Եւս եւ գիտէ Հայոց ուղղափառ սուրբ Եկեղեցին, որ գլխաւոր շարադանդ երկու հերետիկոսապետներ ալ ելան, որ մոլորական ճառատաբանութեամբ յանդգնեցան բարբանջել ընդդէմ անշփոթ եւ անփոփոխ անբաժանելի եւ կատարեալ միաւորութեան Որդւոյն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի աստուածային բնութեան ընդ մարդկային բնութեան մեր՝ յաղագս փրկութեան մերոյ:

Այս քրիստոսամարտ մոլորեալներուն մէկն էր պիղծն Նեստոր, եւ միւսն ալ էր ամբարիշտն Եւտիփէս: Այս շարագոյն հերետիկոսապետներուն շարաշար մոլորութիւններն ալ գիտելով եւ ըստ ամենայնի հերքելով՝ կը նգովէ միշտ եւ մեր Հայոց ուղղափառ սուրբ Եկեղեցին ալ համաձայն ամենայն ուղղափառ Հայրապետաց՝ եւ տիեզերական Ժողովքներուն վճռոցը համեմատ:

Ուրեմն նախ պիղծ Նեստորին շարագոյն մոլորութիւնը աստանօր յայտնեմք համառօտիւ: Ասիկայ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ Յիսուս Քրիստոս փրկչին համար իրեն մոլորութիւնովը կը բարբանջէր, թէ չէր իսկական Որդին Հօր աստուծոյ յաւիտենական ծնունդն, որ ծնաւ ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն. այլ Յիսուս Քրիստոսն՝

որ ծնաւ ժամանակաւ` է որդեգրական եւ շնորհական որդի Հօր աստուծոյ, վասն որոյ այլ է որդի ՚ի Հօրէն աստուծոյ` ասէր, եւ այլ է որդի շնորհական ՚ի մարիամայ կուսէն, այսպէս ասելով` սուրբ կոյսն Մարիամ մարդածին եւ կամ քրիստոսածին կանուանէր` եւ ո՛չ աստուածածին, մանաւանդ ուրանայր աստուածային եւ մարդկային երկու բնութեան անձնաւորական անշփոթ եւ ճշմարիտ միաւորութիւնը ՚ի Քրիստոս Յիսուս, եւ այսպիսի չարաչար հայհոյութենէն` ո՛հ սոսկամ ասել` Ամենասուրբ Երրորդութիւնն լինի չորրորդութիւն: Ահա՛ այս համառօտակի ծանօթութիւնը եւս կուտայ մեզի սուրբ վարդապետն մեր Մովսէս խորենացի յասելն. «Ընդ այն ժամանակս եկաց յաթոռ եպիսկոպոսութեան Բիւզանդացւոց անարժանաբար յաջորդեալ ամբարիշտն Նեստոր, եւ հրէական իմացմանց հետեւեալ, հայհոյեաց զամենասուրբ կոյսն մարդածին լինել եւ ո՛չ աստուածածին: Քանզի ծնեալն ՚ի նմանէ առեալ սկիզբն, այլ որդի ասէր շնորհօք ՚ի Մարիամայ, եւ այլ որդի ՚ի հօրէ յառաջ, որպէս զի լինել երկուս որդիս, որով երրորդութիւնն չորրորդութիւն լինի: Վասն որոյ ժողովեալ սրբոց Հարցն յԱսիա ՚ի ծովահայ-

եաց Եփեսոս գրաւորական վերծանութեամբ, Կելիստինոս Հռոմայ, Կիւրղոս Աղեքսանդրի, Յոբնաղիոս Երուսաղէմի, Յովհաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պաւղոս Եմեսու, Թէոդոտիոս Անկիւրիայ, եւ այլ բազում համանգամայն երկերիւր Հարք, նզովեալ զՆեստոր, խոստովանեցան մի Որդի աստուծոյ զտէր մեր Յիսուս Քրիստոս, եւ աստուածածին զամենասուրբ կոյսն Մարիամ».

ԳԻՐԴ Գ. ԳԼ ԿԱ:

Ապա իրաւամբ նզովեցաւ ամբարիշտն Նեստոր ՚ի ժողովն Եփեսոսի, յամի տեառն 431. ՚ի կայսերութեան փոքր Թէոդոսի, որպէս գրեալ է ՚ի բանս ժողովոյ Եփեսոսի. «Նզովեալ եղիցի Նեստոր»: Եւ համառօտ այս գիրը հրատարակեցին սուրբ հարք ժողովոյն այսպէս գրելով. «Սուրբ սինհոդոսն շնորհօքն աստուծոյ ըստ հրամանի ականարկելոյ բարեպաշտօն եւ քրիստոսասէր Ինքնակալաց մերոց ՚ի մայրաքաղաքն Եփեսացւոց գումարեալ:

Նեստորի նորոյ յուգայի, գիտելով գիտասաշի՛ք, զի վասն ամբարիշտ քարոզութեանցդ եւ յամառութեանցդ հակառակ կանոնաց, ՚ի քսաներորդ երկրորդ աւուր յունիս ամսոյ ըստ եկեղեցական սահմանաց ՚ի ձեռն սրբոյ ժողովոյս լուծար ՚ի կարգէ

քումմէ, եւ յամենայն եկեղեցական աստի-
ճանաց ՚ի բաց անշատեցար». Ի Բան Ժող-
Եփեա:

Այսպիսի շարագոյն մոլորութենէ եւ ա-
ղանդէ ազատ պահելու համար սուրբ եւ
ուղղափառ եկեղեցին մեր Հայոց՝ շնորհօք
սուրբ Հոգւոյն նախատես գոլով մեծ քա-
հանայապետն եւ Լուսաւորիչն մեր սուրբ
Գրիգոր այսպէս քարոզեց յասելն. «Բայց
ինքն իւրով կամօք արար զամենակեցոյց գա-
լուստն իւր, կատարեաց զկամս հօր: Առա-
քեցաւ Աստուած յաստուծոյ՝ սուրբ որդին
էառ զմարմին ՚ի կուսէ մարդ կատարեալ,
կատարեալ աստուածութեամբն, զաստուա-
ծութեան զօրութիւնն յայտ արար, եւ ըզ-
մարմնոյ տկարութիւնն ցուցանէր». Ագաթ:

Եւ սուրբն Գրիգոր նարեկացի սքանչելա-
պէս աստուածաբանելով՝ ասէ. «Մին յեր-
ջանկափառ համազօր ահաւորութենէ երիցն
անձնաւորութեանց՝ խոնարհեալ ՚ի վերուստ
աստուստ ՚ի ստորինս, որ էրն իսկ ՚ի բնէ ան-
բաժ ՚ի ներքնոցս. անկապուտ մնալով փա-
ռացն աթոռոյ, եւ անկարօտ դիմաց ծնողին
իւրոյ: Մտեալ ի սենեակ կուսին արզանդի
պարզաբար, եւ ելեալ անտի յօդաւորաբար,
մարմին էապես անորոշելի. անթերի մարդ-

կութեամբն եւ անպակաս աստուածութեամբ-
բըն: Մի որդի Հօրն միայնոյ, եւ միածին
անդրանիկ՝ աստուածամայր տիրածին կու-
սին»։ Գլ. ԼԿ. 5:

Եւ քերթողահայրն մեր Սուրբն Մովսէս
խորենացին ընդդէմ Նեստորի մոլորութեան
կը շարահիւսէ այս մէկ տուն շարականը.
«Յառաջ քան զյաւիտեանս որդի նախայա-
ւիտեան, այսօր յերկրի երեւեալ Աստուած եւ
մարդ կատարեալ»:

Տե՛ս ի՞նչպէս կը մերժէ շարաշար մոլո-
րութիւնը ամբարշտին Նեստորի, սուրբն
Ներսէս շնորհալի յասելն ՚ի շարականի անդ.
«Հոգայր զկրիցն տրտմաբար՝ երիւքն եղ-
եալ առանձնաբար, փրկել զաշխարհս հոգիս
յօժար՝ բայց է բնութիւն մարմնոյս տկար,
ոչ ոմն ուժեղ եւ զօրաւոր՝ եւ ոմն անզօր
վտանգաւոր. այլ մի եւ նոյն գոլ միաւոր՝ կը-
րէր զկիրսն կամաւոր»:

Այս Շնորհալոյն ոմն եւ ոմն բառերը
ընդդէմ շարափառին Նեստորի ըսելը՝ ահա՛
յայտնի կընէ գրելով. «Եւ նոյն ծնեալն ՚ի
հօրէ անմարմնաբար՝ ծնաւ ՚ի մօրէ ըստ
մարմնոյ, եւ որդին աստուծոյ եղել որդի
մարդոյ, ո՛չ ոմն աստուծոյ որդի, եւ ոմն՝
մարդոյ, զմին որդի յերկու բաժանելով որ-

դիս՝ ըստ հայհոյութեանն Նեստորի»։ ԸնդՀ. Եր. 78:

Սոյն այս Շնորհալի Հայրապետն մեր այս ուղղափառութիւնը ոտանաւորեալ կը գրէ. «Նոյն բանն որ էր՝ ծնունդ հօր, եղեւ մարմին՝ յորովայն մօր, ճշմարտապէս՝ մեռաւ մարմնով, զի փրկեսցուք՝ մեք աստուծով: Անմահ բնութիւնն՝ աստուածային, մեռաւ բնութեամբ՝ մահկանացուին: Եւ մահացուն՝ խառնեալ ՚ի նմին, եղեւ անմահ՝ ընդ անմահին: Ո՛չ ոմն՝ անմահ՝ ոմն մեռեալ, եւ որ մեռեալ՝ անմահ մնացեալ: Որպէս ծնունդն՝ սքանչելի, նոյնպէս եւ մահըն հրաշալի: Եւ երկոքեանն՝ անքննելի, զի աստուծոյ՝ է արարչի»։ Յիսուս որդի. Եր, 239:

Եւ ո՛չ բաւական կըլլայ այսքանով՝ մեր սուրբ եկեղեցւոյն ուղղափառութիւնը հանդիսացուցանել այս մեր ազգասէր Շնորհալի Հայրապետը, այլ եւ նզովելով Նեստորականները կը գրէ առ Մանուէլ կայսրն Յունաց. «Նոյնպէս նզովեմք եւ զայնոսիկ՝ որք ՚ի յերկուս բնութիւնս բաժանեն զմի Քրիստոսն ըստ Նեստորի, ա՛յլ ասելով զԱստուած՝ եւ ա՛յլ զմարդն, զմարդն շարշարելի եւ մեռեալ, եւ զԱստուածն անշարշարելի եւ անմահ. եւ ո՛չ միաւորութեանն տան զերկա-

քանչիւրսն զչարչարանսն եւ զանչարչարութիւնն, զմահն եւ զանմահութիւնն»։ Ընդ. Էբ, 94:

Ուրեմն Հայոց եկեղեցին Նեստորական աղանդը եւ հերետիկոսութիւնը հերքելովն եւ նզովելովն այսօրուան օրս ո՛չ հերձուածող է եւ ո՛չ հերետիկոս:

Արդ՝ սկսեսցուք միւս քրիստոսամարտ հերետիկոսապետին Եւտիքէսի շարագոյն մոլորութիւնը յայտնել աստանօր:

Այս պիղծն Եւտիքէս շարաշար մոլորեցաւ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ ճշմարիտ եւ կատարեալ մարդեղութեանը վրայ, կը բարբանջէր՝ թէ մարմինն փրկչին մերոյ Յիսուսի՝ չէր մեզ բնակից, այսինքն՝ մեր մարդկային բնութիւնը սուրբ կոյս Աստուածածինէն առած չէր, այլ այն մարմինը՝ որով երեւեցաւ աշխարհիս մէջ, երկինքէն բերած էր կըսէր, եւ այս մոլորութեամբն սուրբ կոյս Աստուածածինին իսկապէս Աստուածամայրութեանը դէմ կը յանդգնէր խօսիլ, եւ մանաւանդ կուրանայր Աստուածային եւ մարդկային երկու բնութեան անշփոթ եւ անբաժանելի միաւորութիւնը՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս, որպէս գրէ պատմիչ Լիբերատոս երեւելի սարկաւազն Եկեղեցւոյն

Կարթագինեայ. «Նւտիքէս երէց առաջնորդ եղեալ ՚ի Կոստանդինուպօլիս երեւելի մենաստանի իրիք, քանսարկուին ազդամբ քարոզէր՝ թէ տէր մեր Յիսուս Քրիստոս չէ՛ մեզ բնակից ըստ մարմնոյ, այլ մարմին նորայերկնից է: Դարձեալ փոխեալ զբանսն աս էր, յառաջ քան զմիաւորութիւնն երկու բնութիւնք եղեն ՚ի Քրիստոս, այլ յետ միաւորութեանն մի միայն» Ի Էպղ. Գլ 2 ժա:

Ասոր պէս ալ կը պատմէ Թէոդորիտոս եպիսկոպոսն Կիւրեայ. «Այլ արդ՝ զյետին դառնագոյն եւս քան զբնական՝ զաղանդ Նւտիքեանց եգիտ սատանայ, որով զամենայն եկեղեցիս համօրէն տիեզերաց ՚ի սուգ եւ ՚ի տրտմութիւն հասոյց, դարան գտեալ իւրոյ անօրէնութեանն զթշուառական այրն զՆւտիքէս եւ զՎաղենտինի աղանդն, որ ՚ի բազում ժամանակաց խափանեալ էր, առ սովաւ դարձեալ նորոգեաց»։ Յաղ. աղանդ.

Գրք է Բ. Հարոյր Վերջ:

Այս պիղծ աղանդն ալ կը մերժէ ու կը հերքէ սուրբ եւ ուղղափառ եկեղեցին Հայոց կանխաւ սորված ճշմարտութեամբը եւ ուղղափառութեամբը, որ յառաջագոյն քարոզած է մեզի մեծ քահանայապետն սուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ այսպէս. «Հաւատք ճշմա-

րիտ այս են. խոնարհեցաւ եւ խառնեաց
զաստուածութիւնն ընդ մարդկութեանս,
զանմեռն ընդ մեռելոտս, զի զամենայն մար-
դիկ անքակ արասցէ յանմահութիւն աստ-
ուածութեան իւրոյ»: Եւս թէ՛ «Առաք-
եաց Աստուած զՀոգին սուրբ ՚ի կոյսն Մա-
րիամ. եւ էառ աստուածորդին մարմին ՚ի
Կուսէն». յԱԳաթ:

Եւ սուրբն Գրիգոր նարեկացի ՚ի ներ-
բողն Աստուածածնի. «Ո՛վ ամենասուրբ ա-
րարընկալ տիրուհի եւ Աստուածածին, որ
զանտանելին երկնի բարձրութեան եւ երկրի
լայնութեան, ծովու խորութեան եւ անդրն-
դոց անհասութեան, զ՚ի քէն մարմնացեալն
իսկութեամբ էութեան, յորովայն անձուկ
սուրբդ քում սենեկի կրել զօրեցեր»:

Եւ սուրբ Եկեղեցի մեր ՚ի բանս շարակա-
նի ՚ի բազում տեղիս՝ եւ մանաւանդ ՚ի կա-
նոնն Որդւոց որոտման երգէ. «Իսկապէս
բանն Աստուած միացաւ ՚ի մարմնի, անփո-
փոխ գոլով յէութեան, որում եղեն ակա-
նատես Որդիքն որոտման, եւ ընդհանուր
քարոզեցին զբանն մարմին եղեալ»:

Երանեալ սուրբն Խոսրով եպիսկոպոսն
անձեւացեաց ՚ի մեկնութեան Ժամակարգո-
թեան գրէ. «Եւ Քրիստոսն անունն օծեալ կոչի,

այսինքն Աստուած եւ մարդ, զի բանն մարմինն եղեւ ըստ Աւետարանչին, եւ աստուածութեամբն էօծ զմարմինն: Զի Քրիստոսն ո՛չ սոսկ մարդկութեան է անունն եւ ո՛չ լոկ աստուածութեան, այլ Աստուած եւ մարդ ասի, այսինքն՝ յերկուց միացեալ անշփոթաբար եւ անճառապէս»:

Եւ երջանիկ սուրբ վարդապետն մեր Ներսէս լամբրոնացի ՚ի մեկնութեան պատարագի գրէ. «Միացաւ ՚ի մարմնի անշփոթաբար, զի ո՛չ փոխարկումն կամ ՚ի բաց բարձումն արար աստուածային կամ մարդկային բնութեանցն, այլ միացոյց զբնութիւնսն, զնոյն գոլ Աստուած՝ եւ զնոյն մարդ. որպէս զի Բանն Աստուած մարմինն եղեւ, եւ որ ՚ի կուսէն մարմնացաւ՝ Աստուած, եւ նոյն ինքն Աստուած եւ մարդ. եւ Մարիամն՝ որ ծնաւ զԱստուած Բանն՝ աստուածածինն եւ կոյս»:

Նաեւ՝ սուրբն Գրիգորիս երանեալ կաթողիկոսն մեր գրէ երեսունն եւ երկու եպիսկոպոսաց ստորագրութեամբ առ Մանուէլ կայսրն Յունաց, եթէ «Նզովեմք եւ զամբարիշտն Եւտիքէս, որ զմիութիւն աստուածութեանն եւ մարմնոյն՝ շփոթմամբ դաւանէր՝ եւ ո՛չ յատկութեամբ ՚ի հայեցողութիւնն բնութեանց». Ընդ. Եր, 114:

Այլ այս տեղս փոյթ չընեմ պիտի ուրիշ շատ վկայութիւններ մեր սրբազան եւ երջանիկ Եպիսկոպոսներէն՝ եւ շնորհազարդ սուրբ վարդապետներէն յառաջ բերելու, եւ մեր սուրբ եկեղեցւոյ ուղղափառութիւնը եւ բարեպաշտութիւնը առաւել եւս հանդիսացունելու. հերիք եւ բաւական պիտի համարիմ մեր մեծ հայրապետին սրբոյն Ներսէսի շնորհալուոյն գրած ոտանաւորեալ աստուածաբանութիւնը. «Բանն անմարմին՝ ըստ էութեան, եղեւ մարմին՝ ճշմարտութեան: Զիրն պահեալ՝ անյեղապէս, եւ զիմս առեալ՝ ստուգապէս: Նորայս խառնումն՝ ըսքանչելի, Աստուած ընդ մարդ՝ բնութեամբ խառնի: Ո՛չ էութիւնըն փոփոխի, եւ ո՛չ ձեւով՝ կերպարանի: Որպէս ասաց՝ ժանտն Եւտիքէս, թէ ո՛չ մարմին՝ առ իսկապէս: Այլ առ աչօք՝ անց ընդ կուսին, խողովակի՝ նմանապէս: Կամ կաղապար՝ հրահալելեաց, որ զբնութիւն՝ ո՛չ տան յինքեանց: Միայն զձեւըս քանդակեալ, եւ ըզքանակս՝ ենթակայեալ: Եւ ո՛չ երկուցըն միութիւն, բաժանելով՝ յերկու բնութիւն: Եւ կամ յերկուս՝ որդիս ըզմին, ըստ Նեստորի՝ չարաբաստին»:

Այս տեղս ալ սուրբ եկեղեցին Հայոց

իրեն ուղղափառ վարդապետութիւնովը հանդիսացաւ ՚ի հաւատս ուղղափառ եւ բարեպաշտ առաջի ճշմարտութեանն աստուծոյ, եւ առաջի ճշմարտասէր եւ ուղղափառ քրքրիստոնէից, ուրեմն այսօրուան օրս Հայք ո՛չ հերձուածող են եւ ո՛չ հերետիկոս:

ԳՒՈՒԽ Զ

Արդ՝ կը մնայ մեզի այս տեղս ալ փոքր ՚ի շատէ մեր ուղղափառ սուրբ եկեղեցւոյն Հայոց՝ սուրբ Հոգւոյն աստուծոյ վրայով ունեցած կատարեալ խոստովանութիւնը եւ ճշմարիտ դաւանութիւնը հանդիսացուցանել՝ ո՛չ յանդգնելով տկարամիտ անբաւականութեամբս, այլ զօրացեալ ամենազօր եւ ամենաբաւական շնորհիւ նորին անփոփոխ տէրութեանն, ըստ այնմ՝ «Զի ո՛չ դուք էք՝ որ խօսիցիքն, այլ հոգին սուրբ»։ Մարկ. ԶԳ. 11:

Եւ քաջալերեալ եմ նպաստաւորութեամբ շնորհազարդ հարց սրբոց աստուածաբանական մատենագրութեանց, որոնցմով պիտի հաստատեմք մեր Հայոց եկեղեցւոյն ուղղափառ դաւանութիւնը ՚ի սուրբ Հոգին աստուած: Գիտեմ որ ուղղափառ եւ ճշմար-

տասէր աստուածաբաններուն պատկառելի ատեանը այս համառօտ մեր սուրբ եկեղեցւոյ խոստովանութիւնը շատ մեծ եւ ընդունելի ուղղափառութիւն կը ճանաչուի, եւ ճշմարիտ ուղղափառութիւն կը վճռուի, որ միշտ կը խոստովանի սուրբ եկեղեցին մեր Հայոց՝ ասելով. «Հաւատամք եւ ՚ի Հոգին սուրբ յանեղն եւ ՚ի կատարեալն». եւ այլն:

Քանզի «Հաւատամք եւ ՚ի Հոգին սուրբ» ասելով, յայտնի կը խոստովանիմք, որ Հոգւոյն սրբոյ սրբարար շնորհիւն կը փրկուիմք եւ կազատիմք մեղաց աղտեղութենէն. եւ կը նորոգի մեր հոգին սրբութեամբ Հոգւոյն սրբոյ, եւ Հօր Աստուծոյ ընտրեալ շնորհական որդի կըլլամք՝ եւ ժառանգ աստուածային փառաց, եւ ժառանգակից Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ. վասն որոյ կը վկայեն սրբազան Առաքեալները Պօղոս եւ Պետրոս. «Ընտրեաց զմեզ Աստուած ՚ի սկզբանէ ՚ի փրկութիւն սրբութեամբ Հոգւոյն». ԲԹԷ. Բ, 12: «Ըստ կանուխ գիտութեանն աստուծոյ հօր, սրբութեամբ հոգւոյն». ա ՊԷԿ. ա. 2:

Ահա՛ այս մտքով կը գրէ սուրբ վարդապետն մեր Սարգիս Շնորհալին. «Վասն զի ճշմարիտ եւ սուրբ հոգի նա միայն է՝ որ աս-

տուծոյ հոգին է, անդստին ի բնութենէ նորա՝ եւ ո՛չ արտաքոյ նորին. իսկ այլ ամենայն հոգիք որպէս ՚ի նմանէ առին զէանալն եւ զլինելն, նմանապէս եւ ՚ի նմանէ ունին յաւէտ զսրբութիւնն եւ զմշտնշենաւորութիւնն». Եր, 187:

Եւ սուրբ հայրապետն մեր Ներսէս շրնորհալին յերգս շարականի. «էր միշտ ընդունող սրբող, եւ լցուցիչ աստուածացուցիչ, եւ միշտ ընդ Հօր եւ ընդ որդւոյ կարգեալ եւ թուեալ»:

Այս սակաւ ինչ բացատրութիւնով սուրբ Հոգւոյն աստուծոյ սրբարար եւ սրբացուցիչ ըլլալը խոստովանեցանք: Այժմ այս երկու եզերաց վրայով խորհինք, որ մեր Հայոց եկեղեցւոյն ճշմարիտ դաւանութիւնը եւ ուղղափառութիւնը պիտի յայտնի ըլլայ այս տեղս ալ, որ միշտ կը խոստովանիմք ասելով. «Հաւատամք եւ ՚ի Հոգին սուրբ յանեղն եւ ՚ի կատարեալն»:

Յայտնի է ամենայն իմաստասէր ծանօթից եկեղեցական մատենագրութեանց, որ Նիկիոյ սուրբ ժողովոյն սրբազան Հարք միայն այսքան խօսեցան սուրբ Հոգւոյն համար. «Հաւատամք եւ ՚ի Հոգին սուրբ»։ Բայց Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն սրբազան

Հարք՝ ընդդէմ հոգեմարտին Մակեդոնի շարաշար մոլորութեանը՝ յաւելցուցին այս բառերը. «Հաւատամք եւ ՚ի Հոգին սուրբ տէրն եւ կենդանարարն, ՚ի հօրէ ելողն, ընդ հօր եւ որդւոյ երկրպագակիցն եւ փառաւորակիցն»։ Կը համարձակիմ այս տեղս ըսելու՝ որ այս երկու բառերը «յանեղն» եւ «՚ի կատարեալն», որ եւ իցէ ուղղափառ եւ կորովամիտ Աստուածաբան քննելու ըլլայ ճշմարտասէր հոգւով՝ պիտի վկայէ՝ որ սուրբ Հոգւոյն աստուծոյ համագոյ անձնաւորութիւնը, եւ նոյնագոյ ընդ Հօր եւ Որդւոյ միութիւնը, եւ ամենայն աստուածային կատարեալ ներգործութիւնը՝ այս երկու բառին մէջ յայտնի կերեւնայ. եւ Նիկիոյ սուրբ ժողովոյն եւ Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն սրբազան Հայրապետաց խոստովանութիւնը կարի համեմատ ըլլալէն զատ՝ առաւել եւս հզօրագոյն եւ նորր աստուածաբանական ծանօթութիւններ ալ կայ այս բառերուն մէջ. «յանեղն եւ ՚ի կատարեալն»։

Ապա ուրեմն քննեմք նախ այս բառը «անեղ», որ այս բառով կիմացուի սուրբ Հոգւոյն ինքնագոյ ըլլալը. զի այս բառը միայն աստուածային ինքնագոյութեանը սեպհական է. ինչպէս որ աստուածաբաններուն

վճիռն է. «Որ անեղն է՝ ինքնագոյ է. եւ որ ինքնագոյ է՝ Աստուած է»։ Ուրեմն սուրբ Հոգին է Աստուած ինքնագոյ եւ համագոյ Հօր եւ Որդւոյ, որպէս երգէ եկեղեցի մեր, «Նոյն եւ նման հօր եւ որդւոյ, Հոգիդ անեղ եւ համագոյ»։ **Շարք**։ Ասոր պէս ալ կը գրէ երանեալ սուրբ եպիսկոպոսն մեր Ներսէս լամբրոնացի՝ ի մեկնութեան պատարագի, «Անեղ եւ կատարեալ զնա (այսինքն զՀոգին սուրբ) դաւանիմք՝ անեղ, վասն զի ՚ի բնութենէ հօր բղխումն է անճառելի, անձամբ բաժանեալ ո՛չ իբր ծնունդ, զի այս որդւոյ առանձին է, սակայն անեղ իբրեւ զորդի ՚ի բնութենէ հօր»։

Այս վկայութիւններով յայտնի եղաւ՝ որ սուրբ Հոգին Աստուած համագոյ է եւ փառակից հօր եւ որդւոյ։ Վասն զի հօր աստուծոյ ինքնագոյ ըլլալը «անեղ» բառով ալ կը յայտնուի, ինչպէս եկեղեցին մեր կերգէ ՚ի յորդորակն արեւագալին, «Անեղանելիդ Աստուած Հայր ամենակալ, ընկա՛լ զաղաչանս մեր քոց պաշտօնէից»։ Եւ սուրբ հայրապետն մեր Յօհան իմաստասէր ՚ի **ճարտար** երեւոյթականաց, «էն անեղ (այսինքն որդին) յանեղէն իջեալ հօրէ, մարմին ստացական յարգանդէ կուսին զգեցաւ»։

Եւ սուրբ Գրիգոր հրեշտակակրօն վարդապետն մեր ՚ի բանն վասն ուղիղ հաւատոյ. «Հաւատալ զԱստուած հայր՝ էութիւն ճշմարիտ, գոլ կատարեալ անեղ»։ Ասանկ ալ Որդւոյն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի համար ալ կը դաւանիմք. «աստուած անեղ», ինչպէս կերգեմք ՚ի շարականի. «Անեղին եղեալ մարդ՝ տեսեալ զարմանայր մարգարէն»։ Եւ ՚ի շարականի մեծի երկուշաբաթի յերգն մեծին Սահակայ պարթեւի սուրբ հայրապետին մերոյ. «Անեղն ՚ի հօրէ ծնեալ որդի»։

Ապաքէն յայտնի եղաւ՝ որ Հոգին սուրբ Աստուած է «Անեղ», Հայր Աստուած է «Անեղ», եւ Որդին աստուած է «անեղ», ապա ուրեմն սուրբ Հոգին է Աստուած համագոյ համապատիւ եւ համագօր Հօր աստուծոյ եւ Որդւոյն Աստուծոյ երկրպագեալ եւ փառաւորեալ ընդ հօր եւ ընդ որդւոյ, եւ ոչ որպէս բարբանջէր հոգեմարտ պիղծն Մակեդոն, որպէս գրէ Լամբրոնացին ՚ի Ջէնո-թէան պատրարագի. «Մակեդոն ամբարիշտ շառաւիղ դառնապտուղ ՚ի շար արմատոց անտի, հայհոյեաց ժանտաբուղիս բերանովն զՀոգին սուրբ՝ ծառայական եւ կրտսեր եւ արարած զնա ասելով, զոր ժողովեալ Հարքն

սուրբք ՚ի Կոստանդնուպօլիս՝ նզովեցին զնա համախոհիւքն իւրովք ՚ի կեանս եւ ՚ի մահ, եւ դաւանեցին Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ զՀոգին սուրբ, զի պահեսցի անձնաւորութեանցն յատկութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ընդդէմ խառնադիմացն (կամ խառնադիմութեանցն) Սաբելի լիբէացւոյ, եւ դաւանեցին համաբնութեան հաւասարութիւն ընդդէմ Արիոսի եւ Մակեդոնի շարաշար եւ անհաւասար բաժանմանցն»:

Ապա միայն բառս այս «յանեղն» բաւական է պապանձեցուցանել հայհոյիչ պիղծ լեզուն Մակեդոնի՝ եւ կործանել շարագոյն աղանդ նորին: Եւ թէպէտ այս սքանչելի եւ ամենագօր եզրն «յանեղն» երկավանկ փոքրիկ բառ մը կերեւի, բայց շատ մեծամեծ աստուածաբանական բառերու իմաստներ կը պարունակէ, ինչպէս Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն սրբազան հարց ընդդէմ Մակեդոնի աղանդոյն եվելցուցած բոլոր բառերուն իմաստը կը պարունակէ, որ այս խօսքերըն է. «Տէրն եւ կենարարն, ՚ի Հօրէ ելողն, ընդ Հօր եւ Որդւոյ երկրպագակից եւ փառաւորակից»:

Տե՛ս այս սքանչելի բառը դնելով Հա-ա-

Կողմ խոստովանիմն վեցերորդ տունին մէջ սուրբն Ներսէս Շնորհալի, հայրապետն մեր կը խոստովանի աստուծոյ համագոյութիւնը, կատարեալ աստուածութիւնը, ամենակալ տէրութիւնը, եւ մարդասէր բարերարութիւնը, եւ այս բառը սուրբ պաշտելի անուն կանուանէ՝ աղաղակելով. «Անե՛ղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով, մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. եւ ողորմե՛ա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս»:

Ուրեմն մեծ ուղղափառութիւն է այս հաւատոյ հանգանակին մէջ ունեցած դաւանանքնիս, որ միշտ կը խոստովանիմք ըսելով. «Հաւատամք եւ ՚ի Հոգին սուրբ յանեղն եւ ՚ի կատարեալն»:

Աստանօր հա՛րկ է՝ որ այս «կատարեալ» բառին ալ բացատրութիւնը իմանամք փոքր ՚ի շատէ: Նախ՝ կատարեալ է սուրբ Հոգին Աստուած՝ առ արտաքս ըստ շնորհաբաշխութեանն, որով հրաշագարդեալ կատարելագործեաց սուրբ Եկեղեցին Քրիստոսի զանազան իմաստութեամբ սրբութեամբ եւ պէսպէս զօրութեամբ շնորհազարդելով անպակասելի խնամօք. ըստ այնմ «Իսկ միսիթարիչ Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յա-

նուն իմ. նա ուսուցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուցէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ»։ ՅօԸ. Ժդ. 26:

Այս արտաքին ներգործութեան շնորհաց սուրբ Հոգւոյն աստուծոյ համար շատ տեղ կը գրէ Պօղոս սրբազան Առաքեալը. մանաւանդ Ա Կորնթացւոց թղթին մէջ բացայայտ կը խօսի. «Ո՛չ ոք կարէ ասել՝ տէր զՅիսուս, եթէ ո՛չ Հոգւովն սրբով»։ Եւ թէ «Ումեմն վի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նրմին հոգւոյ, միւսումն հաւատք նովին հոգւով, այլում շնորհք բժշկութեանց նովին հոգւով, այլում յաջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւն լեզուաց։ Արդ՝ զայս, ամենայն յաջողէ մի եւ նոյն հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի»։ ա Կորն. Ժբ. 3, 8, 11:

Ահա՛ այս սուրբ Հոգւոյն աստուծոյ արտաքին շնորհաբաշխ եւ կատարեալ ներգործութեանը նայելով կերգէ սուրբ Եկեղեցին մեր զայս տուն շարականը. «Հոգիդ աստուծոյ՝ անեղ էութիւն, կատարեալ անձնաւորութիւն եւ կատարող բոլորից ընդ Հօր եւ

ընդ Որդւոյ փառաւորեալ բնութեամբ»:

Եւս եւ սուրբն Գրիգոր նարեկացի հրեշտակակրօն Վարդապետն մեր կը խոստովանի սուրբ Հոգւոյն աստուծոյ այս շնորհաբաշխական կատարելագործութիւնը ըսելով. «Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգեւս ՚ի մեզ ծաղկեալ եւ աճեցեալ: Որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս, եւ բանաս զփակեալ ականջս խլից»։ ԳՂ ԼԳ. 2:

Այս վերոգրեալ առ արտաքս զեղումն շրնորհաց սուրբ Հոգւոյն աստուծոյ յայտնեց մեզի իրեն ներգործական շնորհաբաշխութեամբը, որ եւ նոյն ինքն է ներքին էական եւ անձնաւորական անսահման կատարելութիւն, որ իրեն գերագոյն եւ անեղ էութեամբն ունի. ապա որպէս Հայր Աստուած եւ Որդին Աստուած՝ նոյնպէս եւ սուրբ Հոգին Աստուած է անեղ էութիւն. վասն զի երեք անձն սրբոյ Երրորդութեան մէկ աստուածութիւն է, մէկ զօրութիւն է, եւ մէկ էութիւն. ինչպէս կը քարոզէ մեծ քահանայապետն մեր Գրիգոր Լուսաւորիչ. «Մի է բնութիւն աստուածութեանն եւ անփոփոխ իսկութեանն, մի արարչութիւն է եւ մի բա-

րերարութիւն, մի տէրութիւն, եւ մի զօրութիւն»։ Յաճ. ճառ, ք. Էր, 6:

Այս սուրբ Լուսաւորչի սքանչելի եւ հոգեշունչ ճառը յայտնի կընէ մեզի, որ սուրբ Հոգին Աստուած է կատարեալ անձնաւորութիւն, որպէս եւ Հայր Աստուած եւ Որդին Աստուած: Ինչպէս որ սուրբ Գրիգոր նարեկացին ալ կը գրէ ՚ի ճառին գալստեան սուրբ Հոգւոյն աստուծոյ. «Րաբուն հանճարոյ, տեսութեան մերոյ, անթարգմանելի խորոցդ աստուծոյ: Որ դու միայն մինդ յիսկութենէ տեսակ առանձին, ոգի տիրական, ուրոյն կերպարան կատարելութեան, յորմէ գոյացան եղեալքս ամենայն»:

Բայց ո՛չ երբէք այս սրբոյ Երրորդութեան երեք անձնաւորութիւնը զատ զատ բաժնուած էութիւններ կիմանամք. այլ մանաւանդ երեք անձինք մի բնութիւն է նոյնագոյ, եւ մի աստուածութիւն է համագոյ, մի տէրութիւն է համագօր, եւ մի իշխանութիւն է համահաւասար, որպէս կը խոստովանիմք ընդ սրբոյն Ներսէսի Շնորհալի հայրապետին մերոյ. «Խոստովանիմ Աստուած ըզՀայր, անձին անեղ, եւ անսկիզբն: Խոստովանիմ Աստուած զՈրդին, անժամանակ Հօր միածին: Խոստովանիմ Աստուած զՀոգին,

’ի բնութենէ հօր անքննին: Երրեակ ան-
ձամբ՝ Երրորդութիւն, միասնական աստ-
ուածութիւն. մի էութիւն՝ եւ մի բնու-
թիւն, մի տիրական իշխանութիւն»:

Տեսե՞ր ո՛ր մեծահաւատ ընթերցասէր, զի
սուրբ Հոգին Աստուած ո՛չ արարած է եւ
ո՛չ ալ պաշտօնատար. ինչպէս որ Մակեդոն
հայհոյիչն եւ հոգեմարտները կը բարբանջէ-
ին, այլ «անեղ» բնութեամբն եւ «կատար-
եալ» անձնաւորութեամբն համագոյակից է
Հօր աստուծոյ եւ Որդւոյն միածնի. ինչպէս
որ սրբազան եւ երանելի հայրապետք դա-
ւանեցին, նոյնպէս ալ մեր սուրբ եկեղեցին
կը խոստովանի եւ կերգէ ’ի շարականին. «Որք
անձնաւոր զէութիւն բղխեցելոյն ’ի հօրէ
Հոգւոյն սրբոյ դաւանեցին, եւ նոյնագոյ
բնութեամբ Հօր եւ Որդւոյ հաւասարեալ,
անորիշ բաժանմամբ համագոյ միութեամբ»:

Ահա՛ յայտնի եղաւ փոքր ’ի շատէ, որ
մեծամեծ աստուածաբանական նուրբ ի-
մաստներ կը պարունակէ այս երկու ըստ քա-
նակին փոքր, բայց ըստ իմաստիցն ամենա-
մեծ բառերս «անեղն եւ կատարեալն». որ
եւ Հայոց եկեղեցին հաւատով կը խոստո-
վանի եւ կը դաւանի ըսելով. «Հաւատամք եւ
’ի Հոգին սուրբ յանեղն եւ ’ի կատարեալն»:

Քանզի անձնաւոր էութիւն սուրբ Հոգւոյն Աստուծոյ անսկիզբն է՝ վասն որոյ անեղ եւ անվախճան է՝ վասն որոյ է կատարեալ. ըստ բանի շարականի սրբոյն Ներսէսի Շնորհալոյն. «Հոգին սուրբ էր միշտ եւ է եւ եղիցի. ո՛չ սկսեալ՝ եւ ո՛չ դադարեալ. այլ միշտ ընդ հօր եւ ընդ որդւոյ կարգեալ եւ թուեալ»։ Եւ այն Շնորհալի ՚ի Յիսուս «որդին. Ո՛չ է յառաջ՝ հայր քան զորդի, եւ կամ որդի՝ քան զհօգի։ Այլ որպէս Հայր՝ միշտ յաւիտեան, եւ համագոյքն՝ յիւր էութեան»։ Ըսել է՝ որ ո՛չ սկսեալ է առ ՚ի գոլ, եւ ո՛չ դադարեալ է ՚ի գոլոյ, այլ որպէս Հայր Աստուած եւ Որդին Աստուած ՚ի յաւիտենից են անսկիզբն՝ եւ անվախճան յամենայն յաւիտեանս. նոյնպէս եւ Հոգին սուրբ ո՛չ սկիզբն ունի եւ ո՛չ վախճան. զի է իսկակից եւ բնութենակից Հօր եւ Որդւոյ. եւ այսպէս ուսոյց մեզ մեծ քահանայապետն մեր առաքելաշաւիղ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ յասելն. «Մշտնջենաւորք են (Որդին եւ Հոգին սուրբ) միաբուն իսկութեամբ ընդ հօր եւ առ հայր եւ ՚ի հօրէ»։ Յաճախ. ճառ. գ։

Ապա ուրեմն սուրբ Հոգին Աստուած անսկզբնական բղիսումն է ՚ի հօրէ եւ անպա-

կասելի առող յորդուոյ, եւ յսպէս կը խոստովանի սուրբ եկեղեցին Հայոց, ըստ այնմ «Նոյն եւ նման հօր եւ որդուոյ, հոգիդ անեղ եւ համագոյ, բղխումն հօր անքննաբար, առող յորդուոյ անճառաբար»։ Ասր՝

Եւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր այս մտօք ուսոյց մեզ յասելն. «Հայր յանձնէ, Որդի ՚ի Հօրէ, եւ Հոգին ՚ի նոցունց եւ ՚ի նոսին. իսկութեամբն էութեամբն աստուածութեամբն հարթ հաւասար, հասարակ ՚ի խորութիւնս, ՚ի բարձրութիւնս, ՚ի լայնութիւնս, յերկայնութիւնս»։ ԱԳաթ. ԳԻԿ ԿՕԼ 329:

Ահա՛ այս սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի քարոզութեան բացատրութիւնը կուտայ Ներսէս Շնորհալի սրբազան հայրապետն մեր յասելն. «Խոստովանիմք եւ ըզՀոգին սուրբ ճշմարտապէս հոգի աստուծոյ * * * յառաջ եկեալ յանսկզբնականէն հօրէ անսկզբնաբար անձնաւորութիւն կատարեալ, անիմանալի եւ անճառ յէիցս գոլով ըստ էութեանն պատճառի՝ առ ՚ի հօրէ միայնոյ. իսկ ըստ ունակութեան եւ շնորհաբաշխութեան՝ հաւասարապէս Հօր եւ Որդուոյ, ըստ ասելոյ որդուոյ յաղագս նորին հոգուոյն: Ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսի, այլ յիմ-

մէ անտի առնու եւ պատմէ. զի ամենայն որ ինչ հօր է՝ ասէ, իմ է. ո՛չ սկիզբն ունելով ժամանակի եւ ո՛չ փոփոխումն այլայլութեան՝ ըստ արարածոց». Ընդհ. Էր, 76:

Եւ երանելին խոսրով անձեւացեաց եպիսկոպոսն ՚ի մեկնութեան պատարագի գրէ. «Այս է կատարումն հաւատոյն, զՀայր՝ եւ զՈրդի՝ եւ զսուրբ Հոգին ճանաչել երիս անձինս եւ մի Աստուած . . . ծնող՝ զՀայր, եւ ծնունդ զՈրդի, եւ ելումն՝ զՀոգին, ՚ի հօրէ, եւ ո՛չ ծնունդ»:

Եւ սուրբ Գրիգոր հրեշտակակրօն վարդապետն մեր ՚ի բանս վասն ուղիղ հաւատոյ. «Եւ Հոգին սուրբ բղխումն ՚ի հօրէ անճառաբար, ո՛չ ըստ Որդւոյ ծննդեամբ, այլ ելումն յէութենէն, ըստ որում հոգին ճշմարտութեան՝ որ ՚ի հօրէ ելանէ, էակից հօր՝ եւ փառակից որդւոյ»:

Եւ Յովհան իմաստասէր սրբազան հայրապետն մեր կը գրէ ՚ի ճառին ընդդէմ էրե-ո-թականաց. «Արտորոշեալ ճանաչի ՚ի նոսա (յերիս անձինս) դէմն այսուիկ. Հօր՝ ծնող գոլ, Որդւոյ՝ ծնունդ. իսկ Հոգւոյ՝ ելումն»:

Եւ սուրբն Ներսէս Լամբրոնացի ՚ի մեկնութեան պատարագին. «Զհոգին՝ Քրիստոսի

ասեմք, ո՛չ եթէ իբր ՚ի նմանէ յառաջ ըսկիզբն առեալ եւ բղխեալ, որ է հաւասար նմին եւ համափառ բղխումն, այլ ՚ի հօրէ . . . հոգի Քրիստոսի ասեմք, իբր տնօրինաբար առեալ ՚ի հօրէ, եւ ո՛չ եթէ ՚ի նմանէ բղխեալ»:

Ըստ սմին օրինակի գրէ սուրբ վարդապետն մեր Սարգիս Շնորհալի. «Զհոգին Քրիստոսի ասել՝ այն է, զոր Պօղոս միտս Քրիստոսի ասաց»։ Եւ դարձեալ՝ թէ «Որ զհոգի Քրիստոսի ո՛չ ունի, սա չէ՛ նորա։ Զայս ասելով սոցա եւ խոստովանելով՝ ըզմիակամութիւնն եւ զնոյն էութիւն եւ ըզբնութիւն եւ զաստուածութիւն նշանակեն. զի զհոգին Քրիստոսի ասել, ո՛չ ՚ի նրմանէ իբրեւ ՚ի պատճառէ. զի պատճառ հայր միայն է. (որպէս) Որդւոյ, նմանապէս եւ Հոգւոյ, միոյն ծննդեամբ՝ եւ միւսոյն ելողութեամբ. ըստ անսուտ տեառն ձայնին, նա՛ ասէ, հոգին ճշմարտութեան՝ որ ՚ի հօրէ ելանէ». ա Պէր. ճառ ա. Էր, 204:

Ապաքէն մեր սուրբ եկեղեցւոյ սրբազան հայրապետները ինչու՞ համար բղխումն ՚ի հօրէ եւ յորդւոյ չըսին եւ չըքարոզեցին, պատճառը ի՞նչ է. առաջին բուն իսկ պատճառն է ՚ի բանս հաւատոյ խոստովանութեան

՚ի սուրբ հոգին Աստուած՝ ըստ ամենայնի հետեւող եւ միաբան գտնըվիլ Նիկիոյ սուրբ ժողովոյն երեք հարիւր տասն եւ ութը սըրբազան հայրապետաց: Եւ Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն հարիւր յիսուն սրբազան հայրապետաց, վասն զի ՚ի ժողովն Նիկիոյ վճռեցաւ, «Հաւատամք եւ ՚ի հոգին սուրբ»: Եւ ՚ի ժողովն Կոստանդնուպօլսոյ յաւելմամբ այսպէս վճռեցաւ, «Հաւատամք եւ ՚ի հոգին սուրբ, տէրն եւ կենդանարարն, ՚ի հօրէ ելողն, ընդ հօր եւ որդւոյ երկրպագակիցն եւ փառաւորակիցն»:

Ասոր համար երբեմն երբեմն եղաւ խընդիր, որ բղխումն սուրբ հոգւոյն քարոզուի, «՚ի հօրէ եւ յորդւոյ», բայց այս վերոյիշեալ պատճառը առաջարկելով շատերը համոզուեցան, ինչպէս որ ութերորդ դարուն մէջ Լեւոն Գ Պապն Հռովմայու եկեղեցւոյն, այս պատճառը քաջ գիտնալով հրաման հանեց՝ որ բնաւ մէկը չ'համարձակի յաւելցունելու հանգանակին մէջ այս մասնիկն «յորդւոյ», այլ ինչպէս որ գրուած է բնագիրն, այնպէս թո՛ղ մնայ, զի մի՛ նորածայն վարդապետութիւն համարելով՝ շփոթութիւն պատճառեսցի ասէր, վասն որոյ ո՛չ ոք այնուհետեւ համարձակեցան ասել ՚ի հան-

գանակն «եւ յորդույ», մինչեւ երեքտասաներորդ դարը, ինչպէս որ գրուած է ՚ի վճիռս Պապից, թո՛ղ գրաւոր գործ Պապին Եւզինէոսի շորրորդի բացուի եւ կարդացուի, որ երբ Հայոց գիր սիրոյ խրկեց՝ որոյ սկիզբն է այս. «Յնծացէ՛ք առ Աստուած, օգնական է մեր» եւայլն. եւայլն: Ո՛չ բընաւ կ'ստիպէ ՚ի հանգանակին եվելցունել այս մասնիկը «յորդույ», որովհետեւ այս Պապն ալ եւ ամենքն ալ գիտէին՝ որ Հայոց ազգը զօրաւոր փաստ ու պատճառ ունի ձեռքը հանգանակին մէջ եւ ուրիշ ճառերու մէջ Հոգւոյն սրբոյ բղխմանը համար, «եւ յորդույ» մասնիկը չեվելցընելու:

Եւ երկրորդ՝ մեր հայկաբանութեան մէջ «բղխումն» բառը յատկապէս գործ կածեմք այն տեղը՝ որ մէկ բանին բուն իսկ առաջին արմատէն ելածին կամ ծագածին կըսեմք բղխումն. զոր օրինակ՝ ջուրին բուն ակնէն ելածին կըսեմք յակնէն բղխած ջուր. իսկ առումն եւ ծագումն բառերը ըստ մեծի մասին գործ կածեմք, որ եւ իցէ տեղէ մը կամ աղբերէ մը յառաջ եկածին. վասն որոյ մեր լեզուի մէջ բղխումն բառը թէ որ առումի տեղ գործածեմք՝ կը սխալիմք, վասն որոյ ո՛չ կարեմք ասել հոգւոյ սրբոյ համար, «բըղ-

խումն 'ի հօրէ եւ յորդույ», այլ բղխումն 'ի հօրէ՝ որ է բուն իսկ առաջին պատճառ բղխման, եւ պարգեւեալ տուեալ՝ եւ առող յորդույ՝ որ է էակից եւ փառակից իւր, վասն որոյ քարոզեց սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր, «Հաւատամք եւ 'ի սուրբ հոգին աստուածեղէն հոգի սուրբ Աստուած կատարեալ՝ առանց առնելոյ, բղխումն մշտընջենաւոր առ 'ի հօրէ», ԱԳՊԻ:

Եւ սուրբն Ներսէս Շնորհալի հայրապետըն մեր յերգն շարականի բացայայտ ցուցանէ այս վերոգրեալ պատճառը. «Որ բոլորից ես պատճառ էից անպատճառից եւ որոց պատճառաւ հայր անծին եւ անսկիզբըն, որդույ պատճառ անժամանակ ծննդեամբ եւ հոգույ բղխման անքննաբար»:

Արդ՝ մեր սուրբ եկեղեցւոյն կատարեալ հաւատքը 'ի հոգին սուրբ յանեղն եւ 'ի կատարեալն, ուղղափառ կը հանդիսանայ միշտ առաջի ճշմարտասէր եւ անաչառ դատողութեան ուղղափառ աստուածաբանից եւ կորովամիտ իմաստասիրաց: Բայց որ բանակուի լինի, ո՛չ ճշմարտութիւնը տեսնալու կամ ճանաչելու, այլ իրեն կարծիքը եւ ծուռ դատումը հաստատելու համար, եւ յաղթող երեւնալու համար բազում անօգուտ խըն-

դիրներով՝ եւ զանազան հաւաքաբանութիւններով կաշխատի, եւ շատերուն ալ միտքը կը շփոթէ, եւ պէսպէս կործանման լսողաց պատճառ կըլլայ. այնպիսին թո՛ղ մէջմը Պօղոս առաքելոյն աշակերտի, եւ թո՛ղ ուսանի այս կատարելութիւնը առաքելութեան՝ որ կուսուցանէ առ Տիմոթէոս գրելովն. «Ձայս յուն՝ արասջիր վկայութիւն եղեալ առաջի աստուծոյ, մի՛ բանակուի լինել յոչինչ պէտս ՚ի կործանումն լսողաց», Բ. Տ՚Ժ. Բ. 14:

Թէ որ այս անպիտան եւ անշահ բանակոռութեան շար հոգին շունի ո՛րք եւ իցէ հարկաւ պիտի քարոզէ սուրբ եւ ճշմարիտ հոգւով, որ «Այսօրվան օրս Հայք ուղղափառ են եւ բարեպաշտ», այս ճշմարիտ եւ ուղղափառ վարդապետութիւններով, թէ որ աստուածաբաններուն հանդիսակից ուղղափառ աստուածաբան է, պիտի՛ որ յիշէ այն ուղղադատ եւ ճշմարիտ աստուածաբաններուն անժխտելի վճիռը, որ հաստատած են՝ թէ «Ընդունելութիւն ճշմարտութեան իրին՝ է ՚ի հաւատոց. իսկ գործածութիւն ձայնին է ծիսական աղանդ ըստ սովորութեան ազգաց»:

ԳՎՈՒԽ Է

Հա՛րկ է ուղղափառ հաւատով ճանչնալ, որ բազմութիւնը ուղղափառ եւ բարեպաշտ հաւատացելոց մի են ներքին հաւատով՝ յուսով՝ եւ սիրով՝ եւ շնորհիվ մկրտութեան: Թէ եւ զանազանուած ըլլան ազգաւ եւ լեզուաւ՝ աշխարհաւ եւ տեղեալ՝ ծիսիւ եւ արարողութեամբ, բայց ըստ որում միաբան ՚ի բանս հաւատոյ՝ եւ միակրօն յօրէնս քրիստոնէութեան՝ մէկ ժողով խորհրդական եւ երեւելի համարուելով՝ եկեղեցի Քրիստոսի է, եւ ամեն մէկ անձն ուղղափառ քրիստոնէից բարոյական անդամք են եկեղեցւոյն Քրիստոսի եւ խորհրդական մարմին Քրիստոսի: Վկայ է ինձ սրբազան առաքեալն Պօղոս. «Որպէս ՚ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն ո՛չ զնոյն գործ ունին. նոյնպէս եւ բազումքս մի մարմին եմք ՚ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք».

Հոով. ժբ. 5: Եւ թէ՛ «Լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ՚ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա՝ որ է եկեղեցի».

Աողոս. ա. 24:

Ասոր համար գրուած է՝ եւ ամեն ուղղափառներէն ընդունուած է՝ եւ այս մասն ալ

Նիկիական հանգանակին. « Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի»:

Այս ուղղափառ խոստովանութեան բանը հանգանակին՝ նորադանդները իրենց մոլորական գրութեան իբրեւ նպաստ առնելով շաղփաղփեն ասելով, թէ հաւատքը երեւելի եւ տեսանելի բանի մը համար չէ, այլ անտեսանելի եւ աներեւոյթ բաներուն համար պէտք է հաւատքը եւ վկայութիւն կուտան Պօղոս առաքեալէն՝ որ հաւատքը աներեւոյթ բաները յառաջ կը բերէ. «Զի՞նչ են հաւատք, եթէ ո՛չ յուսացեոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն՝ որոց ո՛չն երեւին». Աբր. Ժա. 1:

Իսկ եկեղեցւոյն համար ալ կըսեմք. «Հաւատամք ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի»։ Ապա ուրեմն կըսեն, Եկեղեցին ալ կըսուի եւ է աներեւոյթ։ Ո՛վ կուրութիւն հոգեւոր, եւ մոլորութիւն շարաշար, որ ո՛չ տեսանեն սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի ներքին խորհրդոց փրկարար եւ սրբացուցիչ հոգւոց շնորհքները, որ կը մատակարարի զգալի եւ տեսանելի նիւթերով, որ անոնց մէջ կը հաւատամք զանազան շրնորհքներ. ինչպէս սուրբ եւ կենդանարար

հաղորդութեան խորհրդոյն կը հաւատամք, որ թէպէտ զգալի եւ տեսանելի է նիւթն՝ այսինքն հաց եւ գինի, բայց ստուգապէս Մարմին եւ Արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կընդունիմք ըստ վկայութեան Պողոսի. «Բաժակն օրհնութեան, զոր օրհնեմք, ո՛չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի, հացն՝ զոր բեկանեմք, ո՛չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի», ա կո-րն. Ժ. 16:

Եւ երանելի Խոսրով եպիսկոպոսն Անձե-ւացեաց վկայէ. «Հաւատալ (պարտ է) եւ զփրկական խորհուրդն՝ ստուգապէս մարմին եւ արիւն Քրիստոսի, որով միանամք ՚ի քրիստոս, եւ ժառանգակից նորուն լինիմք... Տեսանի հաց եւ գինի, եւ իմանի մարմին եւ արիւն որդւոյն աստուծոյ, եւ փրկական կոչի. վասն զի փրկեցաք նովաւ եւ փրկիմք՝ ՚ի կեալ եւ ՚ի մեռանել»։ Ի մէկն, պարտ:

Եւ սուրբն Ներսէս լամբրոնացին ընդ երկար ուսուցանէ. «Ասաց (Քրիստոս) բարձրաբարբառ ՚ի ժողովուրդն՝ յուսուցանելն ՚ի Կափառնայում, «որ ո՛չ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, ո՛չ ունի կեանս յանձին»։ Զմարմին իմ ասաց, եւ ո՛չ զօրինակ մարմնոյն . . . յետ որոյ զբանիւ ասացեալն՝ գոր-

ծով կատարեաց: Զի ա՛ն՝ ասէ, հաց, գոհացաւ՝ օրհնեաց՝ սրբեաց՝ եւ ետ աշակերտացն, եւ ասէ, առէ՛ք կերէ՛ք ՚ի սմանէ, այս է մարմին իմ, եւ ո՛չ օրինակ նորին: Նոյնպէս եւ զբաժակն՝ արին անուանեաց, եւ ո՛չ օրինակ արեան: Զօր ճաշակողքն աղաղակէին «Արինն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց»: Եւ որ ուտէ եւ ըմպէ զնա անարժանութեամբ, ոչ թէ զօրինակն ոչ խըտրէ, այլ զմարմինն տեառն: Քանզի օրինակ է մարմնոյ գծագիրն պատկեր . . . Արդ որպէս գծագրեալ պատկերն ոչ է կենդանի, եւ ո՛չ կենդանացուցիչ ունի զօրութիւն, այսպէս եւ սա թէ օրինակ էր՝ ոչ ինքն կենդանի էր, եւ ո՛չ զայլս սրբէր . . . Օրինակ անուանի՝ որ զգաղափար գոյին ունի եւ ո՛չ ըզզօրութիւն . . . իսկ մարդ՝ մարդոյ՝ ո՛չ օրինակ, այլ համաբնութիւն կոչի: Այսպէս եւ սա՝ համաբնութիւն է աստուծոյ եւ ո՛չ օրինակ. վասն այսորիկ ունի զօրութիւն զմեղս սրբելոյ որպէս զԱստուած» Ի մէկն պարս:

Եւ սուրբ Վարդապետն մեր ճոն Բարսեղ ՚ի մեկնութեան Մարկոսի. Գլ. Ժգ, Գրէ. «Աչք կրկին պա՛րտ է ստանալ մեզ՝ մարմնոյ եւ հոգւոյ, զի աչօք մարմնոյ տեսանեմք զհաց ՚ի ձեռս քահանայից, իսկ աչօք հոգւոյ՝

տեսանեմք զնոյն հաց դարձեալ ճշմարտապէս ՚ի մարմին եւ ՚ի հոգի եւ ՚ի միտք Բանին աստուծոյ, որպէս եւ միացոյց ընդ աստուածութիւնն իւր զ՚ի Կուսէն առեալ մարմին»։ Էր. 277:

Այսպէս է եւ փրկարար խորհուրդն մրկրտութեան՝ որոյ երեւելին է զգալի պարզ շուր. բայց կը հաւատամք անով՝ իմանալի եւ անտեսանելի աստուածային շնորհքներուն, որով հոգիք մկրտելոց՝ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, անշուշտ կընդունին ազատութիւն ՚ի յաւիտենական դատապարտութենէ մեղաց, եւ կատարեալ փրկութիւն կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ շնորհական որդեգրութիւն Հօր Աստուծոյ, եւ ժառանգութիւն արքայութեան երկնից. ըստ այնմ՝ «Մկրտեսցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի ՚ի թողութիւն մեղաց»։ Գործ. Բ, 38: «Այսուհետեւ շես ծառայ՝ այլ որդի, եթէ որդի՝ եւ ժառանգ Աստուծոյ»։ Գաղ. դ. 7:

Ասանկ սուրբ Եկեղեցւոյն իմանալի եւ անտեսանելի շնորհքներուն վրայով ունեցած հաւատներնու համար մասնաւորապէս ալ կը գրէ Սարգիս շնորհալի սուրբ վարդապետ-

նիս. «Որպէս հաւատացաք, եթէ այն՝ որ բընութեամբ որդի էր Աստուծոյ, եկն եղեւ շնորհօք որդի մարդոյ՝ ծնանելով ՚ի Կուսէն. նմանապէս հաւատամք նովին չափով զօրութեամբ, եթէ եւ մեք՝ որ բնութեամբ որդիք եմք Ադամայ, ծնանելով ՚ի կոյս աւագանէն՝ լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ».
 Ի Տէկն. յակ. Եր. 49:

Ահա այսպէս են ամենայն ներքին շընորհքները եւ պէս պէս իմանալի ձիրքերը հաւատոյ՝ յուսոյ՝ եւ սիրոյ, եւ զանազան կատարելութիւնները սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի. վասն որոյ վճռեցին սրբազան հայրապետք Նիկիոյ սուրբ Ժողովոյն. եթէ «Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցի»:

Եւ չէ՛ թէ ըստ բարբառնջման նոր աղանդիցն որ յայտնի տեսանելի եւ երեւելի սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի անտեսանելիութիւն մը տալու համար կառնեն այս Հաւատամքին մասը, որ քա՛ւ լիցի ասել. եւ զի խորհիլն անգամ մեծ մոլորութիւն է, եւ տգիտութեամբ խաւարեալ մտաց պտուղ դառնութեան, որ եւ ըստ Քրիստոսական վճռոյն, «Թէ ոք գնայ ՚ի գիշերի՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա».
 ՅօԸ. Ժա. 10:

Ապա նորադանդք՝ որք կորուսին ուղղափառութեան ճշմարիտ լոյսը, հարկաւ գայթակղեալ են շարաշար գահավիժեալ ՚ի պէս պէս մոլորութիւնս ՚ի կորուստ յաւիտենական. այսպիսի աղանդապետներուն համար մարգարէացաւ սրբազան Պօղոս առաքեալը ըսելով. «Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց, եւ ՚ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս եւ յառասպելս կործանեսցին» . Բ. Տ՚Կ. դ. Յ:

Եւ որովհետեւ պարտաւոր եմք նորադանդից շարաշար եւ տեսակ տեսակ մոլորական դրութիւնը. քամահրելով՝ եւ անարգելով հերքել, միշտ պաշտպանելով մեր սուրբ Եկեղեցւոյ ուղղափառութիւնը, եւ փոյթ ունիմք Աստուծոյ զօրութեամբը մեր Եկեղեցւոյ բարեպաշտները զգուշացընել այնպիսի մոլորութիւններէն, վասն որոյ եթէ ազգիս մէջ ուղղափառ կարծրված անձանց մէկը թէ աշխարհական եւ թէ Եկեղեցական նորադանդից դիւահնար որոգայթին մէջ ինկած քարոզէ եւ կամ ուսուցանէ, թէ աներեւոյթ կամ անտեսանելի Եկեղեցի կայ, որում Քրիստոն-

եայք կը հաւատան, եւ իբր մասն հաւատոյ կը դաւանին Նիկիական հանգանակին մէջ. այնպիսի անձը եւ նորին քարոզութիւնը ՚ի միասին՝ նորադանդից հետեւող ճանաչելով կը հերքեմք մեք ուղղափառքս իրենց աղանդապետ շարամիտ հեղինակին հետը:

Բայց պէ՛տք է՝ որ հարցունեմք այն ուղղափառ կարծրված մոլորեալ անձին, թէ ո՞վ են այն Քրիստոնեաները, որ հանգանակին այն մասը՝ որ կըսէ, «Հաւատամք ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքեալական եկեղեցի», կիմանան կամ կըդաւանին եղեր եկեղեցւոյն աներեւոյթ անտեսանելի եւ իմանալի ըլլալը. չըլլա՞յ՝ որ Յիսուսի Քրիստոսի ցոյց տուած փարիսեցիները ըլլան. «Զգո՛յ՛շ լերուք ՚ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք». Մատթ. Է. 15: Ասոր համար Պօղոս սրբազան առաքեալը խրատ կուտար Եփեսոսի եկեղեցւոյ երէցներուն, որ գայթակղութիւն տուող սուտ Քրիստոնեայններէն զգուշանան իրենք, եւ զգուշացընեն ժողովուրդը. «Զգո՛յ՛շ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ տեառն՝ զոր ապրեցոյց արեամբ իւրով: Քանզի գի-

տեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ՚ի ձեզ, որ խնայիցեն հօտին»։ Գործ. Ի. 28:

Եթէ ցոյց տայ մեզի վեշտասաներորդ դարուն մէջ գտնւած իբր Քրիստոնէից մէկ խումբը, ահա՛ յայտնի է՝ որ այն դարը նոր աղանդից դարն է, ասոնցմէ խաբուած է այն խակամիտ Քրիստոնեայն, եւ այս աստուծոյն ըսուած իմաստակներէն սորված է սոյն մոլար դրութիւնը, թէ անտեսանելի Եկեղեցի կայ, որում Քրիստոնեայք կը հաւատան: Մի՛ թէ արժան է մեկ ուղղափառ Քրիստոնէի ինչ եւ իցէ վարդապետութիւն մը լսելով միայն կամ կարգալով, անոր հեղինակը չի քննելով եւ նախնի սրբազան հայրապետաց գրուածոցը հետ չի բաղդատելով, ուղղափառութիւն է եւ ճշմարտութիւն ըսելով ընդունի. պէտք չէ՞ որ եթէ իւր խելքը չի հասնիր նէ՝ ուղիղը գիտցողի մը հարցունէ եւ սորվի, եւ այն մնացածին վարդապետութեանց հոգեկորուստ որոգայթներէն ազատի. եթէ մէկը քեզի ըսէ՝ թէ Պօղոս եւ Պետրոս սրբազան առաքեալներուն ու՞ր եւ ե՞րբ նահատակուիլը յայտնի չէ՛, եւ անոնց մահը անատոյգ է, եւ գրողներն ալ ճշմարիտ խօսող եւ գրող չեն, այլ շողոմարար (միւ-

տահանէճի) են, եւ այսպէս սկսի հերքելու մեր սրբազան նախնեաց եւ այլոց ուղղափառաց անթիւ գրուածքները եւ ականդութիւնները եւ գործքերը նէ, ի՞նչ պիտի ըսես, ուղղափառ վարդապետութիւն է ըսելով՝ պիտի հաւատա՞ս, եւ չի կարդա՞ս պիտի սրբազան գրչաց եւ հաւատարիմ պատմչած գըրուածքները, որք են սուրբն Դիոնեսիոս արիսպագացին՝ որ ժամանակակից է առաքելոց եւ աշակերտ Պօղոսի առաքելոյն, եւ սուրբն Յօհան ոսկեբերան եւ շատ ճառընտիրներ, եւ մեր Ներսէս եւ Սարգիս շնորհալիները, որոնք յայտնի կը գրեն Պօղոսի ու Պետրոսի սրբազան առաքելոց ո՛ւր եւ է՛րբ նահատակուիլը. կրնա՞ս այս սրբազան հարց շողոմարար ըսել: Եւ թէ ողջամիտ քրիստոնեայ մը կրնա՞յ ըսել կամ սորվեցընել՝ թէ Յիսուսի Քրիստոսի անձեռագործ դաստառակը անմիջապէս ՚ի Յիսուսէ Քրիստոսէ պարգեւիլը առ Աբգար թագաւորն մեր՝ կեղծիք է եւ շինծու, եւ ստուգապատում Եւսեբիոս պատմիչն ալ հաւատարիմ չէ՛, եթէ լսես՝ չե՞ս ըսեր, այդ խօսքդ հաւատալի չէ՛. քանզի մեր նախնի սրբազան Հայրապետաց վկայութիւնները ունայնացընելով՝ խաբեբայից կարգը անցունել կըլլայ. եւ ահա՛ Եւսեբիոս պատ-

միշին ստուգաբան ըլլալուն համար վկայութիւն կուտայ քերթողահայրն մեր սուրբ Մովսէս խորենացին ըսելով. «Մի՛ ոք անհաւատասցի, քանզի մեզէն իսկ ականատես եղաք այն դիւանին: Եւ վկայ քեզ ՚ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկղեսիաստէ գիրք Եւսեբի կեսարացւոց, զորս ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ՚ի Հայ լեզու: Խնդիր արասցես ՚ի գեղարքունի ի գաւառին Սիւնեաց, եւ գտցես յառաջին հագներգութիւնն յերեքտասներորդ թուին, զի վկայէ Յեղեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջին թագաւորացն մերոց մինչեւ ցԱբգար, եւ զկնի Աբգարու մինչեւ ցԵրուանդ: Որ այժմ կարծեմ գտանի պահեալ ՚ի նոյն քաղաքի:» Խոր. Գիրք Բ. Գլ. Ժ:

Եւս եւ նոյն խորենացին կը գրէ Յիսուսի փրկչին հրամանաւ Թովմայ առաքելոյն գրած նամակը առ Աբգար թագաւորն մեր. յօրինակ այս. «Պատասխանի թղթոյն Աբգարու զոր գրեաց Թովմաս առաքեալն հրամանաւ Փրկչին: Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրեւ ո՛չ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, եւ որք ո՛չն տեսանեն՝ նորա հաւատասցեն եւ կեցցեն: Իսկ վասն

այնր զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրեւ կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս, եւ յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, եւ կեանս քեզ եւ որոց ընդ քեզ են շնորհեսցէ: Զայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում եւ զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ Յեղեսացւոց քաղաքին մինչեւ ցայսօր ժամանակի»։ Խոյ. Գիւրջ Բ. Գլ 17: Սոյն Խորենացին ՚ի Ճառին սրբոց կուսանացն Հռիփսիմեանց կը գրէ. «Եւ դարձեալ անտի խնդութեամբ եկին Յեղեսիա քաղաք, եւ երկրպագեալք Փրկչական պատկերին՝ եւ լցան ուրախութեամբ, համարեցան տեսեալ զԲանն մարմին եղեալ»։ Ճառ Հռիփ. Էր, 299: Եւ երանաշնորհ սրբազան Յօհաննէս Կաթուղիկոսն մեր կը գրէ. «Իսկ զթուղթ փրկչին բերեալ առ Աբգար Անանայ սուրհանդակի, ընդ նմին եւ զկենդանագրութիւն Փրկչական պատկերին, որ կայ մինչեւ ցայսօր Յեղեսացւոց քաղաքին»։ Գլ. 4:

Գիտեմ որ ցաւելով ՚ի սիրտ ոմանք պի-

տի ըսեն, թէ այդպիսի մոլար խօսքեր կամ գրուածներ ՚ի գայթակղութիւն մտաց շատ անգամ լսուած կամ տեսնուած են մանաւանդ այս ժամանակիս մէջ. բայց ինչ վնաս այդ բաներէն կը յառաջանայ նէ՛ ես չեմ խօսիր այս տեղս, թող սրբազան Պօղոս առաքեալը խօսի. «Ո՞չ գիտէք՝ եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ». ա Առ. Ե. 6:

Արդ՝ այնպիսի ուղղափառ կարծեալ անձանց համար այս կրնանք ըսել, որ մտախաբ հեինակներէ կամ իմաստակներէ ստացած իրենց մոլորութեան դառնութիւնը կը ժայթքեն, ինչպես որ սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի տեսանելիութիւնը եւ յայտնի երեւելիութիւնը փոխելով յանտեսանելիութիւն եւ յիմանալիութիւն, կը համարձակի ըսելու, թէ «Աներեւոյթ կամ անտեսանելի Եկեղեցի կայ, որում քրիստոնեայք կը հաւատան, եւ իբր մասն հաւատոյ կը դաւանին Նիկիական հանգանակին մէջ»:

Այս ծուռ վարդապետութիւնը մեր ուղղափառ սուրբ եկեղեցին ո՛չ ընդունի՝ եւ ո՛չ երբէք ալ քարոզած է. այլ ինչպէս ամեն ուղղափառ եւ բարեպաշտ Քրիստոնեայք կը ճանաչեն եւ կը խոստովանին, որ եկեղե-

ցին Քրիստոսի է տեսանելի եւ երեւելի, եւ բազում վկայութեամբ կը հաստատեն, այնպէս ալ մեր սուրբ Եկեղեցին: Նախ՝ Եսայի մարգարէացաւ վասն երեւելիութեան Եկեղեցւոյն Քրիստոսի, յասելն. «Զի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն, եւ տուն Աստուծոյ ՚ի վերայ գլխոց լերանց, եւ բարձրասցի ՚ի վերայ բլրոց, եւ եկեսցեն ՚ի նա ամենայն հեթանոսք». Բ. 1:

Եւ Քրիստոս Յիսուս տէր մեր օրինակաւ քաղաքի եւ ճրագի կը յայտնէ իրեն սուրբ Եկեղեցւոյն տեսանելի զգալի եւ երեւելի ըլլալը. «Ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ: Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ ղնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն, որ ՚ի տանն իցեն». Մատթ. Է. 14:

Քաջ կը բացատրեն Եկեղեցւոյն տեսանելի եւ զգալի ըլլալը սուրբ գրոց օրինակները եւ նմանութիւնները, որ զգալի եւ երեւելի են. ինչպէս «Հօտ բանաւոր». ա ՊԵՊ. Ե. 2: «Ուռկան հոգեւոր որսորդաց». Մատթ. ԺԳ. 47: «Հոգեւոր հարսանիք». Մատթ. ԻԲ. 9: «Աստուծոյ տաճար». ա Վորնի. գ. 16. Եւ այլն:

Այլ եւս բազմատեսակ զգալի եւ երե-

ւելի նմանութիւն կուտան սուրբ գիրք Եկեղեցւոյն Քրիստոսի, որոնցմով ալ յայտնի կապացուցանի՝ որ եկեղեցին Քրիստոսի է տեսանելի, եւ ոչ անտեսանելի: Տե՛ս սրբագան Պօղոս առաքեալը Տիմոթէոս աշակերտին կը գրէ, որ իրեն հոգեւոր հովուութեան պարտաւորութիւնը միշտ կատարէ, այցելութեան ելլալով հաւատացեալներուն, որոց բոլորը մէկտեղ առնելով, Տուն Աստուծոյ, կամ Եկեղեցի Աստուծոյ կանուանէ, յասելն, «Գիտասցես՝ թէ որպէս պարտ է քեզ ՚ի տունն Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ», ա. Տ՚ճ. Գ. 15:

Արդ՝ Տիմոթէոս աշակերտն առաքելոյն Պօղոսի, ո՛չ աներեւոյթ է եւ անտեսանելի, այլ տեսանելի եւ զգալի մարդ. այսպէս ալ այն Քրիստոսի ժողովուրդները՝ որ տուն Աստուծոյ եւ եկեղեցի Աստուծոյ կանուանէ, են մարդիկ տեսանելի եւ զգալի, ուրեմն եկեղեցին Քրիստոսի է տեսանելի եւ զգալի, եւ սոյն այս Պօղոս առաքեալը կը գրէ եւս, որ ես արժանի չեմ Առաքեալ Քրիստոսի անուանելոյ, վասն զի եկեղեցին Աստուծոյ հալածեցի, «Չե՛մ իսկ արժանի՝ թէ կոչեցայց առաքեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ», ա Կորն. ժե. 9:

Արդ՝ եթէ եկեղեցին Աստուծոյ աներեւոյթ է եւ անտեսանելի, ապա ո՞ր եկեղեցին Աստուծոյ Պօղոս հալածեց նախ քան զհաւատալն իւր, մի՛ թէ կարելի՞ է տեսանելի մարդ մը անտեսանելի բան մը հալածել՝ նեղել իրեն ձեռքովը, թէ որ անտեսանելի է եկեղեցին Քրիստոսի, Պօղոս առաքեալը ի՞նչ պէս կրնայ ըսելու, որ ես հալածեցի այն Քրիստոսի Եկեղեցիէն շատերը սպանանելով՝ եւ տարագրելով՝ եւ բանտարկելով, ի՞նչ ըսենք այս տեղս, յիմարական դրութի՞ւն մի ըսենք, եւ կամ թէ խելայեղութեան ցնորմունք մտաց, ես կը կարծեմ՝ որ չարագոյն է քան զխելացնորից բանդագուշանս՝ կամակորմոլորելոց բարբառնջմունքը, որ պէս յայտնի եղաւ: Ուրեմն Եկեղեցի Աստուծոյ ըստ նորահնար գրութեան մոլորաշաւիղ նոր աղանդից ո՛չ աներեւոյթ է եւ ոչ իմանալի, այլ յայտնի եւ տեսանելի է եւ զգալի:

Արդ՝ արժան է եւ զայս գիտել, որ ինչու՞ համար Նորաղանդք կը ջանան եւ կը հաստատեն Եկեղեցին անտեսանելի ընելու, զանազան պատճառներ կան՝ որոնցմէ մէկ քանին յայտնի կընեմք աստանօր:

Նախ՝ եթէ երեւելի ըլլալուն Եկեղեցւոյն հաւատան նէ, պարտաւոր պիտի ըլլան

միշտ ընդունելու Եկեղեցւոյն ընդունած ուղղափառ դաւանութիւնը հաւատոյ, եւ առաքելական հնագոյն աւանդութիւնները՝ եւ շնորհաբաշխ խորհուրդները ըստ առաքելոյն Պօղոսի. «Այսուհետեւ եղբարք՝ հաստատուն կացէք, եւ պի՛նդ կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ու ստրուք, եթէ՛ բանիւ եւ եթէ՛ թղթով մերով». Բ ԹԷ. Բ. 14:

Ի՞նչպէս ընեն Նորադանդները՝ որ այս ուղղափառութիւնը հաւատոյ եւ առաքելական աւանդութիւնները մերժեն եւ չ՛տեսնեն. ահա՛ հնարեցին անտեսանելիութիւն մը յայտնի տեսանելի սուրբ Եկեղեցւոյն վրայ, որով մնան ու մնացին Քրիստոսի ցոյց տրւած մոլորութեան խաւարին մէջը, եւ իրենց հոգեւոր պակասութիւննին չ՛տեսնան, ու չը յայտնըվին իրենց մէջը. ըստ այնմ, «Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, եւ ո՛չ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա». ՅօԸ. գ. 20:

Երկրորդ՝ կատարեալ ուղղափառ Քրիստոնեայները ո՛ր ազգէն կուզես թող ըլլան, հարկաւ մասնաւոր Եկեղեցի են, եւ բարոյական անդամ ընդհանրական Եկեղեցւոյն Քրիստոսի, որոյ ընդհանրական գլուխ է Քրիստոս փրկիչն մեր, եւ ամեն ազգաց ուղ-

ղափառ հաւատացելոց Եկեղեցին ունի երեւելի Քրիստոսափոխան առաքելայաջորդ Քահանայապետ եւ Եպիսկոպոսապետ, հարկաւ պիտի հնազանդին նմա հոգեւոր հրպատակութեամբ. ըստ այնմ. «Ունկնդիր լեռուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէ՛ք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր, զի խնդութեամբ արասցեն զայն՝ եւ մի՛ յոգւոց հանելով. զի այն ո՛չ յօգուտ ձեր է». Ժգ. Ե՞բ. 17:

Այս պարտուպատշաճ հնազանդութիւնը նորաղանդները կամակոր յանդգնութեամբ մերժել ուզելով, եւ այս հոգեւոր պարտաւորութենէն հեռանալու համար հնարեցին այս նոր դրութիւնը անտեսանելիութեան Եկեղեցւոյն Քրիստոսի, որ իրենց անհնազանդութիւնն ալ անտեսանելիութեան մէջը անտեսանելի ըլլայ, որով իրենք ալ անմեղադիր ըլլան: Բայց տե՛ս ի՞նչ կը հրամայէ Քրիստոս. «Զի՛ք ինչ ծածուկ՝ որ ո՛չ յայտ լիցի, եւ ո՛չ գաղտնի՝ որ ո՛չ ծանիցի, եւ եկեսցէ ՚ի յայտ». Գ.՝Կ. ը. 17:

Երրորդ՝ սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի յայտնի երեւելիութենէն փախչելնուն նորաղանդներուն մէկն ալ այս է. ըստ որում

Քրիստոսական սուրբ Եկեղեցին անժխտելի հաստատուն սահման ունի՝ ի Քրիստոսէ Յիսուսէ անտի, որ իրեն հոգեւոր պաշտօնեաները՝ երէցները եւ կամ եպիսկոպոսները պիտի շարունակաբար ունենան ձեռնադրութիւնը սրբազան Առաքեալներէն, որոնք անմիջաբար առին Յիսուս Քրիստոսէն, որով պիտի արժանապէս անուանին օրինաւոր յաջորդ առաքելոց, եւ զինուորեալ տեսանելի Եկեղեցւոյն Քրիստոսի՝ հոգեւոր հովիւ տեսանելի՝ փոխանորդ ամենազօր քաջ հովուին ճշմարտի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ըստ այնմ, «Եւ եհան զնոսա մինչեւ ՚ի Բեթանիա, եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա». Գ. 1. իդ. 50: Եւ ՚ի գործս առաքելոց գրեալ է. «Ձեռնադրեցին նոցա ըստ Եկեղեցւոյ՝ երիցունս. աղօթս արարեալ հանդերձ պահօք՝ յանձն արարին զնոսա Տեառն, յոր հաւատացեալն էին». Գ. 1. յ. 22: Եւս եւ Պօղոս առաքեալ կը պատուիրէ Տիմոթէոս աշակերտին, որ իրեն առած ձեռնադրութեան մատակարարելի շնորհը շատցունէ արժանաւորներուն տալով. «Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արժարձել զշնորհսն Աստուծոյ, որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ». Բ Տ՚. 5. ա. 6:

Այս առաքելական ձեռնադրութեան շր-
նորհր մերժեցին, եւ այս Քրիստոսական Եկե-
ղեցւոյն հարկաւոր խորհուրդը չեն ընդու-
նիր, վասն որոյ շունին առաքելական յաջոր-
դութիւն օրինաւոր ձեռնադրութեան, ուստի
լոկաշխարհական անձինք են Միսիօնար քա-
րոզիչ կարծուածները նոր աղանդից, եւ մի-
այն անունով հոգեւոր պաշտօնեայ կը ճա-
նաչուին իրենց խաբուած ժողովրդոց մէջը,
ահա՛ ասանկներուն համար գրուած է Յով-
հաննու աւետարանչի յայտնութեան մէջը,
որ միայն խաբէական անունով ունին պաշ-
տօն հոգեւոր՝ եւ ո՛չ Աստուածային շնորհիւն
կոչուած. «Տեսի զգործս քո, զի անուն կեն-
դանեաց ունիս, եւ մեռեալ ես». Յայտ. գ. 1:

Ալ այս տեղս ըստ հրամայելոյ Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, Մատ. ը. 22: Թո-
ղումք մեռելոց ՚ի հաւատս՝ թաղել զմեռ-
եալս իւրեանց իրենց խաբուած անտեսանե-
լիութեան մէջ: Եւ մեք կենդանի հաւա-
տով եւ ճշմարիտ կրօնիւ հետեւինք Յիսու-
սի Քրիստոսի յայտնի եւ լուսաւոր ճշմար-
տութեանը, որով միշտ փառաւոր ուղղա-
փառութեամբ կը հանդիսանայ եւ մեր սուրբ
Եկեղեցին առաջի Քրիստոսի փրկչին մերոյ՝
եւ առաջի ամենայն ազգաց ու ուղղափառաց:

ԳՂՈՒԽ Ը

Հնդհանրական Եկեղեցին Քրիստոսի բաց ՚ի երեւելի ըլլալէն ունի զանազան յատկութիւններ, որոց կը հաւատայ Հայոց ազգին Եկեղեցին ալ, եւ ունի այն ամեն յատկութիւնը՝ ըստ որում բարոյական անդամ է ընդհանրական Եկեղեցւոյն Քրիստոսի, որոյ ընդհանուր մի միայն գլուխ է ինքն Յիսուս Քրիստոս, ըստ Պօղոսի. «Ձնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք Եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լընու.» Եփեա. ա. 22:

Նախ՝ առաջին յատկութիւնն է, անսխալութիւնը ՚ի բանս հաւատոյ՝ եւ յուղիղ կրօնս աստուածպաշտութեան. քանզի ուղղափառ սուրբ Եկեղեցին Քրիստոսի ունի անսխալ խորհրդատու եւ ուսուցիչ սուրբ Հոգին Աստուած, որ ո՛չ երբէք պակասի սուրբ եւ ուղղափառ Եկեղեցիէն շնորհաբաշխութեամբն եւ ուսուցանելովն ներքին ազդեցութեամբ. ըստ այնմ. «Եւ ես աղաչէցից զհայր, եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ ՚ի յաւիտեան. զհոգին ճշմարտութեան՝ զոր աշխարհս ո՛չ կարէ ընդունիլ: Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ հայր յանուն իմ, նա ուսու-

ցէ ձեզ զամենայն եւ յիշեցուցէ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ»։ Յօ՛ւ, Ժդ. 16:

Ուրեմն երբ կըսեն ամէն ուղղափառ աստուածաբան վարդապետները ու կը գրեն, որ Եկեղեցւոյ վարդապետութիւնը, եւ ՚ի բանս հաւատոյ վճիռները անսխալ է, եւ կամ Քրիստոսի Եկեղեցին ո՛չ սխալի, ամենքը կը հային յանսխալութիւն Հոգւոյն սրբոյ, որ անսխալ ուսուցանէ՝ եւ անսխալ տայ խօսիլ՝ եւ խորհիլ:

Ապա սուրբ Հոգին Աստուած ո՛չ միայն սրբարար շնորհաց պարգեւող է Եկեղեցւոյն, այլեւ մխիթարիչ է՝ օգնական եւ բարեխօս. եւ մանաւանդ անսխալ վարդապետ եւ ուսուցիչ է իւր էակից եւ փառակից Յիսուսի Քրիստոսի Եկեղեցւոյն. վասն որոյ կը գրէ սուրբն Կիրեղ. «Արդ՝ գեղեցիկ է այս Եկեղեցւոյ սրբարար եւ օգնական եւ բարեխօս Հոգին սուրբ, եւ վարդապետ. վասն որոյ ասաց փրկիչն: «Նա ուսուցէ ձեզ զամենայն ինչ, զոր ասացի ձեզ»։ ո՛չ ուսուցանէ միայն, այլեւ յիշեցուցանէ՝ զոր ինչ ասացի ձեզ: Զի ո՛չ եթէ այլ վարդապետութիւնք են Քրիստոսի, եւ այլ Հոգւոյն սրբոյ, այլ մի եւ նոյն»։ Կո՛չ. Ընձ. Եր. 347:

Ասկէց կիմացուի՝ որ սուրբ Եկեղեցւոյ տիեզերական ընդհանուր ժողովքներու մէջ պիտի ներկայ գտնուին կամ անձամբ եւ կամ գրով ամենայն ուղղափառ Եկեղեցեաց եպիսկոպոսապետները եւ եպիսկոպոսները եւ երէցները՝ ուղղափառ հաւատոյ հաստատութեան համար, եւ կամ մէկ պատահած հերետիկոսութիւն մը կամ աղանդ մը հերքելու եւ մերժելու համար. ամենքը պիտի նախ զՀոգին սուրբ աղաչեն՝ որ այն գումարեալ Եկեղեցւոյն անսխալ խորհուրդ շնորհէ, եւ ուսուցանէ անսխալ վճռել. բնաւ մէկը պիտի չ'ընդունի իրեն մարդկային մտաց զօրութեանը՝ եւ կամ իրեն ունեցած յառաջադէմ իշխանութեանը համարել անսխալ խորհիլը, եւ կամ անսխալ վճիռ ընելը, այլ միայն այն ամենայն ուղիղ դատումը եւ վճիռը սուրբ Հոգւոյն ճշմարտութեանը շնորհաց արդիւնքը ճանաչել պա՛րտք է կատարեալ հաւատով:

Յայտնի օրինակ է մեզի Քրիստոսի Եկեղեցւոյն այն առաջին հրաշալի սուրբ ժողովը, որ եղաւ յԵրուսաղէմ, կորուսեալ եւ սատակեալ տիրանենգ չար Յուդային համար, որ պակասեցաւ ՚ի թուոց երկոտասանից. վասն որոյ ժողով սրբազան Առաքելոց

կացուցին երկուս արս ընտիրս եւ արժանաւորս առաքելութեան կորուսեալ Յուդային տեղը, զՅովսէփ անուանեալն յուստոս՝ եւ զՄատաթիա. եւ այս ընտրութիւնը՝ որ վիճակաւ պիտի ճանաչուէր այս երկու անձերէն մէկը առաւել արժանի ըլլալը երկոտասանից կարգը մտնելու. տեսէ՛ք ի՞նչ ըրին այս սուրբ ժողովին մէջը ժողովեալ երջանիկ սրբազան Առաքեալները. ամենեւին մէկը իրեն վրայ շառաւ ընտրութեան վճիռը, եւ ո՛չ ալ իրենց կանոնադրեալ վիճակին տուին միտքերնին. այլ ամենքը աղօթքի կանգնեցան յառաջ, եւ ապա ընդունելի եղաւ վիճակին ընտրութիւնը իրենց. ինչպէս գրած է. «Եւ կացուցին երկուս, զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, եւ զՄատաթիա: Եւ կացեալ յաղօթս՝ ասեն, դու՛ տէր՝ սրտագէտ ամենայնի՝ յայտնեա՛ զմի ոք՝ զոր ընտրեցեր ՚ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ՝ եւ զառաքելութեան. յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ ՚ի տեղի իւր: Եւ ետուն վիճակս նոցա, եւ ելանէր վիճակն Մատաթիայ, եւ համարեցաւ, ընդ մետասան առաքեալսն»։ Գործ. ա. 23:

Այս Հոգւոյն սրբոյ անսխալ ուսուցիչ եւ

խորհրդատու ըլլալը սուրբ Եկեղեցւոյն՝
 յայտնի կը քարոզէ Պօղոս սրբազան առաք-
 եալը, ըսելով որ մենք մարդկային սխալական
 իմաստութիւնով՝ բանաստեղծական ձեւով
 եւ փիլիսոփայական գիտութեամբ չեմք խօ-
 սիր եւ չեմք քարոզեր, այլ մեր վարդապե-
 տութիւնը եւ հոգեւոր վճիռը Հոգւոյն սըր-
 բոյ անսխալ իմաստութեանը շնորհքն է.
 «Եւ զոր խօսիմքս՝ ո՛չ եթէ մարդկեղէն ուս-
 մամբ ճարտարութեամբ բանից, այլ վար-
 դապետութեամբ հոգւոյն ընդ հոգեւորս ըզ-
 հոգեւորսն համեմատեմք»։ Խ Կորն. Բ. 13:

Ապա սուրբ Եկեղեցին Քրիստոսի կը պար-
 ծենայ անսխալութեամբն սուրբ Հոգւոյն
 Աստուծոյ. վասն որոյ Եկեղեցւոյն հաւատա-
 րիմ եւ առաքելայաջորդ պաշտօնեայները միշտ
 կը պարտաւորին սուրբ Հոգւոյն տալ անսը-
 խալ ճշմարտութեան վճիռները եւ խոր-
 հուրդները. ինչպէս սրբազան Առաքեալները
 ունէին այս օրինակ անսխալութեան պար-
 ծանքը սուրբ Եկեղեցւոյ մէջ, որ միշտ կը
 կարդամք ու կիմանամք, եւ ահա՛ աստանօր
 ալ պիտի յայտնի տեսանեմք. «Զոր յառա-
 ջագոյն ասաց Հոգին սուրբ»։ Գորձ. Խ. 16:
 «Ստել քեզ Հոգւոյն սրբոյ»։ Գորձ. Է. 3:
 «Ի ուր հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ

կայք».⁹ Գործ. է. 51: «Ասէ Հոգին սուրբ՝ որոշեցէ՛ք ինձ զԲառնաբաս եւ զՊողոս ՚ի գործ».¹⁰ Գործ. ժգ. 2: «Հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ եւ մեզ».¹¹ Գործ. ժե. 28: Եւ շրջեցան ընդ Փռիւզիա եւ ընդ կողմանս Գաղատացւոց, արգելեալք ՚ի Հոգւոյն սրբոյ խօսել զբանն յԱսիա».¹² Գործ. ժգ. 6: «Այսպէս ասէ Հոգին սուրբ».¹³ Գործ. իա. 11: «Բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ».¹⁴ Գործ. իր. 25: «Ստուգութեամբ ասեմ ՚ի Քրիստոս՝ եւ ո՛չ ստեմ, վկայեն ինձ միտք իմ ՚ի Հոգին սուրբ».¹⁵ Հռոմ. թ. 1: «Հոգին սուրբ յայտնապէս ասէ».¹⁶ ա Տ՚Կ. դ. 1:

Այս սուրբ Հոգւոյն Աստուծոյ անսխալ ճշմարտութեանը չ'հնազանդելով՝ եւ մանաւանդ կենդանի հաւատով ուղղափառութեան չ'հետեւելով, քանի՛ քանի՛ հերձուածներ եւ հերետիկոսապետներ ելան, որ հաւատքով ըմբռնելու եւ ճանաչելու ճշմարտութիւնները իրենց մարդկային եւ աշխարհային իմաստութեամբ եւ մտաց հասողութեամբ չափելով եւ կշռելով՝ գահավիժեցան գլորեցան եւ անկան պէսպէս անհաւատութեան եւ աղանդաւորութեան կորըստական խորխորատներու մէջ. վասն զի Հոգւոյն սրբոյ անսխալ ուսմունքներուն ճշմար-

տութիւնը, որ մարգարէներով՝ առաքեալներով՝ եւ Եկեղեցւոյ վարդապետներով քարոզուած է, մերժեցին կամակոր մոլորութեամբ, եւ ո՛չ կարացին ընդունիլ յիմարելով մտախաբ անհաւատութեամբ իւրեանց. ըստ այնմ, «Շնչաւոր մարդ ո՛չ ընդունի ըզՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա, եւ ոչ կարէ գիտել՝ եթէ հոգեպէս քննիցի»., ա. Աորնթ, Բ. 14:

Բայց մեր սուրբ Եկեղեցին գիտե յառաջագոյն՝ Հոգւոյն սրբոյ ճշմարտութեանը հրնազանդիլ կատարեալ հաւատով՝ եւ աներկբայ յուսով՝ եւ պատուիրանապահութեան սիրով. վասն զի սրբազան Քահանայապետն մեր սուրբ Գրիգոր լուսաւորիչ ուսուցց մեզ յասելն. «յամենայնի գոհանալով զբարերարութեանն նորա խնամոց, խոստովանողք եւ դաւանողք ճշմարտութեանն լիցուք. եւ կացցուք ՚ի հնազանդութիւն հանդիսիցն լաւութեան՝ որ առ հաճոյս տէրութեանն իցէ. ՚ի նեղութեան եւ յանդորրու անքակ մնալ ՚ի սէրն՝ որ առ Աստուած է ամենայն բարութեամբ, հոգւով ասեմ եւ մարմնով: Եվ ո՛չ զանուն արարչին՝ արարածոց կոչել, եւ ո՛չ զճշմարտութիւնն մոլորեցուցանել ՚ի սուլտս»., Յաճախ. Տառ, Բ. Էր, 8:

Եւ սուրբն Ներսէս շնորհալի հայրապետն մեր գրելով ուսուցանէ մեզ «Հաւատոյն անուն՝ մի է. բայց կրկին ունի զօրութիւն. առաջին դաւանութեան հաւատն, որ է խոստովանութիւն ՚ի Սուրբ Երրորդութիւնն՝ զոր ընկալաւ իւրաքանչիւր ոք յաւազանէն: Երկրորդ՝ հաւատ այն է, որ զբանս՝ զոր Հոգին սուրբ խօսեցեալ է բերանով Մարգարէիցն եւ առաքելոցն՝ եւ Եկեղեցոյ Վարդապետօք, զորս ՚ի գիրս սուրբս գրեցին՝ շհամարի առասպելս եւ սուտս . այլ հաւատայ՝ թէ ճշմարիտ են եւ ուղիղ , այնպէս՝ որպէս թէ աչօք իւրովք տեսանէ զամենայն եղեալսն, եւ զլինելոցն եւ զոր էնն»։ Ընդ. Եր. 12:

Եւ երկրորդ սուրբ Եկեղեցին Քրիստոսի անսխալ կայ եւ մնայ միշտ ՚ի բանս հաւատոյ եւ ՚ի կրօնս աստուածաշտութեան, վասն զի անսխալ եւ ուղիղ կանոն հաւատոյ եւ բարի վարուց ունի սուրբ Գիրքերը. Եւ քրններ է՝ ու կը քննէ միշտ սուրբ Գրոց խօսքերը ուղիղ եւ հաւատարիմ բացատրութեամբ եւ ողջամիտ վարդապետութեամբ. ըստ այնմ՝ «Քննեցէ՛ք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս. Եւ նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ»։ Յօճ. Ե. 39: Եւ Պօղոս գրելով առ Տիմոթէ-

ոս աշակերտն իւր յայտնի կընէ՝ որ սուրբ
 Գիրքը, որ իրեն կանոն հաւատոյ է, միշտ
 իր առաջը ունենայ, եւ անոնցմով իմաստուն
 ըլլայ, եւ անոնց վրայով ողջամիտ վարդապե-
 տութիւն ունենայ, եւ քարոզէ հաւատացե-
 լոց: Եւ մոլորեալներէն եւ մոլորեցուցիչնե-
 րէն զգուշանայ, եւ զգուշացունէ հաւա-
 տացեալները. Հստ այնմ՝ «Այլ մարդք չարք
 եւ կախարդք յառաջ եկեսցեն ՚ի չար անդր,
 մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն: Այլ դու
 հաստատո՛ւն կաց՝ յոր ուսարդ, եւ հաւա-
 տարիմ եղեր, գիտես ուստի ուսար, զի ՚ի
 մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կա
 ըող են իմաստուն առնել զքեզ ՚ի փրկու-
 թիւն ՚ի ձեռն հաւատոցն՝ որ ՚ի Քրիստոս
 Յիսուս: Ամենայն գիրք Աստուածաշունչք
 եւ օգտակարք՝ ՚ի վարդապետութիւն են, եւ
 յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ ՚ի
 խրատ աղարութեան, զի կատարեալ իցէ
 մարդն Աստծոյ յամենայն գործս բարու-
 թեան հաստատեալ»․ Բ ՏՆԿ. գ. 13:

Սոյնպէս եւ Պետրոս սրբազան առաքեալը
 կը գրէ հաւատացելոց, որ միտքերնին տան
 սուրբ Գիրքերուն, եւ յիշեն Աստուծոյ Յի-
 սուսի Քրիստոսի պատգամները՝ հրամաննե-
 րը, որ խօսեցաւ Մարգարէներուն եւ Առաք-

եալներուն բերնովը, եւ շըլլայ որ աղանդաւոր մոլորեալներուն հետեւին, որ պիտի արհամարհեն այն սուրբ գիրքերուն խօսքերը, ու ծաղր պիտի ընեն իրենց մարմնասիրութեան ցանկութեանը հետեւելով. ըստ այնմ. «Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ գրեմ, որով զարթուցից ՚ի յիշատակ զհաստատուն միտս ձեր. յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս ՚ի սրբոց մարգարէից եւ յառաքելոցն ձերոց, զպատուէրս տեառն եւ փրկչին: Բայց զայս նախ գիտասջիք, զի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք՝ այպանողք, որ ըստ իւրեանց ցանկութեանցն գնայցեն»։ ք ՊԵՊ. Գ. 1:

Եւ սուրբն Կիրեղ Երուսաղէմի հայրապետն քարոզեց այս սուրբ Եկեղեցւոյ ունեցած անսխալ հաւատոյ ճշմարտութիւնը հաստատուած սուրբ գրովք, յասելն. «Եւ ստացիր դու զհաւատս ուսմամբ եւ պատմութեամբ. եւ պահեա դու միայն զայն հաւատս, որ ՚ի սուրբ Եկեղեցւոյ աստ վարդապետեալ, որ յամենայն գրոց սրբոց հաստատեալ է Զի ո՛չ եթէ որպէս մարդկան հաճոյ թուէր, եղաւ հաւատոցս հաստատութիւն, այլ յամենայն գրոց զազգի ազգի բանս ժողովեալ ՚ի մի վարդապետութիւն

կատարին» . Առջ, ընթ, ճառ. ի:

Այս մտօք սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր քարոզելով՝ յայտնի կընէր մեզի, որ սուրբ Գրոց վկայութիւնները հաստատուն կանոն հաւատոյ ունենամք, եւ հեռի մընամք հաւատքէ մոլորեցուցանող խնդիրներէն ու խօսքերէն. «Կշռել եւ խորհիլ եւ առնել զայն որ ՚ի հաճոյս Աստուծոյ աւարտի ճշմարիտ վկայութեամբ սուրբ Գրոց. եւ մի՛ անկանիլ ՚ի բազմախոյզ խնդիրս՝ որք վըր-րիպեցուցանեն ՚ի սուրբ հաւատոց: Զի ճշմարիտ գիտութիւնն իմաստիւք կենարար շահից լցուցանէ միշտ, որ ամրացեալ պահպանութեամբ պատուիրանին ՚ի հոգեւոր վարդապետութենէն կայ մնայ անսասանելի» . Յաճախ. ճառ, դ. Եր, 37:

Արդ՝ ուղղափառ Քրիստոնեայներուն միաբանեալ ուղիղ դաւանութեամբ հաւատոյ՝ եւ հաղորդակցութեամբ սրբարար խորհրդոց եւ աստուածպաշտութեամբ կրօնից համախումբ ժողովը, որ ունի ամենատէր եւ ամենափրկիչ Յիսուս Քրիստոսը՝ ընդհանրական գլուխ, իրաւամբ է Եկեղեցի Քրիստոսի. բայց ըստ որում առանձին սխալական մարդիկ են, հարկավ առանձին առանձին լոկ մարդկային խորհրդով եւ դատմամբ կը սխա-

լին. իսկ Հոգին սուրբ Աստուածը ունենալով ճշմարիտ եւ անսխալ խորհրդատու՝ եւ ուսուցիչ՝ եւ առաջնորդ, եւս եւ սուրբ գիրքերը անսխալ կանոն հաւատոյ եւ բարի վարուց, ողջամիտ վարդապետութեամբ հետեւելովն հեղինակութեան նոցին՝ անսխալ է Եկեղեցին Քրիստոսի. եւ այս սուրբ Եկեղեցւոյն անսխալ հեղինակութեանը եւ կանոնադրութեանը արտաքոյ մնացողները չունին հասանել փրկութեան, ահա՛ այս է որ կըսուի, «Արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն»։ Եւ այս բանը մասնաւորապէս բնաւ մէկ ազգի մը ուղղափառ Եկեղեցի իրեն վրայ չ' կարէր յատկացուցանել. վասն զի ամեն մէկ ուղղափառ ազգաց Եկեղեցին մասնաւոր մասնաւոր բարոյական անդամք եւ մարմին Քրիստոսի են. ըստ այնմ՝ «Այլ դուք մարմին Քրիստոսի էք եւ անդամք յանդամոց նորա»։ ա Վորն. ժբ. 27:

Ուրեմն ըսելու է, որ ուղղափառ սուրբ Եկեղեցիէն Քրիստոսի՝ հերձուածողութեամբ եւ հերետիկոսութեամբ բաժանեալներուն «չի՞ք փրկութիւն», կը վճռէ եւ լ գիտէ՞ք մի որ հոգեզգօն աստուածաբանները սուրբ գրոց ո՞ր խօսքին նայելով վճռեցին այս բանը «Արտաքոյ Եկեղեցւոյ չի՞ք փրկութիւն»:

Ոսկեբերան եւ Օգոստինոս աստուածաբաններուն նայինք նէ, մեզի ցոյց կուտան սուրբ Աւետարանը. Յիսուս Քրիստոս ընդհանուր մի միայն գլուխն Եկեղեցւոյ վրճոնց. օրինակաւ յասելն առ առաքեալս իւր՝ եւ առ ամենայն հաւատացեալս. «Ես եմ որթ՝ եւ դուք ուռ, որ հաստատեալ է յիս՝ եւ ես ՚ի նա. նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ո՛չինչ կարէք առնել: Եթէ ոք ո՛չ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն՝ եւ ցամաքեցաւ. եւ ժողովեն զնա եւ ՚ի հուր արկանեն եւ այրի.» ՅօՒ. ԺԵ. 5:

Ահա առաջին խօսքովը կիմանամք Քրիստոսի ուղղափառ Եկեղեցին, այսինքն բոլոր ազգաց ամեն հաւատացեալ ուղղափառները, որ միացեալ եւ հաստատեալ են ՚ի Քրիստոս Յիսուս, ըստ որում ասէ. «Որ հաստատեալ է յիս»: Եւ երկրորդ խօսքովը յայտնի կերեւի, որ շարափառութեամբ եւ հերետիկոսութեամբ եւ կամ աղանդասէր մոլորութեամբ բաժնուած եւ զատուած են ուղղափառ համախումբ Եկեղեցիէն Քրիստոսի. որով միանգամայն Քրիստոսական հաւատոյ միութենէն բաժնուած հերձուած կըլլան կը մնան արտաքոյ Եկեղեցւոյն Քր-

րիստոսի, ինչպէս վճռեց. «Եթէ ոք ո՛չ է հաստատեալ յիս, ել նա արտաքս». ուրեմն անշուշտ «արտաքոյ» Եկեղեցւոյն Քրիստոսի լինելով, ոչ հասանին փրկութեան:

Բայց գիտնամք որ բնաւ ոչ մէկ ազգ մը՝ թէ եւ ընտիր եւ գլխաւորաւ ըլլայ, ուղղափառ Քրիստոնեայ ազգաց մէջ մասնաւորապէս՝ այս ընդհանուր վճիռը Քրիստոսի իրեն Եկեղեցւոյն վրայ չ'կարէր վերաբերելով ասել, թէ «Արտաքոյ իմ Եկեղեցւոյս չի՛ք փրկութիւն»:

Այլ միայն կը պարտաւորի ամէն ուղղափառ ազգաց Եկեղեցիները իրենց ողջամիտ եւ ուղիղ վարդապետութիւնը պահել հաստատուն իրենց մէջը, որով Քրիստոսի Յիսուսի հետը միացած ըլլան, եւ կենդանի հաւատք ունենալով հանապազ պտղաւէտ ըլլան բարեգործութեան մէջ, եւ անով ալ փրկութեան եւ հանդերձեալ երանութեան երկնից արքայութեան ժառանգաւոր գտնըվին, ասոր համար է որ ինքն Յիսուս Քրիստոս կը հրամայէ. «կացէ՛ք յիս եւ ես ՚ի ձեզ. որպէս ուռն ո՛չ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ո՛չ իցէ հաստատեալ յորթն. նոյնպէս եւ դուք եթէ ո՛չ յիս հաստատեալ իցէք». Յօժ. Ժե. 4:

Ապա ճշմարիտ եւ հարազատ աւանդապահ սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի առաքելայաջորդ Եպիսկոպոսապետները, եւ Եպիսկոպոսները եւ հոգեւոր հաւատարիմ մշակները՝ կրօնասէր երեցները պարտաւոր են մեծ փոյթ ունենալով բարեմիտ եւ ուղղափառ ժողովուրդը հեռի պահելու մոլորամիտ աղանդաւորներուն խաբէութենէն. ասոր համար աղաչելով կը գրէ Պօղոս սրբազան առաքեալը. «Աղաչեմ զձեզ ե՛ղբարք՝ գիտել զայնպիսիսն, որ հերձուածս եւ գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսարուք, եւ խորշեցարուք ՚ի նոցանէ: Զի այնպիսիքն տեառն մերում Քրիստոսի ոչ ծառայեն՝ այլ իւրեանց որովայնի, եւ քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց», *Հռոմ. Ժ. 17*: Եւ սուրբն Կիւրեղ Երուսաղէմի հայրապետն կը պատուիրէ զգուշանալ աղանդաւոր մոլորեալներէն, որ գաղտնի եւ խաբէութեամբ ուղղափառ հաւատացեալներուն գայթակղութիւն տալու կը հետեւին. եւ միշտ կաշխատին՝ որ Քրիստոսի սուրբ Եկեղեցիէն դուրս հանեն՝ եւ իրենց հետը մոլորեցունեն ամենքը. վասն որոյ կըսէ. «Բազում գայլք շրջին ՚ի հանդերձս գառանց.

գառանց հանդերձս զղեցեալ ունին, այլ ո՛չ եթէ մագիլս եւ ժանիս, այլ զհեզութեան եւ զհանդարտութեան զհանդերձ առեալ, ՚ի պատճառս խոնարհութեան կերպարանաց զանմեղս սրտիւք պատրել պատրաստին, մահաբեր թունիւք զանօրէնութեան ժանկն յատամանց անտի իւրեանց ՚ի ներքուստ արտաքս փոխեն: Պիտոյ են մեզ այսուհետեւ շնորհք հոգեւոր, միտք զգաստութեան, աչք հայեցող, զի մի՛ զորոմնն իբրեւ զցորեան կերեալ, տգիտութեամբ ՚ի կորուստ մատնեսցուք»։ Աող. ընձ. Տառ դ։

Ապաքէն երկրորդ յատկութեամբ՝ ինչպես որ սուրբ Եկեղեցին Քրիստոսի հաւաքաբար եւ ընդհանրապէս հաստատեալ՝ եւ միացեալ ըլլալով ՚ի Քրիստոս Յիսուս, մըշտնջենաւոր է՝ եւ մինչեւ ցկատարած աշխարհի կայ եւ մնայ. ըստ այնմ՝ «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի»։ Մատ. իր. 20։

Այսպէս ալ եւ մեր Հայոց ուղղափառ Եկեղեցին մասն լինելով ընդհանրական Եկեղեցւոյն Քրիստոսի՝ ո՛չ միայն այսօրուան օրս, այլեւ մինչեւ ցկատարած աշխարհի անշարժելի հաստատուն կայ եւ մնայ անսխալ ՚ի հաւատս ուղիղ ու ճշմարիտ դաւանու-

Թեամբն եւ ողջամիտ վարդապետութեամբն եւ կրօնասէր բարեպաշտութեամբն, ապա ո՛չ յերէկն եւ ո՛չ այսօրուան օրս Հայք՝ ո՛չ հերձուած են եւ ո՛չ հերետիկոս, այլ ճշմարիտ ուղղափառ Քրիստոնեայ են՝ եւ բարեպաշտութեամբ ալ բարի Քրիստոնեայ, եւ միշտ հաւատով եւ յուսով ապաւինին ամենակալ եւ ամենակարող պաշտպանութեան եւ պահպանութեան Ամենասուրբ միասնական Երրորդութեան, եւ այս աղօթքը կրնէ Հայոց ազգը իրեն սուրբ Եկեղեցւոյն մէջը ամեն ժամանակ, «Շնորհատու բարեաց յամենայնի առատ անմահ տէր՝ աղաչեմք ըզքեզ, փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջին եւ զխաւարային խորհուրդս, ՚ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ, եւ շրնորհեա՛ մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ Երրորդութիւնդ, ՚ի Հայր եւ յՈրդի եւ ՚ի սուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն»:

Արդ՝ ուղղափառ հաւատացեալները, որ են ճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի, ունին այս շորս ծանօթարար պանծալի նշանները, որոնք են՝ միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն, եւ առաքելականութիւն: Ասոր համար է որ այս դաւանութիւնը Նիկիոյ

սուրբ ժողովոյն հանգանակին մէջ գրուած է, եւ կը խոստովանիմք այսպէս. «Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի»: Եվ Սրբութեան նշանը բացայայտ գրեց Կոստանդնուպօլսոյ տիեզերական սուրբ ժողովը, ասելով. «Հաւատամք . . . ՚ի մի սուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի»:

Այս խորհրդաւոր նշաններովը Եկեղեցին Քրիստոսի կորոշուի կը զանազանուի մոլորեալ հերետիկոսներէն եւ աղանդաւոր հերձուածներէն. որոնք շունին այս շորս նշանին զօրութիւնը ներգործապէս իրենց մեջը. իսկ մեր Հայոց Եկեղեցին իրեն ուղղափառութեամբը եւ բարեպաշտութեամբը իսկապես ունենալով, եւ միւս ազգաց ուղղափառ Եկեղեցիներուն հետը միաբան միախոհ եւ միակրօն հանդիսակից ըլլալով՝ կը քարոզէ. «Վասն միայնոյ սուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցւոյ», Ժամագ:

Նախ՝ այս միութեան ամենագովելի նշանը պարտին ուղղափառ Քրիստոնեաները ունենալ. որովհետեւ ՚ի սկզբան Եկեղեցին Քրիստոսի այս միութեան եւ միաբանութեան նշանաւ զօրացաւ շնորհօք սուրբ Հոգւոյն՝ եւ արիացաւ ամեն մէկ հակառակու-

թեան դէմ. «Եւ ՚ի կատարել աւուրցն պէն-
տէկոստէից՝ էին ամենեքեան միաբան ՚ի մի-
ասին», Գործ. բ. 1: «Եւ բազմութեան հա-
ւատացելոց էր սիրտ եւ անձն մի», Գործ.
դ. 32:

Այս միութիւնն է՝ միութիւն սուրբ սի-
րոյ եւ կրօնական միաբանութեան. բայց պէս
պէս բաժանումն կուտան սուրբ Եկեղեցւոյ
Աստուածաբանները այս Եկեղեցւոյ միու-
թեանը համար. որոնք ամենքը Պօղոս սրբա-
զան առաքեալէն առնելով՝ կը բաժանեն.
ապա մենք ալ նոյն առաքելոյն բաժանմանը
նայինք այս տեղս, որ կըսէ. «Մի է տէր, մի
հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած եւ
հայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենայնի՝
ընդ ամենեսին եւ յամենեսին ՚ի մեզ», Եփե.՝
դ. 5:

Արդ՝ նախ դնէ միութիւն միոյ կենարար
տեառն, վասն որոյ ասէ. «Մի է տէր», ըսել
է որ թէպէտ ուղղափառ եկեղեցւոյն Քր-
րիստոսի անդամները զատաբար առնելով
այս ոք կամ այն ոք. այս ազգ՝ կամ այն ազգ,
թուելով եւ կամ որոշելով զանազան կերեւ-
նան. բայց այս բազմութիւնը հաւաքելով
եւ ՚ի մի Յիսուս Քրիստոս միացունելով լինի մի
խորհրդական մարմին Քրիստոսի. եւ ինքն

Յիսուս Քրիստոս լինի ամենեցուն կենդանաբար եւ ընդհանրական գլուխ. ըստ այնմ՝ «Բազումքս մի մարմին եմք ՚ի Քրիստոս», *Հով. Ժբ. 5*: Եւ թէ «Ձնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք Եկեղեցւոյ, որ է մարմին նորա», *Եփե. ա. 22*:

Եւ տէր մեր Յիսուս Քրիստոս իրեն սուրբ Եկեղեցւոյն այս միութիւնը օրինակաւ յայտնի ըրաւ Առաքեալներուն ըսելով. «Ես եմ հովին քաջ, եւ ճանաչեմ զիման եւ ճանաչիմ յիմոցն», *Յճ. Ժ. 14*:

Արդ՝ եթէ կը հաւատամք, որ մի միայն Յիսուս Քրիստոս է մեր ամենուն ճշմարիտ փրկիչը եւ քաջ հովիւը, որ ինքն Աստուած եւ մարդ կատարեալ ըլլալով՝ մարդասէր կամօքն խոնարհեցաւ ՚ի շարշարանս՝ եւ խաչեցաւ մարմնով՝ եւ մեռաւ ՚ի խաչին՝ թաղեցաւ ՚ի գերեզմանի՝ եւ յարեաւ յաւուր երրորդի մեր փրկութեանը համար. ըստ որում ասաց «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց»: Ապա ուրեմն ինչպէս մի միայն է մեր փրկիչ եւ քաջ հովին՝ որ է Յիսուս Քրիստոս, այսպէս ալ ոչխարներուն հօտը՝ այսինքն հաւատացեալ ուղղափառ քրիստոնեայներն ալ մէկ հօտ պիտի համարուին, որ հիմակ կըսուին մէկ հօտ եւ մէկ

Եկեղեցի Քրիստոսի, ինչպէս որ ինքն Յիսուս վճիռ ըրած է. «Եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ». Յօւ. Ժ. 16:

Շատ մեծ կը սխալի մէկ ազգի Եկեղեցւոյ Քահանայապետ մը, երբոր ելլայ ըսէ, որ այս Աւետարանին մէջը գրուած եւ նշանակուած հիվին՝ ահա ես իսկ եմ, եւ ամեն Քրիստոնեայ պիտի գան իմին գաւթիս՝ այսինքն Եկեղեցւոյս մէջ միանան մէկ հօտ ըլլան, որ ես ալ ամենուն մէկ տեղ՝ մէկ հովիւ ըլլամ՝ եւ ամենուն վրայ հրամայող՝ ամենուն իշխող՝ եւ ամենն ալ ինձմէ ունենան հոգեւոր կախումը, եւ ՚ի ներքոյ իմին հնազանդութեանս պիտի ըլլան ամեն Քրիստոնեայները, որ մտացը մէջը անգամ խորհիլը մեղանչել է ընդդէմ Քրիստոսի փրկարար արդեանցը, ասանկ մէկ համարձակութիւն մը ընող ըլլայ նէ, Յօհաննէս սրբազան աւետարանիչը բացայայտ գրած Քրիստոսի խօսքովը կը յանդիմանէ զնա. «Զանձն իմ դնեմ ՚ի վերայ ոչխարաց»:

Ապա ո՞վ ոք կարող է ըսել, թէ ահա ես եմ այն հովիւը, որ պիտի ըլլամ մի միայն հովիւ իշխող ՚ի վերայ միոյ հօտին, այսինքն՝ ամեն Քրիստոնեայ ազգերուն: Այս խօսքովն Յիսուսի յայտնի կերեւի՝ որ ինքն է մի միայն

հովիւն քաջ, վասն զի կըսէ. «Նաեւ այլ եւս ոչխարք են իմ, որ ո՛չ են յայսմ գաւթէ, եւ զայն եւս պա՛րտ է ինձ ածել այսր»։ Ըսել է՝ որ ես ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որ այս գաւթիթէն (աղըլէն) չեն, անոնք ալ արժա՛ն է ինծի՝ որ բերեմ այս գաւթիթին մէջը, որ ամենքը մէկ հօտ (սիւրիւ) ըլլան, եւ մէկ ալ հովիւ ունենան. «Եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ»։

Այս տեղս դժուարաւ լուծանելի բան մը չերեւիր. որովհետեւ Յիսուս Քրիստոս իրեն Եկեղեցին հաստատեց երկու տեսակ ժողովուրդներէն, որոնք էին հրէից ազգէն եւ հեթանոսաց ազգէն. նախ եւ յառաջ կանչեց հրէից ազգը, ասոր համար կը հրամայէր. «Ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի»։ Մատ. Ժ. 24։ Եւ առաքելոց ալ կը պատուիրէր. «Երթա՛յք առաւել առ ոչխարսն կորուսեալսն տանն իսրայէլի»։ Մատ. Ժ. 6։

Բայց նայէ՛ Քրիստոսի այս փրկութեան գաւթիթէն հեռի մնացեր էին հեթանոսաց ազգը, անոնց համար էր՝ որ ըսաւ. «Նաեւ՝ այլեւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ»։ Ասոր համար է՝ որ յայտնի կը հրամայէ զկնի ինքնազօր եւ ամենազօր յարու-

Թեանը իրեն ամեն Առաքելոցը, որ երթան քարոզեն հեթանոսներուն ալ, ըստ այնմ՝ «Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»։ Մատթ. իր. 19:

Ահա՛ այսուհետեւ եղաւ մի հօտ հաւատացելոց ՚ի հրէից եւ ՚ի հեթանոսաց, եւ ամենեցուն մի հովիւ՝ եւ մի փրկիչ՝ եւ մի տէր Յիսուս Քրիստոս, ասոր համար է՝ որ երանեալ Սրբազան Առաքեալն Պետրոս՝ ամեն հաւատացեալներուն կը գրէ, որ ճանչնան ամենքը իրենց մի միայն քաջ հովիւր, եւ ճանչնան իրենց Փրկիչ խնամող Յիսուս Քրիստոս տէրը, եւ անոր տալու փառք պատիւը եւ երկրպագութիւնը ուրիշի չի տան, ըստ այնմ՝ «Քանզի էինք իբրեւ զոչխարս մոլորեալս, այլ այժմ՝ դարձարու՛ք առ հովիւն եւ տեսուն հոգւոց ձերոց»։ ա ՊԵՄ. բ. 25: Ասոր պէս ալ սրբազան Պօղոս առաքեալը կը քարոզէ, որ ամենքս գիտնանք, եթէ Քրիստոսի մի եւ նոյն փրկութեան գաւիթին մէջ մէկ տեղ հաւաքուած բանաւոր ոչխարաց հօտ կանուանիմք, եւ ունիմք այն մի միայն ամենակարող հիվիւ՝ քաջ Փրկիչ՝ եւ խնամող ամենայնի՝ մի տէր՝ մի Յիսուս Քրիստոս, ըստ

այնմ՝ «Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան ՚ի մեռելոց զհոսկիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զտէր մեր Յիսուս», Եբր. ժդ. 20:

Երկրորդ սուրբ Եկեղեցին Քրիստոսի ունի միութիւն հաւատոյ. ըստ այնմ՝ «Մի տէր եւ մի հաւատ», թէպէտ ամեն ուղղափառ Քրիստոնեայները բազմատեսակ են լեզուաւ՝ ազգաւ՝ ծիսական արարողութիւններով, բայց ամենուն ուղիղ եւ ճշմարիտ դաւանութիւնը ՚ի բանս հաւատոյ՝ մի է, ամենքը պիտի միաբան ըլլան, եւ պիտի մէկ կանոն հաւատոյ ունենան սուրբ գիրքերը. որ ամեն զլիսաւոր մասունքը հաւատոյ ժողովուած համառօտիւ ամփոփուած է Հանգանակ Հասարոյ դաւանութեան մէջը, որ ամեն ժամանակ խոստովանութեամբ եւ մտառութեամբ կը կարդամք սուրբ Եկեղեցւոյ մէջ, եւ պարտաւոր է ամեն մէկ ուղղափառ Քրիստոնեայ յատուկ սերտելու եւ սրտի մտօք խորհելու անոր վրայով, որոյ սկիզբն է «Հաւատամք ՚ի մի Աստուած»:

Արդ՝ եթէ ամեն ուղղափառ ազգաց Եկեղեցւոյն դաւանութիւնը մէկ է, եւ մէկ պիտի գտնամք, թէ որ սիրով անխռով մտօք՝ եւ սուրբ Հոգւոյն շնորհիւն քննեմք ամե-

նուն դաւանութիւնը եւ գլխաւոր մասունքները հաւատոյ՝ միաբան մէկ հիման վրայ հաստատուած, ալ ուր կը մնայ բանակոիւ խռովութիւնը, մէկ ուղղափառ Եկեղեցին՝ զմիւս ուղղափառ Եկեղեցին ատելը՝ վկայեալ հերձուածոց եւ հերետիկոսաց կարգին դասելովը. այլ երբոր ճանչնամք հաւատոյ գըլխաւոր մասունքներուն միութիւնը, այնուհետեւ սէրը եւ խաղաղութիւնը եւ բարութիւնը միոյն աստուծոյ ամենակալին՝ կը թագաւորէ ամեն մէկ ուղղափառ եկեղեցւոյն մէջ, ինչպէս կը գրէ Պօղոս սրբազան առաքեալը. «Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ՚ի վերայ նոցա եւ ողորմութիւն ՚ի վերայ իսրայէլին աստուծոյ».

Գաղ. գ. 16:

Տե՛ս բա՛րեմիտ ընթերցող՝ եւ մեր սուրբ Եկեղեցւոյ ուղղափառութիւնը եւ խաղաղութիւնը սիրող մաքուր հոգին, որ միշտ այս հաւատոյ միութիւնը պահուելու համար խնդրուած կընէ բոլոր աշխարհի մէջ տարածուած Քրիստոսի Եկեղեցւոյն համար՝ եւ կաղօթէ առ տէր Աստուած յասելն. «Զխաղաղութիւն շնորհեա՛ Եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ՚ի թշնամեաց պատերազմէ, եւ

հաստատեա՛ ՚ի մի հաւատ զկաթուղիկէ Եկեղեցի, զքեզ խոստովանիմք տէր եւ Աստուած կեցո՛ղմեզ»։ ՚ի Չամամո-րս Եկէ։

Այս հաւատոյ խոստովանութեան եւ դաւանութեան միութեանը համար յատուկ աղօթելը ուրկի՞ց սորվեցաւ Հայոց սուրբ Եկեղեցին գիտե՞մք մի արդեօք, յայտնի կերեւնայ՝ որ սորվեցանք սուրբ Աւետարանէն, որ Յիսուս Քրիստոս մեր տէրը՝ երբ մօտեցաւ իրեն կամաւոր եւ փրկարար շարշարանաց ժամանակը՝ այս յատուկ խնդիրը առ հայր Աստուած ընելով, իրեն բարերար կամքն ալ կը յայտնէր աշակերտաց եւ ամենայն հաւատացելոց, որ ամենքը միաբան ունենան հաւատոյ միութիւնը. վասն որոյ կըսէր, «Այլ ո՛չ վասն նոցա միայն աղաչեմ, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն. որպէս դու Հայր յիս՝ եւ ես ՚ի քեզ. զի եւ նոքա ՚ի մեզ իցեն»։ Յօճ. Ժէ. 20։

Ո՛վ սքանչելի Աստուածահրաշ զօրութիւն միութեան հաւատոյ, որով պիտի միանամք բարոյական միութեամբ ընդ սուրբ եւ երկրպագելի միասնական Երրորդութեան, ըստ անժխտելի վճռոյն կենարարին մերոյ Յիսուսի, եթէ «Զի եւ նոքա ՚ի մեզ իցեն»։

Երրորդ միութիւնն սուրբ Եկեղեցւոյն՝ է փրկարար խորհուրդն մկրտութեան ըստ վկայութեան սրբազան առաքելոյն Պօղոսի. «Մի մկրտութիւն»։ Առաջին պատճառն այս է՝ որ մկրտեալք կը միաբանին ՚ի հաւատս միասնական սրբոյ Երրորդութեան. ըստ այնմ՝ «Գնացէ՛ք այսուհետեւ, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»։ Մատթ. իր. 19:

Երկրորդ պատճառն է այս. զի մկրտութեան Աստուածահրաշ վերստին ծնունդն հոգեւոր, ո՛չ միայն կուտայ մկրտելոց Քրիստոսի փրկարար շնորհաց կնիքը, եւ որդեգրութիւն Հօրն երկնաւորի, այլ եւ կը միաւորէ ընդ Քրիստոսի ամենքը շնորհական միութեամբ. ըստ այնմ՝ «Որք միանգամ ՚ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք, չի՛ք խտիր՝ ո՛չ հրէի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ իգի, զի ամենեքին դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս»։ Գաղ. Գ. 27:

Արդ՝ թէ որ մենք ուղղափառ հաւատով մի եւ նոյն մկրտութեան շնորհքը առած ենք, եւ ամենքս մի եւ նոյն մկրտութեան խորհրդով մէկ խորհրդական մարմին

Քրիստոսի՝ եւ բարոյական անդամ սուրբ Եկեղեցւոյն կանուանիմք, եւ սուրբ Հոգւոյն Աստուծոյ մի եւ նոյն շնորհքը ընդունելով՝ ամենքս Քրիստոնեայ անուան փառքը եւ շքեղութիւնը ունիմք, եւ ողջամիտ հաւատով եւ ուղիղ դիտաւորութեամբ կըլլամք հաղորդակից մի եւ նոյն կենդանարար եւ ճշմարիտ Մարմնոյ եւ արեան Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ:

Ապա ի՞նչ է այս սոսկալի բաժանումը՝ եւ չարաչար ատելութիւնը ուղղափառ Քրիստոնեայ ազգացս մէջ, եւ օր ըստ օրէ այս ատելութեան չար որոմը ո՛չ թէ միայն կը սերմանուի, այլ եւ աճելով կաճի. ինչէ՞ն է՝ որ այս ատելութեան չար ոգին տիրել կը ջանայ մեր մէջը, որ ազգաւ եւ լեզուաւ՝ մարմնով եւ տեղեալ միայն պիտի համարուինք բաժնուած եւ որոշուած, բայց հոգւով եւ ուղիղ ճշմարիտ հաւատով միացեալ միմեանց բարոյական անդամք եմք, եւ ամենքս մի Եկեղեցի Քրիստոսի կանուանիմք:

Եւ այս տեղս իմ բոլոր մարդկային խորհրդածութիւնս եւ զանազան կարծիքս մէկդի ձգելով, սուրբ գիրքերուն կուտամ մըտացս խորհուրդը, վասն որոյ կը համարձակիմ ըսելու՝ որ մեր ունեցած Քրիստոնէական

շնորհքներուն փառքերը՝ եւ Աստուածապարգեւ բարութիւնները՝ եւ հանդերձեալ երանութիւնը՝ եւ երջանկութիւնը երկնից արքայութեան, մեր մտաց առջեւը հանապազ չեմք հանդիսացուներ, եւ չեմք յիշեր սրբազան Պետրոս առաքելոյն մեզի յայտնի ըրած մեր Քրիստոնէական հոգեւոր արտօնութիւնները եւ սքանչելի ազնուականութիւնները, որ մկրտութեան շնորհին եւ ուղղափառ հաւատոյ դաւանութեամբ անդամքս Եկեղեցւոյն Քրիստոսի ունիմք կատարելապէս, որ ասէ. «Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զձեր առաքինութիւնսն նուիրեցէք այնրմ, որ զձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն», ա ՊԵՊ. Բ. 9:

Ինչու՞ համար չեմք յիշեր Պօղոս սրբազան առաքելոյն առ Եկեղեցին Կորնթացւոց գրած թուղթը, եւ վասն է՞ր սրտի մտօք չեմք կարդար՝ ու չեմք խորհրդածութիւն ըներ ասոնց վրայով, որ շարանիւթ ատելութեանը եւ եղբայրատեցութեանը տեղի չի տալու համար, եւ այս հոգեկորոյս խռովութեան եւ ատելութեան ամենաշար ոգին մեզմէ իսպառ մերժելու եւ հերքելու համար՝ բացայայտ

կը հասկըցունէ, որ թէպէտ ազգաւ եւ լեզուաւ եւ տեղեաւ բաժանեալ կերելիմք, բայց ամենքս միացեալ մէկ հոգի եւ մէկ բարոյական մարմին եղած ենք մի եւ նոյն մկրտութեան փրկարար շնորհիւր, եւ ամենքս մէկ ուղիղ հաւատով եւ ողջամիտ դիտաւորութեամբ մէկ անմահարար հոգեւոր սեղանէն հաղորդութեան փրկարար Մարմնոյ եւ Արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կը վայելեմք. վասն զի մի եւ նոյն Յիսուս Քրիստոս է, որ կը պարգեւի ամենեցուն մեզ կենդանարար հաղորդութեան սքանչելի խորհրդով. ըստ այնմ, «Զի մի հաց՝ մի մարմին ենք բազումքս. զի ամենեքին ՚ի միոջէ հացէ անտի վայելեմք». ա Առն՚. բժ. 17: «Քանզի միով հոգևով մեք ամենեքին ՚ի մի մարմին մկրտեցաք... ամենեքին զմի հոգի արբաք». ա Առն՚. ժբ. 13:

Ահա՛ այս վերոյիշեալ Պօղոսի սրբազան առաքելոյն գրութեանը վրայով տե՛ս ի՞նչպէս գեղեցիկ խորհրդածութիւն ընելով՝ կը նրկարագրէ արհամարհելի չարաչար ատելութեան ամենավատ եւ զազիր տեսութիւնը մեր սուրբ Եկեղեցւոյ աստուածաբանն Ներսէս Լամբրոնացի սրբազան եպիսկոպոսն. «Իսկ մեք այժմ ազգս մարմնով բաժան-

եալք՝ եւ հոգւով միացեալքս, հակառակ սահմանի եւ օրինացն առաքելոց ընթացաք: Պահեմք զընտանութիւն մարմնոյ եւ զգուժ առ իրեարս, եւ ՚ի կցորդութենէ հոգւոց հրաժարիմք. ՚ի ճաշս մարմնոյ եւ յըմպելիս հաղորդիմք միմեանց, եւ ՚ի Քրիստոսի սեղանոյն խորշիմք: Ի տունս բարեկամաց սիրով ընթանամք այլասեռքս Քրիստոնեայք, եւ ՚ի տունս Աստուծոյ ժողովարանս այլ եւ այլ ազգաց մի Քրիստոնէից դժուարաւ: Ի հաւատս բանից եւ ՚ի պատմութիւնս խօսից՝ հաւատարիմք իրերաց, եւ ՚ի հաւատն որ առ Աստուած ՚ի միմեանց անհաւանք: Մի Քրիստոնեայք անուանիմք, եւ ՚ի մի շաւղաց վերայ հետեւիմք, եւ յիրերաց ճանապարհակցութենէ խելագարեալ զարհուրիմք»։ Եր. 19:

Երկրորդ ամենապայծառ նշան սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի է Սրբութիւնն, վասն զի նախ ուղղափառ Եկեղեցին Քրիստոսի, որք են ամեն մեկ ուղղափառ եւ բարեպաշտ Քրիստոնեայները, որք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ մկրտուելով ընդունած եւ ժառանգած են ներքին սրբարար շնորհքը Յիսուսի Քրիստոսի, եւ ազատուած են սկզբնական մեղաց հոգեւոր աղտեղու-

թենէն. ըստ այնմ՝ «Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ մատնեաց զանձն իւր վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ. զի կացուցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայնպիսեաց, այլ զի իցէ սուրբ եւ անարատ». Եփե. ե. 25: Այս մտօք կերգէ սուրբ Եկեղեցի մեր. «Ուրախ լեր սուրբ Եկեղեցի, կոյս սուրբ».

Եւ երկրորդ ուղղափառ Եկեղեցին Քրիստոսի սուրբ է ՚ի հաւատս ճշմարտութեան, եւ ուղիղ սուրբ վարդապետութեամբ. վասն զի կը մերժէ եւ կը հերքէ ամեն մէկ անմաքուր պիղծ մոլորութիւնները՝ եւ նորանոր սուտ վարդապետութիւնները ամեն մէկ հերետիկոսաց եւ աղանդաւորաց. այս ճշմարիտ եւ ուղիղ հաւատոյ սրբութեանը համար Յիսուս Քրիստոս տէր մեր առ Հայր Աստուած տնօրէնութեամբն խնդրուած ընելով իրեն սրբագործ կամքը յայտնի ըրաւ՝ յասելն. «Սուրբ արա՛ զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է . . . Եւ ՚ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ». Յօժ. 22. 17:

Ասոր համար մեծ զգուշութիւն եւ սաս-

տիկ պատուէր կուտայ սրբազան առաքեալն Պօղոս իրեն սիրելի աշակերտին Տիմոթէոսի, որ միշտ հոգ ունենայ անմաքուր եւ պիղծ մոլորութիւններէն՝ եւ նորանոր աղանդներէն, սուրբ Եկեղեցւոյ ուղիղ եւ ճշմարիտ հաւատքը անարատ՝ սուրբ՝ եւ ճշմարիտ պահելու համար. «Ո՛վ Տիմոթէ՛՛ պահեա՛՛ զաւանդն՝ խոտորեալ ՚ի պղծոց եւ ՚ի նորաճայն բանից՝ եւ ՚ի հակառակութենէ՛՛ եւ ՚ի մոլարանուն գիտութենէ, զոր ոմանց յանձն առեալ վրիպեցան ՚ի հաւատոց անտի», ա Տ՚ճ. գ. 20:

Երրորդ սուրբ անարատ վարք պիտի ունենան սուրբ Եկեղեցւոյ անդամները՝ ուղղափառ եւ բարեպաշտ Քրիստոնեաները, որովհետեւ սուրբ Եկեղեցին՝ այսինքն հաւատացեալները խորհրդական մարմին կանուանին ամենասուրբ գլխոյն Քրիստոսի, որ ասէ. «Եղիջի՛ք սուրբ՝ զի ես սուրբ եմ», Ղեւտ. ժա. 45: Եւ աւետումն հրեշտակապետին Գաբրիէլի առ սուրբ կոյսն Աստուածածին վկայէ. «Քանզի որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սուրբ է, եւ որդի Աստուծոյ կոչեսցի», Ղ.՝Կ. ա. 35: Եւ սրբազանն Պօղոս քարոզէ Յիսուսի Քրիստոսի սքանչելի սրբութիւնը՝ յասելն. «Զի այսպիսի իսկ եւ վայել էր մեզ

քահանայապետ, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ զատեալ ՚ի մեղաւորաց, եւ բարձրացեալ քան զերկինս»։ Եբր. է 26:

Ապաքէն սուրբ Եկեղեցւոյն գլուխն Յիսուս Քրիստոս է սուրբ՝ եւ սրբութեան պարգեւիչ. ուրեմն անոր արժանաւոր եւ խորհրդական մարմին եղողները, որք են հաւատացեալք, հարկաւ պարտաւորին ունիլ սրբութիւն եւ անարատութիւն վարուց եւ գործոց: Վասն որոյ սրբազան եւ գլխաւոր առաքեալն Պետրոս կը քարոզէ հաւատացելոց՝ այսելն. «Այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջի՛ք» ա ՊԵՊ. ա. 15:

Երրորդ փառաւոր նշան սուրբ Եկեղեցւոյն է ընդհանրականութիւնը, որ ըստ յունաց ասի «գաթօլիզիս» որ առ մեզ թարգմանի «կաթողիկէ». նոյն է ասել ընդհանրական կամ տիեզերական, որ ըստ յունաց ասի «իգումէնիզի»: Ուրեմն մի եւ նոյն նշանակութիւն ունի այս երկու բառերը, եւ պիտի ըսեմք նոյնանշան բառեր են ասոնք. ընդհանրական՝ կաթողիկէ՝ եւ տիեզերական. ասոր համար Յօհան իմաստասէր Երեմեանայ ճառին մէջ նոյնանշան գործ կածէ ընդհանրական եւ կաթողիկէ բառե-

րը ըսելով. «Խոստովանեսցիս ընդ մեզ, մանաւանդ թէ ընդհանրական կաթողիկէ Եկեղեցւոյ»: Շատ անգամ ես կը լսեմ, որ այս երկու նոյնանշան բառերուն հետը իբրեւ նոյնանշան կը վարեն Ռ-ղղափառ ձայնը, որ այն ալ որոշ նշանակութիւն ունի. եւ կարծեմ՝ որ հարկաւ յոյնք պիտի որոշեն. վասն զի այլ է ըստ յունաց «օրթօտօքսօս» բառը, եւ այլ է այս բառերը «գաթօլիգիս» եւ «իգումէնիգի»:

Եւ այս երկու նոյնանշան բառերը կը նըշանակեն սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի, այսինքն ամենայն ազգաց հաւատացելոց բոլոր աշխարհի մէջ տարածուած ըլլալը, եւ Եկեղեցւոյն Քրիստոսի հաւատոյ ճշմարտութեանը ծաւալիլը եւ սփռիլը բոլոր աշխարհի մէջ. իսկ «օրթօտօքսօսն» առանձին կը նշանակէ Եկեղեցւոյն Քրիստոսի ուղղափառութիւնը՝ ի հաւատս եւ ի վարդապետութիւնըս. այս յունական բառին նշանակութիւնը յայտնի կըլլայ Փաւստոսի բիւզանդայ այս խօսքին մէջը. «Եթէ դու յուղղափառութիւն եկեսցես, եւ իբրեւ զայլ օրթօտօքսօսն խոստովանեսցիս ընդ մեզ, ժողովելովս զամենայն օրթօտօքս. ուղղահաւատ օրթօտօքսաց Քրիստոնէից». Բ՝-պ. դ. 5. 8:

Ուրեմն այլ է ըսել կաթողիկէ Եկեղեցի, եւ այլ է ըսել ուղղափառ Եկեղեցի. ըստ այնմ՝ «Եկեղեցիս ուղղափառաց»։ «Ժողովք ուղղափառաց», Հայր։ Բայց այս ալ պէտք է գիտնալ՝ որ կաթողիկէ Եկեղեցի Քրիստոսի կանուանին ամենայն ուղղափառ հաւատքով եղած ամեն ազգ Քրիստոնեայները։ Վասն զի այն՝ որ ուղղափառ Քրիստոնեայ է, կաթողիկէ Եկեղեցւոյն Քրիստոսի բարոյական անդամ է, թէ եւ ազգաւ եւ լեզուաւ՝ ծիսիւ եւ արարողութեամբ ալ որոշուած ըլլայ. ինչպէս որ կը գրէ երանաշնորհ մեծն Խոսրով Անձեւանցեաց եպիսկոպոսն մեր. «Եւ զի՞նչ է կաթողիկէն, տիեզերական, զի ամենայն Եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս են՝ մի են. մի Քրիստոս յամենայն Եկեղեցիս է . . . որ զի թէ եւ բաժանին՝ ըստ տեղեաց, այլ ո՛չ եթէ ըստ ժողովրդոց. զի ՚ի ծագաց մինչեւ ՚ի ծագս երկրի՝ ուր եւ հասանիցէ ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց, իւր Եկեղեցի է, եւ ո՛չ որոշէ զնա, ո՛չ աշխարհն եւ ո՛չ լեզուին օտարութիւնն, այլ ընդունի որպէս մայր ՚ի գիրկս սաստիկ սիրով։ Եւ այսպէս ամենայն ուրեք տիեզերական կոչի վասն տիեզերաց հաւատացելոց գղրունս բանալոյ

եւ զգիրկս սփռելոյ» ՄԵԼ. Ժամ. 78:

Անժխտելի եւ ամենազօր հրամանն Յիսուսի Քրիստոսի հաստատեց սուրբ Եկեղեցւոյն կաթողիկէութիւնն. որ սրբազան առաքելոց եւ աւետարանչաց հրաման ըրաւ ըսելով. «Երթա՛յք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց». Մարկ. Ժգ. 15: Եւ սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետն՝ սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի ընդհանրականութեանը վրայով Դաւիթ մարգարէին նախագուշակ խօսքը առնելով՝ կը գրէ. «Զայս յառաջագոյն կանխեալ եցոյց վասն Քրիստոսի, զի ՚ի նմանէ լնանի ամենայն երկիր. քանզի ՚ի հաւատոց անտի Քրիստոսի լցան ամենայն ծագք երկրի: Որպէս եւ Դաւիթ ասէ՝ ընդ ամենայն երկիր ել բարբառ աւետարանութեան Քրիստոսի». ԶԳօն ճառ. ա:

Եւս եւ փրկիչն մեր Յիսուս Քրիստոս նըմանութեամբ եւ օրինակաւ ուռկանի ձկնորսաց յայտնի ըրաւ իրեն սուրբ Եկեղեցւոյն ընդհանրականութիւնը ըսելով. «Նման է արքայութիւնն երկնից ուռկանի արկելոյ ՚ի ծով, եւ յամենայն ազգաց ժողովելոյ». Մարկ. Ժգ. 47: Այսու ուռկանաւ այլաբանորէն մեկնելով պիտի իմանամք սուրբ Աւե-

տարանի ուղիղ եւ ճշմարիտ քարոզութիւնը, ինչպէս որ կը գրէ Յօհան Ծործորեցի երանաշնորհ վարդապետն մեր, «Վասն որոյ յետ ուռկանի Աւետարանին արկելոյ ՚ի ծով աշխարհիս՝ եւ յամենայն ազգաց հրէից եւ հեթանոսաց ժողովելոյ ՚ի հաւատս», Մէկ, Մաթ. 513:

Արդ՝ թէպէտ ամեն աշխարհի եւ ամեն ազգի մէջ քարոզուած է սուրբ Աւետարանը, բայց ուր տեղ որ ուղիղ եւ ճշմարտութեամբ քարոզուած է՝ եւ ողջամիտ վարդապետութեամբ մեկնուած է սուրբ Աւետարանը, անոնք են ճշմարիտ եւ ուղղափառ բարոյական անդամ ընդհանրական Եկեղեցւոյն Քրիստոսի, ասոր համար է որ Պօղոս սրբազան առաքեալը կը գրէ Կողոսացւոց Եկեղեցւոյն՝ յասելն, «Վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս, զորմէ լուարուք բանին ճշմարտութեան Աւետարանին, որ եհաս առ ձեզ, որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ եւ պտղաբերէ, այնպէս եւ ՚ի ձերում միջի, յօրէ յօրմէ լուարուք եւ ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ», Կող. ա. 5:

Իսկ եթէ խաբեութիւնով թիւր եւ ծուռ մեկնելով Աւետարանին բացայայտ ճշմարտութիւնը՝ դուրսէն արտաքին տեսութեամբ

բը կերելի՛ որ Աւետարանին քարոզիչ են, բայց ներքին իսկական Աւետարանին ճշմարտութեան միտքը՝ ո՛չ ուղիղ եւ ո՛չ ողջամիտ մեկնելով, այլ թիւր եւ սխալ մոլորամիտ գրութեամբ բացատրելով՝ կը քարոզեն, եւ կամ շատ տեղերը սուրբ Աւետարանին ծածկելով՝ անյայտ կը թողուն, անանկները իրենք ալ եւ իրենց հետեւողներն ալ չեն բնաւ բարոյական անդամ կաթողիկէ եւ ընդհանրական ուղղափառ սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի, եւ ամենեւին ալ չեն կարեր ըլլալ: Այլ մանաւանդ հերձուած եւ հերետիկոս են, ասանկներուն համար կը գրէ Պօղոս առաքեալը Քաղատացւոց Եկեղեցւոյն, որ չ'հաւատան ասանկներուն վարդապետութեանը եւ քարոզութեանը. թէպէտ կըսէ՝ Աւետարան ցոյց կուտան, Աւետարանով կըքարոզեն, բայց այլ վարդապետութիւնով եւ մոլորական մտօք ուսուցանելով, վասն որոյ անոնց վարդապետութիւնը ողջամիտ չէ՛, այլ նորանոր աղանդաւոր ուսմամբ լեցուած է. ուստի ես ալ կըսէ Պօղոս առաքեալը, ո՞վ Քաղատացիք՝ ձեր վրայ կը զարմանամ, որ ինչու՞ համար շուտով կը փոխէք ձեր միտքը անանկներուն խաբէական եւ ծուռ վարդապետութեան հաւանութիւն տալով, ուստի

ձեզի ահա՛ կը գրեմ. «Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ, որ կոչեացն զձեզ ՚ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ Աւետարան: Որ ո՛չ գոյ այլ, բայց եթէ իցեն ոմանք՝ որ խոռվեցուցանեն զձեզ, եւ կամիցին շրջել զաւետարանն Քրիստոսի».

Գաղ. ա. 6:

Ասանկներուն համար տե՛ս ի՞նչպէս ամենայն զգուշութեամբ պատուէր կուտայ եւս նոյն Պօղոս առաքեալը հոգեւոր հովիւներուն՝ եպիսկոպոսապետներուն՝ եպիսկոպոսներուն՝ եւ երէցներուն, որ արթուն հովուութիւն ընեն՝ իրենց յանձնուած բանաւոր հօտին Քրիստոսի, ուղղափառութեան եւ բարեպաշտութեան մէջ պահելու համար. «Զգո՛յշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ տեառն. զոր ապրեցոյց արեամբ իւրով: Քանզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ՚ի ձեզ, որք ո՛չ խնայեսցեն հօտին: Եւ ՚ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց».

Գործ. ի. 28:

Չորրորդ ամենապանծալի նշան սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի՝ առաքելական ըլլալն

է. վասն զի սկզբնական հիմնադիր եւ առաջին հիմն հաւատոյ եւ ճշմարիտ վարդապետութեան սուրբ Եկեղեցւոյն՝ է ինքն Յիսուս Քրիստոս փրկիչն մեր, որ մի միայն ինքնին անմիջապէս եղաւ մեզի ուսուցիչ ճշմարտութեան հաւատոյ, եւ Աստուածային շնորհացն պարգեւիչ, եւ ՚ի սկզբնական մեղաց դատապարտութենէ փրկիչ. ըստ այնմ՝ «Զի հիմն այլ՝ ո՛չ ոք կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս». ա Վորն. Դ. 11: Իսկ այս Յիսուս Քրիստոս տէր մեր՝ է առաքեալ ՚ի հօրէ փրկիչ աշխարհի. «Այս են կամք հօր իմոյ՝ որ առաքեացն զիս». Յօժ. գ. 39:

Եւ այսպիսի վկայութիւն շատ կան սուրբ Աւետարանին մէջ եւ սրբազան առաքելոց գործոց եւ թղթոց մէջ. որպէս եւ Պօղոս սրբազան առաքեալը կը գրէ. «Նայեցարու՛ք ընդ առաքեալն եւ ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիստոս». Ե՞բ. գ. 1:

Ապա սուրբ Եկեղեցւոյ նախկին հիմնարկու Յիսուս Քրիստոսի նայելով՝ պիտի ըսեմք. Եկեղեցին է առաքելական: Եւ երկրորդական հիմունք սուրբ Եկեղեցւոյ եղան սրբազան առաքեալք, որք ՚ի Քրիստոսէ

Յիսուսէ առաքեցան յաշխարհ ամենայն ՚ի քարոզել, ըստ այնմ՝ «Որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ»։ Մատթ. 18: Վասն զի սուրբ Եկեղեցին Քրիստոսի հաստատեալ է ՚ի վերայ ուղիղ եւ ճշմարիտ դաւանութեան հաւատոյ եւ ողջամիտ վարդապետութեան սրբազան առաքելոց, ըստ այնմ՝ «Ապա այսուհետեւ ո՛չ էք օտարք եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ, շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս»։ Եփե. բ. 19:

Ասկէց կիմանամք՝ որ սրբազան առաքեալները իրենց անձամբը եւ իրենց զօրութեամբը չեղան հիմն հաստատութեան սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի, այլ իրենց ուղղափառ դաւանութեամբը եւ ողջամիտ վարդապետութեամբը հիմն անուանեցան սուրբ Եկեղեցւոյն, ըստ այնմ՝ «Ի վերայ վիմի հիման առաքելոց եւ մարգարէից շինեցեր զքո սուրբ զեկեղեցի, եւ ՚ի սմա միաձայնեալ եղեն մարդիկ ընդ հրեշտակս փառաւորելով սուրբ զերրորդութիւնդ»։ Շար:

Ինչու՞ համար մարգարէներն ալ կը կոչուին հիմն Եկեղեցւոյն Քրիստոսի, վասն զի

յառաջագոյն մարդասէրն Աստուած մարգարէներով իրեն նոր ուխտը՝ մեր փրկութեանը համար պատրաստուած կը խոստանար, եւ օրինակներով ալ կը յայտնէր Նահապետներուն. ըստ այնմ՝ «Բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք». Եւր. ա. 1:

Արդ՝ եթէ մարգարէները յառաջագոյն խօսեցան գուշակելով Յիսուսի Քրիստոսի գալուստը յաշխարհ՝ մեր փրկութեանը համար, վասն է՞ր առաքեալներէն վերջը կը դասեն, ինչպէս կը գրէ Պօղոս առաքեալը, եւ շարական մեր՝ եւ յայլ բազում տեղիս: Վասն զի թէպէտ յառաջագոյն էին մարգարէք քան զառաքեալս, բայց մարգարէները ընդ աղօտ մթին եւ հեռուանց տեսանելով փրկչին մերոյ գալստեան շնորհքները, վկայ եւ քարոզիչ էին: Իսկ սրբազան առաքեալները յայտնի եւ մօտանց տեսան Յիսուսի Քրիստոսի փրկութեան շնորհքները, եւ անձամբ իսկ վայելեցին՝ եւ մերձաւոր վկայ եղան. ըստ այնմ՝ «Որ էրն ՚ի սկզբանէ, զորմէ լուաքն որում ականատեսքն իսկ եղաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շոշափեցին ՚ի վերայ բանին կենաց» ա Յօճ. 1:

Եւ ինչու՞ համար այս հիմն հաստատութեան Եկեղեցւոյն երբեմն ամեն առաքեալները մէկ տեղ առնելով՝ կըսեմք, առաքեալները իրենց ուղիղ դաւանութեամբը եւ սուրբ Աւետարանի ճշմարտութեան քարոզութեամբը եղան հիմն կամ վէմ հաւատոյ սուրբ Եկեղեցւոյ. ըստ այնմ՝ «Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց»։ Եւ թէ «Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո Քրիստոս ՚ի վերայ առաքելական վիմի», Շար։ Եւ երբեմն մասնաւոր առնելով, ինչպէս որ գրուած է Պետրոս եւ Անդրէաս սրբազան առաքելոց համար, «Աշխարհակիր բանին բազկաց եղեալ հիմունք սրբոյն սիովնի. լերինք անշարժք, հովիտք ծաղկածինք, հարազատք վէմք հաւատոյ Պետրոս եւ Անդրէաս», Շար։

Այս մասնաւոր եւ ընդհանուր առնելոյն վրայով՝ մէկ մեծ տարակուսութեան բան մը համարելու չէ՛, վասն զի կամ առաքելոց ամենուն ընդհանրապէս միաբան խոստովանութիւննին՝ եւ դաւանութիւննին՝ եւ քարոզութիւննին մէկ տեղ առնելով՝ ըսեր ես, Առաքեալները վէմք հաւատոյ են՝ եւ հիմն սուրբ Եկեղեցւոյ. եւ կամ մասնաւոր առնելով՝ ըսեր ես, Պետրոս եւ Անդ-

րէաս սրբազան առաքեալները վէմք հաւատոյ եւ հիմունք սուրբ Եկեղեցւոյ են. երկու կերպն ալ ուղիղ է եւ ճշմարիտ, որովհետեւ ամենուն հաւատքը՝ դաւանութիւնը՝ եւ քարոզութիւնը միաբան եւ միախոհ է, եւ ամենքը մէկ կրօնքի եւ մէկ Աստուածապատուեան տէր էին, եւ ամենքը անձնանուէր ծառայ Յիսուսի Քրիստոսի՝ եւ հաւատարիմ պաշտօնեայ աւետարանին էին: Վասն որոյ սուրբ Գրիգոր Հրեշտակակրօն վարդապետն մեր երկոտասան առաքելոց եւ եօթանասուն եւ երկուց աշակերտաց համար միանգամայն առնելով՝ կըսէ. «Սոքա դաւանութեան բարեաց ուսուցիչք: Սոքա Եկեղեցւոյ սրբոյ հիմնադիրք». Նար. ճառ առաջ:

Որովհետեւ սրբազան Աստուածաբանները ընդհանրապէս առնելով՝ վէմ եւ հիմն սուրբ Եկեղեցւոյ եղան սրբազան առաքեալները կըսեն, եւ կամ մասնաւոր առնելով սուրբն Պետրոս եւ կամ սուրբն Անդրէաս եւ կամ սուրբն Պօղոս ըսելով եւ գրելով կիմանան՝ եւ կիմացունեն անոնց ուղիղ եւ ճշմարիտ դաւանութեան խօսքերնին եւ աշխարհալուր քարոզութիւննին, եւ ո՛չ թէ ռամկական կարծիքով՝ եւ իմաստակ ունայնաբանութեամբ սրբազան առաքելոց անձերնին

եւ կամ զօրութիւննին կիմանան եւ կիմացունեն. վասն զի սրբազան առաքեալները ենթակայ եղան ճշմարտութեան հաւատոյ դաւանելով եւ ուսուցանելով. եւ անոնց դաւանութեանը եւ քարոզութեանը վրայ հաստատեալ է Եկեղեցին Քրիստոսի: Ինչպէս որ Աստուածաբանն Լատինացոց եկեղեցւոյն Թովմայ ագուինացին կը գրէ. «Սոյնպէս ՚ի ժամանակի շնորհաց՝ բովանդակ հաւատք եկեղեցւոյ հիմն են ՚ի յայտնութեանն եղեալ առ առաքեալս յաղագս միութեան եւ Երրորդութեան, ըստ այնմ. Մատ. 24: 18: Ի վերայ այդը վիմի՝ այսինքն խոստովանութեան քո շինեցից զԵկեղեցի իմ». ՚ի մասն բ. Խնդ. բ. Ճհդ. Պր. գ: Եւ սուրբն Ներսէս շնորհալի յարարչականն. «Շինող էիցս համայնից արարածոց ՚ի յանգոյից, նոյն շինեցեր զԵկեղեցի վէմդ ՚ի վերայ վիմին բանի»: Եւս սոյն այս Շնորհալին ՚ի թուղթն ընդ-Լանդական. «Որպէս տէրն զդաւանութիւնն Պետրոսի եդ որպէս զվէմ՝ հիմն իմանալի Եկեղեցւոյ իւրում, եւ զինքն որպէս զշինող». Ընդ-Լ. Էր. 11: Եւ սուրբն Ներսէս Լամբրոնացին գրէ ՚ի մեկնութեան սաղմոսի ՚ի բանն «Ի վիմէ Բարձր արարելը վիս», «Հիմն-նի նորա ՚ի լեռն-ն սո-րբ նորա», «Վէմ

անուանէ զհաւատ շնորհացն Քրիստոսի, ՚ի վերայ որոյ շինին Եկեղեցւոյ մանկունք, ըստ ասելոյն ՚ի տեառնէ առ Պետրոս» . . . դաւանութիւն նորա, որ խոստովանեցաւ զնա՝ Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ, եւ ՚ի վերայ այս դաւանութեանս եւ յուսոյս իւրաքանչիւր ոք զնէ զանձն իւր եւ զգործս՝ որպէս զքարինս շինուածոյ:

Այս վկայութիւններով բացայայտ կերելի Քրիստոսի ըսած խօսքը Պետրոս առաքեալին. «Դու ես վէմ, եւ ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ». զոր բացատրէ ողջամիտ մեկնութեամբ Յօհան Ծործորեցի սուրբ վարդապետն մեր ՚ի մեկն. Մատթ. Ժզ. 18: «Դու ես վէմ, եւ ՚ի վերայ այդր դաւանութեան հաւատոյ՝ զոր դու դաւանեցեր, շինեցից զեկեղեցի իմ, որ է կրկին. մի՛ ՚ի քարանց եւ ՚ի փայտից շինելն, եւ միւս՝ որ ՚ի հաւատոց միաբանութենէ շինեալ ժողովուրդք ՚ի վերայ հիման տեառն եւ առաքելոց նորա:

Եւ այս դաւանութիւնը Պետրոս առաքելոյն՝ երկու տեսակ բարեփառութիւն ունեցաւ, մէկը որ Հայր Աստուած յատկապէս այս դաւանութեան յայտնութիւնը շնորհեց, որոյ զօրութեամբ բարբառեցաւ Պետ-

րոս ճշմարիտ դաւանութիւնն այն, եւ ո՛չ իրեն մարմնաւոր զօրութեամբն եւ մտաց հանճարովն, վասն որոյ Յիսուս Քրիստոս ըսաւ անոր, «Երանի է քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է»։ Եւ երկրորդն՝ զի ՚ի դիմաց եւ ՚ի կողմանէ ամենայն առաքելոց՝ այն ուղիղ դաւանութիւնն կընէր, որովհետեւ Յիսուս ամենուն մէկ տեղ հարցուց, «Իսկ դուք զո՞ ասէք զինէն, թէ իցէ որդի մարդոյ»։ Դուք, ասէ Յիսուս, ինծի համար ո՞վ է՝ կըսէք։ Այս սրբազան առաքեալներուն մէջէն գլխաւորը փոխանորդաբար առաքելոց կողմանէն յառաջ եկաւ եւ ամենուն բերնէն ըսաւ, «Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ»։

Այս տեղս յայտնի է ամենուն, որ Պետրոս առաքեալը ամենուն բերնէն այս ճշմարիտ դաւանութիւնը բարբառեցաւ, ուրեմն ամենուն ուղիղ դաւանութիւնը եւ ուղղափառ վկայութիւնը եղաւ վէժ եւ հիմն հաստատութեան սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի, ասոր համար է՝ որ ընդհանրապէս առնելով կըսեն աստուածաբանները, հիմն Եկեղեցւոյ են սրբազան առաքեալները, եւ մասնաւորապէս առնելով կըսեն Պետրոս սրբազան ա-

առաքեալ է վէժ եւ հիմն հաւատոյ սուրբ Եկեղեցւոյ:

Եւ առաւել եւս Յիսուս յայտնի ըրաւ, որ այս ճշմարիտ դաւանութիւնը ամեն առաքեալներուն բերնէն միանգամայն ընդունեց. վասն որոյ ըսաւ ամենուն մէկ տեղ. որ չըլլայ թէ մէկումը ըսեն այս դաւանութիւնը. «Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասիցեն՝ թէ նա է Քրիստոսն»: Ուրեմն ամեն առաքեալները հաղորդ էին այն դաւանութեանը, եւ ամենքը իրենց այս դաւանութիւնովը եղան վէժ եւ հիմն հաւատոյ հաստատութեան Եկեղեցւոյն Քրիստոսի. վասն որոյ Պօղոս առաքեալ կը վկայէ. «Շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց». Եփե՜ս. ք. 20:

Եւ սրբազան առաքեալն Պետրոս առաւել ընդարձակի առնելով ինքնին կը հաստատէ՝ որ ամեն հաւատացելոց ուղղափառ դաւանութիւնը հիմն է եւ վէժ հաստատութեան սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի. վասն որոյ կըսէ. «Եւ դուք իբրեւ զվէժս կենդանիս շինիք տաճար հոգեւոր». ա Պե՜փ. ք. 5:

Կը տեսնա՞ւս ո՛վ ուղղափառ եւ մեծահաւատ ընթերցող. ի՞նչպէս Պետրոս սրբազան առաքեալը յայտնի կընէ, որ իրեն այն դա-

ւանութեան Աստուածաշնորհ բանը՝ որով խոստովանեցաւ Յիսուս Քրիստոս Աստուած եւ Մարդ կատարեալ, ամեն առաքելոց բերնէն էր. ըստ որում Յիսուս ամենուն հարցուց. «Իսկ դուք զո՞ր ասէք զինէն»:

Եւ Պետրոս սրբազան առաքեալը իրեն ընդհանրական թուղթովն ալ յայտնի կընէ՝ որ ամեն առաքելոց եւ ամեն հաւատացելոց ուղիղ եւ ճշմարիտ դաւանութիւնը կըլլայ հիմըն հաւատոյ սուրբ Եկեղեցւոյ. վասն որոյ կըսէ. «Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր»: Այս տեղս համաձայն ցուցընել կուզէ երջանիկ Պետրոս առաքեալը իրեն ճշմարիտ դաւանութիւնը ամեն ուղղափառ հաւատացելոց ուղիղ խոստովանութեանը հետ. եւ իրենց Յիսուսի Քրիստոսի շնորհաց երանական պարգեւին՝ ամեն ուղղափառ հաւատացեալները հաղորդակից կը համարի. վասն զի տէր Յիսուս իրեն ըսաւ. «Դու ես վեմ, եւ ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ»: Եւ ինքն ալ Պետրոս ամեն ուղղափառ եւ բարեպաշտ Քրիստոնէից համարձակ կըսէ. «Դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր»: Ո՛վ սքանչելի յարմարութեան բառից եւ բանից. ասոր համար է՝ որ Սարգիս

շնորհալին Պետրոս առաքեալին այս բնաբանին վրայով կը գրէ. «Եւ զամենայն մարդասիրութեան անուանան՝ որով ինքն (Յիսուս) անուանեցաւ, եւ զաշակերտսն իւր անուանեաց. նմանապէս եւ աստ զիւր անգաւոր եւ զվայելչական անունն եդեալ ՚ի մարգարէիցն՝ նոցա դնէ. որպէս Պետրոսին ասաց թէ՛ դու ես վէմ: Արդ՝ եւ սա յայսմանէ ուեալ, ասաց «Իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր» . . . վասն զի յամենայն ազգաց եւ լեզուաց՝ որք աշակերտեցան աւետարանին, եւ հաւատովք ՚ի վէմն մերձեցան, եւ մարդասիրութեամբն ՚ի նոյն կենդանութիւն փոխեցան, յամենեցունց մի տաճար հոգեւոր եւ մի Եկեղեցի շինեցաւ».
Նառ. դ. 241-242:

Ուրեմն աթոռակալ Հ. Գաբրիէլ հետեւելով Ոսկեբերանին՝ բարւոք կը խօսի ՚ի վերայ բնաբանին Պօղոսի առաքելոյն, եթէ «Շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս».
Եֆե. ք. 20: Ասէ «Ըստ այսմ տեսութեան միայն առաքեալք եւ մարգարէք կոչին հիմունք Եկեղեցւոյ. այսինքն իբրեւ պաշտօնեայք հիմնարկութեան նորա ՚ի ձեռն վարդապետութեան իւրեանց, եւ վր-

կայական ջանից ՚ի տարածանել զհաւատս Եկեղեցւոյ, ապա թէ ո՛չ առաջին եւ վերամբարձող հիմն, մշտնջենաւոր եւ բացարձակ է միայն Յիսուս Քրիստոս», Մէկ, Պօղոս Բ Լաթ. Էր, 534:

Ապա յայտնի եղաւ՝ որ միայն Պետրոս առաքեալը շեղաւ վէմ հաւատոյ եւ հիմն Եկեղեցւոյ, այլ նախադաս եւ առաջակայ խոստովանութեան եւ դաւանութեան Քրիստոսը Որդի Աստուծոյ ըլլալուն, եւ միւս սրբազան առաքեալներն ալ ունեցան նոյն խոստովանութիւնը եւ դաւանութիւնը, որով եղան վէմ հաւատոյ եւ հիմն սուրբ Եկեղեցւոյ, վասն որոյ եւ անոնք ալ հաստատեցին եւ հիմնարկու եղան Եկեղեցւոյն Քրիստոսի, ինչպէս որ կը գրէ սուրբ վարդապետն մեր Եղիշէ. «Շինեցաւ (ասէ Եկեղեցի) ՚ի վերայ Պետրոսի հաւատոցն՝ ո՛չ միայն ՚ի Հռովմ, այլ եւ ընդ ամենայն քաղաքս եւ գեօղս մեծամեծս մինչ ցփոքունս, նոյն հաւատք եւ նոյն հիմն եւ նոյն հաստատութիւն . . . քանզի մի է տէր եւ մի մկրտութիւն, եւ որպէս Պետրոս ՚ի Հռովմ հաստատեաց զԵկեղեցին, նոյնպէս եւ այլ առաքեալքն ըստ իւրաքանչիւր վիճակեցելումն աշխարհացն», ՚ի Ճատն Բաղման Կէտուն: Ասոր պէս ալ կը վկայէ մեծն Խոսրով

Անձեւացեաց եպիսկոպոսն մեր գրելով.
 «Հայցեմք ողորմութիւն ամենայն Եկեղեցեաց՝ որ յամենայն տիեզերս ըստ քարոզութեան առաքելոցն շինեալ են. վասն որոյ եւ առաքելական կոչիմք: Իսկ որք թիրեալք են յառաքելոցն դաւանութենէ, նոքա ո՛չ եւս առաքելական կոչին: Իսկ առաքելական Եկեղեցին թէպէտ եւ ընդ բազում տեղիս են, սակայն մի ասին վասն միասնական հաւատոյն».
 ՚ի Մէկն, պարտա:

Ապա ուրեմն նոյն ճշմարտութիւնը հաւատոյ, զոր դաւանեաց եւ խոստովանեցաւ Պետրոս առաքեալը՝ ունէին եւ միւս առաքեալները, եւ ձայնակից էին ամենքը Պետրոս առաքեալին հետը. ինչպէս որ, երանելին Ոսկեբերան կըսէ. «Ո՛չ միայն Պետրոս առանձին ունէր զխոստովանութիւնն հաւատոյ, այլ եւ եղբարք նորա առաքելոցն դասք համաձայն ընդ նմա էին. վասն որոյ տէրն առ ամենեսին ասաց. «Իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ»:
 Ի բանն մի է տէր եւ մի հաւատ»:
 Ձեռ. Եր. 46: Եւ Ոսկեբերանին հետեւելով Ստեփաննոս Աբբայն Միսիթարեանց գրէ ՚ի տեսութեան նոր կտակարանաց.
 «Յայնժամ Պետրոս ջերմ եւ լի հաւատով յառաջեաց ՚ի պատասխանին. դու ես ասէ

Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանույ: Իսկ այլք՝ թէպէտ եւ գնոյն հաւատս ունէին բաց ՚ի Յուդայէ, բայց չիշխեսցին ՚ի ժամուն համարձակ ասել՝ զոր ունեին ՚ի սրտի».
 Կր. Լատ. Բ. Եր, 22:

Արդ՝ թէպէտ առաքեալները այս ուղղա-վառ դաւանութիւնով անուանեցան հիմն եւ վէճ հաւատոյ սուրբ Եկեղեցւոյ, բայց երկրորդաբար եւ ո՛չ նախնաբար, վասն զի առարկայ հաւատոյ չեն սրբազան առաքեալ-ները, այլ խոստովանող եւ ուսուցիչ հաւա-տոյ, իսկ Յիսուս Քրիստոս փրկիչն մեր ինքն է առարկայ հաւատոյ, եւ ինքնին է բացար-ձակ ուսուցիչ ճշմարտութեան, վասն որոյ մի միայն ինքն է առաջին եւ տիրապէս հիմն հա-ւատոյ շինութեան Եկեղեցւոյ: Ուստի Օգոս-տինոս մեծ վարդապետն Լատինացւոց գրէ.
 «Քանի շինուածք բազումք իցեն յայնմ ժա-մանակի, որ ոսկի եւ որ խոտ ՚ի վերայ բար-ւոյ հիմանն, որ է Քրիստոս Յիսուս».
 Յաղ. քաղ, աստուծոյ, հատ Բ. Գլխի իա. Գլ իգ: Եւս նոյն Օգոստինոս ասէ ՚ի մատենի անդ, Գլխի իբ. Գլ. գ: Երուսաղէմ անուանելով զԵկե-ղեցին, «Իսկ այս Երուսաղէմ որպէս զի շի-նեսցի՝ եւ նուիրեսցի՝ զշինողն իւր զՔրիս-տոս Աստուած ա՛րկ ե՛ղ ՚ի հիմն հաւատոյ»:

Այս ամենը յայտնի եւ բացարձակ կը տեսնամք եւ կը լսեմք սրբազան Պետրոս առաքելոյն քարոզութենէն, որ ընդդէմ հրէից բարբառեցաւ. «Նա է վէմն անարգեալ ՚ի ձէնջ շինողաց, որ եղեւ գլուխ անկեան, եւ չի՛ք այլով իւրիք փրկութիւն». Գործ. դ. 11: Եւ ՚ի կաթողիկէ թուղթս իւր վկայութեամբ մարգարէութեանն Եսայեայ կը գրէ. «Քանզի կայ իսկ ՚ի գրի. թէ ահաւասիկ դնեմ ՚ի սիռովն վէմ ընտիր՝ գլուխ անկեան պատուական, եւ որ ՚ի նա հաւատասցէ՝ մի՛ ամաչեսցէ». ա Պէտր. բ. 6:

Ահա՛ այս սուրբ Եկեղեցոյ ամենափառաւոր չորս կերպ նշաններուն բացատրութիւնը տեսանք, որ ամեն ուղղափառ եւ բարեպաշտ ազգերը եւ Եկեղեցիները ունին. եւ բնաւ մէկը կարելի չէ՛ որ ըսէ. ես միայն ունիմ այս չորս նշանները: Վասն զի ամեն ուղղափառ ազգաց Եկեղեցիները, որ եւ ողջամիտ վարդապետութեամբ են միաբան ՚ի բանս հաւատոյ, եւ ամենքը միակերպ կրօնիւք Աստուածապաշտութեամբ կը հային ուղղակի ըստ նմանութեան բոլորածեւ գծոց ՚ի կեդրոնն հաւատոյ եւ ՚ի կատարիչն ճշմարիտ խոստովանութեան ՚ի Յիսուս Քրիստոս, ըստ այնմ՝ «Հայեսցու՛ք ՚ի զօրագլուխն հաւա-

տոց եւ ՚ի կատարիչն Յիսուս»։ Եբր. ժբ. 2: Անշուշտ սեպհականած են այն շորս ամենափառաւոր նշաններուն ներգործութիւնը, որ Յիսուս Քրիստոս ինքնին շնորհած է իրեն սուրբ Եկեղեցւոյն իբրեւ իւր բարոյական մարմնոյն. ըստ այնմ՝ «Ամենայն ինչ նովաւ՝ եւ ՚ի նոյն հաստատեցաւ: Եւ նա է յառաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ: Եւ նա է գլուխ մարմնոյ Եկեղեցւոյ»։ Առդու. ա. 16: Ուրեմն ամենքս միաբան ՚ի հաւատոս եւ միակրօն յաստուածպաշտութիւնս կատարեալ Քրիստոնեայ եմք, եւ Աստուածային սիրոյն Յիսուսի ներգործութեանն ընդունակ՝ եւ նորին փառացն արքայութեան հաղորդ. վասն որոյ ինքնին Յիսուս Քրիստոս տնօրէնութեամբն յայտնաբարբառ աղաչեց առ հայր, ուղղափառ եւ ճշմարիտ հաւատացելոց իրմէն պարգեւած շնորհաց եւ փառաց կատարելութիւնը յայտնի ընելու համար. ըստ այնմ՝ «Այլ ո՛չ վասն նոցա միայն աղաչեմ, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, որպէս դու հայր յիս՝ եւ ես ՚ի քեզ. զի եւ նոքա ՚ի մեզ իցեն, զի եւ աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ես զփառսն՝ զոր ետուր

ինձ, ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս եւ մեք մի եմք: Ես ՚ի նոսա՝ եւ դու յիս, զի եղիցին կատարեալք ՚ի մի, եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս, եւ սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր», Յօժ, ԺԷ, 20:

Ո՛վ ամենացանկալի մխիթարութիւն ուղղափառ միացելոցս ՚ի հաւատս, ո՛վ սքանչելի խրախոյս փրկութեան, տեսանե՛ս ո՛վ մեծահաւատ եւ բարեպաշտ Ազգ Հայոց, Յիսուս փրկիչնիս ազգի եւ լեզուի որոշումն չընէր, եւ Եկեղեցիները չ՛բաժանէր, այլ ուղղափառ ճշմարիտ հաւատացեալները կատարեալ Քրիստոնեայ՝ եւ մեկ ընդհանրական՝ եւ առաքելական Եկեղեցի կը ճանաչէ, եւ ամենուն կը կամի պարգեւել իրեն անչափ սիրոյն ներգործութիւնը՝ եւ արքայութեան փառաց վայելչութիւնը: Նայէ՛ մէյմը Յիսուս իրեն մարդասիրութեամբը եւ փրկագործ տնօրէնութեան շնորհիւր արեւելքէն եւ արեւմուտքէն՝ հիւսիսէն եւ հարաւէն ամեն կողմերէն եւ ամեն ազգերէն իրեն կը կանչէ եւ կը ճանաչէ ուղղափառ եւ բարեպաշտ հաւատացեալները, որ ընդհանրական ամեն աշխարհի մէջ տարածուած կաթողիկէ միակրօն սուրբ եւ առաքելական Եկեղեցի

են, եւ ինքն ալ ընդհանրական եւ ամենիշխան տէր եւ գլուխ է ամենուն, վասն որոյ ըսաւ. «Ես եմ հովին քաջ՝ եւ ճանաչեմ զիման՝ եւ ճանաչիմ յիմոցն», ՅօՒ, Ժ. 14: Եւ թէ «Եկեացեն յարեւելից եւ յարեւմտից եւ ՚ի հիւսիսոյ եւ ՚ի հարաւոյ, եւ բազմեսցին յարքայութեան Աստուծոյ», Ղ. 4. Ժգ. 29:

Ապա ո՛վ որ կըսէ, ես կաթողիկէ եկեղեցւոյ որդի եմ, ըսել է՝ որ ես սրբարար շնորհիւ մկրտութեան եւ ուղղափառ հաւատոյ դաւանութեամբ կատարեալ Քրիստոնեայ եմ, եւ առաքելական աշխարհալուր քարոզութիւնները եւ անժխտելի աւանդութիւնները, որն որ սուրբ եկեղեցին կը յայտնէ եւ կը քարոզէ, ընդունելով կ'ընդունիմ, եւ ամեն շարագոյն հերետիկոսներուն եւ աղանդաւորներուն հոգեկորոյս մոլորութիւնները, որոնք որ սուրբ եւ տիեզերական ժողովքներու մէջ հերքուեցան, եւ ես ըստ ամենայնի մերժելով կը մերժեմ:

Ահա՛ այս ամենը՝ Հայոց ուղղափառ ազգը համարձակ ընդունած է, եւ յայտնի ալ կը քարոզէ իրեն եկեղեցական կանոնական եւ ընդունելի գիրքերովը, եւ եկեղեցւոյն ողջամիտ վարդապետութիւնովը, ուրեմն այս օր-

ուան օրս Հայոց ազգը ուղղափառ եւ բարեպաշտ է. ապա պիտի անշուշտ սիրելի ըլլայ ուղղափառ եւ բարեպաշտ ազգերուն, որոնք որ Յիսուս Քրիստոսի անժխտելի հրամանին ըստ ամենայնի հնազանդ են, եւ սրբազան առաքելոց հետեւող կը հանդիսանան. ըստ որում Յիսուս Քրիստոսի է այս պատուէրը եւ հրամանը. «Այս է պատուէր իմ, զի սիրես շի՛ք զմիմեանս. որպէս եւ ես զձեզ սիրեցի». Յճ. Ժ. 12: Եւ սրբազան առաքեալն Պօղոս կը յօրդորէ ճշմարիտ հաւատացեալները, որ այս Քրիստոսաւանդ պատուէրը միշտ ունենան՝ եւ գործով ալ կատարեն, որով հարազատ շնորհական որդի ըլլան Հօր Աստուծոյ. «Եղերու՛ք նմանօղք Աստուծոյ իբրեւ որդիք սիրելիք. եւ գնացէ՛ք սիրով՝ որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ եւ զենումն Աստուծոյ՝ ի հոտ անուշից». Եֆէ. Ե. 1:

Եւ սրբազան աւետարանիչն Յօհաննէս, տես ի՞նչպէս պայծառագոյն կը հանդիսացունէ եղբայրսիրութիւնը. եւ ասոր ալ ներհակ կը ցուցընէ ամենատգեղ ատելութիւնը: Վասն զի Քրիստոսական խաղաղաւէտ սիրոյն օրէնքը կը նկարագրէ իբրեւ ամենացանկալի

արփիահրաշ լոյս մը, որուն մէջ վճիտ եւ պայծառ կերեւնայ Աստուծոյ ճշմարտութիւնը, եւ հաւատակից եւ կրօնակից եղբայրներուն ուղղափառութիւնը եւ բարեպաշտութիւնը. իսկ ասոր ընդ հակառակն սատանայական խռովայոյզ ատելութեան կիրքը կը նմանեցունէ զարհուրելի եւ սոսկալի խաւարի մը, ուրկէց որ հեռացած եւ պակասած է Աստուածային ճշմարտութեան լոյսը. ըստ այնմ՝ «Որ սիրէ զեղբայր իւր՝ ՚ի լոյս բնակէ, եւ գայթակղութիւն ՚ի նմա չի՛ք: Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ՚ի խաւարի է, եւ ընդ խաւար շրջի, եւ ո՛չ գիտէ յո՛ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա» ա ՅօՒ. բ. 10:

Ուրեմն ատելութեան շար կիրքերուն խաւարի մէջ եղող սիրտերը եւ միտքերը, որչափ ալ իմաստութեան եւ գիտութեան պայծառ աչք ունենան՝ անկարող պիտի ըլլան բարին շարէն՝ արդարը մեղաւորէն՝ եւ ուղղափառը հերետիկոսէն ընտրելու եւ ուղիղ դատումն ընելու. ապա ասանկ ծուռ եւ սխալ դատումըն ընող միտքերը մեղադրանաց եւ քամահրանաց արժանի համարելու չեմք, այլ ցաւելու եւ կսկծալու եմք անանկները, որոց սիրտը եւ միտքը պաշարեր է խաւարային ա-

տելութեան սոսկալի կիրքը: Ասոր համար է՝ որ Հայոց սուրբ Եկեղեցին միայն կը հերքէ կը մերժէ տիեզերական սուրբ ժողովով հերքեալ եւ բանադրեալ հերձուածները՝ հերետիկոսները՝ եւ ամեն ազանդաւորները՝ ըստ Դաւթի ըսելով. «Ձատելիս քո տէր ատեցի»։ Սաղ. ճԺ. 20: Իսկ ուղղափառ եւ բարեպաշտ ազգաց Եկեղեցիները կը սիրէ եւ կը մեծարէ ըստ Դաւթի ըսելով. «Ինձ յոյժ մեծարու եղեն բարեկամք քո Աստուած»։ ճԺ. 16:

Այնչափ սիրով կընդունի ասոնք Հայոց սուրբ Եկեղեցին, որ ուղղափառ խոստովանութեամբ եւ բարեպաշտական կրօնիւք հաղորդ կըլլայ անոնց Աստուածահաճոյ աղօթիցն. վասն որոյ միշտ այս քարոզը արեւագալի աղօթքին բարձրաձայն կը կարգայ սուրբ Եկեղեցին Հայոց. «Յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու ընդ ամենայն տեղիս Քրիստոնէութեան ուր եւ կարգան զանուն տեառն սրբութեամբ, տէր աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբն մեզ ողորմեսցի»։ Ի Ժամա:

Ապա ամեն մէկ ուղղափառ Քրիստոնեայ ազգի բարեպաշտ եւ ազնուական անձինք իրենց սուրբ Եկեղեցւոյն ուղղափառութիւնը

ճանչնալով պիտի չ'հերքեն չ'մերժեն եւ չը բաժանին իրենց սուրբ Եկեղեցիէն կամակորուժեամբ եւ կամ ատելութեան շար ոգւով, որով կըլլան պատճառ գայթակղութեան ազգայնոցն եւ հաւատակից եղբարցն, որոց համար վճռեց Յիսուս փրկիչն մեր. «Վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն». Մատթ. ԺԷ. 7: Եւ Պօղոս սրբազան առաքեալը կը գրէ իբրեւ յատուկ կանոն կարեւոր ամենայն ազգաց Քրիստոնէից ըսելով. «Այսուհետեւ մի՛ զմիմեանս դատեսցուք, այլ առաւել զայս դի՛ք ՚ի մտի շղնել գայթակղութիւն եղբօրն». Հռովմ. ԺԳ. 13:

Ահա՛ այս վկայութիւններով երեւցաւ, որ այն անձը իրեն ազգային ուղղափառ սուրբ Եկեղեցիէն բաժնուելովը՝ ո՛չ միայն իրեն քրիստոնէական ազնուականութիւնը եւ բարեպաշտութիւնը չ'պահեց, այլ եւ Քրիստոսի բարոյական մարմնոյն մէկ մասը՝ որ է զատաբար մէկ ուղղափառ ազգի մը եկեղեցի, անարգեց եւ մերժեց, եւ պարզամտաց ալ եղաւ սոսկալի պատճառ գայթակղութեան:

Ուրեմն երանելի են բարեպաշտ եւ ազնուական անձինք, որք կը սիրեն իրենց ուղ-

ղափառ եւ բարեպաշտ ազգը՝ եւ անոր ամբողջութիւնը պահելու փոյթ մեծ ունին. եւ ասոր ալ յայտնի նշանը այս է, որ իրենց սիրելի ազգին սուրբ Եկեղեցւոյն ուղղափառութիւնը պիտի ճանչնան, եւ անկէց ալ չը պիտի բաժնուին, եւ թէ որ մէկը տեսնայ իր ազգայնութիւնը չ'պահող եւ ազգային ուղղափառ Եկեղեցիէն բաժնուած, պիտի հոգւով չափ աշխատի զայն համոզելու խորատելու եւ յորդորելու, որ ուղղէ եւ իւր Եկեղեցւոյն հետ միացունէ. ապա թէ անոր ուղղիլը անհնարին եղաւ իրեն՝ եւ ունկնդիր չ'գտաւ զայն իրեն յորդորմունքին, պիտի մերժէ այնպիսին, իբրեւ գայթակղեցուցիչ եւ վնասակար անդամ առողջ եւ ամբողջ անդամոց սուրբ Եկեղեցւոյն: Ինչպէս որ սրբբազան աւետարանիչն Յօհաննէս իրեն երրորդ թղթովը կը յայտնէ մեզի այն ամենաթշուառ թշնամին Եկեղեցւոյն Քրիստոսի եւ հակառակողն առաքելական քարոզութեանց՝ յանդուգն ազգատեաց մոլորամիտ շարն «Իիոտրէփէս»։ վասն զի այս շարաշար մոլորեալը չէ թէ միայն ինքն մոլորելով հակառակ կը խօսէր սրբազան առաքելոց դէմ, այլ եւ շատերն ալ կը գայթակղեցներ, ինքը Եկեղեցիէն զատուէր էր, եւ շատերուն ալ

պատճառ եղեր էր բաժնուելու, այս թշուա-
ռականին գործը եւ ճարտարաբան խօսքերը
միշտ ամեն մէկը արգիլել էր աստուածաշ-
տութենէն՝ եւ բարեգործութենէն՝ եւ սուրբ
եկեղեցւոյն հնազանդութենէն, ըստ բանի
տեառն մերոյ. եթէ «Վա՛յ ձեզ օրինականա-
ցըդ, զի թագուցանէք զփականս գիտու-
թեան. դուք ո՛չ մտանէք, եւ որ մտանելոցն
են՝ արգելուք». Ա՞-կ, ժա. 52:

Ահա՛ այս օրինակ շարերուն մէկն էր այս
«Դիոտրէփէսն», որուն համար այսպէս կը
գրէ սրբազան աւետարանիչն առ Գայիոս.
«Գրեցի ինչ եկեղեցւոյն, այլ որ յառաջա-
դէմն ՚ի նոցանէ է Դիոտրէփէս, ո՛չ ընդունի
զմեզ: Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցու-
ցից զգործս նորա զոր առնէ, բանիւք շար-
եօք շատախօսութեան առնէ զմեզ աշխատ,
եւ ո՛չ այսոքիւք շատացեալ, ո՛չ ինքն ընդու-
նի զեղբարս, եւ զայնոսիկ որ ընդունինն՝ ար-
գելու, նաեւ եկեղեցւոյ եւս հանէ». գ.
Յօ՛Ը, ա. 9:

Ասանկ վիշտեր եւ նեղութիւններ ունեցաւ
սրբազան առաքեալն Պօղոս. վասն որոյ ըսաւ
«Վիշտս ՚ի սուտ եղբարց». բ Ա՞րն. ժա. 26:
Որոնցմէ էին «Փեգելոս» եւ «Հերմոգի-
նէս». այս երկու անձերը յառաջ Պօղոս ա-

ուաքեալին հետը գործակից եւ պաշտօնեայ էին ՚ի հաստատել զեկեղեցին Քրիստոսի, բայց յետոյ մոլորեցան եւ բաժանեցան այն գործակցութենէն եւ Քրիստոսի Եկեղեցւոյն խնամատարութենէն: Ուստի ասոնց համար վշտալի սրտով կը գրէ առ Տիմոթէոս աշակերտն իւր, որ ան ալ ծանօթ ըլլայ ասոնց խորշելի եւ պարսաւելի բաժանմանց՝ եւ միշտ զգուշանայ ասանկ խաբեբայներէն. վասն որոյ կըսէ. «Չայս գիտասջի՛ր, զի մեկնեցան ՚ի մէնջ ամենեքեան, որ էին յԱսիա, որոց սակի են Փեգելոս եւ Հերմոգինէս», ԲՏԿ. ա. 15:

Անանկ է նէ՛ մեծ տմարդութիւն է եւ շարաշար ազգատեցութիւն՝ եւ հոգեւոր խաբէութիւն, երբ ուղղափառ ազգի Եկեղեցւոյ ժողովուրդէն մէկը իրեն ուղղափառ Եկեղեցւոյն ճշմարիտ եւ ուղիղ դաւանութիւնը ճանչնալէն եւ գիտնալէն՝ եւ ինքն ալ խոստովանելէն վերջը մտախաբ կամակորութեամբ եւ ազգատեաց թշնամութեամբ կը թողու իրեն սուրբ Եկեղեցին, եւ կը բաժանի կը զատուի անոր Աստուածային եւ հոգեւոր հաղորդակցութենէն, ան մարդը թէ որ բնաւ մեղք մը չունենայ՝ եւ սուրբ սիրտ ունենայ, այս իրեն սուրբ Եկեղեցւոյն

հետ ունեցած ատելութիւնը եւ թշնամութիւնը բաւական աններելի մեղք է. ինչպէս ասանկներուն համար կը գրէ Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսը. «Բայց վա՛յ ինձ վա՛յ այժմու ժամանակիս, որ ըստ մարգարէին կանխասացութեան օտարացաք ՚ի մօրէս, եւ յայսչափ պարգեւացս զմեզ օտարացոցաք: Զի թէ եւ այլ ինչ շունէաք յանցումն, այս միայն բաւական էր մեղաւորս առնել զմեզ. քանզի եւ աստանօր մարգարէս՝ ո՛չ վասն այլ իրիք, այլ վասն ՚ի հոգեւոր մօրէս օտարանալոյ կոչեաց, մեղաւորս. օտար եղեն ասէ մեղաւորք ՚ի մօրէ, խաբեցան յարգանդէ, այսինքն՝ յաւազանէն: Քանզի վրիպին ՚ի շնորհաց աւազանին, օտարացեալքն եկեղեցւոյ. եւ ատեցեալ լինին իբրեւ զխորթսն վասն զնովաւ արհամարհանացըն». ՚ի Սէկ. Ժամ. Եր. 79:

Գիտեմք մի արդեօք թէ այս երանելին Խոսրով ինչու՞ համար ատելութեամբ եւ խրոստութեամբ իրեն սուրբ Եկեղեցիէն բաժնուողները մեծ մեղաւոր կը համարի, ու՞րկէց առած է, ի՞նչ հեղինակ ունի սուրբ գիրքեն. յայտնի է որ սրբազան Պօղոս առաքեալէն համոզուած է, որ ամեն բարեպաշտութենէն եւ ամեն առաքինական գործքերէն վեր կը

դասէ աստուածսիրութիւնը եւ եղբայրսիրութիւնը, ո՛չ թէ միայն գլուխ պատուիրանին սէրը կը ցուցանէ, այլ եւ հոգի ամեն առաքինութեան՝ սէրը կը քարոզէ. ուստի եկեղեցւոյն Կորնթացւոց խրատ կը գրէ ինքը զինքը օրինակ տալով, որ իրենց եկեղեցւոյն մէջ ունեցած ուղիղ եւ ժշմարիտ հաւատոյ դաւանութեամբ եւ աստուածպաշտութեամբ միայն ինքզինքնին կատարեալ քրիստոնեայ չ'գիտնան, այլ աստուածահաճոյ եղբայրսիրութեամբ մէկգմեկու հետ յօդեալ եւ միացեալ ըլլան, որով սուրբ եկեղեցւոյն Կորնթացւոց ամբողջութիւնը պահուի, եւ առաջի Աստուծոյ կատարեալ քրիստոնեայ համարուին. վասն որոյ իրեն վրայով կըսէ. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց՝ եւ սէր ո՛չ ունիցիմ, եղէ ես իբրեւ պղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ ղօղանչեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն՝ եւ զամենայն գիտութիւն. եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ, եւ սէր ո՛չ ունիցիմ՝ ոչինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, եւ սէր ո՛չ ունիցիմ՝ ո՛չինչ օգտիմ». ա. Աորն.

Ժգ. 1: Եւ ասանկ ալ երանելի առաքեալն Պետրոս կը գրէ՝ որ ամեն առաքինութենէն յառաջ եկեղեցւոյ անդամները պէտք է որ մէկգմէկու հետ միանան հոգեւոր սիրով. «Նախ քան զամենայն սէր սերտ ունել ընդ միմեանս», ա Պէր. դ. 8:

Ահա Հայոց ազգը այս աստուածապարգեւ սիրոյ օրէնքը պահելով՝ ո՛չ միայն կը պարտաւորի եւ կամ փոյթ կունենայ իրեն ուղղափառ եկեղեցւոյն մէջ պահելու հաստատուն սիրակցութիւնը, այլ եւ կը սիրէ ամեն ուղղափառ եւ բարեպաշտ ազգերը, եւ բնաւ մէկուն վրայ ատելութեան աչօք չ՛նայիր, այլ ամենքը կը յարգէ իրենց վայելչութեանը համեմատ, եւ կը ճանաչէ ամեն մէկուն հոգեւոր փառաց եւ պատուոյ սահմանը:



ԳՒՈՒՎԹ

Արդե՛օք ուղղափառ Հայոց եկեղեցին ի՞նչ արտօնութիւնով եւ կամ ի՞նչ պատուով կը ճանաչէ եթէ՛ իրեն եւ եթէ՛ այլոց ամեն մէկ ուղղափառ եւ բարեպաշտ ազգի եկեղեցեաց առաքեալներուն օրինաւոր յաջորդ-

ները, որ եպիսկոպոսապետ՝ եւ քահանայա-
ժպետ, կամ կաթողիկոս եւ կամ ընդհանրա-
կան պատրիարզ կանուանին:

Ուղղափառ սուրբ Եկեղեցին Հայոց՝ սուրբ
գրոց համեմատ եւ սրբազան հարց ողջամիտ
վարդապետութեանը հետեւելով այսպէս կըն-
դունի, որ ինչպէս Յիսուս Քրիստոս առաք-
եալ էր ՚ի Հօրէն Աստուծոյ փրկիչ աշխար-
հի, անմիջապէս քարոզել մարդոց եւ ուսու-
ցանել Աստուածային ճշմարտութիւնը, եւ
ամեն հաւատացելոց ներգործել իրեն փր-
կարար շնորհքները: Նոյն ինքն Յիսուս իւր
ամեն առաքելներուն ալ հաղորդեց եւ
պարգեւեց հաւասարապէս իրեն առաքելա-
կան իշխանութեան շնորհքը, որով ամենքը
ունեցան իշխանութիւն քարոզելու տիեզե-
րաց զբանն կենաց եւ ուսուցանելու ամե-
նեցուն ճշմարտութեամբ զճանապարհն փր-
կութեան, եւ մատակարարելու արժանաւո-
րաց իւր փրկարար տնօրէնութեան խոր-
հուրդներուն սրբարար եւ կենդանարար պէս
պէս շնորհքները. ըստ այնմ՝ «Որպէս ա-
ռաքեաց զիս հայր, եւ ես առաքեմ զձեզ:
Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զա-
մենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանուն
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ուսուցէ՛ք

նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ»։ Մատթ. Իբ. 18:

Այս առաքելութեան եւ շնորհաց մատակարարութեան պաշտօնը եւ իշխանութիւնը հաւասար ամենայն առաքելոց Յիսուսէ Քրիստոսէ պարգեւեցաւ սրբազան առաքելոց, ըստ այնմ՝ «Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, եւ ես առաքեցի զնոսա յաշխարհ»։ ՅԼ. Ժ. 18:

Այսպէս ալ սրբազան առաքելոց օրինաւոր յաջորդները սրբազան քահանայապետները՝ եպիսկոպոսապետները՝ եւ եպիսկոպոսները կը ճանաչեմք առաքելապատիւ՝ եւ պաշտօնակից առաքեալներուն Քրիստոսի, ինչպէս որ սրբազան առաքեալն Պետրոս յայտնի կընէ՝ ըսելով. «Ձերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակից եւ վկայ շարշարանացն Քրիստոսի»։ և Պատթ. Ե. 1: Կըտեսնե՞ս՝ ի՞նչպէս սրբազան առաքեալը ամեն մէկ առաքելոց յաջորդները կամ Եկեղեցւոյ առաջնորդները իրեն հետ համապատիւ եւ հաւասարակից պաշտօնեայ Քրիստոսի՝ եւ բանաւոր հօտին հոգեւոր հովիւ կանուանէ: Այս ալ պէտք է գիտնալ, որ այս Երէցանունով պէտք է իմանալ կաթողիկոսները՝ եպիսկոպոսները՝ եւ քահանաները, վասն զի

առաքելոց ժամանակը այս հոգեւոր աստիճաններուն յատուկ անունները որոշուած եւ բաժնուած չէին, այլ ամենքը Երէց անունով կը կոչուէին: Ինչպէս «Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երիցունս», Գործ. Ժդ. 22: «Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն եւ երիցանցն ամենայն եկեղեցեալն», Գործ. ԺԷ. 22: Տե՛ս եւս Գործ. Ժգ. 4: Ի. 17: Իա. 18: ա. Գրհ. ե. 17: Գրհ. ա. 5:

Բայց երբ հաւատացելոց թիւը ամեն տեղ շատցաւ, եւ եկեղեցին Քրիստոսի ամեն աշխարհի մէջ տարածեցաւ՝ տիեզերական եղաւ, որ կըսուի կաթողիկէ եկեղեցի. ամեն ուղղափառ ազգաց եկեղեցւոյ երիցանց գըլուխները անուանեցին քահանայապետ՝ կաթողիկոս՝ ընդհանրական պատրիարք եւ եպիսկոպոսապետ. որպէս կը գրէ Սարգիս շնորհալին. «Երիցութեան անուամբ՝ թուի ինձ եթէ համապատուաբար ամենայն առաջնորդք եկեղեցւոյ կոչէին, զի չեւ եւս բաժանեալ էին անուանքն ըստ աստիճանացն. այսինքն կաթողիկոսն եւ եպիսկոպոսն եւ քահանայն. վասն զի այսոքիկ բաժանմունք անուանց յետոյ մտին ՚ի ներքո, այլ յաւուրս առաքելոցն համապատուաբար միով ան-

ուամբ երիցութեան զամենեսեան անուանէին», ա Պէր. ճառ ժա. 371:

Ուրեմն առաքեալներուն օրինաւոր յաջորդները՝ ինչպէս որ ըսինք, սրբազան առաքելոց համապատիվ պաշտօնակից եւ հաւասար արտօնութիւն ունին, եւ այս հաւասարակշիռ պատուակցութիւնը տէրն մեր Յիսուս Քրիստոս անժխտելի հրամանաւ իւրով հաստատեց ըսելով ամենեցուն. «Ամենեքին դուք եղբարք էք. եւ մեծն ՚ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր». Մատ. իգ. 8:

Տիտոս աշակերտն Պօղոսի առաքելոյն երբ սկսաւ Կորնթացւոց եկեղեցւոյն մէջ քարոզել եւ ուսուցանել զԱւետարանն փրկութեան, Եկեղեցւոյն մէջէն ոմանք սկսան խօսիլ՝ թէ այս Տիտոս համապատիւ առաքելոց չէ՛, այլ միայն աշակերտ Պօղոսի առաքելոյն եւ յաջորդ նորին. ասոր համար գրեց Պօղոս առաքեալը Կորնթացւոց, որ ինծի հետ համապատիւ եւ հաւասար պաշտօնակից է, եւ ձեզի ալ պա՛րտ է այնպէս ճանաչել զնա. «Բայց եթէ վասն Տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար է՝ եւ ձեր գործակից, եւ եթէ եղբարք մեր, առաքեալքն Եկեղեցւոյն եւ փառք Քրիստոսի», Բ. Աորն. ը. 23: Ասանկ ալ սուրբն Դիոնեսիոս Արիսպագացին ՚ի վեր-

նագիր թղթոյն՝ որ առ Տիմոթէոս, գրէ այսպէս. «Ի քահանայէ Դիոնեսիոսէ՝ առ քահանայակիցդ մեր Տիմոթէոս»:

Թէ որ ամեն սրբազան առաքեալները հաւասարապատիւ եւ համապաշտօն չճանաչեմք, եւ մէկը մէկալէն մեծ՝ եւ կամ իշխանութեամբ վերամբարձ գիտնամք, անոնց օրինաւոր յաջորդներն ալ հարկաւ այնպէս պիտի ճանաչեմք, ահա ասկից կը պատճառի զանազան հակառակութիւն, սնոտի պարծանքներ եւ հերձուածողութիւն բարոյական անդամոց Եկեղեցի Քրիստոսի, այսինքն ուղղափառ Քրիստոնեայ ազգերուն մէջ, ինչպէս որ փիլիսոփայից ժամանակը դաս դաս եւ ժողով ժողով մէկզմէկէ բաժնուած եւ հերձուած էին. ոմանք կը պարծենային Պղատոնի վարդապետութեամբը եւ իմաստութեամբը, որոց կըսուէր Պղատոնեանք. ոմանք Ստոյիկեանք. եւ ոմանք ալ Եպիկուրեանք: Ահա՛ ասանկ բաժնուած գտաւ Պօղոս սրբազան առաքեալը իրեն ժամանակին հաւատացեալները. տեսաւ որ Յիսուսի Քրիստոսի փրկագործ տնօրէնութեան շնորհքներովը՝ եւ անոր մարդասիրական կամաւոր շարժարանաց արդիւնքներովը չեն պարծենար, եւ չեն յիշատակեր. այլ ոմանք կը պար-

ծենան՝ որ մենք Պօղոս առաքեալին քարոզութիւնովը քրիստոնեայ եղած եմք, եւ Պօղոսեանք կրսուէին, եւ այլք Ապօղոսեանք կրսուէին Ապօղոսէն սորվելնուն եւ անոր քարոզութեամբը հաւատացեալ ըլլալնուն համար, եւ շատերն ալ Պետրոս առաքեալին քարոզութեամբը մկրտուած ըլլալնուն համար, կանուանէին Պետրոսեանք կամ Կեփասեանք, ասոնց ասանկ կողմ կողմ քաշուելովնին՝ մտաւ մէջերնին հերձուածողութիւն մի եւ նոյն ժամանակի եւ մի եւ նոյն հաւատացելոց մէջ. ուստի առաքեալն Պօղոս՝ բ Վորն. ժգ. 3. յատկապէս եւ բացարձակ գրեց ըսելով. «Այսուհետեւ մի՛ ոք պարծեսցի ՚ի մարդկանէ: Զի ամենայն ինչ ձեր է, եթէ՛ Պօղոս՝ եթէ՛ Ապօղոս, եթէ՛ Կեփաս՝ եթէ՛ աշխարհ՝ եթէ կեանք՝ եթէ մահ՝ եթէ՛ որ կանս՝ եթէ հանդերձեալքն, ամենայն ինչ ձեր է, դուք Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ». ա Վորն. գ. 22:

Այս յորդորական խօսքերով առաքեալն Պօղոս ամեն հաւատացեալները կը ջանայ խըրատել եւ համոզել, որ ամենքը անմոլար մտօք հաւատան, թէ ամեն հաւատացեալները մի միայն Յիսուսի Քրիստոսի ժողովուրդ են, եւ անոր փրկարար խաչելութեամ-

բը եւ կենդանարար մահուամբը փրկութիւն ունին. վասն որոյ ըսաւ, «դուք Քրիստոսի», այսինքն դուք Քրիստոսի սեպհական ժողովուրդ էք, եւ ո՛չ Պօղոսին՝ կամ Ապօղոսին՝ եւ կամ Պետրոսին. ինչու՞ համար մեր անունը զատ զատ տալով մեկզմէկէ կը զատուիք, եւ մեր անունը ձեզի պարծանք սեպելով մեկզմէկէ բաժնուած զատ զատ ժողովուրդ կըլլաք, ու մէկզմէկ կանարգէք. չէ՞ք մի գիտէր՝ որ մեք առաքեալքս Յիսուս Քրիստոսի կը պարծենամք. «Պարծիմք ՚ի Քրիստոս Յիսուս». Փիլ. գ. 3: Եւ դուք ալ հաւատացեալք պէտք է, որ Յիսուսի Քրիստոսի պարծենաք. «Զի պարծանք ձեր առաւել լիցին ՚ի Քրիստոս Յիսուս», Փիլ. ա. 26: Ապա զի՞ է, զի՞ թողեալ էք իրաւացի պարծանք ձեր որ գրեալ է. «Որ պարծին ՚ի տէր պարծեսցին», Եբե՛մ. թ. 24: Մի՞թէ մեք Քրիստոսի Յիսուսի աշակերտքս ձեզի համար խաչուեցա՞նք, կամ մեզմո՞վ եղաւ ձեր փրկութիւնը, եւ կամ մեր անունը տալով մկրտուեցայք. ահա՛ ես իմ անունս տալով ճշմարիտը կըսեմ. «Իսկ արդ բաժանեալ ի՞նչ իցէ Քրիստոս. մի՞ թէ Պօղո՞ս ՚ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն Պօղոսի՞ մկրտեցարուք». ա Կորն. ա. 13:

Այս բնաբանին վրայով շատ վայելուչ եւ վսեմ խորհրդածութիւն կրնէ Հ, Գաբրիէլն Աւետիքեան ըսելով. «Եւ սակայն ասելդ ձեր Պօղոսեան՝ կամ Ապօղոսեան՝ այնպէս ցուցանէ, թէ ո՛չ Քրիստոս միայն մեռաւ վասն ձեր ամենեցուն, այլ Պօղոս վասն Պօղոսեանց, եւ Ապօղոս վասն Ապօղոսեանց, եւ Կեփաս վասն Կեփայեանց, եւ Քրիստոս վասն ոմանց Քրիստոսեանց: Վասն զի յայն անուն արժան է կոչիլ փրկելոց, որով են փրկեալք. աւարն ՚ի յաղթողին անուն վերակոչի. եւ ծառայք ստացողին են՝ եւ անուանին: Ապա կոչելով զձեզ Պօղոսեանս, ցուցանէք զձեզ Պօղոսի լինել փրկեալս, եւ աւարս, եւ ծառայս, եւ ո՛չ եւս Քրիստոսի»։ Մէկն, Պօղ. ա Հար. Էր. 579:

Ուրեմն ամեն հաւատացեալները կը պարտաւորին ամեն մէկ սրբազան առաքեալները համապատիւ պաշտօնեայ Քրիստոսի՝ եւ համահաւասար հոգեւոր իշխանութիւն ունեցող ճանչնալ, եւ մէկզմէկէ չ'որոշելով հաւասարապէս պատուել եւ յարգել. ասոր համար այս ճշմարիտ եւ բացայայտ կանոնը կաւանդեն իրենք հաւատացելոց. «Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի, եւ հազարապետս խորհրդ-

դոցն Աստուծոյ». ա Վորն. դ. 1:

Ահա՛ յայտնի եղաւ որ սրբազան առաքեալները համահաւասար Քրիստոսի պաշտօնեայ են, եւ հազարապետ վեհեօրհմարձ Աստուածային եւ շնորհաբաշխ խորհրդոցն Եկեղեցւոց: Վասն զի անոնց ամենուն հաւասար պարգեւեց Յիսուս Քրիստոս առաքելութեան իշխանութիւնը, որ ամենքը աւետարանական ճշմարտութեան հաւատարիմ պաշտօնեայ ըլլան, եւ ամեն արժանաւոր հաւատացելոց մատակարարող ըլլան Աստուածային խորհուրդներուն շնորհքները եւ պարգեւները: Տե՛ս՝ ամենուն մէկ տեղ շնորհեց Յիսուս Քրիստոս փրկիչն մեր յետ յարութեանն իրեն շնորհաց սիրոյն ողջոյնը, երբոր միաբան ժողովուած էին վերնատանը մէջ. «Եկն Յիսուս՝ եւ եկաց ՚ի միջի նոցա, եւ ասէ ցնոսա, ողջոյն ընդ ձեզ». Յօժ. ի. 19: Եւ ամենուն հաւասար շնորհեց առաքելութեան պաշտօնը՝ յասելն. «Երթա՛յք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց». Մար. Ժզ. 15:

Այսպէս ալ ՚ի լեառն Գալիլեայ ամենուն հաւասար պարգեւեց դատողական իշխանութիւնը, որով հաւատոյ խնդիրներուն մէջ պատահած վեճերը քննեն եւ դատեն՝ եւ

հարկաւոր վճիռը տան. վասն որոյ ամենուն մէկ տեղ ըսաւ. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի, որպէս առաքեաց զիս հայր, եւ ես առաքեմ զձեզ».
Մատթ. իր. 18: Եւս եւ առ հասարակ ամենուն տուաւ հոգեւոր իշխանութիւնը՝ մեղաց թողութիւն տալու փոխանորդաբար իրեն կողմանէ՝ ապաշխարութեան խորհրդով. վասն որոյ ամենուն ըսաւ. «Փշեաց ՚ի նոսա եւ ասէ. առէ՛ք հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի».
Յօժ. ի. 22:

Այս հոգեւոր իշխանութիւնը կանուանի՝ իշխանութիւն «կապելոյ եւ արձակելոյ».
Ասացաք՝ թէ «կապելոյ». այսինքն ըստ ամենայնի արգիլելու անզեղջ եւ անդարձ մեղաւորները հաղորդուելէն Աստուածային եւ սրբարար շնորհքներուն սուրբ Եկեղեցւոյն խորհրդոցը. ըստ այնմ. «կապեցէ՛ք զգորա գոտս եւ զձեռս՝ եւ հանէ՛ք զգա ՚ի խաւարն արտաքին».
Մատթ. իբ. 13: Եւ «արձակելոյ». այսինքն զղջմամբ սրտի եւ խոստովանութեամբ, այսինքն առաջի քահանային զղջմամբ սրտի եւ կատարեալ խոստովանութեամբ ապաշխարող մեղաւորին, նոյն քահանայն պիտի ներողութիւն տայ՝ արձակէ

մեղաց կապերէն, եւ հրաման տայ, որ համարձակի մերձենալ Աստուածային եւ սրբացուցիչ շնորհքներուն. ինչպէս որ յայտնի կընէ քահանայից կատարեալ արձակման խօսքերը, որ երկու մասն կը բաժանի այն ամբողջ արձակման խօսքը. քանզի քահանայն ձեռքը դնելովը խոստովանողին գլխուն վրայ, կը յայտնէ ապաշխարութեան խորհրդոյ երեւելի նիւթը, որոյ էական բանը կամ կատարիչ խորհրդոյն է արտաբերեալ Ողորմեսցին քահանային, որոյ մէկ մասն է բարեմաղթութիւն ՚ի կողմանէ Եկեղեցւոյն՝ յասելն. «Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած՝ եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց» եւայլն: Այս տեղս օրինակ է Դաւիթ մարգարէին աղերսանքը առ Աստուած, եւ խնդրելը ամեն Աստուծոյ հաճելիներուն աղօթքը. ըստ այնմ. «Ասացի՛ թէ պատմէցից յինէն զմեղս իմ, եւ դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց: Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ՚ի ժամ ընդունելի». լա. 6:

Ահա՛ Դաւիթ մարգարէին պէս՝ զղջացող խոստովանող եւ ապաշխարանաց հնազանդող անձը առաջի քահանային կը խոնարհի, եւ քահանայն Եկեղեցւոյն կողմանէ նախ բա-

րեմաղթութիւնը կը յայտնէ. եւ ապա իրեն ունեցած Քրիստոսական իշխանութեան գործադրութիւնը կընէ ըսելով. «Եւ ես կարգաւ քահանայական իշխանութեան եւ հրամանաւն աստուածային, թէ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. նովին բանիւ արձակեմ զքեզ եւայլն: Այս խօսքերով յայտնի կըլլայ, որ քահանայն փոխանորդ է Քրիստոսի, եւ ի կողմանէ Աստուածային իշխանութեանն Քրիստոսի զըզմամբ խոստովանողին կուտայ արձակումն ՚ի մեղաց: Այն իշխանութեան զօրութիւնովը եւ ներգործութիւնովը կարձակէ՝ որ Յիսուսի Քրիստոսի է. «Այլ զի գիտասջի՛ք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ զմեղս». Մար. Թ. 10: Եւ այս գերագոյն իշխանութիւնը Յիսուս Քրիստոս ինքնին տրվաւ հաւասար ամենայն սրբազան առաքելոց, եւ անոնցմէ առին ամենայն օրինաւոր յաջորդները. եւ անոնք ալ կուտան ՚ի ձեռնադրութեան քահանայից՝ ըսելով. «Առ քեզ իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ»:

Ապա այս հոգեւոր իշխանութիւնը «կապելոյ եւ արձակելոյ» յաջորդաբար ունին ամենայն երիցունք՝ օրինաւոր պաշտօնեայնները Եկեղեցւոյ՝ ընդունելով յԱրքեպիսկոպոսաց,

որք են օրինաւոր յաջորդք առաքելոց, վասն որոյ ասէ սուրբ Լուսաւորիչն մեր, «Իսկ զաւետարանին գործակիցսն զքահանայս սուրբս եւ զպաշտօնեայս Եկեղեցւոյ՝ որք սպասաւորք են սրբութեանցն հրեշտակային կարգաւորութեամբն, ո՛չ վարկպարագի համարեսցուք, այլ որպէս յԱստուծոյ կարգեալք ՚ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդեանն Աստուծոյ: Զի զառաջնորդս Եկեղեցւոյ ՚ի տեղի առաքելոցն կարգեաց Քրիստոս քարոզս՝ եւ ասաց, որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ: Եւ դարձեալ ասէ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Զի իշխանութիւն որ յԱստուծոյ է, զօրութիւն ունի մեղաց թողութեան եւ ախտաժեստաց առողջութեան: Զի զոր Աստուած կարգէ, զգործ Աստուծոյ գործէ շնորհօքն Քրիստոսի».

Յաճախ. ճառ Ե: Եւ սուրբն Յօհան ոսկեբերան գրէ, «Քանզի որք յերկրի աստ բնականան եւ ՚ի սմին քաղաքավարին, յերկնայնոցն սպասաւորութիւն կարգեցան, եւ իշխանութիւն իմն առին ընկալան, զոր եւ ո՛չ հրեշտակացն եւ ո՛չ հրեշտակապետացն ետ Աստուած: Քանզի նոցա ո՛չ ասաց՝ եթէ

զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Ապաքէն եւ որք յերկրի տեսարք են, ունին եւ նոքա իշխանութիւն կապելոյ, այլ զմարմինս միայն. իսկ այս կապանք մերձին ՚ի նոյն ինքն ՚ի հոգին, եւ զերկնիւքն ՚ի վեր անցանեն. եւ զոր միանգամ աստ ՚ի խոնարհ գործեն քահանայք, նոցուն ՚ի բարձունս վճիռ հատանէ Աստուած. եւ զծառայիցն զդատակնիք տէրն ինքնին հաստատէ. քանզի զի՞նչ այլ՝ բայց թէ բովանդակ զիշխանութիւն զերկնաւորացն ետ նոցա. զի որոց թողուցուք զմեղս, թողեալ լիցի՝ ասէ. եւ զորոց ունիցիք, կալեալ լիցի: Եւ արդ զի՞նչ քան զայս իշխանութիւն բարձրագոյն. զամենայն դատաստան ետ Հայր Որդույ, այլ ես տեսանեմ՝ զի զամենայն ՚ի ձեռս նոցա ետ Որդին». Ուկ. ա Հապ. յաղ. Կաճա. Տառ գ:

Այս գերագոյն հոգեւոր իշխանութիւնը «կապելոյ» անդարձ եւ անզեղջ մեղաւորները. եւ «արձակելոյ» զղջացող ապաշխարողները Յիսուս Քրիստոս իրեն կամաւոր շարշարանքներէն եւ փրկարար խաչելութենէն յառաջ խոստացաւ տալու սրբազան առաքեալներուն. ինչպէս Պետրոս առաքելոյն ը-

սաւ. «Տայ քեզ փականս արքայութեան երկնից, եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»». Մատթ. ժգ. 19: Սոյնպէս եւ միւս առաքեալներուն ալ խոստանալով՝ ըսաւ. «Ամեն ասեմ ձեզ. զի զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»». Մատթ. ժը. 18: Ահա՛ ինչպէս Պետրոսի, նոյնպէս ալ միւս առաքելոց խոստացաւ, որ հաւատացեալները յետոյ կարծիքի մէջ չիյնան, որ այս փականքը իշխանութեան «կապելոյ եւ արձակելոյ», միայն Պետրոսի առաքելոյն խոստացաւ տալու, եւ միւս առաքեալները չունին այս իշխանութիւնը. վասն որոյ յառաջագոյն կը խոստանայ ամեն մէկուն, եւ յետ ինքնազօր յարութեան իւրոյ ամենուն հաւասար կը պարգեւէ. ըստ այնմ՝ «փշեաց ՚ի նոսա՝ եւ ասէ, առէ՛ք հոգի սուրբ. եթէ՛ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եւ եթէ՛ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի»». Յօժ. ի. 22:

Ասով յայտնի ըրաւ Յիսուս Քրիստոս տէր մեր՝ որ այն խոստացած փականօք նշանակեալ հոգեւոր իշխանութիւնը «կապելոյ եւ

արձակելոյ», ամեն մէկ սրբազան առաքելոց հաւասար տրվաւ. ինչպէս այս վկայութիւններով ալ կը հաստատէ ուղղափառ սուրբ Եկեղեցին. «Ոյք առիք իշխանութիւն ՚ի վերայ ազգի մարդկան կապել եւ արձակել ՚ի յերկինս եւ ՚ի յերկրի»: Եւս վերակրկնէ. «Հազարապետք Աստուածային խորհրդոց, եւ բացողք դրանն արքայութեան երկնից».

Շար: Ասոր համար քարոզեց սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր. «Եւ տէրն ետ առաքելոցն, եւ զփականս արքայութեան ՚ի ձեռս նոցա, զի ինքն իսկ Աստուածորդին էր դուռն մտողացն. վասն որոյ մարգարէն ասէր, «այս դուռն տեառն է՝ եւ արդարք մտանեն ընդ սա». Եգաթ. Եր. 164: Այս ստուգութեանը երանելին Կիպրիանոս եւս կը վկայէ, ըսելով. «Փականքն ո՛չ տուան միոյն միայնակ, այսինքն Պետրոսի, այլ միութեանն Եկեղեցւոյ»: Եւս եւ մեծ վարդապետն Հերոնիմոս քաջ վերահասու ըլլալով սրբազան առաքելոց համապատիվ եւ համաչափ հոգեւոր եւ գերագոյն իշխանութեանը՝ եւ անոր օրինաւոր յաջորդներն ալ նոյն համապատիւ առաքելութեան իշխանութիւնը ունենալին կը յայտնէ առ Եւագր գրած թղթին մէջ ըսելով. «Եթէ զիշխանութենէն խնդրես՝ մեծ է տի-

եզերս քան զքաղաքն. վասն է՞ր յառաջ բերես ինձ զսովորութիւն միոյ քաղաքի, ուր եւ գտցի եպիսկոպոս՝ եթէ՛ ՚ի Հոռովմ՝ եթէ՛ ՚ի Կոստանդնուպօլիս՝ եթէ՛ ՚ի Հոեգիոն, եթէ՛ յԱղեքսանդրիա, եւ եթէ՛ ՚ի Դանիս, զնոյն արժանապատուութիւն եւ զնոյն քահանայութիւն ունին»:

Ուրեմն ինչպէս որ սրբազան առաքեալները համապատիւ իշխանակից եւ պաշտօնակից էին ամենքը, այնպէս ալ անոնց օրինաւոր յաջորդները առաքելապատիւ հայրապետները, սրբազան քահանայապետները՝ եպիսկոպոսապետները եւ եպիսկոպոսները՝ որ արքեպիսկոպոսներէն այն հոգեւոր իշխանութիւնը առած են օրինաւոր ձեռնադրութեամբ, եւ օրինաւոր պաշտօնեայք եկեղեցւոյ երիցունք ամենայն. վասն որոյ ասէ երիցանց Պօղոս առաքեալ. «Զգո՛յ՜ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ տեսուն». **Գործ. ի 28:** Եւ Պետրոս առաքեալ կրսէ. «Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակից». **ա Պէտր. ե. 1:**

ԳԼՈՒԽ Ժ

Արդ՝ թէ որ ամեն սրբազան առաքեալները մի եւ նոյն հոգեւոր իշխանութիւնը առաքելութեան հաւասար առին Յիսուս Քրիստոսէն. ըստ այնմ՝ «Որպէս առաքեաց զիս հայր՝ եւ ես առաքեմ զձեզ». Մատթ. 28. 18: Եւ ամենքը ունեցան գերագոյն իշխանութիւն դատողութեան եւ իրաւասութեան, եւ ամենքը փոխանորդ Քրիստոսի անուանեցան. ըստ այնմ՝ «Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ». Ղուկ. Ժ. 16: «Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի». Մատթ. Ժ. 40: Եւ ամենքը մի եւ նոյն շնորհքը եւ զօրութիւնը սուրբ Հոգւոյն Աստուծոյ ընկալան. ըստ այնմ՝ «Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով». Գործ. Բ. 4:

Ապա ինչու՞ համար վարդապետք եկեղեցւոյ կ'որոշեն սրբազան Պետրոս առաքեալը միւս սրբազան առաքեալներէն, եւ ամենէն նախադաս ընելով՝ յատուկ արտօնութիւն մը տալով կանուանեն զնա Գլուխ առաջնորդ. ինչպէս «Գլխոյն ընտրեալ հօտին փոքր». Հար: «Աշակերտաց գերագունին, եկեղեցւոյ անշարժ վիմին». Յիսուս որ: «Եւ Սիմովն գլուխ աշակերտացն». Ղուկ. Եր. 146:

Այլ թէ եւ Պետրոս՝ որ է գլուխ առաքելոցն», Էջն: Եւ կացոյց նոցա գլուխ եւ առաջնորդ եւ հիմն հաւատոյ՝ զերջանիկն Պետրոս», Սար. շնոր. Էր. 180: Այս Պետրոսի սրբազան առաքելոյն գլուխ առաքելոց անուանիլը ու՞րկէց առնելով՝ կը գրեն վարդապետք եկեղեցւոյ. թէ որ ըսեմք այն ճշմարիտ դաւանութենէն, որ ըսաւ Քրիստոսի, «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ. որ յաշխարհ գալոց էիր:» Այս խոստովանութիւնը Պետրոս առաքեալ ՚ի կողմանէ ամենայն առաքելոց ըսաւ. եւ ո՛չ թէ միայն իրեն կողմանէ. վասն զի Յիսուս ամենուն մէկ տեղ հարցուց ըսելով. «Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն՝ թէ իցեմ»: Պետրոս առաքեալը յառաջ մատեաւ իբրեւ նախագահ առաքելական դասուց՝ Հօր Աստուծոյ յայտնութեան շնորհիվը ըսաւ. «Դու ես Քրիստոսն՝ որդի աստուծոյ կենդանւոյ»: Ասոր համար կը վկայէ Երուսաղէմի սուրբն Կիրեղ հայրապետը. «Նախ յառաջ մատեաւ յառաջակացն առաքելոց գլուխ եկեղեցւոյ, ո՛չ բան գիտութեան յառաջ արկեալ, եւ ո՛չ ՚ի խորհուրդս մարդկան մխեալ, այլ ՚ի հօրէ զմիտս լուսաւորեալ ասէ ցնա. դու ես Քրիստոսն», Առշ. ընթ. ճառ ժա:

Այս ճշմարիտ հաւատոյ դաւանութիւնը ունի Աստուածային երանութեան շնորհաց պարգեւը, որ յայտնի ըրաւ Յիսուս Պետրոս առաքելոյն ըսելով. «Երանի՛ քեզ Սի՛մոն որդի Յովնանու»: Եւ այս հաւատոյ դաւանութիւնը, այսինքն Յիսուս Քրիստոսը որդի Աստուծոյ եւ փրկիչ աշխարհի խոստովանողները, որպիսիք էին միւս առաքեալները եւ ամեն հաւատացեալները, ամենքը առին եւ ունին այս երանութեան շնորհքը. ըստ այնմ՝ «Երանի՛ որ հաւատայցէ». ԳՊ. ա. 45: Երանի՛ իցէ՝ որ ո՛չ գայթակղեսցի յիս». ԳՊ. է. 23: «Գոհանամ զքէն Հայր տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմասնոց եւ ՚ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց». Մար. ժա. 25: «Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն՝ ասէ, Երանի՛ աչաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէքն». ԳՊ. ժ. 23: «Երանի՛ որոց ո՛չ իցէ տեսեալ՝ եւ հաւատացեն». ՅՕԷ. ի. 29: «Իսկ արդ՝ որ ճանաչենն զտէր մեր Յիսուս Քրիստոս զորդին Աստուծոյ, զերանութիւնն ընկալան. իսկ որ ուրաստ եղեն Որդւոյն Աստուծոյ, կորուսեալք եւ թշուառականք են». ԿՊ. ընթ. ճառ ժա:

Ապա ուրեմն սրբազան Պետրոս առաքեալը այս երանացուցիչ դաւանութեանը

միայն նախաշաւիղ ՚ի մէջ առաքելական դասուց հանդիսացաւ. ինչպէս որ սուրբ Ստեփաննոս ալ նախավկայ եւ առաջին մարտիրոս Քրիստոսի եղաւ զկնի համբարձմանն Քրիստոսի առաքելական պաշտօնեայներուն մէջէն. վասն որոյ կերգէ Եկեղեցին. «Որ արժանի եղեր զմարտիրոսականն առնուլ պսակ նախդ ՚ի վկայս»։ Ճանապարհ վկայից յետ Քրիստոսի գտար եւ Աստուածային փառաց արժանաւոր եղեր. **Շար՝**

Ասոր պէս ալ նախապատիւ եւ գլուխ եղաւ ՚ի մէջ առաքելոցն եւ աշակերտացն Քրիստոսի արդար անուանեալ՝ եւ եղբայր տեառն կոչեցեալ սուրբ առաքեալն Յակոբ, որ առաջին եպիսկոպոսապետ կարգեցաւ Քրիստոսական մեծի աթոռոյն Երուսաղէմի. ուստի Եկեղեցին կերգէ վասն այն Յակոբայ առաքելոյն. «Սա եղեւ գլուխ առաքելոց սրբոց, եւ կոչեցաւ եղբայր տեառն ՚ի տանէ Դաւթի»։ **Շար՝** Այս սուրբ Յակոբայ առաքելոյն համար Կղեմէս Աղեքսանդրացին կը գրէ, որ Արքեպիսկոպոս Երուսաղէմի ըլալով իշխանութիւն ուներ հրամայելու ամեն առաքեալներուն. «Արքեպիսկոպոս՝ իշխան եպիսկոպոսաց՝ եպիսկոպոսական իշխանութեամբ հրամանատար ամենայն առաքելոց»։ **Գեորգ. Կննո՝**։

Այս ճշգրիտ գրութիւնը կղեմէսի կը հաստատի *Գործի առաջնոցն մէջ* գրուած Յակոբայ առաքելոյն ՚ի ներկայութեան առաքելոց ըրած վճիռէն, որ եւ անդր կային Պօղոս եւ Պետրոս սրբազան առաքեալներն ալ. «Եւ յետ լռելոյն նոցա՝ պատասխանի ետ Յակոբոս՝ եւ ասէ, ա՛րք եղբարք՝ լուարու՛ք ինձ . . . վասն որոյ եւ ես իրաւունս համարիմ մի՛ նեղել զայնոսիկ՝ ոչք ՚ի հեթանոսացն դառնան առ Աստուած: Այլ տալ թուղթ առ նոսա, խորշիլ ՚ի կերակրոց կռոց՝ եւ ՚ի պոռնկութենէ եւ ՚ի մեռելոտւոյ՝ եւ յարենէ». *Գործ. Ժէ. 13. 19. 20:*

Առաքելոց մէջ այս երանելի սուրբ առաքեալս կրկին գլխաւոր արժանապատուութիւն ունէր, մի՛ զի ազգակից էր Քրիստոսի, եւ երկրորդ՝ զի մայր ւթոռոյն Երուսաղէմի առաջին եպիսկոպոս կարգեցաւ, եւ այս կրկին գերագոյն պատիւը սրբոյն Յակոբայ առաքելոյն կը յայտնէ սուրբ առաքեալն Պօղոս յասելն. «Ապա յետ երից ամաց ելի յերուսաղէմ տեսանել զՊետրոս . . . զայլ ոք յառաքելոց անտի ո՛չ տեսի, բայց միայն զՅակոբոս զեղբայրն տեսան». *Գաղ. ա. 18. 19:*

Ոչրեմն առաքելոց մէջ մեծ պատիւ ունեցաւ երանելիս այս Յակոբոս, լինելովն ա-

ուաչին եպիսկոպոսապետ Քրիստոսական մայր
 աթոռոյն Երուսաղէմի, վասն զի ամեն սրբա-
 զան առաքեալները եւ հաւատացեալները
 կը ճանաչէին սուրբ Երուսաղէմը մայր ա-
 թոռ Քրիստոսական սուրբ հաւատոյ, որով-
 հետեւ նախ Երուսաղէմի մէջ Քրիստոնէ-
 ութիւնը՝ եւ Աւետարանն փրկութեան քա-
 րոզեցաւ, եւ Յիսուս Քրիստոս մեր փրկու-
 թեան շնորհը այն տեղէն տարածեց, եւ այն
 տեղը ինքնին քարոզեց, եւ իրեն առաջին ե-
 կեղեցին այն տեղը հաստատեց, եւ Քրիստո-
 նեութիւնը անկէց տարածեցաւ ընդ ամե-
 նայն աշխարհ եւ յամենայն ազգս. այս ամե-
 ններ կուզե՞ս աղէկ լսել եւ իմանալ, կարդա՛
 Լատինացւոց Եկեղեցւոյն Օգոստինոս մեծ
 վարդապետին գիրքը՝ որ յաղագս խաղաչին
 Աստուծոյ, յորում կը գրէ. «Ըստ մարգարէ-
 ութեանն բանի, ՚ի սիօնէ ելցեն օրէնք, եւ
 բան տեառն Յերուսաղէմէ. Եւ. բ. Յ: Զոյգ
 բերի եւ Քրիստոսի տեառն կանխասացու-
 թիւն. յորժամ զկնի յարութեանն ՚ի զար-
 մանալ ընդ նա աշակերտացն, եբաց զմիտս
 նոցա իմանալ զգիրս, եւ ասէ ցնոսա, թէ
 այսպէս պարտ էր շարշարիլ Քրիստոսի եւ
 յառնել ՚ի մեռելոց յաւուր երրորդի, եւ
 քարոզել յանուն նորա ապաշխարութիւն եւ

Թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկըսեալ յԵրուսաղեմէ: Եւ յորժամ դարձեալ յաղագս յետին գալստեան նորա հարցանելով աշակերտացն, պատասխանեալ ասաց. Ո՛չ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս՝ զոր Հայր եղ յիւրում իշխանութեան. այլ առջի՛ք զօրութիւն ՚ի հասանել Հոգւոյն սրբոյ ՚ի վերայ ձեր, եւ եղիջի՛ք ինձ վկայք Յերուսաղէմ, եւ յամենայն հրէաստանի եւ ՚ի Սամարիա եւ մինչեւ ՚ի ծագս երկրի: Վասն որոյ Յերուսաղեմէ զառաջինն ծաւալեցաւ Եկեղեցի, եւ բազմաց հաւատալով ՚ի հրէաստանի եւ ՚ի Սամարիա, բացաւ ճանապարհ եւ առ այլ ազգս. նոցին իսկ պատմելով զաւետարանն՝ զորս Քրիստոս ինքնին իբր լուսաւորս ոմանս հրահանգեալ էր բանիւ, եւ Հոգւովն սրբով վառեալ»։ Ըստ Բ. Գրքի Ժր. Գլ. 2: Եւ ասանկ ալ Սարգիս շնորհալին Երուսաղէմի մէջ հաւատացելոց նախկին ժողովը մայր եկեղեցի կանուանէ՝ յասելն. «Զոր մարգարէն ՚ի հեռուստ տեսեալ՝ հիանալով ասէր. ո՞ ետես՝ ո՞ լուաւ, եթէ երկնեաց երկիր ՚ի միում աւուր՝ եւ ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն. քանզի երկնեաց սիրովն մայր եկեղեցի՝ եւ ծնաւ ո՛չ ազգ մի ողջոյն միայն, այլ զամենայն ազգս միանգամայն»։

ա. ՊԵՊ. ՏՈՒՐ Գ. 128: Այս վերոգրեալ հաստատուն վկայութիւնները կը կնքէ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր յասելն. «Արդ կատարեցաւ յառաջաձայնութիւնք մարգարէութեանցն նոքօք, թէ յաւուր յայնմիկ ասասցեն հազարապետքն Յուդայ ՚ի սիրտս իւրեանց, թէ եկա՛յք գտցու՛ք մեզ զբնակիչս Երուսաղէմի ՚ի տէր ամենակալ Աստուած նոցա: Զի նախ անդէն իւրեանց ազգին ետուն զգիտութիւն, եւ անդուստ Յերուսաղէմէ բաշխեցան ընդ ամենայն տիեզերս Աստուածպաշտութիւն» ԱԳՄԲ. ԵՐ. 242:

Ուրեմն Պետրոս սրբազան առաքեալը գրուի առաքելոց կանուանի, չէ՛ թէ միւս սրբազան առաքեալներէն առաւել իշխանութիւն մը եւ կամ գերազանց առաքելական շնորհք մը Յիսուս Քրիստոսէն ունենալով, այլ առաքելոց դասկարգութեանը դասագլուի համարուելով, եւ անոնց երկոտասան անուններուն սկզբնաթիւր ըլլալով՝ յատուկ պատիվ նախագահութեան առաքելոց մէջ ունեցաւ. ըստ այնմ՝ «Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ, առաջին Սիմոն՝ անուանեալն Պետրոս եւ Անդրէաս եղբայր նորա, Յակոբոս զբեբեղեայ եւ Յօհաննէս եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բար-

թուղիմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս ալփեայ, եւ Ղէբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս, Սիմովն կանանացի եւ Յուդա իսկարիովտացի՝ որ եւ մատնեաց գնա»։ Մատթ. Ժ. 2: Այս առաքելոց անուններուն կարգին առաջին ըլլալը՝ Պետրոս առաքելոյն մեծ պատիւ համարելով սուրբ Գրիգոր նարեկացին, կը գրէ. Սկզբնաթիւն եւ նախամեծարն, վէմն հաստատեալ եւ արձանն հիմնեցեալ . . . ընտրեալն եւ փառաւորեալն Կեփաս» Ի ներ. առա:

Եւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր սոյն Պետրոսի առաքելոյն գլխաւորութիւնը ըստ բանի աւետարանին առաքելական անուանց շարադասութեանը սկզբնաթիւ ըլլալէն առնելով՝ եւ անոնց ամենուն մէկ հաւասար իշխանութիւն եւ զօրութիւն առաքելութեան ցուցունելով՝ քարոզեց. «Արդ Քրիստոսագունդ եւ խաչակիր առաքելոցն, որոց գլխաւորն Պետրոս եւ Անդրէաս, Յակոբոս եւ Յօհաննէս, Փիլիպպոս եւ Բարթուղիմէոս . . . եւ այլք եւս որ նմանեցին սոցա, որք եւ եօթանասունքն եւս: Որք առին իշխանութիւն ՚ի տեառնէ՝ գնալ ՚ի վերայ իժի եւ քարբի, եւ կոխել զզօրութիւն թշնամւոյն. լինել լոյս երկրի եւ համեմել յաղել

զանկարգութիւն չարաթեան անգիտութեան մարդկան աղիւն Աստուածութեան Հոգւոյն սրբոյ»։ ԱԳաԹ. էր. 251: Զոր օրինակ՝ ամեն տիեզերական օրինաւոր ժողով՝ պիտի ունենայ հարկաւ իրեն մէջը մէկը գլխաւոր նախագահ, որ ժողովոյն մէջը համաձայնութիւնը ՚ի խնդիրս հաւատոյ քննութեան եւ իրաւաբանութեան պահուի, եւ նախագահը պիտի առաջարկէ քննելի խորհուրդը, եւ ամնուն հաճութեամբը եղած վճռոյն ինքն ալ պիտի ստորագրէ յառաջ քան զամենայն, այսպէս ալ Սրբազան առաքելոց ժողովոյն մէջը գլխաւոր նախագահ կարգեցաւ սուրբ առաքեալն Պետրոս, բայց ամենքը հաւասարապատիւ էին առաքելական իշխանութեան մէջ, ասոր համար կը վկայէ սուրբն Կիպրիանոս ՚ի բանս միութեան Եկեղեցւոյ, ԳԻՐԷ Բ. «Արդարեւ այն ինչ էին այլ առաքեալք, որ ինչ եղեւ եւ Պետրոս, հաւասար ընկերակցութեամբ եւ իշխանութեամբ պերճացեալք, այլ սկիզբն ՚ի միութենէ յառաջանայ, եւ գլխաւորութիւնն տուեալ լինի Պետրոսի»:

Այս սրբազան Պետրոս առաքեալը իրեն նախագահութեան եւ գլխաւորութեան պաշտօնը յայտնի ըրաւ զկնի համբարձմանն Քր-

րիստոսի ՚ի մէջ ժողովոյն առաքելոց, որոց առաջարկեց այս խնդիրը, որ կորուսեալ Յուդային տեղը ընտրուի արժանաւոր մէկը, եւ կատարեալ ըլլայ առաքելոց երկոտասան թիւը. «Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ. եւ էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր եւ քսանից. ա՛րք եղբարք՝ պա՛րտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ՚ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի, որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի. զի ՚ի թիւս մեր էր՝ ընդ մեզ, եւ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ» Գործ. ա. 15: Այսպէս ալ զկնի շնորհաբաշխ գալստեան սուրբ Հոգւոյն Աստուծոյ սրբազան առաքելոց ժողովոյն մէջէն առաջին քարոզող ճշմարտութեան եղաւ գլխաւոր առաքելոց Պետրոս, որպէս գրի «Յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն ամբարձ զձայն իւր, եւ խօսեցաւ ընդ նոսա, ա՛րք հրէաստանեայք՝ եւ որք բնակեալ էք Յերուսաղէմ ամենեքին. այս ձեզ յայտնի լիցի՝ եւ ունկն դի՛ք բանից իմոց». Գործ. բ. 14:

Ինչպէս որ այս պատիւը գլխաւորութեան Պետրոս առաքելոյն, առաքելոց ժողովոյն մէջ չի ցուցըներ գերագոյն իշխանութիւն մը գա-

տաբար, եւ մեծութիւն մը շնորհաց եւ փառաց միւս սրբազան առաքեալներէն առաւել, այսպէս ալ օրինաւոր յաջորդները Պետրոս առաքելոյն՝ արդարեւ շունին ամենեւին զատաբար հոգեւոր իշխանութիւն մը միւս առաքելոց օրինաւոր յաջորդներէն առաւել. այլ միայն նախագահ պիտի հանդիսանան օրինաւոր տիեզերական ժողովոց մէջ. բայց նախագահը եւ ամեն ժողովական եպիսկոպոսապետները եւ եպիսկոպոսները եւ երէցները պիտի հնազանդին լրութեան տիեզերական ժողովոց սահմանադրութեանը՝ տնօրինմանը՝ եւ վճռոյն. եւ ո՛չ եթէ նախագահին կամքէն կախումն ունենալով՝ անոր պիտի հնազանդին՝ թէ այնպիսի տիեզերական ժողովոց մէջ, եւ թէ առանձին իրենց Եկեղեցւոյն մէջ. քանզի ամեն մէկ ուղղափառ ազգի եկեղեցւոյ քահանայապետները զատ զատ իրենց եկեղեցւոյ մէջ ունին առանձին իշխանութիւն իրաւաբանելու, եւ հաւատոյ խնդիրներու մէջ սուրբ գրոց եւ տիեզերական ժողովոց կանոնադրութեանց համեմատ վճռելու եւ բարեկարգութիւնս եկեղեցւոյ սահմանելու, ասոր համար սուրբն Կիպրիանոս կը գրէ. «Մի միայն է եկեղեցի ՚ի բազում անդամս բաժանեալ, եւ մի միայն հո-

վուուրթիւն տուեալ բազում հովուաց, որք համաձայն են ՚ի վարդապետութիւնս հաւատոյ: (Ի Բո—ղէն առ Բիբլիանոս): Եւ Կղեստիանոս պապ ՚ի հինգերորդ դարուն առ եպիսկոպոսունս Լիւրիկեցոց կը գրէ այսպէս. «Մեք ամենեքին պարտաւոր եմք պահել հանդերձ ամենայն զգուշութեամբ զկանոնսրն, եւ ո՛չ իշխել ՚ի վերայ նոյն կանոնաց, որովհետեւ պարտական եմք անխախտ պահել զհրամանս այնոցիկ ժողովոց»:

Ասոր պէս ալ Աղաբիդոս պապ ՚ի վեցերորդ դարուն առ Կեսարիոս եպիսկոպոս Արլետայ կը գրէ. «Հա՛րկ է մեզ պահել անփոփոխ զայն ամենայն, որ ինչ յիշխանութենէ ժողովոցն սահմանեցան»։ Ասոնցմէ առաւել ազդու կը գրէ Մարտիանոս պապը եօթներորդ դարուն. «Մեք եմք ճշմարիտ վերակացուք եւ ստոյգ պահապանք սրբազան կանոնացն, եւ ո՛չ թիւրութեամբ եւ շարաշար կերպիւ արհամարհողք, եւ առ ոտն հարկանողք զայնոսիկ կանոնս. վասն զի գիտեմք՝ թէ որք զայնպիսիսն առնեն, ընդունելոց են զպատիժ ըստ արժանեաց իւրեանց»:

Այսպէս խօսողները իրենք իրենց գլխոյն չեն խօսեր, այլ Պետրոս սրբազան առաքեալը իրենց յատուկ հեղինակ առած են, որ կը գրէ.

«Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երիցակից եւ վկայ շարշարանացն Քրիստոսի», ա ՊԷԳ. ե. 1:

ԳԼՈՒԽ ԺԸ

Այս գլխոյն մէջը թո՛ղ բազմաց այս մէկ տարակուսութիւնն ալ բացայայտ ըլլայ, որ կը լսուի շատերուն բերնէն, այսինքն, թէ որ Յիսուս Քրիստոս հովուապետը իրեն սրբբազան առաքեալներուն հոգեւոր հովուութեան իշխանութիւնը հաւասարապէս տրվաւ, եւ ամենքն ալ փոխանորդ Քրիստոսինոյն ճշմարիտ հովուապետին ըսուեցան, եւ ունեցան հաւասար իշխանութիւն արածելու Քրիստոսի սեպհական հօտը, այսինքն հաւատացեալները, եւ անոնց օրինաւոր յաջորդներն ալ ունին այս հոգեւոր հովուութեան իշխանութիւնը արածելու եւ պաշտպանելու ուղիղ վարդապետութեամբ, ապա ինչո՞համար Յիսուս Քրիստոս յարութիւն առնելէն վերջը՝ միայն Պետրոս առաքելոյն հարցուց, «Սիմոն յովնանու սիրե՞ս զիս», եւ անոր առանձին այս հրամանը ըրաւ, «արածեա ըզգառինս իմ»: Ինչպէս կը գրէ սրբազան ա-

ւետարանիչն Յօհաննէս. «Ասէ ցՍիմոն Յիսուս. Սիմոն յովնանու՝ սիրե՞ս զիս առաւել քան զդոսս. ասէ ցնա. այո տէր, եւ դու գիտես զի սիրեմ զքեզ, ասէ ցնա՝ արածեա՛ զգառինս իմ». Յօժ. իա. 15: Այս հարցումը եւ այս հրամանը Յիսուս Քրիստոս երեք անգամ ալ կրկնեց, ինչպէս կը գրէ սրբազան աւետարանիչը:

Այդ՝ չէ՞ որ Յիսուս Քրիստոս յառաջագոյն ամենուն հրամայելով՝ տրվաւ այս իշխանութիւնը՝ ըսելով. «Երթա՛յք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի», Մատթ. Ժ. 6: Եւ զկնի յարութեանն եւս ամենուն հրամայեց. «Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի» Մատթ. իը. 18: Եւ չէ՞ որ այս հովուութեան իշխանութիւնը ամեն առաքեալները հաւասար ունենալնուն համար՝ եւ անոնց օրինաւոր յաջորդներն ալ նոյն հոգեւոր հովուական իշխանութիւնը կատարեալ ունենալնին գիտնալով, ամենուն հաւասար կըսէ Պօղոս առաքեալ. «Զգո՛յ՛ջ

կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ տեսուն, զոր ապրեցոյց արեամբ իւրով»։ Գործ. ի. 28:

Այս վկայութիւնները բաւական կը համոզեն ամենքս՝ որ սրբազան առաքեալները համաշափ եւ համապատիւ իշխանութիւն առաքելութեան եւ հոգեւոր հովուութեան ունէին, եւ անոնց օրինաւոր յաջորդներն ալ նոյն իշխանութիւնը ունին ըստ կոչման եւ ներգործութեան ամենաբաւական շնորհաց սուրբ Հոգւոյն Աստուծոյ: Կը մնայ այժմ գիտնալ, որ ինչո՞ւ համար Յիսուս Քրիստոս առաջի ամեն առաքելոց յատկապէս Պետրոս առաքելոյն կը հարցունէ. «Սիմոն յովնանու՝ սիրե՞ս զիս առաւել քան զդոսս»: Ըսել է՝ ո՞վ Պետրոս, ինձի կը սիրե՞ս մի այս աշակերտներէս աւելի. Պետրոս առաքեալն ալ պատասխան կուտայ Յիսուսի ըսելով. Ո՞վ տէր Յիսուս՝ այո՛ կը սիրեմ ես զքեզ, ինչո՞ւ ինձի կը հարցունես, դուն ամենը գիտես, եւ ամենուն սրտին մէջ եղած ծածուկ խորհուրդներն ալ գիտես. Յիսուս ալ անոր հրամայելով՝ կըսէ, «Արածեա՛ զոչխարս իմ» իմ բանաւոր ոչխարներս, այսինքն՝ հաւատացեալները հովուէ՛ պաշտպանէ՛ եւ խնամէ՛ հաւա-

տոյ ուղիղ ճշմարիտ վարդապետութեամբ:

Ի՞նչ մէկ նոր իշխանութիւն մը Յիսուս Քրիստոս առանձին Պետրոս առաքելոյն տրվա՞ւ մի ըսենք արդե՛օք, ոչ, չեմք կարէր անհիմն խորհրդածութիւններ ընել՝ բացայայտ երեւցած աւետարանին խորհրդական մտքին դէմ: Վասն զի Յիսուս երեք անգամ հարցուց Պետրոսի՝ թէ սիրե՞ս զիս, «Ասէ ցնա երիցս անգամ, Սիմո՛ն յովնանու՞ սիրե՞ս զիս, տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ սիրե՞ս զիս»: Յիսուսի այս երեք անգամ հարցունելուն խորհրդական միտքը հասկըցաւ Պետրոս առաքեալը, անոր համար տրտմեցաւ, իմացաւ Պետրոս՝ որ Յիսուս Քրիստոս կը կամի յիշեցուցանել իրեն այն կամաւոր եւ փրկարար շարչարանաց գիշերուան երեք անգամ սոսկալի ուրացութիւնը՝ ընդ դէմ անչափ եւ գորովական սիրոյն. Մար. իգ. 75: Ահա՛ այս երեք ուրացութիւնը իրեն յիշելով՝ տրտմեցաւ Պետրոս, այսինքն նորոգեցաւ իրեն դառն լալագին զղջման եւ ապաշխարութեան խորունկ տրտմութիւնը իւր սրտին մէջը:

Ուրեմն Պետրոս առաքեալ իրեն ուրացութեամբը Յիսուսէ Քրիստոսէ առած հոգեւոր հովուութեան եւ առաքելութեան իշ-

խանութեանը պակասութիւն մը բերած էր, անոր համար Յիսուս իրեն ներողական սիրովը կամեցաւ, որ այն պակասութիւնը եւ յետնութիւնը Պետրոսի վրայէն մաքրուի ու զօրանայ, որ նոյն հոգեւոր հովուութեան եւ առաքելութեան իշխանութիւնը ՚ի գործ դրնէ. վասն որոյ կը հրամայէ երեք անգամ. արածեա՛ զգառինս իմ ... արածեա՛ զոչխարս իմ . . . արածեա՛ զոչխարս իմ . . . Յօ՛ւ. իա. 15. 16. 17: Այս մտօք կերգէ Եկեղեցին մեր այս տուն շարականը սրբոյ Ներսէսի շոնրհալուոյն. «Այսօր զվէմն հաւատոյ շարժեալ փորձողին խաբէութեան մարտ, առ ՚ի քէն թողացուցեալ զմարդկային տկարութիւնս յանդիմանելով առ յոյս դարձի մեղաւորաց, որ դառնապէս արտասուելովն ընկալաւ ՚ի քէն երիւք հարցմամբ սիրոյն զերից ուրացութեանցն զբժշկութիւն»: Եւ նոյնն ՚ի գիրս Յիսուս որդի. «Եւ նորաստեղծ՝ հաց առնելով, զիւր յարութիւնն ստուգելով. զՊետրոս երիցս՝ հարցանելով, զուրացութիւնն քաւելով»: Ասանկ ուղիղ մտօք խորհրդածութիւն կրնեն ամեն ճշմարտասէր մեկնիչները, որոց հետեւելով եւ Հ, Գաբրիէլն աւետիքեան ՚ի մեկնութեան շարակառն կը գրէ, «Ըստ սրբում եւ Պետրոս դառ-

նապէս լալովն՝ ա՛ռ զթողութիւն, եւ յետոյ երեք հարցմամբ սիրելոյն զՔրիստոս՝ ընկալաւ զբժշկութիւն երից ուրացութեանցն՝ յանդիման այլոց աշակերտաց», Էր. 241: Եւ Ստեփաննոս ազոնց Աբբայն Մխիթարեանց գրէ ՚ի տեսութեան նոր կտակարանի. «Եւ ինքն տէրն ետ սրտին (Պետրոսի) ճշմարիտ եւ կատարեալ զղջումն, եւ քաւեաց եւ կանգնեաց զգլորեալն, եւ հաստատեաց ՚ի գերբնական սէր իւր, որպէս եւ լիով ինքնին յայտարար յետ յարութեան», Էր. 359:

Թէ որ այս կատարեալ ներողութիւնը Յիսուս Քրիստոսէն առած չըլլար Պետրոս առաքեալ արտասուօք, զղջմամբ, եւ ապաշխարանաց տրտմութեամբ, առաջի միւս առաքելոց համարձակութիւն պիտի չունենար քրիստոնէական հաւատոյ քարոզութիւնը ընելու, եւ առաքելութեան պաշտօնը վարելու, եւ այս յայտնի հրապարակական ներողութեամբն Յիսուսի Քրիստոսի առաքեալներն ալ համոզուեցան, թէ Պետրոս առաքեալ սրտով ուրացած չէր զՅիսուս Քրիստոս, այլ երկիւղէն բռնադատեալ. վասն որոյ միւս սրբազան առաքեալները իրենց երկբայութիւնը եւ գայթակղութիւննին Պետրոս առաքելոյն վրայէն վերցուցին, եւ ամենքը

հաստատեցան մտօք, այսինքն ապահով եղան՝ որ Պետրոս ալ իրենց պէս սիրելի եւ հաւատարիմ առաքեալ է Յիսուսի Քրիստոսի. ինչպէս յառաջագոյն Յիսուս Քրիստոս ալ յայտնի ըրած էր, որ կանխաժաման Աստուածային շնորհքը պիտի օգնէ Պետրոսի՝ որ հաւատքը հաստատ մնայ այն ակամայ ուրացութեանը մէջ. յասելն. «Սիմո՛ն Սիմո՛ն՝ ահա՛ սատանայ խնդրեաց զքեզ խարբալել իբրեւ զցորեան, այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցին հաւատք քո. եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քո», Գ.՝. իբ. 31:

Ապա նախ սրբազան առաքեալները հաստատեցան Պետրոսին ակամայ եւ ո՛չ սրտիւ ուրանալոյն վրայով. եւ ապա Պետրոս համարձակ սկսաւ իրեն առաքելութեանը բարձրր պաշտօնը վարել՝ Յերսուսաղեմէ սկսեալ մինչեւ ՚ի Հռոմ. եւ անդ ՚ի գլուխ հանելով իւր առաքելութեան պաշտօնը զԵկեղեցիս հաստատելով, մարտիրոսական մահուամբ նահատակուեցաւ յաւուրս Ներոնի կայսեր ըստ վկայութեան բազում արժանահաւատ սրբազան գրչաց՝ եւ Եկեղեցւոյ հաւատարիմ աւանդապահից, որպիսիք են սուրբն Դիոնեսիոս արիսպագացին աշակերտ Պօղոսի առաքելոյն

'ի թուղթն առ Տիմոթէոս աշակերտակիցն
 իւր, որ ունի վերնագիր զայս. «Թուղթ Դի-
 ոնեսիոսի արիսպագացւոյ առ Տիմոթէոս ա-
 շակերտն Պօղոսի վասն մահուանն Պետրոսի
 եւ Պօղոսի». որուն մէջ շատ տրտմալի եւ ող-
 բերգական խօսքերէն յետոյ, կըսէ, «Երանի՛ է
 Հոռոմայ, որ արժանի եղեւ մեծի պարգեւաց.
 Ճշմարիտ է Երուսաղէմ, նոյնպէս եւ Հոռոմ.
 քանզի նա սպան զՔրիստոս, իսկ սա զԱռաք-
 եալսն նորա, նա երկրպագէ Խաչելոյն, իսկ
 սա տօնէ զԱռաքեալսն:». 'ի Տառնդիրն Չէ:
 Սուրբն Յօհան ոսկեբերան 'ի Տառնն Պեպրոսի
 է- Պօղոսի գրէ. «Չեն այնպէս ջահք պայ-
 ծառ, յորժամ արեգակն զճառագայթս ար-
 ձակիցէ, որպէս Հոռոմայեցւոց քաղաքն, որ
 ունի զայնպիսի դամբարս, որք ընդ ամենայն
 տիեզերս արձակեն զճառագայթս, անտի յա-
 փշտակի Պօղոս, եւ անտի Պետրոս»: Եւս
 սոյն Յօհան ոսկեբերան 'ի ներքոյ սրբոյն Իգ-
 նապիոսի աստուածագգեաց արքեպիսկոպոսի
 Անտիոքայ՝ 'ի Հոռոմ վկայելոյ՝ գրէ. «Նորին
 աղագաւ եւ Պետրոս՝ եւ Պօղոս՝ եւ սոցա
 զկնի եւսա, անդանօր առ հասարակ պատա-
 րագեցան. զէ զքաղաքն պղծեալ յարիւնս
 կոռցն՝ իւրեանց արեամբքն մաքրեսցեն».
 Ոս. Տառ. Լապոր բ. էր. 50:

Եւ սուրբն Կիւրեղ Երուսաղէմի հայրապետն ՚ի գիրս Կոշո-մն ընծայո-թեան գրէ Հր-նովմայ մէջ ՚ի միասին գտնուելնին սրբազան Առաքեալները Պետրոս եւ Պօղոս, եւ ասոնց աղօթքովը այն ամենապիղծ Սիմոն կախարդը՝ Ներոն կայսեր առջեւը խայտառակեալ շարաշար սատակեցաւ, վասն որոյ կըսէ, «Ամենայն հերետիկոսութեանց գտակ Սիմովն կախարդ, Սիմովն այն՝ որ ՚ի գործս առաքելոցն զանվաճառ շնորհս հոգւոյն վաճառաւ արծաթոյ դնել կամեցաւ, եւ լուաւ՝ զի ասացին, ասէ: Ո՛չ գոյ քեզ մասն եւ բաժին ՚ի բանիդ յայդմիկ, այլովքն հանդերձ: Սա եկն եհաս ՚ի կողմանս հռովմայեցւոց ՚ի Հռովմ քաղաք, յետ առաքելոցն անարգելոյ զնա: Եւ յոյն մի պոռնիկ Լուսին անուն ընդ իւր առեալ ածէր վատ անուամբ: Նա իշխեաց ասել զանձն իւր, թէ իցէ այն՝ որ ՚ի Սինէական լերին անդր իբրեւ զՀայր երեւեցաւ: Դարձեալ առ հրէիւքն այլ ոմն ո՛չ մարմնով՝ այլ կարծեօք իբրեւ զՔրիստոս Յիսուս երեւեալ, եւ յետ այսորիկ իբրեւ ոգի սուրբ ՚ի Քրիստոսէ զբարեխօսն արձակել խոստացեալ: Եւ յայնպիսի մոլորութիւն խաբէութեան դարձոյց զքաղաքն հռովմայեցւոց, մինչեւ Կղաւղիոս արքայ անդրի

պատկեր կանգնէր նմա, եւ գրէր առ պատկերի անդ հռովմայեցւոց լեզուովն, Սչմնի րէի «անթօ» որ թարգմանեալ կոչի Սիմոնի սրբոյ Աստուծոյ: Մինչդեռ յերկարէր տիրէր մոլորութիւնն, բարեաց լծակիցք եւ ամուլքն Պետրոս եւ Պաւղոս գլխաւորք Եկեղեցեաց հասեալ, . . . եւ պերճացեալ կարծեալ Աստուածն թուլացեալ անկեալ մեռեալ ցուցանէին: Զի խրոխտացեալ յանձն առեալ էր Սիմովնին յերկինս ելանել, եւ արդէն նոցունց առաջի ՚ի կառս ելեալ զօրութեամբ դիւաց ընդ ամպս ՚ի վերայ օդոց շրջէր: Ապա ծունր եդին երանելի առաքեալքն Քրիստոսի, եւ զմիաբանութեանն զհաստատութիւն յայտնի արարին՝ զոր ասացն Յիսուս. եթէ երկու ՚ի ձէնջ միաբանեսցեն, ասէ, վասն ամենայն իրաց զի՛նչ եւ խնդրեսցեն, լինիցի նոցա: Զհաւասարութեան զնետն աղօթիւք ՚ի վեր արձակեցին, եւ անդէն յերկնից յերկիր զկախարդն կործանեցին».

Վոչ. ընթ. էր. 101:

Վասն այսորիկ ամեն ազգաց վկայութեանց մէջ աներկբայելի գրուած է, որ Պետրոս եւ Պաւղոս ՚ի հռովմ մարտիրոսական մահուամբ կատարեցան յաւուրս Ներոնի կայսեր, պատճառն ալ կը ցըցընեն ամենապիղծ Սիմոն մո-

զին կործանումը, գրելով համաձայն այսպես. «Սուրբ առաքեալն Պետրոս ելեալ Յերուսաղեմէ՝ ՚ի քարոզել զբանն Աստուծոյ յերկրի՝ գնաց ՚ի Կապադովկիա եւ ՚ի Գաղատիա՝ ՚ի Պոնտոս եւ ՚ի Բիւթանիա, եւ ապա ՚ի Հռովմ ընդ Պօղոսի: Գտին անդ ըզՍիմոն կախարդն, որ զարմացուցանէր մոգութեամբն իւրով զժողովուրդս հռոմայեցւոց. ասէր զանձնէ իւրմէ եթէ ես եմ Քրիստոսն: Եւ ասէին հռովմայեցիքն վասն Սիմոնի ցՊետրոս առաքեալն՝ եթէ մեծ ոմն իցէ, եւ առնէ նշանս՝ եւ հաւանեցուցանէ զժողովուրդն: Իսկ սուրբ առաքեալքն Պետրոս եւ Պօղոս առաջի ամենայն բազմութեանըն խայտառակեցին զնա անուամբն Քրիստոսի, եւ որ ամբարտաւան մտօք ՚ի բարձրութիւնս երկնից թռչէր՝ անկաւ գլխակոր եւ յերկիր կործանեցաւ. եւ յամօթ եղեն ամենայն հետեւողք նորա: Եւ Ներոն արքայ հրամայեաց բարկութեամբ ըմբռնել զՊետրոս, վասն զի բազում ժողովուրդս եւ երեւելի արս եւ չորս հարճս Պռեւեքտոյ դարձոյց ՚ի հաւատն Քրիստոսի Յայնժամ կալան զնա զինուորքն ըստ հրամանի Ներոնի եւ տարան ՚ի խաչ հանել, եւ նա զպատմուճանս եպիսկոպոսութեանն Հռովմայ ետ յա-

շակերտ իւր ՚ի Լինոս. զի նա միայն գնաց
զկնի Պետրոսի». Յայսմա-ո-րան Գէր Իսրայել-
Գոյ. ՚ի պօլիս. Եր. 275:

Ասոնց պէս մեր սուրբ հարք ալ կը վկայ-
են Պետրոսի եւ Պօղոսի քարոզելը եւ նահա-
տակիլը ՚ի Հռովմ. որպէս սուրբ վարդապետն
մեր քերթողահայր Մովսէս խորենացին կը
գրէ ՚ի պատճառն ճանապարհորդութեանն
Հռովմ երթալը, եւ ասէ. «նաւել յելլա-
դայ կամելով, յիտալիա բռնութեամբ ան-
կաք ՚ի հողմոց, եւ ողջունեալ ՚ի հանգիստ
սրբոցն Պետրոսի եւ Պօղոսի, ո՛չ բազում ՚ի
հոովմայեցւոցն կացեալ քաղաքի». Գեյր՛ բ.
բան կբ: Եւ Սարգիս շնորհալի սուրբ վար-
դապետն մեր կը գրէ Պետրոս սրբազան ա-
ռաքելոյն համար. «Զայն՝ որ առ խաչին
տեառն գլորէր, եւ յարութեամբն իւրով
զամենայն զգլորեալսն կանգնէր. զճշմարիտ
աւետարանիչն՝ եւ զերկնաւոր մշակն, զի-
մաստուն ճարտարապետն, եւ զառանց հիման
շինողն, որոյ ձեռքն հիմունս արկին Եկեղեց-
ւոյ ՚ի մեծն Հռովմ՝ յակն տիեզերաց, ՚ի
յԱնտիոք, ՚ի Դաղմատիա, եւ ՚ի Սպանիա եւ
՚ի կղզիս հեռաւորս. սկիզբն արարեալ ՚ի հրէ-
աստանէ աւետարանել՝ եւ եհաս մինչեւ ՚ի
ծագս տիեզերաց». ա ՊԵՊ. Եր. 181: Եւս

նոյն. «Պետրոս՝ որ քարոզեաց զաւետարանն Յերսուսաղէմ, եւ ՚ի Սամարիա եւ ՚ի Պաղեստինէ եւ յԱնտիոք եւ ՚ի միջերկրեայս եւ ՚ի Հռովմ եւ ՚ի Սպանիա եւ ՚ի կղզիս հեռաւորս: զՊետրոս՝ որ զՍիմոնն կործանեաց՝ եւ զբազումս կործանմամբն նորա յարոյց, որ զփաղանգս այսոցն շարութեան փախստականս արար, որ զհազարապետն նոցա զբանսարկուն յամօթ արար»։ ա ՊԵՊ. ԵՐ. 394: Եւ շնորհալին յողբ՝ Երեմեայ: «Եւ դու Հռովմ մայր քաղաքաց, գերապայծառ եւ պատուելի. մեծին աթոռըդ Պետրոսի, առաքելոց գլխաւորի»:

Ինչու՞ աշխատ կըլլամք այս տեղս յայտնի եւ ամեն ազգաց վկայութեամբ հաստատուած ստուգութիւնը իբրեւ նորէն հաստատելու ջանալ, այսինքն է Պետրոս առաքելոյն ՚ի հռովմ քարոզելը եւ մարտիրոսանալը. որովհետեւ հիմա կը լսուի, եւ կըսեն՝ եւ ոմանք ալ կը գրեն, որ Պետրոս ո՛չ հռովմ գացեր է, եւ ո՛չ ալ այն տեղը քարոզեր է, եւ ո՛չ ալ այն տեղը իրեն վկայութիւնը կատարեր է դառն մահուամբ: Որովհետեւ կըսեն, այդ ամենը բնաւ չիկայ սուրբ գիրքին մէջը. երկբայելի եւ կամ շինծու աւանդութիւն է. ահա՛ այսպէս ըսելով ո՛չ թէ միայն

կը կամին արժանահաւատ անձանց՝ եւ Եկեղեցւոյն հաւատարիմ եւ ընդունելի հարց սրբոց վկայութիւնները մերժել անարգել եւ սուտ հանել, այլ եւ Եկեղեցւոյն քարոզած եւ ընդունած ամեն մէկ աւանդութիւնները մէյմէկ առիթներով անպիտան եւ անընդունելի ցուցընել, որ Եկեղեցւոյն ուղղափառութիւնը խանգարեն՝ տապալեն՝ եղծեն ու տակնուվրայ ընեն, եւ Եկեղեցւոյ ուղղափառ հաւատացեալ ժողովուրդներն ալ գայթակղեցընելով մոլորեցունեն, այս մըտօք կաշխատին մոլորամիտ աղանդաւորները. բայց չեն մտածեր որ աւանդութիւն Եկեղեցւոյ ըսելով չեմք իմանար ազգային կամ ծերոց աւանդութիւնները, որոնց ինչ աստիճան համարում ունենալը աստուածային աւանդութեանց առջեւ, տէրն մեր Յիսուս Քրիստոս հասկըցընել ուզեց ըսելով հրէից. «Անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն». Մար. է. 13: Եւ երբ դպիրքն եւ փարիսեցիքն հրէից ազգէն՝ հարցուցին Յիսուսի՝ եթէ «ընդէ՞ր աշակերտք քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն. զի ո՛չ լուանան զձեռս, յորժամ հաց ուտեն»: Յիսուս ալ անոնց պատասխան տրվաւ. «Իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանան

Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն»,
Մատթ. Ժե. 2. 3:

Ասանկ ազգային եւ ծերոց իշխանաց ազգի աւանդութեան պէս չէ՛ Եկեղեցւոյ անժխտելի աւանդութիւնները, այլ Եկեղեցւոյ աւանդութեանը համար ուղղափառ աստուածաբանները մեզի կը սորվեցընեն (որ աստուածաբանական տեղիքներուն մէկն ալ այս է) Եկեղեցւոյ աւանդութիւնը իրեն սահմանովը ճանաչել եւ ընդունիլ, որուն սահմանը այս կուտան. «Բան՝ կամ հրաման Աստուծոյ անգիր աւանդեալ Եկեղեցւոյն կենդանի ձայնիւ կամ բանիւ՝ յԱստուծոյ կարգեալ պաշտօնէիցն Եկեղեցւոյ հին եւ նոր օրինաց»:

Կը տեսնա՞ս «հրաման կամ բան Աստուծոյ» ըսելով՝ կը համաձայնի սուրբ գիրքերուն հետը, «անգիր» ըսելով՝ միայն գրաւոր բանէն Աստուծոյ կը տարբերի. «կենդանի ձայնիւ յԱստուծոյ կարգեալ պաշտօնէիցն Եկեղեցւոյ հին եւ նոր օրինաց» ըսելով՝ յայտնի կերեցունէ, որ Աստուած խօսել եւ գրել՝ աւանդել սորվեցընել եւ հաստատել կուտար իրեն կողմանէ, իբր միջնորդ կարգելով նահապետները եւ մարգարէները հին օրինաց ժամանակը. ըստ այնմ՝

«Բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք», Եֆր. ա. 1:

Այս խօսք եւ բան եւ հրաման Աստուծոյ ամենքը շեղաւ գրով միայն, այլ եւ աւանդութեամբ նահապետաց եւ մարգարէից մէկզմէկու որդւոց յորդիս փախանցանելով՝ պահուեցաւ հին Եկեղեցւոյ Աստուածապաշտներուն մէջը, այս բանիւ աւանդութիւններուն համար գրուած է. «Հարցջի՛ր դու ցհարս քո եւ պատմեսցեն քեզ, ցծերս քո եւ ասասցեն քեզ», Բ օրհն. Ը. 7: Եւ ահա՛ ասանկ բանիւ նահապետներուն եւ մարգարէներուն աւանդութիւնը ցուցունելով՝ կըսէ Դաւիթ. «Որ ինչ միանգամ պատուիրեաց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց իւրեանց, զի ծանիցեն յազգ այլ: Որդիք՝ որք ծնանին, յարիցեն եւ պատմեսցեն զայս որդւոց իւրեանց, զի դիցեն առ Աստուած զյոյս իւրեանց», Սաղ. հէ. 6:

Անանկ է նէ՝ Աստուծոյ հրամանը եւ բարերար կամաց հաճութիւնը ո՛չ միայն գրաւոր, այլ եւ բանիւ ալ աւանդեցաւ հին Եկեղեցւոյ աստուածապաշտներուն մէջը, որ այս աստուածատուր աւանդութիւնը մերժող եւ շընդունողներուն համար ալ կը գրէ

Դաւիթ. «Ազգ չար եւ դառնացող, ազգ՝ որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր, եւ ո՛չ հաստատեաց առ Աստուած հոգի իւր»։ Սաղ. հէ. 9։ Ըսել է՝ որ այն Աստուծոյ հրամանաց եւ խնամոց բարերարութեան աւանդութիւնները մերժեցին, եւ չ'կամեցան ընդունիլ՝ եւ սիրտերնուն մէջը հաստատ պահելու փոյթ չունեցան։

Ինչպէս հին Եկեղեցւոյ նահապետներուն եւ մարգարէներուն ժամանակը, ասանկ ալ նոր օրինաց Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ կայ Աստուածային գրաւոր եւ անգիր աւանդութիւն։ Ապա Եկեղեցին առաքելներուն թէ գրաւոր բանիւ եւ թէ անգիր բանիւ փոխանցած աւանդութիւնները պիտի ունենայ, որ ըսուի առաքելական Եկեղեցի. եւ ամեն ուղղափառ ազգաց եկեղեցիները կը տեսնաս՝ որ անգիր աւանդութիւնները իբրեւ մասն հաւատոյ ճանաչելով՝ հաւատարիմ աւանդապահ կը հանդիսանան։ Եւ անոնցմով հաստատ եւ անշարժ մնացեր են, եւ կը մնան հաւատոյ ճշմարտութեան մէջ։ Որ եւ առաքելոց ալ փոյթը այս էր, որ Եկեղեցին հաւատարիմ ըլլայ առաքելական աւանդութիւնները պահելու վրայով. ըստ այնմ. «Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն՝ աւանդէին

նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն եւ յերիցանցն՝ որք յԵրուսաղեմ: Եւ Եկեղեցիքն հաստատէին ՚ի հաւատս, եւ յաւելուին ՚ի թիւն հանապազօր»։ Գործ. Ժգ. 4: Ասոր համար է՝ որ Պօղոս առաքեալը կը գովէ Կորնթացւոց Եկեղեցին, որ իրեն առանց գրոյ՝ միայն բանիւ աւանդած հրամանները եւ խրատները կը պահեն հաստատուն. «Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք, եւ որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդուիլինսն ունիցիք»։ ա Աորն. Ժա. 2: Եւ Յակոբոս առաքելոյն եղբայրը Յուդա առաքեալը աղաչելով կը գրէ, որ փոյթ ունենան հաւատացեալները աւանդուիլինները հաստատուն պահելու. «Սի՛րելիք . . . հարկ յանձին կալայ գրել ձեզ եւ աղաչել՝ զի ճգնիցիք ՚ի վերայ հաւատոցն, որ միանգամ աւանդեցաւ սրբոց»։ Յոր. ա. 3: Եւ այս առաքելական աւանդուիլինները մերժողներուն՝ շրնդունողներուն՝ եւ կամակոր մոլորեալներուն համար կը գրէ Պետրոս առաքեալ. «Լա՛ւ էր նոցա եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ. քանզի ծանեան եւ յետս կացին ՚ի սուրբ պատուիրանէն, որ նոցա աւանդեցաւ»։ ԲՊ. Բ. 21:

Այս աւանդութիւնը շատ բաժանմունքներ ունի. բայց մեք երկուքը միայն դնեմք աստանօր. նախ՝ ասի գրաւոր, այսինքն գրքով աւանդուած. որոնք պիտի գտնամք սուրբ գրոց մէջը, եւ պիտի ըսեմք՝ սուրբ Գիրքը ասանկ կըսէ, եւ կամ ասանկ կը հրամայէ եւ կուսուցանէ, եւ երկրորդն՝ անգիր կանուանի. այսինքն միայն բանիւ աւանդած, որոնք պիտի գտնամք ուղղափառ Եկեղեցւոյն մէջը, եւ պիտի ըսեմք՝ ասանկ կը պատուիրէ մեզի Եկեղեցին, եւ ասանկ կը հրամայէ՝ եւ կուսուցանէ Եկեղեցին՝ եւ կը տօնէ. մեր այս երկու բաժանումին բաւական կը համարիմք միայն Պօղոս առաքելոյն վկայութիւնը՝ որ կըսէ. «Այսուհետեւ եղբարք հաստատուն կացէք՝ եւ պի՛նդ կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ուսարուք, եթէ՛ բանիւ եւ եթէ՛ թղթով մերով». Բ ԹԷ՝ սաղ. բ. 14:

Ուրեմն Հայոց ազգը իրեն սուրբ Եկեղեցւոյն մէջ անփոփոխ պահելով առաքելական աւանդութիւնները՝ սրբազան Հայրապետներուն սահմանած բարեկարգ արարողութիւնովը հաւատարիմ աւանդապահ կը հանդիսանայ. ըստ որում սորված է ՚ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն իւրմէ, եթէ Եկեղեցւոյ աւանդութիւնը լուսաւորութիւն է

հաւատոյ, որ երբ երկրորդ շարշարանաց կախաղանին մէջն էր՝ այս աղոթքը կընէր. «Տուր ինձ տէր զշնորհս համբերութեան դառն տանջանացս՝ որ կտտեն զիս, զի եւ ես արժանի եղէց պահել զաւանդութիւն լուսաւորութեան հաւատոյս՝ զոր ետուր ինձ ճանաչել զքեզ եւ առնել զկամս քո». Ա. Գաթ. Եր. 28:

Ապա ինչպէս յառաջագոյն՝ եւ այսօրուան օրս ալ Հայոց ազգը իրեն աւանդապահ ուղղափառ եւ սուրբ Եկեղեցիովը ուղղափառ եւ բարեպաշտ է, եւ ո՛չ հերձուած է եւ ո՛չ հերետիկոս



ԳԼՈՒԽ ԺԲ

Արդ բազում համարձակութեամբ կըսեմ եւ կըզրեմ, եթէ Հայոց Եկեղեցին շատ մեծ հոգեւոր պարծանքներով եւ գովութեան իրավունք ունի, վասն զի Հայոց Եկեղեցւոյն մէջէն անանկ մէկ սոսկալի հերետիկոսութեան շար սերմն որոման սերմանող մը չելաւ, եւ կամ գլխաւոր հերետիկոսապետ մը եւ աղանդապետ մը չերեցաւ արժանընդունակ աղօթիւք սրբոյ հօրն մերոյ

Գրիգորի լուսաւորչի. ըստ այնմ, «Ի ձեռն առեալ լուսաւորչին զնշխար սրբոյ Կարապետին, շուրջ պարսպեալ զկողմն աշխարհին շնորհօք աշոյ զբանն օծողին. աստ թշնամիք մի՛ զօրասցին, մի՛ հերձուածող աղանդք բուսցին. յերկնից գայր ձայն աստուածային՝ թէ հայցուածք քո կատարեսցին». Ասր:

Բայց մեծամեծ ազգաց լատինացւոց եւ յունաց Եկեղեցիները ժամանակ ժամանակ ո՞րչափ անհնարին նեղութիւններ կրեցին իրենց մէջէն գլխաւոր հերետիկոսապետներ եւ աղանդապետներ ելլալով. անոնց համար չէ՞ր մի՛ որ տիեզերական ժողովքներ գումարուեցաւ, եւ սրբազան առաքելաջան Հայրապետները հեռաւոր տեղերէն գալով ժողովուելով՝ մեծամեծ տագնապներ՝ նեղութիւններ՝ եւ վիշտեր կրեցին. եւ մեծաւ ջանիւք ուղղափառութեան կաշխատէին հերքելու եւ մերժելու այն ամեն հերետիկոսապետներուն եւ աղանդապետներուն մոլորութիւնները եւ աղանդները. որոնցմէ ի՞նչ սոսկալի վէճեր՝ կագ՝ կռիւ՝ եւ խռովութիւն անպատմելի՝ անմիաբանութիւն՝ կողմնակցութիւն՝ անպարտ սպանութիւն՝ եւ վրդովմունք՝ եւ տատամսութիւնք կայսերաց՝ եւ սասանութիւն՝ եւ գայթակղութիւն ժողո-

վրդոց, ինչու՞ համար ես այս փոքր հանդիսարանիս մէջ այն բազմահատոր պատմութիւնները կաշխատիմ նկարագրել, թո՛ղ ընթերցող ուսումնասէր անձինքները կարդան տիեզերական ժողովքներուն ճիշտ պատմութիւնները՝ եւ արժանահաւատ հեղինակներուն եկեղեցական պատմութիւնները, եւ հեռու փախչին հերետիկոսութեան եւ աղանդաւորութեան քարոզիչներէն, որոց վախճանը կը յայտնէ Պետրոս առաքեալ, որ յաւիտենական դատապարտութիւն եւ կորուստ է. ըստ այնմ, «Լինէին եւ սուտ մարգարէք ՚ի ժողովրդեանն՝ որպէս եւ այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սարդեալ մուծանեն հերձուածս կորստեան. եւ զորս տէրն գնեաց՝ զնոսա ուրացեալ՝ ածեն ՚ի վերայ անձանց զարագահասն կորուստ, եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի». Բ. Պէֆ. Բ. 12:

Ապա Հայոց եկեղեցին գովութեան արժանի եղաւ, որ շունեցաւ ասանկ մէկ գլխաւոր հերետիկոսապետ մը եւ աղանդապետ մը. վասն որոյ գովութիւններ կառնէր մէջ ընդ մէջ իրեն յայտնի ուղղափառութիւնը ճանչցողներէն: Որպիսի էր՝ Լուսիոս երրորդ

պապն Հռոմայ, ինչպէս կը պատմէ Վարդան պատմիչ եւ Լամբրոնացին, որ գրեաց գիր առ Գրիգոր կաթողիկոսն մեր այսպէս սկսելով, «Լուսիոս եպիսկոպոս՝ ծառայ ծառայից աստուծոյ, ամենապատուական եղբարց Գրիգոր կաթողիկոսի եւ ամենայն արքեպիսկոպոսաց եւ եպիսկոպոսաց եւ աբբայից որդւոց սիրելեաց՝ եւ ամենայն առաջնորդաց Եկեղեցւոյ, եւ ամենայն կղերիկոսաց, եւ ամենայն լրմանդ Հայոց ժողովոյն: Ողջոյն եւ առաքելական օրհնութիւն քրիստոնէից ամենեցունց միաբանական օրհնութիւն՝ անապական հաւատոյ խոստովանութիւն ո՛չ մարմնոյ եւ արեան յայտնութեամբ, այլ ՚ի Հոգւոյն սրբոյ * * * եւ զձեզ յամբիծ հաւատող զոր ունիք՝ ողջագուրեմք մեծաւ սիրով. եւ լրապէս ուրախ եմք հոգւով եւ մարմնով յամենայն ժամ՝ յորժամ զգիրս ձեր լսեմք, եւ զպատգամաւոր հրեշտակս տեսանեմք, զուարճացեալ լինիմք. զի մեծանայք եւ բազմանայք հաւատով եւ խաղաղութեամբ. որպէս լուաք զամենայն գործոց ձեր ճշմարտութիւն պատմեալ ՚ի ճշմարիտ եղբօրէս մերմէ Գրիգորէ արքեպիսկոպոսէ Փիլիպոսի պօլսոյ, որ է ՚ի ձէնջ առ մեզ առաքեալ, զոր պատուեցաք արժանապէս, եւ յաղագս ձեր

բարեաւ կալոյ՝ փառս տուաք զոհութեամբ աստուծոյ. այնմ, որ ՚ի մէջ անհաւատից եւ անօրինաց ազգաց բիւրս բիւր քրիստոնէից պահէ իւր անուանն երկրպագուս. յաղագս որոյ փառաւորեցաք զնա յերկրի, եւ առաջի հրեշտակաց յաւիտենական խնդութիւն է յերկինս»:

Եւ Ուրբանոս հինգերորդ պապն հռոմայ, որ անաշառ գովութիւն տայ ազգիս Հայոց ողջունելով այսպէս. «Պատուական եղբարց մերոց՝ արքեպիսկոպոսաց եւ եպիսկոպոսաց, եւ այլոց սիրելի որդւոց՝ առաջնորդաց Եկեղեցւոյ եւ հարց վանականաց, եւ երիցանց եւ գղերց՝ եւս եւ աւագ իշխանաց եւ ազնուական անձանց եւ ժողովրդոց՝ ՚ի հանդէս ուղղափառութեան համօրէն ծաղկելոց ՚ի թագաւորութեանն Հայոց ողջոյն եւ առաքելական օրհնութիւն». Պատմ. Հայոց. Հարորդ. Էր. 355:

Եւ Յունաց ազգի Միքայէլ արքեպիսկոպոսն Կոստանդնուպօլսոյ՝ տասն եւ ինն եպիսկոպոսներուն եւ մետրապօլիտներուն ստորագրութեամբը նամակ կը գրէ առ կաթողիկոսն մեր Գրիգոր, ուրախ ըլլալով Հայոց Եկեղեցւոյ ուղղափառութեանը վրայով. «Միքայէլ ողորմութեամբն աստուծոյ արք-

եպիսկոպոս Կոստանդնուպօլսի նոր Հռովմայ
 եւ տիեզերական Պատրիարք. տեառն Գրի-
 գորի սուրբ սիրեցելոյ պատուական Կաթո-
 ղիկոսի ամենայն Հայոց ուրախ լինել ՚ի տէր:
 Ի տէր սիրեցեալ ՚ի մէնջ կաթողիկոս պատ-
 ուական՝ զբանս քո սուրբս բազում անգամ
 լուաք, եւ ողջունեմք ՚ի բացուստ իմացա-
 կանաւ՝ ըստ օրինի տեառն աշակերտաց ող-
 ջունի զառ միմեանս զսէրն եւ զհամաձայ-
 նութիւնս. քանզի զսէրն ունիմք շաղ-
 կապ խառնել եւ յօդել մի մարմին միոյ պատ-
 ուական գլխոյն տեառն եւ փրկչին մերոյ
 Յիսուսի Քրիստոսի. այս մարմին՝ որ երբեմն
 պայծառացեալ եւ զարդարեալ էր յօդիւ սի-
 րոյն, տգեղ երեւիր բաժանմամբն, ՚ի հե-
 ռանալս որոշմամբ եւ բացակայութեամբ մեր
 ՚ի միմեանց, եւ այժմ ընդարձակեցաւ ներ-
 գործութիւն կամաց մեր տեղի տալ եւ ամ-
 փոփել զմիութիւն սիրոյ ձեր յօժարու-
 թեամբ. եւ կամեցաւ հաղորդութեամբ եւ
 միաբանութեամբ բժշկել զվայրապար հար-
 ուածս առաջին բաժանմանն, եւ ՚ի ստափառ
 հակառակութեանցն՝ որ եղեւ ՚ի մի եւ ՚ի
 պատուական մարմինն Քրիստոսի, խորշել եւ
 տեղի տալ, այսիքն՝ զի այլ էր որ առ ձեզ
 իրքն, եւ այլ էր որ առ մեզ վասն նորին համ-

բան: Յաղագս որոյ յաստուատ որ առ մեզ գրոյս առ սուրբ եւ կարող աստուածապսակեալ թագաւորն առաքեցաւ, առ ՚ի ձեր պատուականութենէդ ծանեաք զձեր ուղղափառութիւնդ եւ զյօժարութեամբ խընդրելն զառ մեզ միաւորութիւնն, ուրախ եղեալ զուրախութիւն երկնային զօրացն ըստ աստուածային բանին՝ որ զայս մեզ հրամայեաց եղեալ առ բոլորիցն Աստուած եւ առ հոգեղէնս ամենայն խնդութիւն ՚ի նորա աստուածավայելուչ եւ փրկական խորհուրդրս: . . Յուսամք եւ հաւատամք՝ զի որպէս է իրաւացի եւ աստուածահաճոյ, ՚ի փառս աստուծոյ ձայնակցիմք ՚ի մի Եկեղեցի ամենասուրբ անուանն աստուծոյ հասարակ եւ համախոհ փառատրութեամբ:

Շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի՛ ընդ ձեզ եւ ընդ մեզ. Ամէն:

Միքայէլ ողորմութեամբն աստուծոյ արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսի նոր հռովմայ: Կիւրղոս ողորմութեամբն աստուծոյ Պատրիարք աստուածայնոյ քաղաքին Անտիոքայ: Նուաստ արքեպիսկոպոս մայրաքաղաքին Կեսարու կապաղովկեցւոց Ստեփաննոս: Մետրապօլիտս Առակլէոյ Թէոդորոս: Մետրապօլիտս Կիզիկոյ Յօհաննէս:

Մետրապօլիտս Նիկոմիդեայ Յովհաննէս:
 Նուաստ մետրապօլիտս Մելիտինոյ Յօհաննէս:
 Մետրապօլիտս Նիկիայ Նիկողայոս:
 Մետրապօլիտս Կղօղիոսպօլեաց Յօհաննէս:
 Նուաստ մետրապօլիտս Իկոնիոյ Յօհաննէս:
 Մետրապօլիտս Արակլիոյ Յօհաննէս:
 Նուաստ մետրապօլիտս Մոկիսոյ Լուկաս:
 Նուաստ մետրապօլիտս Ադրիանուպօլսի Գէ-
 որգ:
 Մետրապօլիտս Վլաշիոյ Կոստանդին:
 Նուաստ մետրապօլիտս Կողոնիոյ Թէոդորոս:
 Նուաստ մետրապօլիտս Նազիանզու Թէո-
 դորոս:
 Նուաստ մետրապօլիտս Մէթիմու Թէոդորոս:
 Նուաստ մետրապօլիտս Լակեդեմոնիայ Յօ-
 հաննէս:
 Նուաստ մետրապօլիտս Ապրնացւոց Բասիլիոս:
 Նուաստ արքեպիսկոպոս Դեոկիոյ Միքայէլ»:
 Ընդհ. եր. 109:

Եւս եւ շատ գովութեան եւ երանու-
 թեան արժանի է Հայոց սուրբ Եկեղեցին,
 ո՛չ թէ միայն ազատ մնալովը բազմատեսակ
 հերետիկոսապետներէ եւ աղանդապետներէ,
 այլ եւ լսելով իրեն վրայի եղած զրպարտու-
 թիւնները եւ շարախօսութիւնները՝ ո՛չ կը
 սրտմտի՝ ո՛չ կը վրդովի՝ եւ ո՛չ ալ կը շփոթի.

Թո՛ղ գրեն՝ եւ Թո՛ղ այս երեք կերպ բանիս վրայ-
ով մեջերնին վէճ ընեն. Թէ «Հայէ՛ այսօրո-ան
օրս Հերշո-աժ ե- Հերեփիկոս էն մի. ե- թէ՛ Հրաման
կայ անոնց եկեղեցին երթալո- . ե- թէ՛ Հրաման
կայ անոնց Հեփ Հաղորդակցո-թի-ն ընելո- յԱսփ-
ո-աժային». Անան, Կեփ. Կէմ. Եր, 98:

Եւ ամենքը միաբան Թո՛ղ մտիկ չընելով
այն աւետարանական խրատը «Մի՛ զոք զըր-
պարտիցէք». Դ.՝. գ. 14: Եւ Քրիստոսի
հրամանին ունկնդիր չըլլալով, եթէ՛ «Մի՛
ըստ աշս դատէք, այլ ուղիղ դատաստան ա-
րարէ՛ք». Յօհ. է. 24: Անխիղճ ուխտեն եւ
երդում ընեն, եւ քարոզեն պարզամիտ ժո-
ղովուրդներուն, Թէ «Այսօրո-ան օրս Հայէ՛
Հերշո-աժ ե- Հերեփիկոս էն, ե- Հրաման չկայ
անոնց եկեղեցին երթալո-, ե- անոնց Հեփ Հաղոր-
դակցո-թի-ն ընելո- յԱսփո-աժային»: Մխի-
թարեան պատուելիք ալ այսպիսի շարաշար
երդման հաղորդակից կըլլան եղեր. ինչպէս
գրուած է վերոյիշեալ տետրակին նոյն ե-
րեսի վերջերը այսպէս. «Ա՛յ- այսօրո-ան օրս ամէն
մի թիարեանէ՛ երբո-մ կընեն՝ աս երե՛կ խնդրոյն
վրայ իրենց սո-ր՞ աթոո-ին Հեփ միշտ ե- կարար-
եալ միաբանո-թի-նը ե-այլն»:

Հարկաւ պիտի ընեն այս երդումը Մխի-
թարեանք, եւ պիտի միաբանին այսպիսի զըր-

պարտութեան եւ շարախօսութեան, բայց ո՛չ ՚ի ճշմարտութենէ բռնադատեալ, այլ մանաւանդ յերկիւղէ մարդկան ստիպեալ պիտի գրեն եւ խօսին. վասն զի՝ թէ որ չը խօսին եւ չը գրեն անանկ երբեմն երբեմն, այն անիրաւ զրպարտիչները Հայոց Եկեղեցւոյն անտարակոյս կը հասցունեն ՚ի վերայ Միսթարեանց փորձութիւններ եւ պատուհաս. ինչպէս որ իրենց առջեւը օրինակ ունին Երանելի Հ. Միքայելն շամչեան: Երանելի կըսեմ, վասն զի իրեն սրտին մէջէն մարդկային բռնութեան երկիւղը մէկգի ձգելով, եւ անձնական պատիժ եւ անարգութիւն ՚ի մարդկանէ կրելը յանձնառու ըլլալով, այն «Աւհան Հա-սարոյ ո-ղղափառ-ութեան Հայոց» բազմավաստակ երեք հատոր գիրքը գրելով՝ Հայոց Եկեղեցին ՚ի հաւատս ուղղափառ ըլլալուն ճշմարտութիւնը քարոզելու փոյթ ունեցաւ. եւ երբ իմացաւ այն իրեն բազմամեայ աշխատութեան մատենագրութիւնը գողցըված ըլլալը թշնամիներուն ձեռօքը, ո՛չ լքեալ տարակուսեցաւ, եւ ո՛չ բնաւ վերջացաւ ճշմարտութիւնը քարոզելէն, այլ մանաւանդ առաւել եւս զօրացաւ, եւ յատուկ նամակ գրեց առ Հ, Մկրտիչն եւ Հ, Իգնատիոսն, զի ՚ի կողմանէ իւրմէ փոխանորդ

հանդիսանան ՚ի Հոռվման պատրուակ ճշմարտութիւնը յայտնելու՝ արդարութիւն եւ իրաւունք պահանջելու, եւ այն նամակին մէջ այսպես կը գրէ. «Ափսո՛ս եղեւ քեզ Հա՛յր Միքայէլ, զի ՚ի ծերութեանդ հասակի պաշարեցար՝ յորոց պաշարեցարն. պաշարեցայ այո՛, բայց ՚ի պաշարմանս վստահ կամ: . . . ո՞վ է ոսոխն իմ, ելցէ ընդ դէմ: Բայց քանզի իսպառ ակարացեալ եմ առաւել քան զոր կարծէքդ՝ եւ անկեալ ՚ի յիշողութենէ, եւ օրէ յօր նուաղիմ, ստիպիմ զձեզ կանգնել, եւ կանգնեմ իսկ այսօր ՚ի փոխանակ զհայր Մկրտիչդ եւ զհայր Իգնատիոսդ. խօսեսջի՛ք զճշմարտութիւն, եւ մի՛ երկնչիք ՚ի թշնամեաց իմոց. ես եւս եթէ մարթացայց, յուսամ թէ ժամանեցից, եւ զձեզ անվատակս կացուցից, անզգամութեամբ ասեմ, շա՛տ են ոսկերք իմ առ շաղփաղփ բանս Աստուածաբան կարծելոցն . . . մի՛ ինչ զարհուրիք. վստահիմ՝ թէ զարհուրեցուցից եւ վանեցից զթշնամիս իմ. եթէ արդարութիւնն չիցէ մեռեալ՝ գործեցից գործ մեծ ՚ի գառամութեանս իմում»:

Ասանկ անվեհեր եւ համարձակ պիտի ըլլայ ճշմարտութեան քարոզիչը եւ գրիչը, եւ պիտի գիտնայ՝ որ ճշմարտութեան թշնամի-

ները պիտի անարգեն զինքը, եւ զրպարտութեամբ եւ չարախօսութեամբ պէսպէս դատապարտութեան մատնելու պիտի պատրաստուին. բայց ինքը բնաւ պէ՛տք չէ դադարիլ Աստուածահաճոյ ճշմարտութիւնը քարոզելէն եւ գրելէն: Օրինակ են մեզի սրբազան առաքեալները, որ երբ նախատուեցան՝ եւ գանակոծ եղան, եւ սպառնալիք լսեցին, որ այլ եւս չ'քարոզեն Յիսուսի անունը. ընդհակառակն անոնք ուրախութեամբ դարձան այն ատեանէն, ուր որ Յիսուսի անուանը համար ծեծ կերան եւ անարգուեցան, եւ չի դադրեցան Յիսուսի Քրիստոսի անունը քարոզելէն. ըստ այնմ, «Եւ կոչեցեալ զառաքեալսն՝ գան հարին, եւ պատուիրեցին՝ մի՛ եւս խօսիլ յանուն Յիսուսի, եւ արձակեցին զնոսա: Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան տեառն արժանի եղեն անարգելոյ: Եւ զամենայն օր՝ ի տաճարին եւ առ տնին ո՛չ դադարէին ուսուցանել՝ եւ աւետարանել զՅիսուս Քրիստոս»։ Գործ. ե. 40:

Արդեօք չէ՞ր մի գիտեր Հ, Միքայելը, որ իրեն «Աւհան Հա-ագոյ ո-ղղափառ-ութեան Հայ-ոց» գրած երեք հատոր բազմամեայ աշխատութիւնը պատճառ պիտի ըլլայ շատ անձ-

նական նախատինք եւ անարգութիւն կրելու Հայոց Եկեղեցւոյն թշնամիներէն. այո՛ գիտէր, բայց ան յանձնառու եղած էր վասն սիրոյն ուղղափառութեան Եկեղեցւոյն Հայոց. սակայն չի կրցաւ մարգարէանալ, որ պիտի գողանան զայն. եւ յետոյ այնպէս պիտի արգելուի, որ իսպառ ո՛չ տպուելու եւ ո՛չ ալ օրինակը ձեռք բերելու հնարաւոր ըլլայ բարեմիտ ընթերցողներուն, ո՛չ եկեղեցականաց եւ ո՛չ ալ աշխարհականաց:

Այս անկարծելի գողութեան եւ բռնի արգելմանը վրայով աղէկ տրամաբանելով եզրակացութիւն մը հաներ են կորովամիտ եւ ճշմարտասէր ուսումնականները, եւ կըսեն՝ որ այն «Աւճան Լա-արոյ» ըսուած բազմաշխատ մատեանին մէջ գրուածները հարկաւ ճշմարիտ ուղղափառութիւն են. որ թշնամիներն ալ անոր դէմ բան մը գրուիլը անկարելի եւ անհնարին ըլլալը գիտնալնուն համար. տարին մէկ անելանելի եւ իսպառ անզերծանելի արգելանոցի մը մէջ թագուցին եւ անյայտ ըրին. վասն զի եթէ ըլլար անոր մէջը ուղղափառութեան եւ ճշմարտութեան հակառակ նիւթեր կամ խօսքեր, այն ժամանակը երկու կերպ իրաւունք կունենային. մէյմը՝ որ մէջի եղած մոլորութեան նիւթերը յայտ-

նելով իրենց ժողովրդեանը, պիտի պատուի-
 րէին չկարդալ եւ չընդունիլ. եւ մէյմընալ
 իրաւունք կունենային անոր դէմ գրելու
 Աստուածաբաններուն գրչովը. ինչպէս որ հե-
 ղինակն ալ անանկ կը պահանջէր, եւ ամօթ
 չէր ըլլար հեղինակին. զոր օրինակ՝ կը կար-
 դամք Պօղոս առաքելոյն առ Գաղատացիս
 գրած թղթոյն մէջը. որ երբ տեսաւ Պետրոս
 առաքելոյն քարոզութեամբ հրէայներէն հա-
 ւատացեալները՝ որ Քրիստոնէական հաւատ-
 քի մէջ ուղիղ չէին երթար, այլ տակաւին
 հակամիտուած էին հրէական խտրանաց մեր-
 ժեալ օրենքներուն, եւ մէջերնին կը քարո-
 զէին՝ որ առանց խտրական օրինաց հրէու-
 թէան՝ չըլլար փրկութիւն. այլ պէտք է
 կըսէին պահել հրէական հին օրինաց խըտ-
 րական օրէնքները: Եւ Պետրոս առաքեալն
 ալ չ'տեսնելու եւ չ'լսելու կը բերէր այս ա-
 նոնց մերժելի դրութիւնը, եւ լռութիւն
 ընելով՝ թոյլտուութիւն տուած կըլլար ա-
 նոնց անկարգ գնացիցը. վասն որոյ Պօղոս ա-
 ռաքեալ կը յանդիմանէ զՊետրոս առաքեա-
 լը՝ կշտամբելով առաջի հաւատացելոց ՚ի
 հրէից եւ ՚ի հեթանոսաց, որպէս եւ գրեալ
 է. «Այլ իբրեւ տեսի՝ եթէ ո՛չ ուղիղ գը-
 նան ՚ի ճշմարտութիւն աւետարանին, ասեմ

ցկեփաս առաջի ամենեցուն. եթէ դու՝ որ հրէայդ ես, հեթանոսաբար եւ ո՛չ հրեաբար կեաս, գիա՛րդ ստիպես հեթանոսաց լինել հրէարէն»։ Գաղ. բ. 14։

Մի՛ թէ Պօղոսի առաքելոյն այս կշտամբանաց խօսքը՝ անարգութիւն եւ կամ ամօթ եղա՛ւ Պետրոս առաքելոյն, ո՛չ. այլ զգուշութիւն եղաւ, եւ հաւատացելոց հրէից եւ հեթանոսաց ուղղութեան կանոն. ուրեմն եթէ այն «Աւհան հա-ապոյ ո-ղջափաո-թեան Հայոց» ըսուած գիրքին մէջ թէ որ մերժելու եւ չընդունելու բան մը ըլլար, պէտք էր որ աստուածաբան քննիչները մերժէին ուրիշ հեղինակութեամբ մը. բայց ո՛ր մէկ յայտնի ճշմարտութիւնը ծածկէին. որոնցմէ մէկ կտորը այս տեղս ցուցնեմք այս ճշմարտախօս գրքին վեցերորդ գլխոյն սկիզբը գըրուած, «ՅաղաԳ ապա Գոլոյ Եկեղէցոյն Հայոց ՚ի Ըերեփիկոսո-թեանէ ե- ՚ի Ըերչո-ածողո-թեանէ»։ Այս գլուխին մէջ Հայոց Եկեղեցւոյ ուղղափառութիւնը հաստատելէն յետոյ վերջաբանութիւն կրնէ այս խօսքերով. «Եւ սա- «կայն որք սովորեալ են ո՛չ ուղիղ ակամբ «հայիլ ՚ի վերայ ազգին մերոյ, շառնուն ՚ի «միտ զայսպիսիս, եւ ո՛չ հայելով յաջ կամ «յահեակ՝ անուն կեղտ հանեն, եւ զուղղա-

«փառն հերետիկոս կոչեն: Եւ արդ՝ երանի՛
«թէ զայս եւ եթ մտածէին շարախօսք մեր
«(որով անձնապահ լինէին ՚ի վայրախօսու-
«թեանց եւ յանիրաւ զրպարտութեանց),
«թէ քանի՞ քանի՞ վնասք եւ վտանգ մարթին
«յառաջագայիլ յանզգոյշ բանից, որով ոք ան-
«խորհրդաբար հերետիկոս կոչէ զայլ: Ո՞ւր
«թողից զայն, զի այսպիսի ինքնագլուխ ան-
«ձինք ո՛չ միայն հերետիկոս կոչեն զՀայս, այլ
«ենթադրելով հերետիկոս լինիլ՝ զգուշացու-
«ցանեն զայլս չհաղորդիլ ընդ նոսա. բայց
«այսու ո՛չ միայն անիրաւին յոյժ յոյժ, այլ
«եւ ընդ դէմ բանս գործեն. զի նախ պա՛րտ
«էր նոցա կարողանալ առ ՚ի հաւաստեցու-
«ցանել զհերետիկոսն լինել, եւ յետ ցու-
«ցանելոյն՝ այդպիսի դժպատեհ՝ անկարգու-
«թեանց զհետ կրթիլ. ուստի Նաւարոս
«աստուածաբան եւ օրէնսգէտ՝ անգոսնէ
«զանխոհեմութիւն այդպիսեաց. քանզի տես-
«եալ սորա, զի ոմանք ՚ի լատինացւոց խնդիր
«են հանեալ յաւուրս իւր, (այսինքն ՚ի վախ-
«ճան չորեքտասաներորդ գարուն) բանիւ
«բաթերայից, թէ արդեօք արժա՞ն իցէ հա-
«ղորդակցութիւն առնել յաստուածայինս՝ ե-
«կեղեցւոյն հռովմայ ընդ եկեղեցւոյն հայոց,
«զարմանալով իմն ՚ի վերայ իրացդ՝ խօսի իբր

«նորալուր իմն համարելով յասելն (ի գիրս «խորհ, կամ պատասխանատուութեան, «Մ, ա. Գիրք ա. յաղագս սահմանադրութեան, խորհրդոյ ա խնդիր. 1:») Այդ խնդիր ասէ «ենթադրէ, թէ հայք ՚ի թիւս հերետիկոսաց իցեն համարելի. եւ սակայն այդ ո՛չ «երեւի ունել զտեղի՝ կամ հաւաստի լինել, «որ է ըստ լատին բառին *չոնսթանթ*. կամի «ասել՝ որք զայդ խնդիր յարուցանեն, պարտին նախ ենթադրել, թէ հայք հերետիկոս իցեն. եւ ապա ըստ այնմ պահանջել. «թէ արդե՛օք մա՛րթ իցէ հաղորդակից լինել «ընդ նոսա: Բայց ուստի՞ յայտ է ասէ, թէ «հայք հերետիկոս իցեն, զի այդպիսի խնդիր «յարուցանելոյ պէտք լինիցին:

Ապաքէն Մխիթարեանց միաբանութենէն ասանկ մէկ երեւելի բազմավաստակ մատենագրիչ մը ճշմարտութիւնը գրելով դատապարտեցաւ, եւ բազմամեայ գրաւոր աշխատութիւնը արգելուեցաւ. ապա ի՞նչպէս համարձակին այժմեան Մխիթարեան պատուելիք ճշմարիտ գրելով՝ Հայոց Եկեղեցւոյն համար ուղղափառ է ըսեն եւ կամ գրեն. օրինակի աղագաւ ըսեմք, որ Հայոց ազգը շատ հին ՚ի վաղուց անտի իւր սուրբ նախնիքներէն ունի սովորութիւն իրեն կաթողի-

կոսին եպիսկոպոսապետին՝ Քահանայապետ անուն տալով վերապատուել, որ գլուխ կամ պետ քահանայից ըսել է: Ի՞նչ ըսեմք, Մխիթարեան պատուելիք չե՞ն գիտեր այս հին սովորութիւնը Հայոց ազգին, կամ չե՞ն կարդացեր ըսեմք Ագաթանգեղոսի մէջ գրուած այս խօսքերը. «Զի տարեալ գԳրիգորն՝ քահանայապետ» կացուցեն իւրեանց աշխարհին. եւ թէ «զի պարգեւաբաշխութիւն նորոգեալ քահանայապետութեանդ ձերոյդ նահանգիդ». Ագաթ. Գր. Գր. Եր. 594. 613: Եւ յերգս շարականի գրած է. «Այսօր քահանայապետ ճշմարիտ աստուածային օրինօք պատուեալ: Այսօր երկնաւոր պատարագին կատարողք քահանայութեան, ՚ի ձեռն սուրբ քահանայապետին, բարեբանեցէք զբաշխողն շնորհաց»: Եւ յերգս որդւոց եւ թոռանց սուրբ Լուսաւորչին. Զքահանայապետն ճշմարիտ ըստ կարգին Մելքիսեդեկի, ՚ի յիշատակի քահանայապետացս աստուածայնոյ քահանայք հոգեւոր երգօրօրհնեցէք»: Եւս եւ Յօհան երզնկացի ՚ի բանս առ Եկեղեցականս գրէ. «Դուք քահանայապետք եւ գլուխք Եկեղեցւոյ, ուրախ լերուք ցնծութեամբ»: Ո՛ւր թողումք ինձիճեան Հայր Դուկաս վարդապետին գը-

րածը Հայաստան-Հնարօտ-Ռեան մէջ. «Բուզանդ. գ. 3. զսուրբն Գրիգոր կոչէ «Մեծ քահանայապետ» եւ ստորեւ նաեւ զսուրբն Վրթանէս կոչէ «քահանայապետ». զոր յառաջն կոչեալ էր «եպիսկոպոսապետ»: Ի շարակնոցի սուրբ Գրիգոր միշտ կոչի «քահանայապետ», որպէս եւ մեծն Ներսէս», Հայր. Գ. Եր, 250:

Ո՞ր էին այս մեր նախնի սուրբ հարց ժամանակը Մխիթարեանք: Եւ հիմակ ալ այս ամենը գիտնալով եւ այս գրքերն ալ տպելով, ալ եւս պե՞տք է որ Մխիթարեան պատուելիք ըսեն, եւ գրեն, այն Մխիթարեան անանոն-Գրին դէմ գրուած տետրակին մէջը. թէ «Երկրորդ սո-դ է, ոչ երբէ՛ք Հայոց կաթողիկոսն որբազան խահանայապետ կամ սոսկ խահանայապետ ըսեր են կամ արարեր են Մխիթարեանէ, որ պապին միայն պահո-ւած է: . . . Հայերը մօտ արեւմտեան մէջմէ առնելով է- կաթողիկոսը մեծցրին էլ ո-ւրեւի իրենէ ալ սկսան որբազան խահանայապետ ըսել».

Եր. 28:

Ո՞վ սոսկալի մարդահաճութիւն եւ ծիծաղելի զրպարտութիւն . ասոր կըսեն գիտութեամբ մեղանչել՝ կամաւ կարկամիլ, այս պատուելիները շատ աղէկ գիտեն՝ որ Պապերուն տալու վեհ եւ վսեմ բառը լա-

տինական «փոնթիֆե՛ւ» է, որ Հայ լեզուին մէջ ո՛չ սրբագան կը թարգմանուի՝ եւ ո՛չ ալ քահանայապետ. այլ ուրիշ նշանակութիւն ունի, որ յարմարական պատուանունութիւն մը եղեր է Պապերուն, որոյ բացատրութիւնը կը տեսնուի լատինական ընդարձակ բառարանին մէջը. ահա՛ այս մէկ օրինակովս շատերն ալ ասանկ կ'իմացուի՝ որ առ երկիւղի եւ հաճութեան մարդկան ակամայ կամօք գրերեն եւ կը գրեն գալու վնասներէն ամենայն զգուշութեամբ պաշտպանուելու համար. բայց գիտեն ալ՝ որ ուրիշի վնաս հասցունելը զրպարտելով կամ անարգելով մեծ անօրէնութիւն է. ուստի գրած են **անանոն պարսա-ադրին** դէմ հանած տետրակին մէջը. «Զինքը պաշտպանելը միշտ օրինաւոր է՝ գիտէինք, իսկ ուրիշի վնասել ո՛չ երբէք»:

Ապա որ Մխիթարեանք հասկցուեցաւ ո՛չ եթէ կամաւ կը գրեն հերձուած եւ հերետիկոս Հայոց ուղղափառ եւ բարեպաշտ Եկեղեցւոյն, այլ շատ խղճիւ մտաց ինքըզինքնին պաշտպանելու համար՝ ի շարախօսութենէ թշնամեաց. զի եթէ Եկեղեցւոյն Հայոց ուղղափառութիւնը յայտնի քարոզելու ըլլան՝ անշուշտ պիտի իրենք վնաս եւ դատապարտութիւն կրեն Հայոց Եկեղեցւոյն թշնա-

մութեան աչօք նայողներէն եւ զրպարտողներէն. բայց ի՞նչ կերպ վնաս եւ դատապարտութիւն ըլլայ նէ՛ ըլլայ. կատարեալ քրիստոնէին արժա՞ն է սուտ խօսիլ՝ զրպարտութիւն ընել, եւ ծուռ վարդապետութիւն ընել այլոց իրեն անդորրութեանը համար. այս մեղաց թողութիւնը ի՞նչպէս կրնան գտնալ նէ, թո՛ղ իրենք քննեն:

Մխիթարեան պատուելիք չե՞ն մի գիտեր, որ մեկ ուղղափառ ազգի Եկեղեցւոյ մեծ մասն հասարակութիւնը կըլլայ. եւ այն հասարակութենէն աստուածաբանական գիտութեան բառերով յատուկ խոստովանութիւն հաւատոյ չ'պահանջուիր. այլ միայն բարեպաշտ կամօք ընդունիլ զՆիկիական հանգանակն հաւատոյ, եւս եւ լսել 'ի բերանոց նոցին զայսչափ խոստովանութիւն սըրտի մտօք, եթէ ինչ որ կ'ընդունի՝ կը դաւանի՝ եւ կը քարոզէ իմ ուղղափառ Եկեղեցիս՝ եւ ես կընդունիմ եւ կը դաւանիմ. եւ զորս կը հերքէ եւ կը դատապարտէ նզովելով՝. եւ ես կը հերքեմ եւ կը դատապարտեմ նզովելով. ասոր համար չէ՞ որ ութերորդ Ուրբանոս պապն հռովմայ սահմանեց այն համառօտ դաւանեւթեան տետրակն. թո՛ղ կարդան մէյմը առաջին կանոնը, եւ

մէկ մի ալ քսան եւ վեցերորդ կանոնը, որ հարկաւ իրենք ալ կարդացած եւ ստորագրած են:

Չե՞ն մի գիտեր այս Պատուելիք, որ Եկեղեցւոյ մեծ մասը՝ որ հասարակաբար ժողովուրդ են, միշտ կը սորվին Եկեղեցիէն կենդանի հաւատոյ ճշմարտութիւնը, եւ աստուածահաճոյ բարի վարուց կանոնները, որ սուրբ Աւետարանով եւ առաքելական ու մարգարէական ընթերցուածներով եւ բացայայտ մեկնութեամբ ողջամիտ վարդապետներուն կը քարոզուի իրենց. ուրեմն ունկընդիր եւ ուսանող շատ են, եւ ուսուցանող քիչ. ասոր համար կը գրէ Պօղոս առաքեալ. «Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, ապա զօրութիւնս, շնորհս բժշկութեանց օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: Մի՛թէ ամենեքին առաքեալք իցեն. մի՛թէ ամենեքին մարգարէ՞ք իցեն. մի՛թէ ամենեքին վարդապետք իցեն...մի՛թէ ամենեքին շնորհս բժշկութեա՞ն ունիցին. մի՛թէ ամենեքին ՚ի լեզու՞ս խօսիցին, մի՛թէ ամենեքին թարգմանիցե՞ն: Բայց նախանձաւորք լերու՛ք շնորհացն, որ լաւն են».

ա Աորն. Ժբ. 28:

Ապա այս ամենը գիտնալով, վայելու՞ն է մի արդեօք, եւ կամ ո՞ր կից ստիպեցան գրելու՝ այն տեսրակին ջատագովութեան մասին մէջը, թէ «Միսիթարեանք համոզուած են՝ որ Հայոց մեծ մասը տգիտութեամբ կը մոլորի, ո՛նչ շար կամաց գրգռութենէն» Եր. 14:

Թէպէտ այս անհեթեթ պարբերութիւնը կարդացող ուղղափառ Եկեղեցւոյն Հայոց հարազատ որդիքը մէկէն՝ ի մէկ կամբօխին՝ կը սրտմտին՝ եւ կը վշտանան. բայց պէտք է որ հանդարտ մտօք խորհինք այս բանին վրայով. մէյ մը՝ որ ո՛վ ոք մոլորեր է յունդափառութենէ հաւատոյ, երկու կերպ գլխաւոր գրգռիչ եւ առիթ ունեցեր է. մէյ մը՝ որ իրեն բնական հանճարով կամ մարդկային մտօք չափելով անչափելի եւ միայն հաւատալի Աստուածային յայտնութեան նիւթերը՝ մոլորեր է. եւ մէկ ալ՝ իրեն մոլեկան ախտալից կիրքը համարձակ յառաջ տանելու համար շար կամքէն գրգռուելով մոլորեալ եղեր է. ասանկ կը հաստատեն աստուածաբան քննիչները համեմատ սուրբ գրոց. ինչպէս կը վճռէ Յիսուս. «Զի ամենայն որ զշար գործէ՝ ատեայ զլոյս, եւ ո՛նչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա».

ՅօՒ. գ. 20: Եւ Պօղոս առաքեալ եւս կը վկայէ. «Զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան». *Հոռ. ա. 22:*

Ահա՛ ասանկ մարդկային հանճարով շափողներուն եւ անառակութեան հետեւողներուն համար յայտնի կը գրէ Պետրոս առաքեալ. «Լինէին եւ սուտ մարգարէք ՚ի ժողովրդեանն՝ որպէս եւ այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան. եւ զորս տէրն գնեաց, զնոսա ուրացեալ՝ ածեն ՚ի վերայ անձանց զարագահասն կորուստ: Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի». *Բ Պէտր. բ. 1:*

Արդ՝ այս վերոյգրեալ երկու տեսակ մոլորեցուցիչ պատճառներուն եւ ոչ մէկը չեն կարէր հաստատել Հայոց ազգին ո՛չ փոքր եւ ո՛չ մեծ մասին վրայով. որովհետեւ Հայոց ազգէն բնաւ մէկ ժամանակ մը չէ՛ ելած՝ որ մէկը մարդկային տկար մտօք քննելով հաւատոյ ճշմարտութիւնը՝ մոլորութեան եւ աղանդաւորութեան հեղինակ եղած ըլլայ, եւ հետեւողներ ալ ունենայ. ինչպէս որ կը տեսնուի եկեղեցական պատմութեանց մէջ, որ այլոց ազգաց մէջ պատահեր է, եւ իրենց

եկեղեցւոյն վնաս տուեր է. եւ միւս ազգաց եկեղեցեաց ալ վնասնին հետզհետէ կը հասնի. եւ միւս պատճառը մոլորութիւն շունենալուն Հայոց մեծ մասին, գոհութիւն աստուծոյ, իրենք ալ համոզուած կը վկայեն եւ կը գրեն՝ ըսելով «Ո՛հ շար կամաց գրգռութենէն»,։ Ալ ի՞նչ տգիտութեամբ կը մոլորի մեծ մասը Հայոց, չեմ հասկընար բնաւ. եւ այս տգիտութիւնը ի՞նչ իմանալ պէտք է արդեօք. ըստ աշխարհի բնական գիտութեան տգիտութիւնը մի, որ Յիսուս Քրիստոս ասանկները գովեց ըսելով. “Գոհանամ զքէն հա՛յր՝ տէ՛ր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց». Մատթ. Ժա. 25:

Այս Աստուածային հաճութեանը նայելով՝ եւ անքննելի տնօրէնութիւնը հաստատելով՝ եւ քրիստոնէից յիմար տգէտ ըսելով արհամարհութիւն տուողներուն դէմ՝ ՚ի մըխիթարութիւն հաւատացելոց կը գրէ Պօղոս առաքեալ. «Թէպէտ եւ զձեր իսկ կոչումնդ տեսիք եղբա՛րք, զի ո՛չ բազում իմաստունք ըստ մարմնոյ, եւ ո՛չ բազում հզօրք, եւ ո՛չ բազում ազնուականք. այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. եւ զտկարս աշխարհիս

ընտրեաց Աստուած՝ զի յամօթ արասցէ ըզհզօրս»։ ա Առն. ա. 26:

Եկեղեցին Քրիստոսի այս նախատինքը կը լսէր հեթանոսներէն եւ փարիսեցիներէն. ըստ այնմ՝ «Մի՛ թէ ոք յիշխանացն հաւատաց ՚ի նա՝ կամ ՚ի փարիսեցւոց, այլ այն խաժամուժ ամբոխն, որ ո՛չ գիտէ զօրէնս, եւ նզովեալ են»։ Յօժ. է. 48: Բայց ընդ այս սուգ եւ տրտմութիւն շունչին հաւատացեալք, այլ առաւել կը մխիթարուէին Յիսուսի Քրիստոսի իմաստութեան շնորհիւր, որ կը ներգործէ իրեն սուրբ եկեղեցւոյն միջնորդութեամբը, եւ կարող է մշտնջենաւորել ՚ի յաւիտեան՝ ինչպէս որ խոստացած է. «Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ո՛չ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդք ձեր»։ Առն. իա. 15: Այս իմաստութեան լոյսը յայտնի կընէ Պօղոս առաքեալ առաջի եկեղեցւոյն Կորնթացւոց յասելն. «Զի ՚ի նմանէ դուք էք ՚ի Քրիստոս Յիսուս. որ եղեւ մեզ իմաստութիւն յաստուծոյ, արդարութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն»։ ա Առն. ա. 30:

Ուրեմն թո՛ղ չ՛վշտանան Հայոց ուղղափառ եկեղեցւոյն բարեպաշտ որդիքը՝ ԳԳԷԿ

յիմար է- մուրթեալ ձայներ լսելով. եւ ես ալ անշուշտ կը վկայեմ՝ որ բնաւ ո՛չ կը սրտմտին եւ ո՛չ ալ կը վրդովին. վասն զի ասանկ նախատինքները համբերութեամբ կը տանէր ՚ի սկզբան Եկեղեցին Քրիստոսի. ինչպէս կը յիշէ Հ, Գաբրիէլ ՚ի մեկնո-թեան Թղթոց Պօղոսի առ-ալէլոյն. ա Հապ. եր. 593: «Եկեղեցին Քրիստոսի ՚ի սկզբան իւրում հաւաքեցաւ յանարգաց աշխարհի. եւ որպէս բանիս կարգ է ասել՝ յոչնչից կազմեցաւ, մինչեւ այն սովորական նախատինք էին հեթանոսաց առ քրիստոնեայս, թէ սինլիքորք ժողովրդոց են առ հասարակ ծառայք, աղախնայք, ստնտուկք, դայեակք, ներքինիք. զայս Յուլիանոս ամբարիշտն յանդիման հարկանէր, եւ յառաջ քան զնա փարիսեցիքն չարախօսէին: Մի՛ թէ ոք յիշխանացն հաւատա՞ց ՚ի նա կամ ՚ի փարիսեցւոց. այլ այն խաժամուժ ամբոխ, որ ո՛չ գիտէ զօրէնս».

Յօհ. է. 49:

Արդ՝ տե՛ս գովելի հանդէսը համբերութեան բարեպաշտ անդամոց ուղղափառ Եկեղեցւոյն Հայոց, որ միշտ կը լսէ ՚ի մօտուստ եւ ՚ի հեռուստ բանս անարգանաց եւ զրպարտութեան. բայց ո՛չ կամի երբէք փոխանակն հատուցանել, այսինքն անարգո-

ղաց՝ տալ անարգանս, արհամարհողաց՝ արհամարհանս, եւ վասն շարախօսաց շարամաղթութիւնս առնել, եւ այլն: Վասն զի Հայոց Եկեղեցին միշտ ունի իրեն հաւատոյ ճշմարտութեան հեղինակ եւ բարոյականութեանը անսխալ օրինակ Յիսուս Քրիստոս, որուն համար այսպէս կըսէ Պետրոս առաքեալ. «Քանզի ի դոյն իսկ կոչեցարուք, զի եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ, եւ ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նորա, որ ո՛չն արար մեղս, եւ ո՛չ գտաւ նենգութիւն ի բերան նորա, որ բամբասեալ՝ եւ ո՛չ փոխարէն բամբասէր. շարշարեալ՝ եւ ո՛չ պահեր սպառնալիս». ա ՊԵՊ. Բ. 21: Եւ սոյն սրբազան առաքելոյն յորդորական բանիւր կը մխիթարուի եւ կը քաջալերուի Հայոց Եկեղեցին, որ կըսէ. «Այլ հեզութեամբ եւ երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս, զի որով շարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին, որք բամբասեն զձեր բարւոք գնացս ի Քրիստոս». ա ՊԵՊ. Դ. 16:

Հայոց Եկեղեցին ձայնակից կըլլայ միշտ Դաւիթ մարգարէին հետը համբերելով, եւ կը բողոքէ ո՛չ առ մարդիկ, այլ առ տէր Աստուած, ասելով, «Նորա անիծանեն եւ դու օրհնեսցես, ոյք յարուցեալ են ի վերայ իմ

զամօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ եղիցի ի քեզ: Զգեցցին զամօթ՝ որ շարախօս կային զանձնէ իմմէ, եւ արկցեն որպէս կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք: Այլ ես խոստովան եղէց առ տէր յոյժ բերանով իմով, եւ ի մէջ բազմաց օրհնեցից զքեզ». ճր. 28:

Ապա այսուհետեւ բնաւ մէկը թո՛ղ չը զարմանայ եւ չ'տարակուսի եւ չըսէ, որ ինչու՞ համար յայտնի Հայոց Եկեղեցւոյն ուղղափառութիւնը թագուն ծածկուած եւ անտեսանելի մնացեր է անանկներէն, որ անկից զատուած եւ բաժնուած ըլլալով յայտնի կամ ծածուկ առանց խղճմտանաց կանարգեն եւ կը զրպարտեն. ինձ այսպէս թուի, եւ անշուշտ կը վկայէ սիրտս, որ համաձայն պիտի ըլլան ինծի հետ շատ ճշմարտասէր եւ իրաւագէտ անձինք, որովհետեւ ատելութեան եւ թշնամութեան չար ոգին միշտ կայլալէ սիրտը, եւ կը շփոթէ միտքը, բարին չար՝ չարը բարի, ճշմարիտը սուտ՝ սուտը ճշմարիտ դատելու, ըսել է որ մտաց ուղիղ տրամաբանելու կարողութիւնը կը խանգարէ. զոր օրինակ, մէգն (փուս) ըսվածը թէպէտ թեթեւ բան մը նէ, բայց տե՛ս ի՛նչպէս առարկաներուն տեսութիւնը կը խափանէ,

մինչեւ անգամ արեւուն ճառագայթներուն պայծառութիւնը աչքէն կը ծածկէ. բայց բնաւ վնաս մը չ'կարէր տալ արեւու ճառագայթներուն. ասոր պէս ալ ատելութիւն եւ թշնամութիւն խաւարամած կընեն մտաց լուսաւոր տեսութիւնը, եւ կը խափանեն ուղիղ դատումը, բայց ասով վնաս չըլլար բարւոյն եւ ճշմարտին. ուղղափառին շարափառ ըսելով շարափառ չ'ըլլար, այլ ըսողը կամըչնայ իւր ստութեանը համար. ուրեմն թո՛ղ Հայոց Եկեղեցւոյն անարգութիւն տան շփոթուած մտօք՝ եւ ատելութեան կրիւք՝ եւ թշնամութեան ոգւով. թո՛ղ ըսեն **Ընդհանուր** եւ **Ընդհանուր**, միայն գիտնան՝ որ ասանկ տըխրական եւ տխեղծ բառերով եւ ձայներով արատ մը եւ վնաս մը չ'ընդունիր Հայոց Եկեղեցւոյն յայտնի ուղղափառութիւնը, եւ ո՛չ ալ պիտի վշտանայ Հայոց բարեպաշտ ազգին ո՛չ մեծ մասը եւ ո՛չ ալ փոքր մասը. այլ միշտ կը մխիթարուին յիշելով մեծ քահանայապետին սրբոյ հօրն Գրիգորի լուսաւորչի այս համառօտ հոգեւոր խրատը եւ բարոյական քարոզը. «Որպէս լոյս ո՛չ փոխի ՚ի խաւար, այլ զխաւարն լուսաւորէ, եւ ո՛չ կեանք ՚ի մահ, այլ զմահացեալսն կենագործէ ՚ի տէր: Այսպէս կամք բարի՝ զանարգսն թո-

ղու, եւ զլաւսն մեծարէ շնորհօք ամենակա-
լին. երեւեալք որպէս լուսաւորք յաշխարհի.
զբանն կենաց ունելով յանձինս եւ յառաջ-
նորդութիւն բազմաց ՚ի կեանս անբիծս»,
Յաճա. ճառ, գ. Էր, 69:



ԳԼՈՒԽ ԺԳ

Բազում պարծանօք ուղղափառ հաւա-
տոյ եւ բարեկարգ անփոփոխ արարողու-
թեամբ կը հանդիսանայ Հայոց Եկեղեցին,
որոնցմէ մէկն ալ այս է, որ անայլայլելի հաս-
տատուն կը պահէ նախնի աւանդութիւննե-
րը, որով առաքելական գովութեան ալ ար-
ժանի կըլլայ. ինչպէս որ Պօղոս առաքեալ
գովութիւն կուտար կորնթացւոց եկեղեց-
ւոյն, որ եթէ գրով եւ եթէ բանիւ աւան-
դածները իրենց՝ կը պահէին եւ անխափան
կը կատարէին, վասն որոյ կը գրէր անոնց.
«Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յի-
շէք, եւ որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդու-
թիւնսն ունիցիք» ա Վորն. ժա. 2:

Եւ ասոր համար ալ իրաւունք ունի պար-
ծենալու Հայոց Եկեղեցին, որ անխախտ կը
պահէ հին աւանդութիւնները, որպիսի է

կուսական սուրբ Ծննդեան Յիսուսի Քրիստոսի տօնախմբութիւնը կատարելը յունվար ամսոյ վեցին, եւ եւ մկտութեան տօնախմբութիւնը ՚ի միասին ՚ի նոյն օր, ահա՛ Հայոց Եկեղեցին յունվարի վեցին տօն Ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կատարելով՝ յայտնի կընէ, որ անփոփոխ պահեր է այս առաքելական եւ օրինաւոր յաջորդաց նոցին աւանդութիւնը, եւ ո՛չ կամեցեր է այլայլել, եւ այս բանին ստուգութիւնը իմանալու համար՝ կարդա՛ առաքելական կանոն ըսված գիրքը, որ ասանկ գրուած է. «Կարգեցին առաքեալքն, եւ եղին հաստատութեամբ՝ թէ եղիցի տօն Ծննդեան եւ յայտնութեանն փրկչին մերոյ. . . որ օր վեց է յունվարի ամսոյ ըստ յունարէն թուոյ», Բլ. է: Այս առաքելական աւանդութիւնը Գրիգոր աստուածաբանն ալ կը հաստատէ կանոնական խրատներուն մէջը՝ գրելով այսպէս. «Կարգեսցէ եպիսկոպոսն իւրոյ եկեղեցւոյն ՚ի վեցն յունվարի զօր Ծննդեանն Տեոան եւ Մկրտութեանն, եւ ՚ի չորեքտասանն փետրուարի զԵկաւորիլն ՚ի տաճարն»: Եւ սոյն երանելիս անդանօր գրէ. «Իսկ զայլոց չարահամբաւ ստերիւրեալ յեղափոխումն խորհուրդ ո՛չ ընդունիմք, զորոց ասէ

Յօհաննէս՝ թէ ՚ի մէնջ ելին, այլ ո՛չ էին ՚ի մէնջ, զի իշխեցին առ աշօք ասել զճշմարիտ զանքննին ծնունդ միածնին: Եւ այլք փոխել կամելով զառաքելական կնիք ծնընդեանն, եւ այլք զյայտնութիւնն, եւ անհաւանք մնացեալ առաքելաւանդ կանոնական սահմանացն՝ զոր գրով աւանդեալ ունի Եկեղեցի, եթէ օր Ծննդեան եւ յայտնութեան փրկչին մերոյ ՚ի միասին տօնեացի ՚ի վեցն յունվարի ամսոյ» ի *Կանոնական Բանա*:

Եւ համաձայն սոցին եւ սրբոյ Աւետարանին պատմութեանն հետեւելով՝ տոմարական հաշիւ առնելով կը գրէ սուրբ հայրապետն մեր Ներսէս շնորհալի ՚ի թուղթսն առ Ալէքս. «է եւ երկրորդ վկայութիւն այսոցիկ ըստ նորուն աւետարանչին պատմութեանն. այն զի՝ ասէ թէ Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ ՚ի ծննդենէ անտի, եւ հարկ լինի ըստ իմաստուն եւ ուղիղ մտաց՝ ՚ի նոյն թիւ ամսոյ (եկեալ) յորում եւ Ծնունդն ՚ի վեցն յունվարի հանգիպիլ, եւ մկրտութեանն աւուր յետ երեսնից ամաց, թէպէտ եւ պատկեր աւուրն ո՛չ նմանապէս . Ընդհ. Էր, 60: Եւս եւ սոյն շնորհալին գրէ ՚ի թուղթն առ Մանուէլ կայսրն յունաց. “Իսկ մեք ըստ սրբոյ աւետարանչին Ղուկայ պատ-

մութեանն յետ երկուց տօնից երկոտասան
աւուրցն լրման՝ զորս աւուրք պաշտաման
կոչէ Զաքարիա, ասեմք զյղութիւն Եղիսա-
բեթի, որ էր ՚ի թշրին ՚ի քսան երկու եւ
հոկտեմբերի ՚ի յինն, եւ լինի ըստ այսմ կար-
գի Աւետիք Կուսին Մարիամու յապրիլի
եօթն, եւ Ծնունդն ՚ի յունվարի վեցն, եւ ՚ի
նմին աւուր՝ յորում ծնաւ ըստ թուոյ ամ-
սոյն, թէ եւ ո՛չ պատկեր աւուրն, ՚ի վեցն
յունվարի յետ երեսուն ամացն եղեւ մկրր-
տութիւնն ՚ի Յորդանան, եւ այս անսխալ է:
Զի եթէ երեսնամեայ էր եւ ո՛չ առաւել
եւ ո՛չ նուազ. ապա յաւուր ծննդեանն հա՛րկ
է լինել եւ օր մկրտութեանն, եթէ պա՛րտ
է երեսուն ամին անթերի մնալ եւ անաւե-
լորդ»։ Բնդհ. էր. 85:

Այս օրինակ անփոփոխ պահելով նախնի
աւանդութիւնը անխափան կը կատարէ Հայ-
ոց սուրբ Եկեղեցին ՚ի վեցն յունվար ամ-
սոյ զտօնախմբութիւն երկրպագելի Ծնընդ-
եանն եւ Մկրտութեան Յիսուսի Քրիստոսի.
ինչպէս որ յառաջագոյն ամենայն քրիստոն-
եայք ալ կը տօնէին երկու սքանչելի խորհրդ-
ոց հանդէսը ՚ի միում աւուր, որպէս ցու-
ցանեն նախնի հարց սրբոյ վկայութիւննե-
րը. «Զայս ասեմք, ո՛չ եթէ այլ եւ այլ են

տօնք ծննդեան եւ մկրտութեանն. այլ ՚ի միում աւուր տօնել պարտ է. թէպէտ եւ գործքս այլ եւ այլ է որ այսօր կատարեցաւ, սուրբն Պօղիկարպոս՝ աշակերտ Յովհաննու աւետարանչի: Մկրտութեանն խորհրդոյ յերիս տօնս առաւել փափագեցին հարքն մեր, ՚ի Զատիկին՝ ՚ի Պէնտէկոստէն՝ ՚ի Ծննդեանն՝ եւ ՚ի Մկրտութեանն, զոր ՚ի միում աւուր տօնեմք. Մակարիոս Պատրիարգ Երուսաղէմի՝ յաւուրս կաթողիկոսութեան Վրթանայ՝ որդոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչի:

Տօնեմք ըստ աւետեաց հրեշտակին իննամսեայ զԾնունդն, ութօրեայ զԹլփատութիւնն, երեսնամեայ զՄկրտութիւնն: Եւ պատուեալ այսպէս՝ զԾնունդն եւ զՄկրտութիւնն ՚ի միում աւուր տօնեմք: Մելիտոն կամ Մելիտոս եպիսկոպոս՝ երեւելին ՚ի հարս ժողովոյն Կոստանդնուպօլսոյ՝ ՚ի թղթի որ առ Եւտրափիսն: Զաստուածայայտնութեանն եւ զԾննդեանն նորին զօր ՚ի վեցն յունվարի ՚ի միասին տօնել սովոր է աշխարհս մեր... (եւ) այս է նախնական սովորութիւն ՚ի վաղնջուց հետէ նախահաւանեալ եւ մինչեւ առ մեզ հասեալ: Յովհ, Իմաստ, ՚ի Կանոնան.

ԳԼ Ը՛

է դարձեալ եւ այս աւանդութիւն Եկե-

ղեցույ հայաստանեայց ՚ի նախնեաց անտի սկսեալ: Զի զտօն Ծննդեան եւ Մկրտութեան տեառն ՚ի միում կատարեմք աւուր, եւ այն՝ ո՛չ վայրապար, այլ յոյժ խորհրդապէս, քանզի ամենայն եկեղեցիք ՚ի սկզբանն սոյնպէս կատարէին, որ գիտելի է եւ ձերումդ իմաստութեան, եւ թէպէտ յետ ժամանակի յայլ եկեղեցիս զմի տօնն յերկուս բաժանեցին, մեք զաւանդեալն մեզ ՚ի սրբոյն Գրիգորէ անփոփոխելի պահեցաք՝ ըստ վրկայութեան սրբոյ աւետարանչին Ղուկայ, որպէս պատմէ յետ պապանձելոյ Զաքարիայ, եւ ասէ թէ յետ աւուրցն այնոցիկ գնաց ՚ի տուն իւր, եւ թէ յղացաւ Եղիսաբեթ կին նորա: Իսկ եթէ յառաջ Ծնունդն է եւ յետ երկոտասան աւուրց Մկրտութիւն, ո՛չ պարտ է ասել՝ թէ Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից, այլ թէ՛ Յիսուս էր ամաց իբրեւ երեսուն եւ միոյ սկսեալ, որպէս եւ յանուանս աւուրցս է տեսանել՝ զի ՚ի ծագել արեւուն ո՛չ զանցեալ աւուրն կոչեմք զանուն՝ այլ զնորոյն, եւ ՚ի թուականութեան ամսոց եւ ամաց յառաջնում աւուրն յորժամ նորն սկսանի՝ նորոյն վերակոչի անուն եւ ո՛չ հնոյն: Վասն այսր ամենայնի ուղիղ եւ յայտնի պատճառաց առաջին հարքն հաս-

տատեցին ՚ի միում աւուր զԾննդեանն եւ զՄկրտութեանն տօնել խորհուրդ, եւ մեք նոցին հետեւեալք զնոցայն կատարեմք աւանդութիւն», Անդ. Էր, 84:

Արդ՝ արժան է գիտել, եթէ ինչ պատճառաւ յունաց եւ լատինացուց եկեղեցեաց հարկ եղաւ բաժանել Ծննդեան տօնը՝ Մկրտութեան տօնախմբութենէն, կատարելով Ծննդեան տօնը դեկտեմբերի քսան եւ հինգին, եւ ապա յունվարի վեցին Մկրտութեան տօնը կատարել: Ո՛չ այլ ինչ պատճառս ունին, բայց միայն Բեթղեհեմի եւ Յորդանանու իրարմէ ճանապարհաւ հռուսորութիւնը, որովհետեւ մէկ օրուան մէջը շէին կարող այն մեծ եւ ամենափառաւոր տօնին խորհուրդը արժանավայել հանդիսիւ կատարել Բեթղեհեմի սուրբ այրին մէջ, եւ ապա ՚ի նոյն օրն միանգամայն զնալ հասանիլ ՚ի Յորդանան, եւ անդ հրաշալի խորհուրդն Մկրտութեան կատարելանթերի, վասն որոյ յաւուրս ա Յուլիոսի պապին հռովմայ, բաժանեցին սուրբ Ծննդեան տօնախմբութիւնը Մկրտութեան տօնէն, եւ սահմանեցին դեկտեմբերի քսան եւ հինգերորդ օրը կատարել, եւ ապա յունվարի վեցին Մկրտութեան տօնը, ինչպէս կը վկայեն պատմիչք եւ եկեղե-

ցական մատենագիրք: Գրէ կլեմէս Գալա-
նոս լատին կրօնաւոր ՚ի կարգէ Թէանիտաց
՚ի գիրս պատմութեան տպեալ ՚ի լեզու Հայ-
ոց եւ լատինացոց՝ ՚ի տասն եւ եօթներորդ
դարուն. «Ասիացոց կողմանքն եւ Երուսա-
ղէմ եւ այլ եւս եկեղեցիք զերկոսին տօնսն՝
զԾննդեան եւ զՄկրտութեան ՚ի մի եւ ՚ի
նոյն օր տօնէին, սակայն յետոյ փոխադրեալ
եղեն (իմա՛ բաժանեցան) ՚ի միմեանց . . . :
Թէպէտ տօնիւր Ծնունդն եւ Մկրտութիւնն
բաժանաբար՝ սկսեալ ՚ի Յուլիոս պապէն հե-
տէ. սակայն յոմանց եկեղեցեաց ընկալեալ
լինէր եւ յոմանց՝ ոչ, մինչեւ ՚ի ժամանակս
Թագաւորացն Որոնիու եւ Արկադու». *Հասար.*
Էր. 488-493: Գրէ Շամպէր իրեն ընդհան-
րական բառարանին մէջ *Եթիֆանիա* բառին
բացատրութիւնը տալով, որ ՚ի լատին լեզ-
ուէ յիտալականն՝ տպեալ է ՚ի Վենետիկ.
«Յուլիոս պապ վարեաց զիշխանութիւն իւր
՚ի 337 թուականէն Քրիստոսի մինչեւ ՚ի
352: Սա եղեւ՝ որ նախ քան զամենեսեան
ուսոյց եկեղեցոց բաժանել զտօն Ծննդեա-
նըն եւ Յայտնութեան»:

Եւ ահա՛ այսպէս ՚ի նամակէն Յովհաննու
յունաց արքեպիսկոպոսին Նիկիոյ՝ ծանի՛ր,
զոր գրեաց առ Զաքարիա կաթողիկոսն մեր,

Եւ թարգմանեաց մեծ վարդապետն մեր
 Գրիգոր Սկեւոացի խնդրանօք թագաւորին
 մերոյ Լեւոնի առաջնոյ. “Եղբայր տեառն
 Յակոբոս՝ որ ՚ի բեթղեհէմ մերձ էր Ծնընդ-
 եանն տեառն, եւ գիտէր քաջ զօրն եւ ըզ-
 ժամն, որ յետոյ եկաց եպիսկոպոս Երուսա-
 ղէմի ամս երեսուն. ՚ի նմին աւուր հաստատ-
 եաց կատարել զտօն Ծննդեանն եւ Մկրտու-
 թեանն: Որ եւ դէպ եղեւ երկոցունցն՝ ըստ
 թուոյ ամսոց ՚ի միում հանդիպել աւուր ՚ի
 վեցն յունվարի ամսոյ, թէ եւ ոչ համօրէն
 ամենայն ուրեք նմանապէս կատարէին՝ վասն
 ո՛չ ունելոյ տիրապէս հաստատութիւն եկե-
 ղեցւոյ: * * * Եւ արդ թէ ո՞րպէս փոխադրե-
 ցաւ տօն Ծննդեանն եւ Մկրտութեանն յո-
 րում էր՝ եւ եդաւ ՚ի քսան եւ հինգ դեկ-
 տեմբերի ամսոյ ծնունդն, եւ ՚ի վեցն յուն-
 վարի մկրտութիւնն՝ է այսպէս: Գրեաց եր-
 բեմն Կիւրեղ արքեպիսկոպոս Երուսաղէմի,
 ո՛չ այն՝ որ գրեաց զթուղթն առ Կոստանդինոս
 թագաւորն որդի մեծին Կոստանդիանոսի,
 այլ այն՝ որ յետ ժամանակի եկաց ՚ի նոյն,,
 աթոռ՝ առ Յուլիոս եպիսկոպոսապետաւն Հը-
 ոովմայ՝ եւ ասէ. մեծ աշխատութիւն հասանէ
 պաշտօնէիցս, եւ նուազութիւն լինի հրաշալի
 եւ փառաւոր տօնից ծննդեանն եւ մկրտու-

թեանն տեառն մերոյ՝ երկուցն՝ ՚ի միում ա-
 ւուր կատարելով, զի ընթերցմունքն եւ երգ-
 քըն ամենայն ըստ խորհրդեանն յաղագս բազ-
 մութեան պատուոյ աւուրցս եւ նուազու-
 թեան ժամուն անկատար մնան: Քանզի
 որպէս կարողութիւն է ՚ի միում աւուր կա-
 տարել իւրովք խորհրդածութեամբք յայրն
 Բեթղէհէմի, եւ գնալ ժամանել ՚ի Յորդա-
 նան, եւ անդ զՄկրտութիւնն ըստ իւրումն
 կատարել պատշաճից: Վասն զի Բեթղէ-
 հէմ հեռի գոլով յԵրուսաղեմէ երեք միլ-
 եայ՝ որ է Ֆարսախ, ՚ի հարաւոյ կուսէ, եւ
 Յորդանան հնգետասան միլեայ՝ յԵրուսա-
 ղեմէ, յարեւելից կուսէ, եւ զայսքան ճանա-
 պարհի երկարութիւն զիա՞րդ հնար է հատա-
 նել անցանել տօնասիրին, եւ զխորհրդածու-
 թիւն տօնիցն կատարել: Վասն որոյ բաժա-
 նեցին զտօն Ծննդեանն եւ Մկրտութեանն
 ՚ի միասին տօնելոյն, որպէս զի առանձինն իւ-
 րաքանչիւրքն ըստ արժանեացն պատուեսցին
 ընթերցմամբ աստուածային գրոց եւ երգօք
 հոգեւորոք»։ Յայս, Գէր Իւրայէլ. յո՞նձար է:
 Նաեւ Ներսէս շնորհալի սուրբ հայրապետն
 մեր Աստուածայայտնութեան տօնիցս բա-
 ժանման պատճառն յայտնի կրնէ՝ գրելով
 այսպէս»։ Յառաջագոյն ամենայն եկեղեցիք

սկսեալք յառաքելոցն՝ այնպէս տօնէին, (այսինքն զԾնունդն ընդ մկրտութեան ՚ի միում աւուր) եւ յետոյ բաժանեցին ոմանք վասն Բեթղեհէմի եւ Յորդանանու, քանզի ո՛չ կարէին ՚ի միում աւուր յերկոսին ուխտան կատարել զտօնան՝ հեռի գոլով ՚ի միմեանց, եւ փոքր փոքր աճամբ՝ ընկալան եւ այլ եկեղեցիք զնոյնն: Իսկ Հայաստանեայք որպէս ունին ՚ի սրբոյն Գրիգորէ՝ անփոփոխ կացին ՚ի նոյն»։ Ընդհն. էր. 60:

Արդ վերոյգրեալ վկայութիւններով ական յանդիման բացայայտեցաւ, որ Հայոց ուղղափառ Եկեղեցին հաստատուն մնացեր է հին աւանդութեան մէջ անփոփոխ, եւ չէ՛ ընդուներ նոր արարողութիւն մը հին վկայեալ աւանդութեան վրայով, ուրեմն ինչպէս ուղղափառ եւ ողջամիտ կը հանդիսանայ Հայաստանեայց Եկեղեցին ՚ի բանս վարդապետութեան հաւատոյ, նոյնպէս ալ հաստատուն կայ եւ մնայ յարարողութիւնս եկեղեցական նախնի աւանդութեան, թո՛ղ զրպարտեն ոմանք տգիտաբար՝ բանիւ միայն բարբառելով, եւ այլք թո՛ղ անխիղճ հակառակասէր ոգւով գրեն՝ եթէ «Հայէ ո՛չ կարարեն պօօն Յննդեանն յեռոսի ՚ի խան եւ Ընդ դեկտեմբերի, վասն որոյ են Ըերեփիկոս եւ ԸերջոսաՅող»:

Անշուշտ ասանկ բարուրանք եւ զրպարտութիւն ընողները ամօթապարտ եւ ափ ՚ի բերան պատկառին պիտի առաջի ուղղափառ աստուածաբաններուն, եւ Քրիստոսի Եկեղեցւոյն հարազատ եւ իրաւագէտ ուսումնականներուն, մանաւանդ որ պարտաւոր ալ պիտի ըլլան առաջի անաչառ ահեղ ատենին Աստուծոյ, որ ասէ ըստ վկայութեան առաքելոյն Պօղոսի, «Իմ են վրէժխնդրութիւնք, եւ ես հատուցից՝ ասէ տէր»։ ԵՔր. Ժ. 30:

Արդ՝ մեծ երանութեան արժանի է Հայոց ազգը, որ անյիշաչար հոգւով կը համբերէ եւ ո՛չ կը սրտմտի, եւ ո՛չ շարախօսութիւնս ինչ առնէ ՚ի վերայ զրպարտողաց եւ վատաբան անարգողաց իւրոց, այլ նման մեծին Կոստանդիանոսի կայսեր միշտ համբերութեամբ իրեն վեհանձնութիւնը կը յայտնէ, որպէս նա ինքն կայսրն մեծ՝ երբ լսեց ամբաստանողներէն, որ իրեն արքայական պատկերին անարգութիւն կուտան պատուելու տեղը, եւ այս ամբաստանութիւն ընողները կուզէին՝ որ երանելին իրենցմով գրգռուի եւ ՚ի բարկութիւն շարժեալ վրէժ առնէ թշնամիներէն, իսկ նա յայնժամ ձեռքովը ինքնիրեն երեսը շօշափելով՝ եւ հեզութեամբ ծիծաղելով ըսաւ ամբաստանողներուն, ես

իմ ճակատիս վրայ բնաւ չեմ տեսնար վեր-
քեր, ահա՛ ողջ է իմ գլուխս, եւ ողջ են իմ
բովանդակ երեսներս: Ոսկէք», ի ճառս. Ըս-
տոր Բ. Եր, 238:



ԳԼՈՒԽ ԺԴ

Մինչեւ այս տեղս բացայայտ գրուած
Հայոց Եկեղեցւոյն ուղղափառութեանը վը-
րայով թո՛ղ ուղղափառ աստուածաբանները
ճշմարտասէր հոգւով քննեն՝ եւ ուղիղը ի-
րաւաբանեն: Արդ կը մնայ մեզի այս մա-
սին մէջ ընդդէմ մեր Եկեղեցւոյն քանի մի
անտեղի եւ ստապատիր շարախօսութիւնները
յայտնի ընել. իբրեւ բողոք առ ճշմարտասէրս
եւ իրաւախոհս: Նախ՝ կը զրպարտեն թէ
Հայք չեն ընդունիր վերջին օծման խորհուր-
դը: Կը պատասխանեմ, եթէ չեն ընդունիր,
ինչո՛ւ միշտ կըսեն, թէ Եկեղեցւոյ խորհուրդ-
ները եօթն են. ինչպէս որ կը լսեն եւ կը կար-
դան Հայոց քրիստոնէական վարդապետու-
թեանց մէջ: Ուրեմն ինչպէս ամեն ուղղա-
փառ Եկեղեցիք կընդունին. Հայոց Եկեղե-
ցին ալ նոյնպէս կընդունի, որ եօթն են Եկե-
ղեցւոյ խորհուրդքը. եւ այս եօթն ալ Քրիս-

տոսէ սահմանուած են, այսինքն են մկրտութիւն, դրոշմն, հաղորդութիւն, ապաշխարութիւն, ձեռնադրութիւն քահանայական կարգի, պսակ սուրբ ամուսնութեան, եւ վերջին օծումն, կամ աղօթք ՚ի բժշկութիւն հիւանդաց:

Արդ մկրտութեան խորհուրդը վճռաբար սահմանեց Յիսուս Քրիստոս ասելով Նիկոդիմոս անուն իշխանին հրէից. “Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոք ոչ ծնցի ՚ի ջրոյ եւ ՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ”, Յօհ. գ. 5: Եւ առաքելոց հրամայեց յետ յարութեանն. “Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ”, Մատթ. իր. 19:

Այս մկրտութեան խորհուրդը ո՛չ միայն բանիւ սահմանեց Յիսուս, այլ եւ ինքնին իրեն անճառելի խոնարհութեամբը հեղինակ, եւ կամ կացուցիչ անմիջապէս մկրտութեան խորհրդոյն եղաւ. որովհետեւ երբ Յիսուս երեսուն տարեկան եղաւ, եկաւ ՚ի Յորդանան գետ, եւ այն տեղ մկրտուեցաւ սուրբ Յօհաննէս մկրտիչէն. ինչպէս կը վկայեն սրբազան աւետարանիչները. Մատթ. գ. 13: Մար. ա. 9: Գև. գ. 23: Այս յայտնի է

ամեն ուղղափառ քրիստոնեայներուն, որ Յիսուս կարօտ չէր մկրտուելու, որովհետեւ ինքն էր սրբարար ամենեցուն. այլ կամեցաւ իրեն ամենախոնարհ հեղինակութիւնովը սահմանել եւ հաստատել մկրտութեան խորհուրդը, որպէս սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր քարոզեց. “Որդին աստուծոյ վասն այսորիկ եկեալ մկտի, հաստատել զմկրտութիւն ամենայնի՝ որ մկրտելոց իցեն ՚ի նա. զի անդ իսկ զայս աւանդելով, զփրկութիւն ամենեցուն յայտնեալ, եւ ՚ի միտ առեալ ծանիցի իսկ”։ ԱԳաՐ. Էր. 147: Եւ սուրբն Եփրեմ գրէ ՚ի համաբարբառ մեկնութեանն Աւետարանին. “Ա՛ռ մկրտութիւն (Յիսուս ՚ի Յօհաննէ) ... զի մկրտութեամբ իւրով սահմանեսցէ զնա”։ ԳԼ Դ:

Արդ՝ արարողութիւն եւ ձեռն մկրտութեան ունի Հայոց Եկեղեցին այսպիսի, այսինքն մկրտող քահանայն երեք անգամ կ’ընկղմէ զերախայն ՚ի ջուր անդր աւազանին միանգամ ասելով. յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ”։ եւ այս երեք անգամ ընկղմելը կը նշանակէ երեքօրեայ թաղումն Քրիստոսի ՚ի սուրբ գերեզմանի. ինչպէս որ կը ցուցնէ մայր Մաշտոցն մեր. “Իջուցանէ (քահանայն) զերախայն ՚ի ջուրն, եւ ասէ,

(այս անուն) ծառայս Աստուծոյ եկեալ յերախայութենէ ՚ի Մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, գնեալ արեամբն Քրիստոսի ՚ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինիլ ժառանգակից Քրիստոսի, եւ տաճար Հոգւոյն սրբոյ»։ Եւ զայս միանգամ ասելով՝ երիցս թաղէ ՚ի ջուրն՝ յօրինակ երեքօրեայ թաղմանն Քրիստոսի», Եր. 15։ Այս խորհրդական արարողութեան ուղիղ վարդապետութիւնը գրով կաւանդէ Եկեղեցւոյն Քրիստոսի սրբազան առաքեալն Պօղոս՝ յասելն. «Եթէ ո՛չ գիտէք, զի որ միանգամ մկրտեցաք ՚ի Քրիստոս Յիսուս, ՚ի մահն անդր նորա մկրտեցաք, թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ՚ի մահ», Ընդ. 2. 3։ Այս բնաբանին վրայով Հ, Գաբրիէլը հետեւելով Ոսկեբերանի եւ Կիւրղի եւ այլոց ողջամիտ մեկնչաց՝ ուղիղ կը խօսի գրելով. «Երեւեցուցմամբ ըստ նմանութեանն, ըստ որում երիցս ընկղմելն եւ վեր առնուն յարարողութեան Մկրտութեան՝ նշանակէ գերեքօրեայ մահ եւ զթաղումն Փրկչին, եւ ըստ այսմ Մկրտութիւնն է պատկեր մահուն Քրիստոսի», Եր. 171։

Ի ներքոյ գրուած նախնի սրբոց հարց ող-

շամիտ վկայութիւնները խորհրդաւոր եւ գովելի կը հանդիսացունեն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ ըրած Մկրտութեան արարողութիւնը. “Սրբազնաբար մկրտեալն երիւք ՚ի ջուրն ընկղմամբք՝ զԱստուածպետական մահուանն եւ զերեքօրեայ թաղմանն կենսատու Յիսուսին բերէ զնմանութիւն», սուրբն Դիոնէսիոս ՚ի գիրս եկե. քահա. մասն բ. Գլ. բ: “Եւ զոր օրինակ Յիսուս զաշխարհական զմեղսն եկն ա՛ռ յանձն իւր, եւ մեռաւ, զի եւ զմահ սպանցէ, եւ զՅարութիւնն հաստատեսցէ Յարութեամբ իւրով. այնպէս եւ դու իջեալ ՚ի ջուրսն, եւ իբրեւ գրեթէ թաղեալ ՚ի ջուրս անդ՝ որպէս նա ՚ի վիմին. յարիցես միւսանգամ ՚ի նորոգումն ՚ի կենդանութեան ճեմեցեալ», սուրբն Կիւրեղ. Կոչ. ընթ. Գլ. գ: “Իււծեալ զբնութիւնս կենաց ունող՝ դարձոյց յանցանքն ՚ի մահու հող. իսկ անմահիդ մեռելութիւն՝ շնորհեաց դարձեալ զանմահութիւն. զորս են ընդ քեզ թաղեալ մահուամբ՝ աւազանին Մկրտութեամբ. յարո՛ ընդ քեզ քոյին փառօք՝ արեգական նման լուսով», Ներ. շնոր. յերգն շաբաթ ա-ո-ր արարչ: “Զօրինակ մահուն Քրիստոսի յինքեան նկարագրէ Մկրտութիւնն աւազանին: Երիցս ըն-

կղմելն ՚ի ջուրն՝ գերեքօրեայ թաղումն Յիսուսուսի նշանակէ. իսկ իջանել յաւազանն եւ ելանել՝ զՅարութիւն տեառն գուշակէ».
Սար, շնոր. ՚ի մեկ. ա. Պէտ. ճառ. բ. եր. 195:

Այս ալ պէտք է գիտնամք, որ Մկրտութիւնն կրկնելի խորհուրդ չէ՛, այլ անկրկնելի խորհուրդ է. ՚ի վերայ սոյն այս բանին Պօղոսի առաքելոյն. «Քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ: . . . Եւ կործանեսցին, միւսանգամ նորոգել յապաշխարութիւն, եւ վերստին ՚ի խաչ հանել անձանց զորդին աստուծոյ, եւ դարձեալ խայտառակել».
Ե՞ր. գ. 4: «Ուրեմն (ասէ սուրբն Յօհան ոսկեբերան) Որպէս անհնար է Քրիստոսի դարձեալ վեստին ելանել ՚ի խաչ մահու, նոյնպէս անհնար է մրկրտելոցն միանգամ դարձեալ վերստին անգամ ՚ի մկրտութիւն գալ. եւ որ կրկին մրկրտութեամբ յուսայ մաքրիլ եւ սրբիլ, վերստին ՚ի խաչ հանել փութայ զՔրիստոս, եւ կամ ընդունայն եւ անբաւական համարի զառաջին զաշխարհակեցոյց եւ զկամաւորական զխաչելութիւնն եւ զմահն Յիսուսի Քրիստոսի»:
Ասոր համար Պօղոս առաքեալ անկրկնելի պահելու համար մկրտութեան սրբ-

բարար խորհուրդը, կը գրէ. «Մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն», Եֆէ. դ. 5:

Այս առաքելական ականդութիւնը հաստատելով Նիկիոյ սուրբ ժողովոյն սրբազան հարք սահմանեցին հաւատոյ հանգանակին մէջ եւ այս ուղղափառ դաւանութիւնն ալ գրելով. «Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի, ՚ի մի մկրտութիւն», եւ այլն: Ուրեմն ո՞ր քրիստոնեայն՝ եւ կամ ո՞ր ազգի եկեղեցոյ կարգաւոր կրնայ համարձակիլ մէկ մկրտեալ Քրիստոնեայն վերստին մկրտելու. ո՞վ որ կը յանդգնի՝ ո՛չ միայն հակառակող կը ճանաչուի առաքելական կանոնաց՝ եւ սրբազան հարց՝ եւ տիեզերական Նիկիոյ սուրբ ժողովոյն, այլեւ կը պարտաւորի փրկարար խաչելութեան եւ կենդանարար մահուանն Յիսուսի Քրիստոսի:

Արդ՝ թէ որ հաւատամք «մի Մկրտութիւն», հարկաւ քրիստոնեայքս մեկզմէկու հոգեւոր եղբայրական սիրոյ աչօք կը նայիմք, թէ եւ ազգաւ եւ լեզուաւ ալ բաժանուած ըլլամք. թէ որ սիրտերնուս մէջ այս երեք բառին զօրութիւնը ունենամք, համոզուած ըլլամք՝ որ մեր Տէրը Փրկիչը մի է. մեր քրիստոնէութեան հաւատքը մի է, եւ մկր-

տութեան շնորհաց կնիքը մի է. հարկաւ մէկզմէկու վրայ չեմք շարախօսէր, եւ մէկ զմէկ կը մեծարեմք՝ կը պատուեմք, եւ Քրիստոսական սիրով մէկ սիրտ եւ մէկ հոգի ըլլալով միաբանութիւն կունենամք:

Երկրորդ խորհուրդն Եկեղեցւոյ է Դրոշմըն, որ կընդունի մկրտեալն սուրբ Հոգւոյն աստուծոյ զօրացուցիչ շնորհաց ներքին օծութիւնը անջնջելի դրոշմուած, որով լինի շնորհական որդի Հօր աստուծոյ, եւ հոգեւոր զինուոր Քրիստոսի. որով կարողնայ՝ եւ կը պատրաստուի յաղթելու մոլորութիւնները եւ մեղաց պատճառները. եւ անկորուստ պահելու քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը. այս մտօք կը գրէ սրբազան աւետարանիչն Յօհաննէս առ ընդհանուր քրիստոնեայս. “Եւ դուք օծութիւն ունիք առ ՚ի սրբոյն, եւ զիտէք ամենեքին զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորեցուցանիցէ. եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք ՚ի նմանէ՝ բնակեսցէ ՚ի ձեզ. եւ չէ՛ ինչ պիտոյ՝ թէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի, եւ ճշմարիտ է՝ եւ չէ՛ սուտ, եւ որպէս ուսոյցն զձեզ, կայք ՚ի նմա», ա. ՅօԸ. բ. 20. 27:

Ահա այս բնաբանէն առնելով՝ եւ քիչ մը բացատրութիւն տալով, կը գրէ սուրբն Ներսէս լամբրոնացի. «Սա (այսինքն Հոգին սուրբ) օծանէ զմիտս մեր ըստ Յօհաննու, եւ առնէ զքրիստոնեայս եւ քրիստոսընկալս. եւ յայսմ օծութենէ զօրանամք գիտել զամենայն: Սա լուսաւոր առնէ զաշս սրտից մերոց՝ գիտել զյոյս կոչման մերոյ, եւ զմեծութիւն փառաց ժառանգութեան, եւ զլայնութիւն եւ զերկայնութիւն սիրոյն Քրիստոսի».

Ն
Տառ Հոգւոյն «բոյ»:

Ուստի հաստատ եւ աներկբայ յուսով կը հաւատամք, թէ սրբարար խորհրդով Մկրտութեան անշուշտ կը մաքրուին, եւ կը սըրբուին սկզբնական մեղաց աղտեղութենէն եւ ապականութենէն այն ամեն հոգիները, որ օրինաւոր մկրտուած են սուրբ Երրորդութեան երկրպագելի անունով Եկեղեցւոյն սուրբ աւագանին խորհրդաւոր ջրոյն մէջ: Եւ մանաւանդ կը հաւատամք՝ որ սքանչելի եւ շնորհաբեր խորհրդով դրոշմին՝ նոյն մաքրեալ եւ սրբեալ հոգիները կը կնքուին Աստուածային ձրիական շնորհիւր, այսինքն հաստատուն եւ անջնջելի կրնդունին ներքին ներգործութիւնը արիութեան եւ զօրութեան սուրբ Հոգւոյն, որով չէ՛ թէ միայն հոգեւ-

րապէս զինուոր Քրիստոսի կըլլան, այլ եւ միանգամայն արժանաւորութիւն կունենան ժառանգելու յաւիտենական երանութեան կեանքը՝ եւ երկնից արքայութեան փառքը փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի հետը ժառանգակից եւ փառակից ըլլալով. ասոր համար է՝ որ կը գրէ սրբագան Պօղոս առաքեալ. “Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ: Եւ եթէ որդիք, ապա ժառանգք. ժառանգք աստուծոյ՝ եւ ժառանգակիցք Քրիստոսի”. Հռոմ. ը. 16: “Որ հաստատեաց զմեզ ձեօք հանդերձ ՚ի Քրիստոս, եւ օժ զմեզ, Աստուած է, որ եւ կնքեաց զմեզ, եւ ետ զառհաւատչեայ հոգւոյն ՚ի սիրտս մեր”. Բ Կորն. ա. 21:

Այս առաքելական ողջամիտ վարդապետութիւններուն վրայով խորհրդածութիւն ընելով, սուրբ վարդապետն մեր Գրիգոր նարեկացի սրբալոյս Միւռոնի ճառին մէջ կը գրէ. “Զի որպէս յիշումն լուսարանի սուրբ աւագանին՝ լուացմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատամք առնուլ զսրբութիւն, այնպէս յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութիւն. սովիմբ եւ ՚ի սոյն համարիմք ունիլ ամենայնիւ աներկմտելի: . . . Եւ մկրրտ-

եալք ՚ի մահ կենդանւոյդ՝ անվախճան կենացդ սովաւ հաղորդիմք, ՚ի քեզ իսկ Աստուած համայնիւ խրախուսեալ՝ իսպառ ամենեւին անհատուածելի: Այս իւղ՝ զդրոշմեալն քառակուսեան յանուն քո Յիսուս՝ նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ. շրնորհ ընձեռեալ զուգափառ եւ նմանատիպ արեան կեցուցչիդ՝ նոյն անվանելի փառօք պսակեալ մեծացուցանէ», Նաբ. գլ. զգ. 3—20:

Արդ՝ այս շնորհապարգեւ դրոշմին խորհուրդը յայտնեցաւ նախ ՚ի գետն Յորդանան. վասն զի երբ Յիսուս մկրտեցաւ՝ յայտնի տեսնուեցաւ Հոգւոյն սրբոյ աղանակերպ իշումը Յիսուսի վրայ, ինչպէս կը գրէ Մատթէոս աւետարանիչը. «Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի. եւ ահա՛ բացան նմա երկինք. եւ ետես զՀոգին աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղանի, եւ գայր ՚ի վերայ նորա», Մաթ. գ. 16:

Ասով յայտնի ըրաւ Յիսուս Քրիստոս ամեն մէկ օրինաւոր մկրտեալներուն արժանաւոր ըլլալնին սրբոյ Հոգւոյն ձրիական եւ զօրացուցիչ շնորհքներուն. ասոր համար բացայայտ եւ պարզ կը գրէ Ներսէս շնորհալի սուրբ հայ-

րապետն մեր առ դասս քահանայից, “Այլ որպէս զսուրբ պատարագն՝ այնպէս երկիր-դիւ կատարեցէք զպաշտամունսն եւ զընթերցմունս աստուածաշունչ բանիցն եւ զամենայն կարգաւորութիւնսն սուրբ Մկրտութեանն խորհրդոյ, եւ եթէ այսպէս առնիցէք՝ հաւատացէք, զի որպէս էջ Հոգին սուրբ ՚ի վերայ Փառակցին իւրոյ ՚ի Յորդանան, նոյնպէս եւ ՚ի վերայ ամենայն ուղղափառ հաւատով մկրտելոց իջցէ՝ զորս եւ յորդէգրութիւն Աստուած Հայր վերակոչէ շնորհօք, որպէս զբնութեամբ Որդին, եւ լինիք դուք արբանեակք եւ սպասաւորք Հոգւոյն սրբոյ յաստուածարարութեանն շնորհ», ԸնդՀ, Եր. 39:

Այս Հոգւոյն սրբոյ շնորհաց ներգործութեան եւ զորութեան խորհուրդը, որ անջնջելի կը դրոշմուի մկրտեալներուն հոգւոյն մէջ, խոստանալով աւանդեց Յիսուս Քրիստոս առաքելոց իրեն սքանչելահրաշ Յարութենէն ետքը՝ ըսելով. “Եւ ահա՛ ես առաքեմ զաւետիս հօր իմոյ՝ ՚ի ձեզ, եւ դուք նստարուք ՚ի քաղաքիս յԵրուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ՚ի բարձանց», Գ. 48: “Այլ առջիք զօրութիւն ՚ի հասանել Հոգւոյն սրբոյ ՚ի վերայ

ձեր, եւ եղիջի՛ք ինձ վկայք յԵրուսաղէմ, եւ յամենայն հրէաստանի եւ ՚ի Սամարիա մինչեւ ՚ի ծագս երկրի», Գործ. ա. 8:

Յետ այնորիկ սրբազան առաքեալները հաւատացեալ մկրտուողներուն վրայ այս դրոշմի խորհուրդը կատարելով աւանդեցին Քրիստոսի Եկեղեցւոյն. ինչպէս որ յայտնի կըլլայ այս հետեւեալ վկայութիւններով. “Իբրեւ լուան՝ որ Յերուսաղէմ առաքեալքն էին, թէ եւ ՚ի Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զՊետրոս եւ զՅօհաննէս, որք իջեալ կացին յաղօթս ՚ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգի սուրբ. զի ցայնժամ շեւ եւս էր եւ ոչ ՚ի վերայ միոյ նոցա հասեալ, բայց միայն մըկրտեալք էին յանուն տեառն Յիսուսի: Յայնժամ եղին զձեռս ՚ի վերայ նոցա՝ եւ առնուին հոգի սուրբ», Գործ. ր. 14: “Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն տեառն Յիսուսի: Եւ ՚ի զնել ՚ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն Հոգի սուրբ ՚ի վերայ նոցա, խօսէին լեզուս՝ եւ մարգարէանային, եւ էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան», Գործ. ժթ. 5: “Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին սուրբ աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան», Եփեա. դ. 30:

Այս դրոշմին խորհուրդը կը կատարեմք չէ թէ միայն աղօթիւք՝ եւ օրհնութեամբ՝ եւ ձեռաց դրութեամբ, այլ եւ օծանելով մկրտելոյն ճակատը եւ զգայարանքը սրբալոյս միւռոնաւ, որ է իսկապէս արտաքին եւ խորհրդաւոր սուրբ նշան ներքին տեսչութեան եւ անջնջելի ներգործութեան շնորհաց Հոգւոյն սրբոյ. ինչպէս հետեւեալ վրկայութիւնները պիտի հաստատեն մեր սուրբ Եկեղեցւոյն այս խորհրդւոր արարողութիւնը. սուրբն Դիոնեսիոս կը գրէ. “Սրբազանին աստուածածնելութեան կատարողականն պարգեւ եւ շնորհք՝ իւղոյն աստուածայնով կատարմամբ կատարի”, ՚ի Գրքո՞ւ Եկեղ. Կառ. Գլ. Դ. Ծառն Դ: Սուրբն Կիրեղ հայրապետն Երուսաղէմի կըսէ. “Ճակատդ եւ այլ զգայարանք մարմնոյդ խորհրդաբար օծանին, այլ հոգին՝ սուրբ եւ կենդանարար հոգւովն սրբեալ արդարանայ”, ՚ի Գաղթիւնիո: Եւ սուրբն Կիպրիանոս կը գրէ. “Հարկ է օծանել այնմ որ մկրտեալ իցէ, որպէս զի յառնուլ զմիւռոնն, այս է զօծումն, մարթասցի լինիլ օծեալ տեառն եւ շնորհագարդեալ”, ՚ի Թուղթն. հ: Սուրբ Գրիգոր նարեկացին կը գրէ. “Իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ ՚ի մեզ օծանէ զար-

տաքին խորանս, իսկ զներքին մարդս աներեւակ՝ ծածկապէս մտեալ նոր կենդանածնէ»։ Գլ. ՂԳ. 3:

Այս խորհրդաւոր արարողութիւնով մը կրտել եւ դրոշմելը աւանդեց մեզի մեծ քահանայապետն մեր սուրբ Գրիգոր լուսաւորիչ ազգիս Հայոց. ինչպէս կը գրէ Ագաթանգեղոս. «Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն՝ ՚ի մկրտութիւն անդր ՚ի ջուրսըն Եփրատ գետոյն, նշան սքանչելի երեւեալ յաստուծոյ. զի զտեղի առեալ ջուր գետոյն, անդրէն դարձան ընդ կրունկէ . . . Եւ իւղն օծութեան՝ զոր արկանէր Գրիգոր ՚ի վերայ մարդկանն, շրջան առեալ ՚ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկամբն խաղայր . . . Սոյն օրինակ գործեաց եւ բազմացոյց զեկեղեցիս, եւ կացոյց քահանայս, եւ Քրիստոսեան դրոշման առ հասարակ ընծայեցուցանէր զամենեսեան լինել ամենեցուն հոգւովն սըրբով»։ ԵԳԽԲ. ԳԻՊ ԿՕԼ ԵՐ. 307—311:

Այս շնորհապարգեւ դրոշմի խորհուրդը օրհնուած եւ նուիրուած խորհրդաւոր միւռոնին սուրբ իւղովը կատարվիլը Աստուծոյ հրամանէն սահմանուած խորհուրդ մի է, որոյ օրինակները կը յայտնէ մեզի Աստուածաշունչ սուրբ գիրքը. որ մարգարէները

Աստուծոյ հրամանաւը օրհնած իւղով կօծանէին քահանայները եւ թագաւորները, եւ շատ անգամ ալ Աստուծոյ նուիրելու եւ ընծայելու կրօնական գործիքներ եւ անօթներ ալ կօծանէին. “Եւ յարեալ Յակոբ ընդ առաւօտն, եւ առ զվէմն զոր եղ ընդ սնարս իւր, եւ կանգնեաց զնա արձան, եւ արկ իւղ ՚ի գլուխ նորա, եւ կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ Տուն Աստուծոյ», ԾՆՆ. իր. 18: “Խօսեցաւ տէր ընդ մովսէսի՝ եւ ասէ, եւ դու առ քեզ խունկս անուշունս եւ իւղ ձիթենեաց հիմենեաւ միով: Եւ արասցես զայն իւղ յօծումն սրբութեան, իւղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց՝ իւղ օծումն սրբութեան լինիցի: Եւ օծցես ՚ի նմանէ զխորանն վկայութեան, եւ զտապանակ վկայութեանն, եւ զսեղանն եւ զամենայն զկահ նորա, եւ զաշտանակ եւ զամենայն զկահ նորա, եւ զսեղանն խնկոցն, եւ զսեղանն ողջակիզաց եւ զամենայն զկահ նորահ. եւ զաւազանն եւ զյատակս նորա: Եւ սրբեսցես զնոսա, եւ եղիցի սրբութիւն սրբութեանց, ամենայն որ մերձենայցէ ՚ի նոսա՝ սրբեսցի: Եւ զԱհարօն եւ զորդիս նորա օծցես, եւ սրբեսցես զնոսա ինձ ՚ի քահանայութիւն: Եւ ընդ որդիսն իսրայէլի խօսեսցիս՝ եւ

ասասցես՝ իւղ յօծումն օծութեան սրբոյ եղիցի ձեզ յազգս ձեր», Եւլից. Լ 22—31: զԷ—Գա. Ը. 1—12: Սաղ. ձր. 18: Տլբ. 2: Եւս եւ գրուած է. “Եւ ասէ տէր ցՍամուէլ. արի՛ օ՛ծ գԴաւիթ, զի դա է բարի: Եւ առ Սամուէլ զեղջիւրն իւղոյ, եւ օծ զնա ՚ի մէջ եղբարց իւրոց. եւ խաղաց հոգի տեառն ՚ի վերայ Դաւիթի յօրէ յայնմանէ՝ եւ առ յապա», ա ԹաԳ. ժգ. 12:

Ահա յայտնի եղաւ, որ Աստուածային հր-րամանաւ սահմանուած է օրինական սուրբ եւ օրհնութեան իւղը մովսիսական հին օրինաց մէջ, եւ ահա՛ այս իւղով հին օրինաց աստուած-պաշտութեան կրօնից հարկաւոր եղած խո-րանները՝ սեղանները՝ անօթները՝ աւազան-ները օծուելով “Սրբութիւն սրբութեան», կանուանէին, եւ մարգարէներուն ձեռօքը հին օրինաց քահանայները եւ թագաւորները կօծուէին, եւ օծեալ տեառն կանուանէին. Սաղ. ժթ. 6: Ճդ. 14: Ապա ո՞րչափ առա-ւել այս սրբալոյս միւռոնին օծումը գերա-զանցութիւն ունի հին օրինակէն երկնաւոր շնորհքներու եւ հոգեւոր փառքերու տու-շութեամբ, որ կը ներգործէ սուրբ հոգին մկրտուած եւ դրոշմած հոգիներուն մէջ. ասոր համար է, որ սրբազան Պօղոս առաք-

եալ կը գրէ ուղղափառ հաւատացեալներուն Եփեսացոց եկեղեցւոյն. “Որով եւ դուք իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ կնքեցայք հոգւոյն սրբոյ աւետեաց. որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, ՚ի փրկութիւն նուաճութեան, ՚ի գովեստ փառաց նորա,, Եփէ. ա. 13: Եւ սրբազան Պետրոս առաքեալը բացայայտ գրելով՝ ամենուն կը յայտնէ, որ մկրտեալները եւ սքանչելի դրոշմին խորհրդով օծեալները ընդունած են Աստուածային շնորհաց անհամեմատ եւ գերազանց ներգործութիւնը, վասն որոյ կըսէ. “Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնսն նուիրիցէք այնմ, որ ըզձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն: Որք երբեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտիք,,: ա Պէգր. բ. 9:

Ե՞րբ արժանաւոր եղանք այս Աստուածային պարգեւներուն, յայտնի է՝ որ երբ մկրտուեցանք եւ սրբալոյս միւռոնին խորհրդաւոր դրոշմիւ կնքուեցանք, ինչպէս կը գրէ եւ սուրբ Գրիգոր նարեկացին. “Սոյն

իւղ զարմանահրաշ օրհնութեան լուսոյ՝ ըզհրէայն եւ զխուժն՝ զհնդիկն եւ զբարբարոսն՝ զսկիւթացին եւ զհելլենացին՝ զդուժն դժնէաբար՝ եւ զարհաւրատեսակ շանագըլուխն սոսկավիթխար՝ զտէրն ազատ՝ եւ զստրուկն ծառայածին, քրիստոսեան արարեալ՝ անուամբ քո կնքէ, եւ հոգւոյդ սրբոյ ընծայէ, եւ հօրդ երկնաւորի՝ հարազատ որդի հաստատէ», գլ. զգ. 12:

Ահա՛ դրոշմի սուրբ խորհրդոյն վրայ ունեցած ուղղափառ խոստովանութիւնը Հայոց սուրբ Եկեղեցւոյն աստանօր այսքանով յայտնի ընել կարողացանք. գանք հիմա սուրբ Եկեղեցւոյն երրորդ խորհրդոյն վրայ ալ հա-մարձակ խօսելու Հոգւոյն սրբոյ շնորհիւր:

Երրորդն է կենդանարար եւ սրբագործ խորհուրդն Հաղորդութեան, որ այն նուիրեալ խորհրդական նիւթով, այսինքն սրբագործուած հացով եւ գինիով կը հաւատամք եւ կը խոստովանիմք, որ իսկապէս անմահարար մարմին եւ սրբարար արիւն Յիսուսի Քրիստոսի է, որ կընդունիմք ՚ի փրկութիւն հոգւոց մերոց՝ եւ ՚ի ժառանգութիւն յաւիտենական կենաց. վասն զի ինքնին ամենակարող տէրն մեր Յիսուս Քրիստոս իրեն ամենագոր հրամանաւր սահմանեց այս խորին՝

մեծ՝ եւ սքանչելի խորհուրդը, որ միայն հոգւոյ աչօք կը տեսնուի՝ եւ ողջամիտ կատարեալ հաւատով կը ճանաչուի: Իսկ միայն մարմնաւոր աչօք եւ միայն նիւթը քննելով նայողները կը տեսնան լոկ հաց եւ գինի, ասանկներուն բնաւ չազդէր եւ չ'ներգործէր աւետարանական եւ առաքելական համաբարբառ վկայութիւնները. ինչպէս որ աւետարանիչները կը գրեն. “Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ ա՛ն Յիսուս հաց՝ օրհնեաց եւ եբեկ. եւ ետ աշակերտացն՝ եւ ասէ. առէ՛ք կերայ՛ք՝ այս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա եւ ասէ. արբէ՛ք ՚ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղանի ՚ի թողութիւն մեղաց”։ Մար. իգ. 26: “Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց՝ օրհնեաց եբեկ, եւ ետ նոցա, եւ ասէ. առէ՛ք այդ է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ եւ ետ նոցա, եւ արբին ՚ի նմանէ ամենեքեան: Եւ ասէ ցնոսա, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղանի”։ Մար. ժգ. 22: “Եւ առեալ հաց, գոհացաւ՝ եբեկ եւ ետ նոցա՝ եւ ասէ, այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ, զայս արասջի՛ք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս

եւ զբաժակն յետ ընթրեացն, ա՛ն՝ եւ ասէ, այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ», Առ. իբ. 19: Եւ սրբազան Պօղոս առաքեալը աւետարանիչներուն համաձայն կը քարոզէ՝ եւ կաւանդէ Եկեղեցւոյն՝ ըսելով. «Զի ես ընկալայ ՚ի տեառնէ՝ զոր եւ ձեզն աւանդեցի. եթէ տէր Յիսուս ՚ի գիշերին յորում մատնէր, ա՛ն հաց, գոհացաւ՝ եբեկ եւ ասէ, առէ՛ք եւ կերա՛յք, այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի. զայս արարէ՛ք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն՝ ա՛ն եւ ասէ. այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէ՛ք քանիցս անգամ թէ ըմպիցէք, առ իմոյ յիշատակի», Առքն. ժա. 23:

Ուրեմն Յիսուս Քրիստոս իրեն ամենակարող ձեռքը առած հացին եւ բաժակին համար ըսելով այս է մարմին իմ եւ ի՛նչ էլ այս է արիւն իմ յայտնի ըրաւ սրբազան առաքելոց եւ ամենայն հաւատացելոց, որ ի՛նչ կերպով եւ կամ ի՛նչ նիւթով պիտի ճանաչուի եւ ընդունուի իրեն փրկագործ մարմինը եւ սրբարար արիւնը, որ է անմահական կերակուր եւ ճշմարիտ ըմպելի հոգւոց մերոց: Եւ զայն արժանապէս ճաշակելով եւ ըմպելով՝ անշուշտ պիտի միանամք իրեն հետը, եւ հաղորդ պիտի

ըլլամք իրեն շնորհքներուն, ասոր համար յառաջագոյն կամեցաւ Յիսուս՝ որ շըլլայ թէ Կափառնայումցիները միայն մարմնաւոր հացին հրաշագործութիւնով շատնալուն վրայ միտքերնին տալով՝ իրեն ետեւէն երթան, եւ միայն մարմնաւոր բարիք խնդրելու փոյթ ունենան, այլ մանաւանդ գիտնան՝ որ ինքն Յիսուս իրեն ճշմարիտ հաւատացեալներուն հոգեւոր եւ խորհրդական կերակուր ալ պատրաստած է. ասոր համար ըսաւ անոնց. «Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ, խնդրէք զիս, իբր ո՛չ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ՚ի հացէ անտի՝ եւ յագեցարուք: Երթա՛յք գործեցէ՛ք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն՝ որ մնայ ՚ի կեանսն յաւիտենականրս. զոր որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած», 302. գ. 26:

Այս կարճ խօսքերով Յիսուս երեք կերպ ճշմարտութեամբ ծանօթ ընել կամեցաւ այս ժողովուրդները. մէյ մը որ հաւատով եւ առաքինական գործով ինքըզինքնին պատրաստեն ներքին սիրով եւ փափաքանօք իրենց համար պատրաստուած երկնային հոգեւոր եւ անմահական կերակուրին, որ է խորհուրդըն Հաղորդութեան, եւ երկրորդ՝ հաւատան

իրեն, թէ է ճշմարիտ որդի մարդոյ եւ ճշմարիտ Աստուած եւ որդի Աստուծոյ. եւ երրորդ՝ ճանչնան եւ հաւատան, որ ինքն ըստ որում Աստուած եւ որդի Աստուծոյ, ամենակարող է ըստ ամենայնի հրամայելու եւ ընելու, եւ անոր կարողութեանը եւ զօրութեանը առջեւ անկարելի բան մը չի կայ ո՛չ երկինքին մէջ, եւ ո՛չ ալ երկրի մէջ. ըստ այնմ. “Չամենայն զոր ինչ կամեցաւ՝ եւ արար տէր, յերկինս եւ յերկրի՝ ՚ի ծով եւ յամենայն խորս», Սաղ. ԶԼԴ. 5:

Ուրեմն ինչ որ կը կամի կարող է հաստատելու եւ փոխարկելու. նոյն ամենակարողութիւնն է՝ որ հաստատեց ամեն երեւցած եւ չերեւցած էակները՝ իրեն հրամանաւ, որ յառաջագոյն չի կային. “Նա էր ՚ի սկզբբանէ առ Աստուած. ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ որ ինչ եղեւ», ՅօԼ. ա. 3: “Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս՝ եւ որ ինչ յերկրի, որ երեւին՝ եւ որ ո՛չն երեւին», Վոդոս. ա. 16: “Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանս բանիւ Աստուծոյ, յաներեւութից զերեւելիսս եղեալ», Եբր. Ժա. 3:

Ուրեմն կամեցաւ Յիսուս՝ որ այս ժողո-

վուրդներուն ծանօթութիւն տայ, եւ իմացունէ իրեն ամենակարողութիւնը, թէ կարող է իրեն իսկական կենդանարար մարմնոյ եւ արեան զօրութիւնը ներգործելու այն նուիրեալ եւ սրբագործեալ հացին եւ բաժակին մէջը, վասն որոյ այս հաւատոյ կըրթութիւնը տալէն վերջը՝ ըսաւ. “Հացն՝ զոր ես տաց, մարմին իմ է. զոր ես տաց վասն կենաց աշխարհի», Յօճ. գ. 52:

Ըսինք որ ամենակարողութիւնն Յիսուսի Քրիստոսի՝ ըստ որում Աստուած, կարող է ո՛չ միայն հաստատելու, այլ եւ բնութիւններուն փոխարկութիւններ ալ տալու. ինչպէս մարդս է մահականացու, այսինքն ամենքս մահականացու բնութիւն ունիմք, եւ ՚ի հողոյ ստեծեալ է մարմին մեր, եւ ՚ի հող պիտի դառնայ. ուրեմն մեր մարմինը չէ՛ անմահ. ըստ այնմ “Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ, եւ ո՛չ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ՚ի ձեռաց դժոխոց», Սաղ. ձր. 49:

Արդ կարելի՞ է որ այս մահականացու մարմինն իս ունենայ անմահութեան զօրութիւն, թէպէտ մարդկային բնական գիտութեամբ կամ Ֆիզիգապէս անկարելի է. բայց Աստուածաշունչ գիրք կը վկայեն, թէ ամենակարող տէր Աստուած փոխարկութիւն տը-

վաւ Ենովք նահապետին մահկանացու բընութեանը, յանմահութիւն փոխուիլ. “Եւ հաճոյ եղեւ Ենովք Աստուծոյ. եւ ո՛չ ուրեք գտանիւր, զի փոխեաց զնա Աստուած»,. Ծնն. ե. 24: Ողջամիտ մեկնիչները համաձայն եւ համեմատ Աստուածաշունչ գրոյն այսպէս կը վճռեն, որոնցմէ մէկն է սուրբն Յօհան ոսկեբերան. “Ենովք նահապետ (ասէ) անմահաբար փոխեալ կայ դեռ կենդանի ընդ Եղիայի զուարճացեալ անախտաւոր կենօք յիմանալի տեսութիւնս»,. Եբր. Տառ իբ. Է-ի մէկն. Զնն. Տառ իա: Եւ Պօղոս սրբազան առաքեալը կը գրէ. “Հաւատովք Ենովք փոխեցաւ զի մի՛ զմահ ճաշակեսցէ. եւ ո՛չ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած»,. Եբր. ժա. 5:

Տեսա՞ր մի Աստուծոյ կարողութիւնը, որ մահկանացու բնութեանը մէջ անմահութեան զօրութիւն կը ներգործէ: Ահա եւ այս ալ, Բաբելոնի հնոցին կրակը կը սաստկացընէր ամբարտաւան արքայն Նաբուգոդոնոսոր, որ իրեն պատկերին երկրպագութիւն չընողները ձգէ այն բորբոքեալ հնոցին մէջ, որ այրին մոխիր դառնան: Ձգեց այն երանելի երեք մանկունքն ալ Սեդրաք՝ Միսաք՝ եւ Աբեթնագով, բայց անոնք Աստուծոյ ամե-

նակարողութեանը յուսալով՝ կըսէին. “Զի է մեր Աստուած յերկինս՝ զոր մեքն պաշտեմք, կարող է փրկել զմեզ ՚ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ”, Դան. գ. 17:

Տե՛ս ի՞նչպէս Աստուած կարող եղաւ այն բորբոքեալ հնոցի կրակին զօրութիւնը փոխել պաղըշկեցնող հովի մը, կրակին բնութեանը մէջ այրել կայ բայց պաղշկեցընել չի կայ. “Եւ հրեշտակ Աստուծոյ էջ . . . եւ արար ՚ի մէջ հնոցին իբրեւ զհողմ՝ որ ցօղագին շնչիցէ”, Դան. գ. 49: Այս Աստուածային կարողութեանը վրայ կերգէ սուրբ Ներսէս շնորհալին. “Որ զայրեցող բնութիւն բոցոյն ՚ի ցօղ փոխարկելով, ՚ի տոչորմանէ հրոյն զերիս մանկունան անկէզ պահեալ, բարձր արարէ՛ք զնա յաւիտեան”, Եւր:

Ուրեմն Աստուած կարող է եղեր կրակին նիւթը չ՛փոխելով՝ անոր մէջը ուրիշ զօրութիւն մը ներգործելու: Օրինակ մի եւս ՚ի սուրբ Աւետարանէն, ամենքս բնականապէս գիտեմք, որ ջուրը կենդանիները եւ բուսականները սնուցանող եւ աճեցնող է. եւ առանց ջրոյ երկրի հողերը անպտուղ եւ անբեր կըլլան. կենդանեաց ծարաւը կը զովացնէ եւ աղտեղութիւնը կը մաքրէ, եւ հրոյն բորբոքը կը շիջուցանէ. բայց այն զօրութիւնը

չունի, որ բժշկութիւն տայ ամեն տեսակ ցաւերու եւ հիւանդութեան, այսինքն կուրութեան, կաղութեան, անդամալուծութեան, եւ գոսոտութեան եւ այլն, տե՛ս հիմա սրբազան աւետարանիչն Յօհաննէս, նայէ՛ ի՞նչ կը պատմէ, ամենակարողն, Աստուած Երուսաղէմի մէջ եղած Պրոպատիկէ աւագանին ջուրին նիւթը չ'փոխելով՝ անոր ամենատեսակ բժշկութեան զօրութիւն մը ներգործելով՝ հրաշալի փոխարկութիւն մը տուէր էր, ըստ այնմ. “Եւ էր յԵրուսաղէմ ՚ի Պրոպատիկէ աւագանին, որ կոչէր եբրայեցերէն բեդհեզգա, հինգ սրահ, յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց՝ կաղաց՝ գօսացելոց, որք ական ունէին ջրոցն յուզելոյ: Եւ հրեշտակ տեառն ըստ ժամանակի իջանէր յաւագանն, եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր յաւագանն, բժշկէր՝ ո՛չ ունելով նշան հիւանդութեան»,. ՅօԸ. ե. 2:

Ահա քեզի ուրիշ օրինակ մի եւս, Կանա գալիլեացիներուն հարսանիքը գնաց Յիսուս իրեն աշակերտներովը. հոն էր Յիսուսի մայրն ալ սուրբ կոյսն Աստուածածին. գինին երբ որ հատաւ, սուրբ աստուածածին բարեխօսութիւն մը ըրաւ իւր միածին որդւոյն՝ ըսե-

լով. “Գինի ո՛չ ունին», 3օԸ. բ. 3: Թէպէտ Յիսուսի հրաշագործութեան ժամանակը դեռ եկած հասած չէր, որուն համար ըսաւ, “Զի՞ կայ իմ եւ քո կին դու՛ չեւ է հասեալ ժամանակ իմ»,։ Բայց սուրբ կոյսն գիտէր՝ որ իրեն բարեխօսութիւնը իր որդւոյն առջեւը պարապ չէր երթար, եւ իւր աստուածորդին ունէր ամենակարող զօրութիւն ամեն բան հաստատելու եւ փոխարկելու. ասոր համար համարձակ հրամայեց հարսանիքին մէջի սպասաւորներուն, որ Յիսուս անոնց ինչ որ հրամայէ՝ ընեն. “Ասէ մայրն նորա ցսպասաւորսն, որ զի՛նչ ասիցէ՛ ձեզ՝ արասջի՛ք»,։

Յիսուս իւր սուրբ մօրը անդառնալի բարեխօսութիւնը կատարելու համար հրամայեց սպասաւորներուն, որ այն տեղը գտնուած պարապ ջուրին ամանները ջրով լեցնեն, եւ անոնք ալ լեցուցին. եւ ետքը հրամայեց, որ այն ամաններուն ջուրէն բերեն եւ տան տաճարապետին (վէքիլիսարճ). երբ որ բերին՝ խմեց տաճարապետը, տեսաւ, որ պատուական անոյշ գինի էր, եւ չէր գիտէր որ յառաջ ջուր էր, ըսաւ փեսային. “Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. եւ յորժամ արբենան, յայնժամ զյոռին.

դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայ-
ժըմ»,* Յօժ. ք. 10:

Ապաքէն Յիսուս Քրիստոս ըստ որում
Աստուած եւ որդի Աստուծոյ, ունի ամենա-
կարողութիւն՝ ո՛չ միայն զանազան նիւթէ-
րու մէջ զանազան փոխարկութիւններ ընե-
լու, այլեւ նիւթն ալ՝ եւ տեսակն ալ ուրիշ
նիւթի եւ տեսակի փոխարկելու. ինչպէս այս
վերոյիշեալ ջուրին նիւթը եւ տեսակը փո-
խարկեց ՚ի նիւթ եւ ՚ի տեսակ գինւոյ, այս
Աստուածային ամենակարողութիւնը չը ճանչ-
ցողը հարկաւ կը գայթակղի, կը լսէ ճշմար-
տութիւնը, բայց կը մնայ իրեն մոլորութեան
մէջ անկանգնելի եւ անզեղջ յամառեալ:
Պօղոս առաքեալ՝ հաւատոյ լոյս ունեցող ի-
մաստուններուն հետ խօսելով կըսէ, “Իբրեւ
ընդ իմաստունս խօսիմ, ընտրեցէք ձեզէն՝
զոր ասեմս: Բաժակն օրհնութեան զոր օրհ-
նեմք՝ ո՛չ ապաքէն հաղորդութիւն է արեանն
Քրիստոսի. հացն զոր բեկանեմք՝ ո՛չ ապաքէն
հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի»,* ա
Կորն. Ժ. 15: Եւ թէ՛ “Այսուհետեւ՝ որ
ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս
տեառն անարժանութեամբ, պարտական ե-
ղիցի մարմնոյ եւ արեան տեառն, փորձեսցէ
մարդ զանձն իւր, եւ ապա ՚ի հացէ անտի

կերիցէ, եւ ՚ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ եւ ըմպէ. զի ո՛չ խտրէ զմարմին տեառն», ա. Աորն. ժա. 27:

Ապա մենք՝ որ կատարեալ Քրիստոնեայ եմք, եւ սուրբ գրոց վկայութիւններով կը հաւատամք Յիսուսի Քրիստոսի ամենակարող զօրութեանը. ալ պէ՛տք է որ թերահաւատ գտանիմք՝ եւ չ՛հաւատամք, որ այն սրբագործուած հացին եւ գինւոյն մէջ կարող է Յիսուս Քրիստոս ներգործել իրեն անմահարար մարմնոյն եւ արեան զօրութիւնը, եւ ըստ ամենայնի փոխարկել ՚ի մարմին եւ յարիւն իւր: Անհաւատ Կափառնայումցիները կըսէին, «Զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել», ՅՁ. գ. 53: Յիսուս ասոնց անհաւատութիւնը իրեն ամենակարող զօրութիւնովը յանդիմանեց ըսելով. «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Որ ուտէ զմարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանս յաւիտենականս. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ

զարիւն իմ, յիս բնակեսցէ, եւ ես ՚ի նմա»,
Յօճ. գ. 54—57:

Արդ հիմա պէտք է գիտնալ, թէ ինչու՞ համար կուրանան աւետարանական եւ առաքելական աւանդութիւնը, եւ ամենասուրբ Հաղորդութեան սքանչելի խորհրդոյն փոխարկութեանը եւ կամ գոյափոխութեանը շէն հաւատար: Քրիստոս Յիսուս փրկիչն մեր յայտնի ըրաւ ասանկներուն անհաւատութեան պատճառը. նախ շէն հաւատար իրեն Աստուածային ամենակարող զօրութեանը, որ ամեն բանի կարող է նաեւ մարդկային մտօք անկարելի երեւցած բաներու. ինչպէս անոնք որ սքանչելի խորհրդոյն փրկարար Հաղորդութեան վրայով գայթակղեցան ըսելով. “Խիստ է բանդ այդ, ո՞ր կարէ լսել դմա», Յօճ. գ. 61: Ասոնց իրեն ամենակարող զօրութիւնը յայտնի ընելով՝ ըսաւ Յիսուս. “Այդ գայթակղեցուցանէ զձեզ: Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զորդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն», Յօճ. գ. 62—63:

Ահա այս խօսքով Յիսուս Քրիստոս իրեն ամենակարող Որդի Աստուծոյ ըլլալը կը յայտնէ, որ անոնք ալ հաւատան իրեն ամենակարող զօրութեան ներգործութեանը:

Եւ երկրորդ պատճառ անհաւատ ըլլալնուն փրկարար խորհրդոյն վրայով՝ այս է. որ հոգեւորապէս եւ հաւատքով միայն բռնուելու բաներուն վրայ՝ մարմնաւորապէս եւ Ֆիզիգապէս դատելով կը խորհին. վասն որոյ կը մոլորին եւ կը գայթակղին. ասանկներուն ըսաւ Յիսուս. “Հոգին է կենդանարար, մարմին ինչ ո՛չ օգնէ. զբանն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք: Այլ են ոմանք ՚ի ձէնջ՝ որ ո՛չ հաւատան»,. Յօժ. գ. 64-65:

Յիշելու արժանի է՝ ուղղափառ Աստուածաբաններուն այն ճշմարիտ առածը, որ վճռաբար ըսած են. “Որ կամի բազումս գիտել յառաջ քան զհաւատալ, ո՛չ երբէք հասանէ ՚ի բարուք հաւատալ. զի ո՛չ երբէք ժամանէ բարուք իմանալ»,:

Իսկ որոնք որ ուղղափառ հաւատոյ լուսով լուսաւորուած, սուրբ Աւետարանին եւ առաքելոց հետեւեր են, անոնց համաձայն քարոզեր են. Գրիգոր աստուածաբան կըսէ. “Մաքրագոյն սնդոն (բարակ կտաւ) սըփոեալն յաստուածեղէն պատարագին՝ Արեմաթացոյն է սպասաւորութիւն Յովսէփայ. զի որպէս նա զմարմինն պատեալ զտեառն՝ եղ ՚ի սնդոնի, եւ ՚ի գերեզման յուղարկէր,

յոյր ձեռն ամենայն ազգի մարդկան յարութիւն պարգեւեաց. այսպէս եւ մեր ՚ի սնդոնի կտաւուն զհացն առաջադրութեան եւ ըզբաժակն օրհնութեամբ սրբելով, ճշմարտապէս զնա մարմին եւ արիւն տեառն՝ առանց յերկուանալոյ ճաշակեմք հաւատով, եւ նա մեզ անապականութիւն շնորհէ»։ ՚ի Բողոք. Գործքն»։ Եւ սուրբ Յօհան ոսկեբերան կը գրէ. «Ո՛չ միայն սիրով, այլ եւ իրօք մի մարմին ընդ Քրիստոսի լինիմք... քանզի այս լինի ՚ի ձեռն կերակրոյ զոր բաշխեաց։ . . . Որ է ՚ի բաժակին, այն է, որ հոսեցաւ ՚ի կողէն, եւ նմին եմք հաղորդակիցք»։ ՚ի Վերայ Յօգ. ճառ խոյ։ Եւ սուրբ Կիրեղ Երուսաղէմացին «Քանզի նա ինքն ասաց ՚ի վերայ հացին, այս է մարմին իմ. եւ ո՞վ այնուհետեւ իշխեսցէ յերկբայիլ ամենայն ճշմարտութեամբ զնոյն իբրեւ զմարմին եւ զարիւն առցուք, թէպէտ եւ ճաշակն ահց զգայցէ. թէպէտ եւ ճաշակելիքն գինի լինել համարիցին»։ ՚ի Աթէնքն. գ։ Եւ Ներսէս շնորհալի սուրբ հայրապետն մեր կը գրէ առ դասս քահանայից։ «Ո՛չ միայն խօսել ընդ Աստուծոյ ըստ Մովսէսի՝ կայ մեր առաջի, եւ կամ տեսանել զչետոյսն Աստուծոյ, այլ եւ ձեռօք շօշափել զանշօշափելին, եւ շրթամբք համ-

բուրել զսէրն, եւ բերանով ճաշակել զկերակրիչն ամենայնի, եւ ՚ի սիրտս ընդունել, եւ հոգևով միանալ ընդ նոյն», Ընդ. Եր. 36: Եւ թէ՛ «Ընդ բաղարջին հաց անխմոր, ետ զմարմին իւր զերկնաւոր, զկուսածինն անսերմնաւոր՝ զանապական եւ զհոգեւոր. ընդ ոչխարին արեան ուխտին՝ ետ մեզ զարիւն իւր ուխտ կրկին. եւ եղեգան դառնագունին՝ փոխան զվարս Աստուածային»,։ Սոցին նման եւս կը գրէ Սարգիս շնորհալին. «Որք արժանապէս ճաշակեն զհացն յերկնից իջեալ՝ զտուողն կենաց աշխարհի, եւ ըմպեն փոխանակ կաթին զարիւնն անմահացուցիչ՝ կենդանւոյն Աստուծոյ, ո՞րքան քաղցրութեամբ լնուն. եւ Աստուածատեսակք եղեալ՝ եւ յԱստուած միացեալ՝ ճանաչեն (զի քաղցր է տէր)։ Եւ գիտեն այս իսկապէս խորհրդագգածք խորհրդոյն. նոցա թողում իմանալ՝ եթէ որք առանց խղճի մտաց մերձենան ՚ի սեղանն սուրբ՝ եւ ճաշակեն զմարմին անարատ գառինն՝ եւ ըմպեն զմեղսաքաւիչ արիւնն, ո՞րքան ուրախութեամբ լընուն՝ ընդ Աստուած միանալովն», և. ՊԵՊ. Ճառ. դ. Եր. 239: Սուրբն Եղիշէ եպիսկոպոսն Ամատունեաց կը գրէ. «Քրիստոս զինքըն մարմնացուցեալ եւ արիւնացուցեալ ՚ի

վերայ սրբութեան սեղանոյն՝ հրամայեաց սրբութեամբ ուտել եւ ըմպել ՚ի ճառն վասն ննջեցելոց: Սուրբն Խոսրով Եպիսկոպոսն Անձեւացեաց. “Հաւատալ (պարտ է) եւ զփրկական խորհուրդն՝ ստուգապէս մարմին եւ արին Քրիստոսի, որով միանամք ՚ի Քրիստոս, եւ ժառանգակից նորուն լինիմք”, ՚ի մէկն. պարտ:

Արդ՝ այսչափ առաքելական՝ եւ հայրապետական համաբարբառ վկայութիւնները՝ օրինակները կարդալէն վերջը՝ այլ եւս պէ՞տք է, որ չ’համոզուած յամառեալ մնան իրենց մոլորութեան մէջը, եւ միշտ գրեն եւ ուսուցանեն, որ այն էական խօսքը Յիսուսի Քրիստոսի, թէ “Այս է մարմին իմ, եւ Այս է արին իմ”, այն նուիրած հացը եւ բաժակը, իսկական մարմին եւ արին Յիսուսի Քրիստոսի շեն փոխարկեր. այլ այն խօսքերը կըսեն այլաբանութիւն է, եւ այն ահցը եւ բաժակը նմանութիւն է եւ կամ օրինակ է, ո՛վ սոսկալի շարաշար կուրութիւն, որ թո՛ղ չ’տար տեսնալու ամենակարողին Աստուծոյ սքանչելի ներգործութիւնները. եւ շեն կրնար զատելու եւ որոշելու օրինակը եւ նմանութիւնը՝ Յիսուսի Քրիստոսի իսկական մարմինէն եւ արինէն. այլ խառն ՚ի խուռն վարդապետութիւն կընեն

սուրբ եւ կենդանանար Հաղորդութեան վրայ-
ով, եւ շատ պարզամիտներ ալ կը գայթակ-
ղեցնեն, չեն գիտեր, որ Յիսուս Քրիստոս իւր
մարմնոյ եւ արեան հաղորդութեան խոր-
հրդոյն օրինակները եւ նմանութիւնները հին
օրինաց մէջ մարգարէներուն եւ նահապետ-
ներուն ժամանակը յայտնեց, ինչպէս կը վը-
կայէ Պօղոս սրբազան առաքեալը. “Բազում
մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօ-
սեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէ-
իւք»,. Եբր. ա. 1:

Թո՛ղ տեսնան հին կտակարանին մէջ սուրբ
Հաղորդութեան խորհրդոյն բազմատեսակ օ-
րինակները: Որպիսի էր խորհրդաւոր նուէրն
հացին եւ գինւոյն, որ քահանայն աստուծոյ
Մելքիսեդեկ ընծայեց Աբրահամ Նահապե-
տին, եւ այն ալ իբրեւ աստուածաշնորհ պար-
գեւ ընդունեց, որ էր նախատիպ եւ օրինակ
սքանչելի խորհրդոյն Հաղորդութեան մարմ-
նոյ եւ արեան տեառն, Ծննդ. ժդ. 18: Սոյն
պէս օրինակ էր ամենասուրբ խորհրդոյն այն
աստուածային պատուէրն, որ հրամայեցաւ
Մովսէս մարգարէին, որպէս զի Եգիպտոսի
մէջ Փարաւոնի բռնութեանը գերի եղող Իս-
րայելացիներուն պատուէր տայ, որ ամեն
մէկը ունենան տարեկան ոչխար անարատ,

եւ անոր զենեալ արիւնը առնեն ամեն մէկը իրենց տանը դրանը վրայ նշան ընեն, որով փրկըվին աստուծոյ մահաբեր պատիժէն. եկաւ կոտորիչ Հրեշտակը, շմտաւ այն փրկութեան նշանը ունեցող դռնէրէն ներս. բայց Եգիպտացւոց դուռներէն մտաւ, եւ անոնց անդրանիկ զաւակները սպաննեց».
 Եւրջ. ժբ. 7: Եւս եւ օրինակ եւ նմանութիւն էր հրաշալի խորհրդոյն երկնապարգեւ մանանայն, որով անապատին մէջ կերակրեց Աստուած քառասուն տարիի չափ իրեն ժողովուրդը՝ Եգիպտոսէն հանելէն վերջը. մինչեւ որ արժանի եղան աւետեաց երկիրը մտնալու. Եւրջ. ժգ. 15: Սաղ. հէ. 26: Յօժ. գ. 31: ա Կորն. ժ. 3:

Ահա՛ այս ամենը օրինակ եւ նմանութիւն էին իսկական խորհրդոյն ամենասուրբ Հաղորդութեան. որ այժմ ամեն ազգաց բոլոր ուղղափառ Եկեղեցիները՝ ողջամիտ վարդապետութեամբ՝ եւ խորհրդաւոր արարողութեամբ սուրբ Պատարագին փրկարար խորհուրդը կը կատարեն. ամենակարող էական բանն Յիսուսի քրիստոսի յիշելով ՚ի վերայ նուիրեալ եւ սրբագործեալ հացին եւ գինիին, որ ըսաւ առաքելոց. “Առէ՛ք կերէ՛ք՝ այս է մարմին իմ», եւ թէ “Արբէ՛ք ՚ի սմա-

նէ, Այս է արիւն իմ»,։ Եւ՝ այս փրկարար խորհրդոյն վրայ աղօթելով առ Հայր Աստուած ամենայն ջերմեռանդութեամբ՝ կը յիշատակեմք Յիսուսի Քրիստոսի կամաւոր Չարչարանքը, կենդանարար խաչելութիւնը, երեքօրեայ Թաղումը, երկրպագելի Յարութիւնը, հրաշափառ Համբարձումը, եւ երկրորդ ահաւոր եւ փառաւորեալ Գալուստը, որպէս գրուած է Խորհրդատետրին մէջ։ Ընդդէմ յայտնի ճշմարտութեան եւ ոմանք կը յանդգնին ըսելու. թէ “Հայք ըստ որում ո՛չ խառնեն զջուր ՚ի գինի բաժակին սուրբ Հաղորդութեան՝ վասն որոյ են հերետիկոս»,։ Եւ այլք՝ եթէ “Հայք ըստ որում ո՛չ խմորուն առնեն զհացն սրբարար խորհրդոյն, եւ ջուր ո՛չ խառնեն ՚ի գինի բաժակին, վասն որոյ են հերետիկոս»,։

Այս ծանր եւ անտանելի ամբաստանութիւնները միշտ կը լսէ Հայոց ուղղափառ սուրբ Եկեղեցին. բայց չ'վշտանար այնքան ասոնց վրայով, այլ մանաւանդ կը ցաւի, որ ինչու՞ համար Հայոց Եկեղեցոյն հին վաւերական եւ խորհրդաւոր արարողութիւններուն եւ ծէսերուն վրայով հասու եւ տեղեակ չեղած, թշնամութեան եւ ատելութեան աչօք նայելով՝ հերձուածողութեան եւ հե-

րետիկոսութեան վճիռ կը կտրեն անխիղճ անիրաւութեամբ: Այս մասին կարծեմ՝ որ Հռովմայ Եկեղեցին անշուշտ պիտի վկայէ, որ հայոց Եկեղեցւոյն անապակ գինեաւ կատարելը հին վաւերական սովորութիւն է. վասն զի առաջին Աղեքսանդր պապն սահմանեց ջուր խառնելը՝ ի գինի բաժակին Հռովմէական Եկեղեցւոյն մէջ. ինչպէս որ գրուած է անոնց ժամագրքին մէջը՝ ի երեք ւուր Մայիս ամսոյ այսպէս. “Այս սուրբ քահանայապետ Աղեքսանդր հրամայեաց զգինին խառնել ջրով վասն արեան եւ ջրոյն, որ բղխեցին ՚ի կողէն Յիսուսի Քրիստոսի,»:՝

Ուրեմն սովորութիւն շէր ջուր խառնել ՚ի բաժակն, եւ նոր սահմանադրութիւն մը հնարեց առնելով սուրբ Աւետարանին այս խօսքէն, եթէ “Մի ոմն ՚ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա, եւ ել վաղվաղակի արիւն եւ ջուր,», 304. ԺԹ. 34: Բայց այս ջուրն՝ որ ել ՚ի կողէն Քրիստոսի, էր հաստատութիւն սրբարար մկրտութեան խորհրդոյն, եւ արիւնն՝ հաստատութիւն կենդանարար Հաղորդութեան խորհրդոյն, ըստ վկայութեան Սրբազան Հարց, ինչպէս յայտնի կը գրէ սուրբ Ներսէս շնորհալին. “Եւ յաղագս այսորիկ բազում էին մեզ բանք ա-

սել ՚ի վկայութենէ գրոց՝ զոր վասն համա-
 ոտելոյ զբանս՝ աւելորդ համարեցաք դնել
 զամենայն բա՛յց ՚ի սակաւուց: Առաջին՝ զի
 ՚ի լուսաւորչէն մերմէ ՚ի սրբոյն Գրիգորէ
 ունիմք զայս աւանդութիւն, որպէս ընկալաւ
 նա ՚ի նախնեաց սրբոց հարցն՝ որ յառաջ
 քան զնա: Դարձեալ՝ զի եւ Քրիստոս որ
 մատոյց զինքն խորհրդեամբ պատարագ ՚ի
 վերնատունն, զինի միայն գրեալ է, զի ա՛ռ
 ՚ի ձեռս եւ ասաց: Այս է իմ արիւն, եւ ա-
 նուն ջրոյ ո՛չ բնաւ յիշատակի, որպէս եւ ա-
 սաց իսկ յետ խորհրդոյն կատարման՝ թէ
 յայսմհետէ ո՛չ եւս արբից ՚ի բերոյ որթոյ,
 եւ որթն գինի եւ ո՛չ ջուր ծնանի, որպէս եւ
 ասէ Յօհան ոսկեբերան յաւետարանին մեկ-
 նութեանն, իսկ եթէ վասն ջրոյն եւ արեանն՝
 որ ել ՚ի կողիցն, ասէք արկանել ջուր ՚ի բա-
 ժակն, զայս դարձեալ նոյն ինքն Յօհան ոս-
 կեբերան ՚ի սոյն բանի աւետարանին մեկ-
 նութեանն՝ որ ըստ Յօհաննու, զջուրն ՚ի խոր-
 հուրդ մկրտութեան մերոյ ասէ, եւ զարիւնն
 ՚ի սուրբ պատարագին: Նաեւ այլ բազումք ՚ի
 վարդապետաց Եկեղեցւոյ զսոյն ասեն, եւ մեք
 նոցին բանիցն եւ աւանդութեանցն գոլով
 հետեւողք, վասն այնորիկ ոչ արկանեմք ջուր,
 այլ անապակ զինեաւ զանապականն արեան

Քրիստոսի կատարեմք զխորհուրդ», Ընդհ.
Էր. 63:

Այլ եւ անխմոր հացիւ պատարագելոյն մեր Հայոց սուրբ Եկեղեցւոյն խորհրդաւոր եւ վաւերական ըլլալը նոյն շնորհալի սուրբ Հայրապետն մեր կը յայտնէ՝ այսպէս գրելով. «Արդ յաղագս նախասացեալ պատճառիս խորհրդոյս՝ այսպէս գտանեմք ՚ի նոսա զճշմարտութիւնն: Խորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի՝ որպէս ամենեքեան, նոյնպէս եւ մարմնոյ եւ արեան նորա կատարումըն գուշակեցան մարգարէիւքն ՚ի ձեռն բազմադիմի օրինակաց եւ բանից: Եւ նախ՝ առ սեղանն Աբրահամու՝ որ օրինակ էր վերնատանն սեղանոյ, ո՛չ խմորուն՝ այլ բաղարջ հացիւ կերակրեցաւ Աստուած. ըստ ասելոյն առ Սառայ. փութա՛ թրեա՛ գրիւս երիս ալեր նաշհոյ՝ եւ արա՛ նկանակս. որ եւ զնոյն նմանութիւն հացի՝ որպէս անմարմնաբար յայնժամ, այժմ ՚ի մարդեղութեան իւրում մարմին իւր անուանեալ՝ բաշխեաց ըստ հաւատոց որդւոցն Աբրահամու փոխանակ որթուն եւ բաղարջին՝ զոր եկեր ՚ի Մամբրէ ընդ հովանեաւ կաղնւոյն: Եւ զի բաղարջ էր հացըն՝ զոր եփեաց Սառայ. յայտ է, ՚ի Ղովտայն՝ զոր ետ հրեշտակացն, զի գրեալ է՝

Թէ բաղարջ եփեաց եւ ետ նոցա: Եւ որ դիքն Իսրայէլի յորժամ հանդերձեալ էին ելանել յԵգիպտոսէ՝ օրինադրեաց նոցա Մովսէս ո՛չ բառնալ խմորեալ ընդ ինքեանս, այլ անհետ առնել զնա զաւուրս եօթն՝ ի տանց իւրեանց, եւ բաղարջիւ միայն կերակրիլ զաւուրս եօթանցն. որ էր օրինակ բաղարջն տէրուանական խորհրդոյն. եւ եօթն աւուրք եօթըն դարու կենցաղոյս: Որովք օրինադրէ ամենեցուն՝ որք յեգիպտական անհաւատութենէն ելանիցեն, եւ ՚ի վերին աշխարհն աւետեաց ճանապարհորդիցեն. խմոր մեղաց ո՛չ բառնալ ընդ ինքեանս, այլ կերակրիլ անապական եւ Աստուածային հացին՝ զգալեան եւ իմանալեան, այսինքն մարմնովն Աստուծոյ, եւ բանիւն՝ որ ելանէ ՚ի բերանոյ նորա:

Այլ եւ զմանանայն՝ որ օրինակ էր կենացս հացի՝ ըստ Պօղոսի, անխմոր եւ ո՛չ խմորեալ ուտէին յանապատին: Եւ դարձեալ՝ յորժամ հրամայեաց Աստուած Մովսէսի ունայնաձեռն ո՛չ երեւել առաջի նորա, զհացն զառաջաւորութեան օրինադրէր դնել ՚ի սեղանն քաւութեան յիրաքանչիւրում աւուր՝ յօրինակ մարմնոյն Քրիստոսի, եւ զի բաղարջ էր այն եւ ո՛չ խմորուն, յայտ առնէ բանն

Աբիադարու քահանայապետի առ Դաւիթ ասացեալ. հաց պիղծ՝ ասէ, այսինքն խմորեալ՝ ո՛չ գոյ ՚ի ձեռին իմում. այլ հացն սուրբ առաջաւորութեան, որ է բաղարջն: Եւ զի առ հնովն օրինակք բազումք են, եկեսցուք առ նորա եւ ճշմարիտս: Գա՛ռն ճշմարիտ՝ յորժամ եկեր զգառն օրինակին եւ զբաղարջն ընդ եղեգին յետ կատարելոյ զհինն՝ սկիզբն արար նորոյ ուխտին ըստ աւետարանական պատմութեանն. “Եւ առեալ հաց ՚ի սեղանոյ անտի, յայտ է թէ՛ բաղարջ, քանզի առաջին օր էր բաղարջակերացն՝ ասաց, Այս է իմ մարմին: Նաեւ կուսածին եւ անախտական մարմնոյն ՚ի դէպ է բաղարջն եւ ո՛չ խմորեալն լինել օրինակ: Արդ բաղարջով կատարողացս զխորհուրդն սուրբ՝ այս եւ որ նման սոցին ՚ի գիրս սուրբ աւանդեալս,,. **Ո՛չդԸ. եր. 81:**

Ապա ուրեմն Հայոց Եկեղեցին հին եւ վաւերական սովորութիւնը եւ աւանդութիւնը համեմատ սուրբ գրոց անապակ գինեաւ եւ անխմոր հացիւ պատարագելով, ո՛չ միայն է ուղղափառ եւ բարեպաշտ, այլ եւ հին արարողութեան սրբոյ Եկեղեցւոյն Քրիստոսի իսկապէս աւանդապահ: Այսպէս կը վկայէ եւ սուրբն Կիրէղ աղեքսանդրա-

ցին. “Աթոռակիցն հօր ետ վասն մեր զար-
 իւն իւր, եւ վասն այնորիկ անապական գին-
 ւով՝ զի մի ապականութեան կարծիս յանա-
 պական արիւնն Աստուծոյ լիցի»,՝ ՚ի Գիրս պա-
 րասպ. Եւ կիպրիանոս եպիսկոպոս Կարթագին-
 եայ կը գրէ. “Բաղարջ հացիւ եւ անապական
 գինեաւ աւանդեցաւ մեզ սուրբ խորհուրդն»,
 ՚ի Տառ ողոր. Եւ Յօհան իմաստասէր. “Ար-
 ժան է եւ զհացն անխմոր եւ զգինին անա-
 պակ հանել ՚ի սուրբ սեղանն ըստ աւանդելոյ
 մեզ սրբոյն Գրիգորի. զի սուրբ լուսաւորիչն
 յօրինակէն բերեալ զայս՝ առաքելաբար հը-
 րաման ետ կատարել իւրոց վիճակելոցն. եւ
 մեզ ՚ի նմին պա՛րտ է յարանալ, եւ շառնել
 նորաձեւս ինչ»,՝ պապ. Հայ. Հայք Բ. Էր, 649:
 Եւ սուրբն Մակարիոս պատրիարգ Երուսա-
 ղէմի յամի տեառն 340 ըստ խնդրանաց սըր-
 բոյն Վրթանէսի որդւոյ սրբոյ հօրն մերոյ
 Գրիգորի լուսաւորչի, գրեաց ութն կանոնս,
 որոց եօթներորդն է այս. “Հաց ջերմ (այ-
 սինքն թարմ) եւ բաժակ անապակ հացի ՚ի
 սեղան ձեռամբ սարկաւագաց. եւ քահանայն
 օրհնեսցէ եւ կատարեսցէ զխորհուրդն»,
 Ասոր օրինակը կրնաս գտնալ Յօհան իմաս-
 տասիրի կանոնագրքի մէջ. Ե- ՚ի պապ. Հայ.
 Հայք ա. Էր, 423:

Այս սուրբ խորհուրդը մեր սուրբ Եկեղեցին խորհրդաւոր նշանակութեամբ կանուանէ Պատարագ, վասն զի կը յիշատակեմք Յիսուսի փրկչին մերոյ պատարագիլը՝ ի վերայ խաչին, եւ կը հաւատամք՝ որ նոյն ինքն կարող է նոյն փրկութեան շնորհը ներգործելու այս սրբազնասուրբ խորհրդոյն մէջ. ըստ այնմ. «Քրիստոս սիրեաց զմեզ եւ մատնեաց զանձն իւր վասն մեր Պատարագ, եւ զենումն Աստուծոյ ՚ի հոտ անուշից»։ Եփե՞ս. Ե. 2: Եջր. Թ. 14: Կանուանէ Հաղորդութիւն, վասն զի կցորդ եւ հաղորդ կըլլամք Յիսուսի Քրիստոսի հետը, ընդունելով մարմնոյ եւ արեան կենդանարար շնորհքները. ըստ այնմ. «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ՝ եւ ես ՚ի նմա», Յօհ. գ. 57: «Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ո՞չ ապաքէն Հաղորդութիւն է արեանն Քրիստոսի. հացն՝ զոր բեկանեմք, ո՞չ ապաքէն Հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի», ա Աորն. Ժ. 16: «Հաղորդութիւն կոչէ, զի կցորդի նա մեզ, եւ մեք նմա», Խոսրով. ՚ի մէկն. պատր: «Եւ համբուրիւ շրթանցս առ ճաշակ փրկութեան կենացդ Հաղորդութեան», Նար. Գլ. լբ: Կանուանէ Սրբութիւն. ըստ որում ո՛վ ոք կը հաղորդի սուրբ խորհրդոյս,

արժանաւորապէս կը սրբի ՚ի մեղաց աղտեղութենէ. ըստ այնմ. “Արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց», ա Յօճ. ա. 7: Եւ սուրբ Ներսէս լամբրոնացին կը գրէ. “Սրբութիւն սովոր եմք կոչել զմարմին եւ զարիւն Քրիստոսի, զոր միշտ ճաշակեմք եւ սրբիմք նովաւ», ՚ի մէկն. «աղ: Եւս կենդանարար Հաղորդութեան խորհուրդը կրկնելի խորհուրդ է. վասն զի պատուիրեց Յիսուս. “Զայս արասջի՛ք առ իմոյ յիշատակի», Առ. իբ. 19: Եւ Պօղոս առաքեալ կը գրէ. “Քանիցս անգամ թէ ուտիցէ՛ք զհացս զայս, եւ զբաժակս ըմպիցէ՛ք, զմահ տեառն պատմեցէ՛ք, մինչեւ եկեսցէ նա. ա Առքն. ժա. 26:

Սուրբ եւ փրկագործ խորհրդոյն Հաղորդութեան՝ արժանաւոր ըլլալու համար հարկաւ պէտք է Ապաշխարութիւն, որ է չորրորդ խորհուրդ Եկեղեցւոյ, որով կրնդունիմք Աստուծմէ մեր մեղաց թողութիւն, եւ արժանաւորութիւն հաղորդուելու կենդանարար մարմնոյ եւ արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ինչպէս կը գրէ սուրբն Խոսրով. “Առանց խոստովանութեան մեղք ո՛չ քաւին, եւ առանց ապաշխարութեան՝ հաղորդութեան արժանի ոք ո՛չ լինի», ՚ի

մէկն. Ժամհա:

Ապաշխարութիւնը հին օրինաց ժամանակն ալ քարոզուած՝ եւ սուրբ գիրքերուն մէջը գրուած է. եւ Յիսուս Քրիստոս փրկիչն մեր վերստին հրամայեց եւ հաստատեց: Ինչպէս կը յայտնեն այս վկայութիւնները. “Թողցէ՛ ամբարիշտն զճանապարհս իւր, եւ այր անօրէն զխորհուրդս իւր. եւ դարձցի առ տէր՝ եւ գտցէ զողորմութիւն. եւ առ Աստուած մեր՝ զի բազմապատիկ թողցէ զանօրէնութիւնս ձեր»,. Եսայ. ծե. 7: “Աստուած դատաւոր արդար՝ հզօր՝ եւ երկայնամիտ, որ ո՛չ ածէ զբարկութիւն իւր զօրհանապագ: Ապա թէ ո՛չ դառնայք առ նա, զսուր իւր սրեալ է»,. Սաղ. Է. 12: “Ասա՛ տանդ Իսրայէլի, այսպէս ասէ տէր՝ տէր Աստուած. դարձայք եւ դարձարու՛ք ՚ի գնացից ձերոց, եւ յամենայն ամբարշտութեանց ձերոց, եւ դարձուցէ՛ք զերեսս ձեր առիս»,. Եպէկ. ժդ. 6: “Եւ արդ՝ ասէ տէր Աստուած ձեր. դարձարու՛ք առիս յամենայն սրտէ ձերմէ, պահօք՝ եւ լալով՝ եւ կոծով»,. Յովկ. բ. 12: “Այսպէս ասէ տէր ամենակալ, դարձարու՛ք առիս եւ դարձայք առ ձեզ»,. այսպէս ասէ տէր ամենակալ. դարձարու՛ք յամենայն ճանապարհաց ձերոց չարաց՝ եւ ՚ի գնացից ձե-

րոց շարաց», Զաքա. ա. 3: «Եւ ետես Աստուած զգործս նոցա, զի դարձան իւրաքանչիւր ՚ի ճանապարհաց իւրեանց շարաց, եւ զղջացաւ Աստուածմ ՚ի վերայ շարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա՝ եւ ո՛չ արար», Յօւն. գ. 10: «Արարէ՛ք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան», Մատթ. գ. 8: Մար. ա. 4: Ղու. գ. 8: «Ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն», Ղու. ե. 32: «Այլ եթէ ո՛չ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիցիք», Ղու. ժգ. 3: «Արդ՝ զայնս պատուիրէ մարդկան՝ ամենայն արժեք ապաշխարել», Գործ. ժէ. 30: «Զգիտիցե՛ս, զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ», Հուդ. բ. 4: բ Կորն. է. 9: բ Տիմ. բ. 25: Եբր. գ. 6: «Այլ երկայնամիտ լինի առ ձեզ: Քանզի ո՛չ կամի եթէ ոք կորիցէ, այլ ամենեցուն հասանիլ յապաշխարութիւն», բ Պետ. գ. 9:

Այս ապաշխարութեան խորհուրդը հաստատեց Յիսուս Քրիստոս, եւ ապաշխարողները մեղաց կապանքէն արձակելոյ իշխանութիւնը շնորհեց ամեն առաքելոց հաւասարապէս, ինչպէս կը գրէ սրբազան աւետարանիչն Յօհաննէս, «Փշեաց ՚ի նոսա եւ ա-

սէ. առէ՛ք հոգի սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեզս՝ թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի», ՅօԸ, Ի. 22: Մատթ. ԺԲ, 18:

Եւ առաքեալներուն օրինաւոր յաջորդներըն ալ ձեռնադրութեամբ ունին այս իշխանութիւնը յաջորդաբար, ըստ այնմ. «Ձեռնադրեցին նոցա ըստ Եկեղեցւոյ երիցունս, աղօթս արարեալ հանդերձ պահօք, յանձն արարին զնոսա տեառն՝ յոր հաւատացեալն էին», Գործ. ԺԳ, 22: Եւ Պօղոս սրբազան առաքեալը կը գրէ առ Տիմոթէոս աշակերտն իւր. «Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ՝ որ ՚ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութենէ երիցութեան», ա Տիմ. Գ, 14:

Ուստի ուղղափառ մտօք կը հաւատամք սուրբ գրոց համեմատ, որ օրինաւոր առաքելական յաջորդներէն ձեռնադրուած քահանայները իսկապէս սպասաւոր եւ պաշտօնեայ Աստուծոյ գոյով՝ անզեղջ եւ անապաշխար մեղաւորները իրենց մեղաց արժանաւոր պատիժներովը կապելու՝ եւ Աստուծոյ շնորհքներուն հաղորդակցութենէն մերժելու կարգեալք են, ինչպէս որ Յիսուս Քրիստոս այս առակաւս յայտնի ըրաւ կարգաւոր-

ներուն պաշտօնը. “Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն, կապեցէ՛ք զդորա զոտս եւ զձեռս, եւ հանէ՛ զդա ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց.», Մատթ. իբ. 13:

Կապանք չէ՞ր մի Պօղոս առաքեալին յանդիմանութիւնը, որ ըրաւ Եղիմաս մոզին, որ հակառակ էր շատ սրբազան առաքեալներուն քարոզութեանը. վասն որոյ անոր շարութեանը պատիժովը կապեց երանելին Պօղոս ըսելով. “Ո՛վ լի ամենայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ՝ որդի սատանայի՝ թըշնամի ամենայն արդարութեան. ո՞չ լռես ՚ի թիւրելոյ զճանապարհս տեառն զուղիդս. եւ արդ՝ ահա՛ ձեռն տեառն ՚ի վերայ քո, եւ եղիցիս կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ՚ի ժամանակ մի.», Գործ. Ժդ. 10:

Սոյնպէս զղջացեալ եւ ապաշխարեալ մեղաւորը իշխանութիւն ունին քահանայք արձակելու մեղաց պատիժներէն, եւ Աստուծոյ ներողութեանը եւ սուրբ Եկեղեցւոյն խորհրդոց շնորհացը հաղորդ ընել ըստ հրամանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. “Եթէ ումք թողուցուք զմեզս՝ թողեալ լիցի.», Յօժ. ի. 23: Եւ թէ՛ “Զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս.»,

Մատթ. Ժը. 13:

Նայէ՛ ինչպէս խորհրդով է գրուած արձակման խօսքերը, որ քահանայն ձեռք դնելով ՚ի վերայ գլխոյ խոստովանող եւ զղջացող անձին՝ նախ այս բարեմաղթութիւնը կրնէ ՚ի կողմանէ Եկեղեցւոյն միջնորդաբար, զի ամեն ապաշխարող կարօտութիւն ունի սուրբ Եկեղեցւոյն բարեմաղթութեանը, վասն որոյ կրսէ. “Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց՝ խոստովանացելոցդ եւ մոռացելոցդ.», Այսքան խօսքերը՝ բարեմաղթութիւն եւ աղօթք է զղջացող մեղաւորին համար, եւ յետոյ կրսկսի իրեն ունեցած քահանայական հոգեւոր իշխանութեան գործադրութիւնը կատարելու, որ յիշելով Յիսուսի Քրիստոսի հրամանը, կարձակէ ըսելով. “Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, եւ հրամանան Աստուածային՝ թէ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս: Նովին բանին արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ՚ի խորհրդոց, ՚ի բանից եւ ՚ի գործոց, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ՚ի խորհուրդս սուրբ Եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ՚ի բա-

րեգործութիւն եւ ՚ի փառս հանդերձեալ
կենացն, ամէն», ժամագիրչն մէր:

Այս հոգեւոր իշխանութեանը համար քարոզեց սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր ըսելով. «Զի զառաջնորդս Եկեղեցւոյ ՚ի տեղի առաքելոցն կարգեաց Քրիստոս քարոզս եւ ասաց, որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի, եւ որ զձեզ անարգէ, զիս անարգէ. Մաթ. Ժ. 40. Գ.՝. Ժ. 16: Եւ դարձեալ առէ, զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս. Մաթ. ԺԸ. 18: Զի իշխանութիւն՝ որ յԱստուծոյ է, զօրութիւն ունի մեղաց թողութեան, եւ ախտայէտաց առողջութեան, եւ դիւաց հալածման մարդկան: Զի զոր Աստուած կարգէ, զգործ Աստուծոյ գործէ շնորհօքն Քրիստոսի», Յաճա. ի. Էր. 254: Եւ սուրբն Յօհան ոսկեբերան նմանապէս կը գրէ. «Որք յերկրի ասա բնականան (քահանայք) եւ ՚ի սոսին քաղաքավարին, յերկնայնոցն սպասաւորութիւն կարգեցան, եւ իշխանութիւն իմն առին ընկալան, զոր եւ ո՛չ հրեշտակացն եւ հրեշտակապետացն ետ Աստուած: Քանզի նոցա ո՛չ ասաց, զոր միանգամ կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք

յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Ապա-
քէն եւ որք յերկրի տեարք են, ունին եւ
նոքա իշխանութիւն կապելոյ, այլ զմարմինս
միայն. իսկ այս կապանք մերձին ՚ի նոյն ինքն
՚ի հոգին, եւ զերկնիւքն ՚ի վեր անցանեն, եւ
զոր միանգամ աստ ՚ի խոնարհ գործեն քա-
հանայք, նոցին ՚ի բարձունս վճիռ հատանէ
Աստուած, եւ զծառայիցն դատակնիք տէրն
ինքնին հաստատէ: Քանզի զի՞նչ այլ. բայց
թէ բովանդակ զիշխանութիւն երկնաւորացն
եստ նոցա. զի որոց թողուցուք զմեղս, թող-
եալ լիցի ասէ. եւ զորոց ունիցիք՝ կալեալ
լիցի: Եւ արդ՝ զի՞նչ քան զայս իշխանու-
թիւն բարձրագոյն. զամենայն դատաստան
եստ հայր որդւոյ իւրոյ, այլ ես տեսանեմ՝ զի
զամենայն ետ ՚ի ձեռս նոցա որդին».
Գրքի.
Գ. յաղ. Կահանայո-թեան:

Այս ապաշխարութեան սուրբ խորհուրդը՝
ուրացան Նովատեան հերետիկոսները գ դա-
րուն, որ կըսէին, «Զկնի Մկրտութեան չի՛ք
յեկեղեցւոջ ապաշխարութիւն եւ կամ նե-
րողութիւն մեղաց. ապա ո՛չ գոյ յոյս թողու-
թեան մեղաւորաց»։ Եւ հիմա ալ ո՛վ որ
ապաշխարութեան խորհուրդը կամակոր կը
մերժէ՝ անշուշտ այն մոլորութեան մէջ է,
եւ հետեւող է Նովատեան աղանդին՝ հա-

կառակ սուրբ գրոց: Իսկ մեք այժմ ուղղափառ եւ ճշմարիտ հաւատով կը խոսստովանիմք ըստ սահմանադրութեան Նիկիոյ սուրբ ժողովոյն երանեալ սուրբ հայրապետաց, “Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդ հանրական եւ առաքելական Եկեղեցի, ՚ի մի Մկրտութիւն, յապաշխարութիւն՝ ՚ի քաւութիւն եւ ՚ի թողութիւն մեղաց,» եւ այլն:

Բայց այս ալ պէտք է գիտնալ, որ մեր ըրած խոստովանանքը՝ արդե՛օք համեմատ սուրբ գրոց եւ Աստուծոյ հաճելի՞ է. կարծեմ որ ողջամիտ սուրբ գիրքերուն ծանօթ եղողները պիտի վկայեն՝ թէ այո սուրբ գրոց համեմատ է. ինչպէս գրուած է. “Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք՝ եւ ամենայն հրէաստան, եւ ամենայն կողմն յորդանանու, եւ մկրտէին ՚ի նմանէ ՚ի յորդանան՝ եւ խոստովան լինէին զմեղս իւրեանց,» Մատ. գ. 5-6: “Եւ բազումք ՚ի հաւատացելոցն գային, եւ խոստովան լինէին, եւ պատմէին զգործս իւրեանց,» Գործ. ժթ. 18:

Այս խորհրդական խոստովանութեան օրինակները կը տեսնաս Աստուծոյ հրամանաւր սահմանուած հին օրինաց մէջ. Ղե-դա. ժգ. 21. իգ. 40: Թ-ո-ոց. ե. 7: Յե-ո-այ. է.

19: Բ ԹՊԳ. ԺԲ. 1. 13: Ասոր համար կը քարոզէ մեզի սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր. “Եւ յերկնից յերկիր խօսի բարերարութիւնն զգարձն յապաշխարութիւն մեղաւորաց. խոստովանիլ զյանցանսն. եւ զղշանալ վասն որոյ գործեցին, եւ պտուղ արժանի ապաշխարութեան առնել”,. Յաճախ. ճառ. Գ. Եր. 65:

Սա ինքն սուրբն Գրիգորիոս այս խորհրդական խոստովանութիւնը սահմանեց Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ՝ համեմատ սուրբ գրոց. եւ կանոնական սահմանադրութեամբ ալ ամրացոյց, որ չըլլայ թէ արհամարհութիւն մը բերուի այս խորհուրդին. “Եթէ ոք ՚ի քահանայից զծածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեաց, անկցի յաստիճանէն, եւ ՚ի կարգէ պաշտօնէից մերժեսցի, եւ մեղք չ'խոստովանողացն անկցի ՚ի վերայ նորա”,. ՚ի կանոնադիրս:

Հինգերորդ խորհուրդ սուրբ Եկեղեցւոյն կոչի Չեռնադրութիւն քահանայական կարգի, որով մշտնջենաւոր կը մնայ ուղղափառ սուրբ Եկեղեցւոյ մէջ առաքելական օրինաւոր յաջորդութիւնը. զի՝ ինքն Յիսուս Քրիստոս որ է քահանայապետ յաւիտենից, ԵՔր. դ. 14. գ. 20: Հեղինակ եղաւ այս

սուրբ խորհրդոյս. եւ սքանչելահրաչ համբարձման օրը իւր Աստուածային եւ հրաշագործ ձեռքը տարածելով ՚ի վերայ առաքելոց. օրհնեց զանոնք հոգեւոր պաշտօնեայ իրեն սուրբ Եկեղեցւոյն, ինչպէս կը վկայէ սրբազան անետարանիչն. “Եհան զնոսա մինչեւ ՚ի Բեթանիա, եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա, եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ՚ի նոցանէ, եւ վերանայր յերկինս», *Ղ. Թ. իդ. 50:*

Եւ այս ձեռնադրութեան շնորհիւր հաղորդ ըրաւ առաքեալները իւր մշտնջենաւոր քահանայապետութեան բարձր իշխանութեանը, որպէս զի հաւատացեալները պարտաւորին ընդունել եւ պատուել սրբազան առաքեալները, եւ անոնց օրինաւոր յաջորդները. եւ անոնց ձեռօքը մատակարարեալ շնորհքները Յիսուս Քրիստոսէն առած համարին. վասն զի ըսաւ. “Որ ընդունի ըզձեզ՝ զիս ընդունի. եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ», *Մատթ. Ժ. 40:* “Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ընդունի զոր ոք ես առաքեցից, զիս ընդունի. եւ որ զիս ընդունի, ընդունի զայն՝ որ առաքեացն զիս», *Յով. Ժգ. 20:*

Ասոր համար Պօղոս առաքեալ կը գովէ

Գաղատացիները, որ զինքը ընդունեն են Յիսուս Բրիստոսը ընդունածի պէս. կը գովէ եւ Թեսաղոնիկեցիները, որ իրեն քարոզութիւնը ընդունեն են իբրեւ պատգամ եւ խօսք Աստուծոյ. ինչպէս կը գրէ. “Ո՛չ անարգեցիք եւ ոչ անգոսնեցիք, այլ իբրեւ զհրեշտակ Աստուծոյ ընկալայք զիս՝ իբրեւ ըզ-Քրիստոս Յիսուս”, Գաղ. դ. 14: “Վասն այսորիկ եւ մեք գոհանամք զաստուծոյ անպակաս՝ զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ՚ի մէնջ՝ ընկալարու՛ք, ո՛չ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբանն Աստուծոյ, որ եւ յաջողեալ իսկ է ՚ի ձեզ հատարեալսդ”, ա ԹԷ. բ. 13:

Ահա՛ այս օրինաւոր առաքելական յաջորդութիւնը եւ մեր ուղղափառ սուրբ Եկեղեցին ալ ունի. վասն որոյ կը կոչուի առաքելական սուրբ եկեղեցի, եւ ձեռնադրութիւնը խորհուրդ Եկեղեցւոյ ճանաչելովը կը կատարէ ՚ի վերայ արժանաւորաց, ըստ սահմանադրութեան սրբազան առաքելոց, ինչպէս կը գրէ Աւետարանիչը, “Զորս կացուցին առաջի առքելոցն, եւ աղօթս արարեալ եղին ՚ի վերայ նոցա զձեռս”, Գործ. գ. 5: “Զեռնադրեցին նոցա ըստ Եկեղեցւոյ երիցունս, աղօթս արարեալ հանդերձ պահօք՝

յանձն արարին զնոսա տեառն՝ յոր հաւատացեալն էին», Գործ. Ժդ. 22:

Վեցերորդ խորհուրդ սուրբ Եկեղեցւոյն է Պսակն սուրբ ամուսնութեան առն եւ կնոջ, որ նախապէս սահմանեցաւ ՚ի վերայ առաջնաստեղծ ծնողացն մերոց Ադամայ եւ Եւայի, որք Աստուածային հրամանաւ անբաժանելի կացին եւ մնացին մինչեւ ցմահ. եւ անոնցմէ աճեցան ազգ մարդկան օրհնութեամբն Աստուծոյ. ինչպէս գրած է. “Եւ օրհնեաց զնոսա Աստուած՝ եւ ասէ. աճեցէ՛ք եւ բազմացարու՛ք եւ լցէ՛ք գերկիր», Ծնն. ա. 28:

Այս սուրբ խորհուրդը Յիսուս Քրիստոս ալ հաստատեց անբաժանելի մնալ այր եւ կին մինչեւ ցմահ. “Ապա ուրեմն ո՛չ են երկու՝ այլ մի մարմին. արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ», Մար. ԺԹ. 6: Եւ առաւել եւս բացայայտ հրամայեց ըսելով. “Եթէ այր արձակիցէ զկին իւր՝ եւ արասցէ այլ՝ շնայ: Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ եւ եղիցի առն այլում՝ շնայ», Մար. Ժ. 11:

Եւ Պօղոս առաքեալ կը գրէ պատուիրելով. “Քանզի կին առնակին ՚ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռցի

այրն, արձակեալ է յօրինաց առն: Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոշի՝ եթէ լինիցի առն այլում. եւ եթէ մեռցի այրն՝ ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլում»,. Հոգ. է. 2: ա Աորն. է. 39:

Եօթներորդ խորհուրդն Եկեղեցւոյ է աղօթքն ՚ի վերայ հիւանդաց, որ կը կատարի հիւանդաց վրայ ձեռք դնելով եւ աղօթելով, կամ օծմամբ օրհնեալ իւղով:

Ըսինք՝ որ կը կատարի ձեռք դնելով եւ աղօթելով, վասն զի թէ որ սուրբ Աւետարանին աւանդութեանը նայինք նէ, կիմանամք՝ որ Յիսուս Քրիստոս սահմանեց այս խորհուրդը հիւանդաց բժշկութեան համար, եւ ասոր նիւթն ալ ցոյց տրվաւ ձեռք դնելը. քանզի յառաջագոյն հրամայեց առաքեալներուն ըսելով, “Զհիւանդս բժշկեցէք»,. Մար. Ժ. 8: Եւ զկնի սուրբ Յարութեանն այս խորհրդոյն կերպը եւ նիւթը յայտնի կընէ հրամայելով, որ հիւանդաց վրայ ձեռք դնելով կատարեն. “Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ եւ բժշկեսցին»,. Մար. Ժզ. 18:

Որովհետեւ Յիսուս ինչ որ կը սորվեցընէր եւ կաւանդէր առաքեալներուն՝ ինքն ալ կը

գործէր իբրեւ հեղինակ խորհրդոց. Գործ. ա. 1: Շատ անգամ կը բժշկէր հիւանդները Յիսուսի ձեռք դնելով, ինչպէս գրուած է. “Ամենեքեան որոց էին հիւանդք ՚ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա, եւ նա իւրաքանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս՝ եւ բժշկէր զնոսա.», Գործ. դ. 41: Ուրեմն հեղինակին Յիսուսի Քրիստոսի սահմանած այս հիւանդաց բժշկութեան խորհրդոյն նիւթը եւ կերպը ձեռք դնելով՝ եւ աղօթիւք է, ասոր համար սրբազան Առաքեալներն ալ այս խորհուրդը ձեռք դնելով կը կատարէին Յիսուսի Քրիստոսի անունը կարդալով այն հիւանդներուն վրայ. ինչպէս Պետրոս առաքեալ էնեա անուն ութը տարուան անդամալոյծին վրայ՝ Յիսուսի Քրիստոսի անունը կարդալով՝ բժշկեց: Եւ սրբազան Պօղոս առաքեալը ձեռք դնելով եւ կարդալով Յիսուսի Քրիստոսի անունը ՚ի վերայ հօրն Պոպղեայ, բժշկեց. ինչպէս գրուած է. “Եւ եղև հօրն Պոպղեայ ՚ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ դնել, առ որ մտեալ Պօղոս՝ եւ կացեալ յաղօթս՝ եղ զձեռն եւ բժշկեաց զնա.», Գործ. իր. 8:

Հսինք՝ եւ կամ օծմամբ օրհնեալ իւղով. այս օծումն իւղոյ է հեռաւոր նիւթ խոր-

հրդոյն. ինչպէս գրուած է Պիլուարտի աստուածաբանութեան մէջ. “Հեռաւոր նիւթ վերջին օծման է հարկաւոր հարկաւորութեամբ խորհրդոյ իւղն ձիթենեաց՝ օրհնեալ յեպիսկոպոսէ գէթ միջնորդութեամբ», ՊԻԼ. Եր. 393:

Ուրեմն մերձաւոր նիւթն է քահանային ձեռք դնելը, կարդալով ամենակարող անունը տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ հեռաւոր նիւթը է օրհնուած իւղն ձիթենույ: Որովհետեւ հրէից մէջը մարգարէներուն ժամանակէն ունէին այս աւանդութիւնը, որ կօծանէին իւղով ձիթենեաց՝ Աստուծոյ պատարագին սեղանները, քահանաները, եւ թագաւորները. եւ այս օծումը իւղով կը կոչէին», օծումն մաքրութեան եւ սրբութեան», ԵԼԻԿ. Լ. 24, 25, 30: ա Թագ. Ժգ. 13: Սաղ. ձր. 21:

Կը պահէին ծանրագին ազնիւ իւղ, եւ անով երբեմն կօծուէին, եւ մեռելներուն մարմինը ասանկ իւղով կօծանէին պատուելու համար. “Սաղ. իգ. 7: Սաղ. Ժգ. 3: Ժգ. 1: Ղ. 37: Այս իւղերուն հրէից ազգին մէջ յարգի ըլլալը տեսնելով սրբազան Առաքեալները, սկսան գործածել հիւանդները բժշկելու ժամանակնին. ինչպէս կը գրէ

Մարկոս աւետարանիչ. “Եւ օծանէին իւղով զբազում հիւանդս՝ եւ բժշկէին», զ. 13: Բայց ետքէն այնպէս եղաւ, որ հաւատացեալներէն շատերը՝ այն հիւանդաց բրժշկութիւնը միայն իւղոյն ներգործութեանը տառով՝ մոռացան աղօթքը, եւ իրենք իրենց հիւանդները կօծանէին իւղով առանց քահանայ կանչելու. ասոր համար Յակոբոս սրբազան առաքեալը, որ ուշին եպիսկոպոս կարգեցաւ Եկեղեցւոյն Երուսաղէմի, այս կանոնը սահմանեց վասն հիւանդացելոց իւղոյն գործածութիւնը անվնաս նիւթ մը համարելով. բայց դիտաւորութիւննին ուղղեց՝ որ աղօթքին եւ Յիսուսի Քրիստոսի անունին տան բժշկութեան ներգործութիւնը. վասն որոյ ըսաւ՝ եթէ հաւատացեալներուն մէջէն մէկը հիւանդանալու ըլլայ նէ՝ թո՛ղ կանչեն Եկեղեցւոյն քահանաները, որ անոնք աղօթք ընեն այն հիւանդին վրայ, եւ օծեն իւղով, բայց Յիսուսի Քրիստոսի անունովը. եւ շատ աղէկ կը հասկըցընէ՝ որ իւղը չի պիտի բժշկէ հիւանդը, այլ աղօթքը եւ հաւատքը. եւ տէր Յիսուս պիտի տայ անոր առողջութիւնը. “Եթէ հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կոչեսցեն զերիցունս Եկեղեցւոյն, եւ արասցեն ՚ի վերայ նորա աղօթս, եւ օծցեն իւ-

ղով յանուն տեառն: Եւ աղօթքն հաւատովք՝ փրկեսցեն զաշխատեալն, եւ յարուսցէ զնա տէր»,» Յակ. ե. 14:

Տեսա՞ր մի՛ հիւանդին բժշկութեանը համար սրբազան առաքեալը երկու տեսակ զօրութիւն եւ բժշկութեան ներգործութիւն կը դնէ. մէկը հաւատով աղօթք քահանայից, ասոր համար կանոնադրեց. «Կոչեսցեն զերիցունս Եկեղեցւոյն, եւ արասցեն ՚ի վերայ նորա աղօթս . . . եւ աղօթքն հաւատովք՝ փրկեսցեն զաշխատեալն»։ Եւ միւս զօրութիւնը՝ օծումն իւղով Յիսուսի Քրիստոսի անունովը, ասոր համար ալ ըսաւ, օծցեն իւղով. «յանուն տեառն»:

Ահա համեմատ աւանդութեան սրբազան առաքելոյն Յակոբայ այս մեր ըրած խորհրդածութիւնը կանխաւ ըրած էր երանելի վարդապետն մեր Սարգիս շնորհալի. ինչպէս որ կը գրէ. «Զոր օրինակ՝ առաքեալքն ըզբժշկութիւնսն՝ զոր կատարէին, անուամբ տեառն առնէին, յանուն Յիսուսի Քրիստոսի արի՛ եւ զնա՛ ՚ի ծնէ կաղին ասացին. Գործ. գ. 6: Եւ դարձեալ՝ (Պետրոս) Տա՛բիթա՛ արի՛ կա՛ց յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Գործ. թ. 40: Այսպէս յամենայն ուրեք զնոյն անուն ՚ի կիր արկա-

նէին: ... Ապա յայտ է յայսմանէ՝ որպէս (եսս) վարկանիմ, եթէ ո՛չ իւղն ինչ տայր զառողջութիւն հիւանդին՝ այլ անուն Տեառնն ամենայն ուրեք հաւատոց պէտք են՝ ՚ի բժշկութիւն, կամ նորուն ինքեան հիւանդին, եւ կամ որք աղաչենն վասն նորա: Որէս եւ տէր մեր բազում անգամ զհաւատս պահանջէր յախտացելոցն, եւ ապա բժշկէր՝ որք մատուցանէին նմա զհաւատսն. եւ էր բազում անգամ՝ որ սակս մատուցելոցն հաւատոց բժշկէր», ՚ի մէկն. կաթ. եր. 166: Ուրեմն Հայոց Եկեղեցին իւղով օծումը հիւանդաց վրայ գործ չածելովը ուղղափառութենէն ինկած չէ՛ բնաւ, եւ սրխալուած ալ չէ՛. որովհետեւ այս խորհուրդը ճիշտ Յիսուսի Քրիստոսի հեղինակութիւնովը կը կատարէ քահանայից ձեռք դնելովը ՚ի վերայ հիւանդաց. ըստ այնմ. «Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն եւ բժշկեսցին», Մար. ժգ. 18:

Եւս եւ Հայոց Եկեղեցին կրնդունի կարգաւորներուն աղօթքը, որք հաւատով կը կարդան Յիսուսի Քրիստոսի ամենակարող անունին զօրութիւնը հիւանդին վրայով, վասն որոյ հաստատեր է այս աղօթքը հիւանդներուն համար. «Փարատեա՛ զցաւս, եւ

բժշկեա՛ զհիւանդութիւնս», եւայլն. 'ի Ժա-
մադիրն: Եւ այս աղօթքը եւ Յիսուսի Քրիս-
տոսի անունը կարդալը համեմատ է կանո-
նադրութեան Յակոբայ սրբազան առաքե-
լոյն. «Եւ աղօթքն հաւատովք՝ փրկեսցեն
զաշխատեալն. եւ յարուցէ զնա տէր»,. ՋԷԿ.
Կաթո. ճառ ժա. Էր. 165:

Ուրեմն Հայոց Եկեղեցին զանցառութիւն
եւ խորհրդոյն խափանումն չէ՛ ըրած. մեր-
ձաւոր նիւթովը՝ այսինքն ձեռք դնելովը ըն-
դուներ է ըստ հրամանի տեառն մերոյ Յի-
սուսի, այլ միայն հեռաւոր նիւթը՝ որ է իւ-
ղով օծումը՝ զանցառութիւն ըրած է, եւ
կարեմ ասել թէ բազմատեսակ պատճառնե-
րով. քանզի չեղաւ հաստատուն սովորու-
թիւն այս մասին Հայոց Եկեղեցւոյն մէջ:
Եւ ահա՛ Հայոց Եկեղեցւոյ կարգաւորները
Յիսուսի այս սահմանադրութիւնը պաշտե-
լով, ամեն ժամանակ հիւանդներուն վրայ
այս խորհուրդը կը կատարեն՝ այս աղօթքը
ըսելով. «Փարատեա՛ զցաւս եւ բժշկեա՛»,
եւայլն: Եւ առաջին դարուն մէջ Եկեղեցին
ալ այս խորհուրդը միայն երէցներուն ձեռք
դնելովը կը կատարէր 'ի վերայ հիւանդաց,
եւ աղօթիւք եւ տեառնագրութեամբ խա-
չի. ասոր համար Հ, Գաբրիէլը սուրբ Աւե-

տարանին եւ հին եկեղեցական պատմութիւնէն առնելով կը գրէ. “Այլ երբեմն դնելով զձեռն ՚ի վերայ ախտացելոց որպէս Տէրն խոստացաւ. Մար. ժզ. 18: Եւ բազում անգամ աղօթիւք եւ տեառնագրութեամբ խաչի՝ որ է արարողութիւն ՚ի կիր արկեալ յառաջին դարուց Եկեղեցւոյ”, մէկ, Պօղ. Լապ, ա. Եր, 910:

Անանկ է նէ Եկեղեցւոյ առաջին դարուն մէջը այս հիւանդաց առողջութեան խորհուրդը վերջին օժման անունը չունէր, այլ յետոյ Լատինացւոց եկեղեցին սահմանեց Փլօրենցիոյ եւ Տրիտենդեան ժողովներուն մէջ. եւ տարածեցին իրենց մէջ գործադրութիւնը, եւ իրենցմէ ալ ոմանք ընդունեցին, եւ ոմանք ալ բացասութիւն ըրին. ինչպէս կը գրէ Պիլուարտ աստուածաբանը. Լապ գ. Եր. 393: Վասն զի ասկէց յառաջ Թովմայի աստուածաբանութենէն համոզուած էին, որ այս խորհուրդը հարկաւոր հարկաւորութեամբ Աստուածային պատուիրանին չէ՛, որ ըստ ինքեան պարտաւոր կընէ ուղղակի ամենքը ՚ի փրկութիւն հոգւոց, որպիսի են մկրտութիւնն եւ Դրոշմն՝ Հաղորդութիւնն եւ Ապաշխարութիւնն, այլ իբրեւ օգտակար հիւանդաց բժշկութեան.

տես յաստուածաբանութեան Պիլուարտի, Լապր գ. եր. 401: Եւ այս դիտաւորութիւնով հաստատեց եւ հրապարակեց Յունաց եկեղեցւոյ մէջ Երեմիաս պատրիարզն Կոստանդնուպօլսոյ: Թէպէտ երբեմն յաւուրս Յօհաննու իմաստասէր կաթողիկոսին քաղաքական հաղորդակցութիւն ընելով մեր ազգի ժողովուրդները Յունաց ազգին հետը՝ սկսան մեզմէ ոմանք փոփոխութիւն մը եւ կամ այլայլութիւն մը եկեղեցական հին արարողութիւններնու մէջ մուծանելու փոյթ ունենալ, որով մեծամեծ խռովութիւններ եւ անկարգութիւններ ծագեցաւ:

Ահա՛ այս եկեղեցական ծիսի եւ արարողութեան խռովութիւնը դադրեցընելու՝ եւ խաղաղութիւն հաստատելու համար՝ եւ մանաւանդ այն ժամանակը Հայաստանու կողմերը ամենաչար Պօղիկեանց աղանդաւորները՝ որք մտեր ու իրենց չարագոյն աղանդը օրէ օր տարածելու վրայ էին, անոնց ալ մոլորութիւնը մերժելու եւ խափանելու համար, վերոյիշեալ սուրբ հայրապետն մեր Յօհան իմաստասէր յատուկ ժողով ըրաւ Դուին մայրաքաղաքին մէջ Արքեպիսկոպոսներով, եւ անոնց մէջ երկար սրտաշարժ եւ վսեմատենաբանութիւն մը ընելէն վերջը, երեսուն

եւ երկու կանոններ սահմանեց, որոց մէկն ալ այս հիւանդաց օժման իւղոյն վրայով էր. որպէս գրեալ է. “Զձէթ օծութեան հիւանդաց քահանայն օրհնեսցէ ըստ իւրում աղօթից եւ ըստ ժամուն պիտոյից», ՚ի կանոնի ժա: Ասով այն տեղւոյ վէճը դադրեցոյց. բայց չի հրատարակեցաւ եւ չի հաստատեցաւ Հայոց Եկեղեցւոյ մէջ իւղոյն գործադրութիւնը իբրեւ հարկաւոր եւ մերձաւոր նիւթ խորհրդոյն հիւանդաց բժշկութեան: Անանկ է նէ սուրբ Հայրապետը այս ժողովը վերջին օժման համար յատուկ չը սահմանեց, եւ ո՛չ թէ իւղոյն գործածութիւնը հաստատելու համար, այլ խռովութիւնները վերջացնելու, եւ Պօղիկեանց շարաշար մոլորութիւնը Հայաստանէն մերժելու համար. տե՛ս Հայոց պատ. Հաս. բ. էր. 387, 394, 395:

Ուրիշ պատճառմ'ալ ունի մեր Եկեղեցին իւղով օծումը խափանելոյն համար. այն ժամանակները Յունաց մէջ այնչափ անզգուշութիւնով եւ անկարգութիւնով եղաւ իւղոյն գործածութիւնը, մինչեւ սկսան փոխանակ ապաշխարութեան թէ առողջներուն եւ թէ հիւանդներուն յաճախ եւ անխափան օծումն տալ. որով սկսաւ խափանիլ ապաշ-

խարութեան հարկաւոր խորհուրդը, թողումք ասոր վկայութիւնները, եւ բաւական կը համարիմք ուղղադատ վկայութիւնը շամշեան Հ, Միքայէլին որ ՚ի Վաճան Հա-ապոյ ո-ղ-ղափառ-ութեան Հայոց կը գրէ. “Իսկ թէ ընդէ՞ր եւ զիա՞րդ չեղեւ ՚ի Հայս հաստատուն սովորութիւն կիրառութեան սորին, եւ ո՛չ իսկ մարթ եղեւ հաստատել, չունիմք ասել հաւաստեալ զպատճառն, բայց միայն ընդհանրապէս զայս գիտեմք, զի երբ միանգամ չեմուտ հաստատութեամբ ՚ի մէջ ազգին, ո՛չ արմատացաւ երբէք: Այլ ՚ի վերայ այսր ամենայնի հայելով յանցս՝ որք անցին ՚ի մէջ այլոց ազգաց, նկատմամբ այդր բանի՝ զայսոսիկ գլխաւոր պատճառս տեսանեմք: Իբր զի անկարգութիւնք՝ որք մտին յանգգոյշ կիրառողս վերջին օծման՝ խորշեցուցին զՀայս ՚ի նմին սովորութենէ, քան զի ՚ի Յոյնս եմուտ յաճախութիւն այնր օծման, եթէ առ հիւանդս՝ եւ եթէ առ առողջս իբրեւ վճար ապաշխարութեան, մինչեւ բաց ՚ի սմանէ ո՛չ դնէին ապաշխարանս ՚ի վերայ խոստովանացելոց, այլ միայն իւղով օծանէին: ... Եւ որովհետեւ մին լինէր խափան լինելութեան միւսոյն, ընդ հակառակն թոյլ ետուն, զի խափանիչն խափանեալ մը-

նսացե: Վասն զի ըստ վճռոյ աստուածաբանից՝ ՚ի զոյգ ընթանալ երկուց որոշեալ հրամանաց մեծն յաւէտ պահելի է քան զփոքրն. եւ չէ՛ մարթ առ պահելոյ զփոքրն զմեծան զանց առնել, կամ առիթ տալ զանցառութեան: Եւ զի հրաման ապաշխարութեան է մեծ, իսկ օծումն հիւանդաց է սոսկ յորդորական ազդարարութիւն եւ ո՛չ ճիշտ հրաման, ոչ աստուածային՝ եւ ոչ եկեղեցական ըստ նախագրեալ աստուածաբանից. ուստի առաւել ընտրելի դասեալ են այն առաջնորդք, զի աստուածային հրամանն պահեսցի անխափան, քան թէ ՚ի պատճառս կատարման վերջին օծման՝ աստուածային հրամանն վտանգեսցի: Մանաւանդ ըստ նրմին չափու կարէին ցուցանել զառաւելութիւն հարկաւորութեան քան օգտակարութեան. արդ՝ խորհուրդն ապաշխարութեան հարկաւոր է չափահաս մեղուցելոց՝ հարկաւորութեամբ միջնորդի ըստ նախայիշատակեալ աստուածաբանից. սմին իրի այն առաջնորդք առաւել փոյթ տարեալ են վասն հարկաւորին՝ քան օգտակարին, առ ՚ի խափան լինելոյ միոյ ՚ի միւսոյն», ՊԼ. է:

Հիմակ այս ալ պէտք է որ գիտնամք. ինչու՞ համար այս հիւանդաց բժշկութեան խոր-

հուրդը վերջին օծումն հիւանդաց անուանեցին. շատերը կըսեն թէ սուրբ Եկեղեցւոյ եօթն խորհուրդներուն վերջը դասուելով՝ վերջին խորհուրդ անուանեցաւ: Եւ ոմանք ալ կըսեն՝ որ վտանգաւոր հիվանդութեան վերջին աստիճանին տրուելուն համար կոչեցաւ վերջին օծումն, եւ կամ վերջին օգնութիւն հիւանդաց. տե՛ս Պիլ. Լապր. Գ. Եր. 400: Բայց ՚ի վերայ այսր ամենայնի, չեմք գտած այս **Վերջին** բառը սուրբ գրոց մեջ այս խորհրդոյն վրայ ըսված. վասն զի հեղինակն խորհրդոյս Յիսուս Քրիստոս միայն հրամայեց. “Զհիւանդս բժշկեցէ՛ք”, Մար. Ժ. 8: Եւ թէ, “Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ եւ բժշկեսցին”, Մար. Ժզ. 18: Եւ սրբազան առաքեալն Յակոբոս ալ չէ՛ գործածած այս վերջին բառը՝ հիւանդաց օծման վրայով, այլ միայն կըսէ. “Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս Եկեղեցւոյն՝ եւ արասցեն վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն տեառն”, Ե. 14:

Ուրեմն Հայոց Եկեղեցին այս **Վերջին** բառը եւ իւղով օծումը զանց առնելով, եւ միայն քահանայից ձեռք դնելով՝ եւ սուրբ խաչիլ՝ սուրբ արևտարանաւ եւ աղօթիւք՝ հիւանդաց բժշկութեան համար այս խորհուր-

դը կատարելով՝ Քրիստոսի հրամանին եւ առաքելական ականդութեանը համեմատ ըրած կըլլայ:

Ապա Եկեղեցին Հայոց այս եօթն խորհուրդներուն մէջ ալ՝ շունի հերետիկոսութիւն կամ հերձուածողութիւն մը, այլ ճըշմարիտ ուղղափառութեամբ եւ բարեպաշտութեամբ համեմատ սուրբ գրոց՝ հաճելի եւ ընդունելի է առաջի Յիսուսի Քրիստոսի, ըստ բարեմաղթութեան մեծ հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչին. “Զի որպէս բուրվառ՝ որ անուշահոտ խնկօք ուրախ առնէ զմերձաւորսն, այսպէս եւ դաւանութեան մերոյ եւ մաքրութեան հոտ՝ բուրեսցի առաջի Քրիստոսի հանապազ...” Յաճա. ճառ է. Էր. 85:



ԳՒՈՒԿՈ ՎԵ

Աստուածային ճշմարտութեան լոյսը ունեցող միտքերը բաւական կարողութիւն ունին ճանչնալու եւ որոշելու անիրաւ դատողութիւնները եւ սխալ վճիռները, որոց մէկն ալ այս է, եթէ՝ “Հայք սուրբ Աստուածը խաչեցարիւ կըսեն, վասն որոյ են հերետիկոս...”:

Ո՛վ շարաշար զրպարտութիւն. սուրբ Եկեղեցին Հայոց կարող է համարձակ ասանկ խօսողներուն ըսել. «Ո՛չ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք», Գ.Պ. Թ. 55: Վասն զի ուղղափառութեան պաշտպան կուզէք ըլալ, բայց հակառակ ուղղափառութեան կը խօսիք. ողջամիտ դաւանութեան ուսուցիչ կը հանդիսանայք, բայց անանկ շփոթ վճիռ մը կընէք, որով Նեստորի շարափառութիւնը կրկնել կուտաք. չէ՛ որ պիղծն Նեստոր ուրացաւ բանին Աստուծոյ անշփոթ միաւորութիւնը Աստուածութեան եւ մարդկութեան. եւ չէր ընդուներ Յիսուսի Քրիստոսի կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ ըլլալը. որով եւ չէր խոստովանէր Աստուածածին զՄարիամ զմիշտ սուրբ կոյսն. այլ մարդածին եւ կամ Յիսուսածին:

Ապա Հայոց Եկեղեցին սուրբ Աստուածը խաչեցարիւ երգելովը՝ ո՛չ երբէք կը սըխալի, այլ մանաւանդ անով կը հերքէ եւ կը մերժէ Նեստորի շարաշար մոլորութիւնը. վասն զի դէմս Որդւոյն Աստուծոյ այս երգը կերգէ. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, որորմեա՛ մեզ»: Եւ անմիջապէս հետեւեալ մաղթանքը բացայայտ կընէ դէմս

որդւոյն Աստուծոյ ըլլալը, որ Սուրբ Աստուածին հետը կցորդելով կերգեմք. «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատո՛ղ զաղաչանս մեր՝ որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ»:

Ուրեմն այս բոլոր Սուրբ Աստուածին երգը ուղիղ մտօք եթէ քննեն՝ պիտի գտնան ըստ ամենայնի ընդդէմ մոլորութեան Նեստորի, եւ ճշմարիտ դաւանութիւն համաձայն ողջամիտ վարդապետութեան Հարց սրբոց, որովհետեւ սուրբ գիրք կը քարոզեն զՅիսուս Քրիստոս Աստուած կատարեալ՝ եւ մարդ կատարեալ. այսինքն մի եւ նոյն անձն բանին Աստուծոյ՝ ունող երկու բնութեան, որ է աստուածային եւ մարդկային. «Ահա՛ կոյս յղասցի՝ եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած». Եւայ. է. 14: «Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր վերայ ուսոց իւրոց, եւ անուն կոչեսցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած հօօր». Եւայ. թ. 6: խդ. 6: ծդ. 5: «Քանզի եւ որ ծնանելոցն է քէն՝ սուրբ է, եւ որդի աստուծոյ կոչեսցի». Ղ.՝. ա. 35: «Որ ըն-

դունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ Աստուած ճշմարիտ է»։ Յօժ. գ. 33: «Ո՛չ որ ել յերկինս, եթէ ո՛չ որ էջն յերկնից որդին մարդոյ՝ որ էն յերկինս»։ Յօժ. գ. 13: «Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես»։ Յօժ. ը. 58: Կան եւս թուղթս սրբազան առաքելոց այս մտօք վկայութիւններ, որ Յիսուս Քրիստոս է Աստուած հզօր, եւ տէր փառաց. «Յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս»։ Հոգ. թ. 5: «Զի եթէ էր ծանուցեալ՝ ո՛չ արդեօք զտէրն փառաց ի խաչ հանէին»։ ա Կորն. բ. 8: Փիլ. բ. 6: Տիմոթ. բ. 13: «Եւ գիտեմք՝ եթէ Որդին Աստուծոյ եկն, եւ ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն Աստուած, եւ իցեմք ճշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, զինա է ճշմարիտ Աստուած, եւ կեանք յաւիտենական»։ ա Յօժ. ե. 20:

Արդ՝ թէ որ Յիսուս Քրիստոս կը հաւատամք կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ՝ պիտի չ'ջիոթիմք, երբ լսեմք՝ Սուրբ Աստուածը խաչեցարիւ երգեալ, զի մի եւ նոյն անձն էր միանգամայն Աստուած եւ մարդ կատարեալ. եւ այս Աստուած եւ մարդ կատարեալ անձին կը վերաբերուէր փառքե-

րը եւ անարգանքները, քանզի ոչ այլ ոմն էր՝ որ փառօք աստուածութեանն կը պայծառանար ի Թաբօր լերին, եւ ոչ այլ ոմն՝ որ շարշարանօք կանարգուէր եւ կը խաշուէր ՚ի Գողգոթայ. այլ նոյն իսկ Որդին աստուծոյ, որ եւ էր միանգամայն որդի մարդոյ. ասոր համար կերգէ սուրբ Ներսէս շնորհալին ընդ դէմ Նեստորի. «Ո՛հ ոմն ուժեղ եւ զօրաւոր, եւ ոմն անզօր վտանգաւոր, այլ մի եւ նոյն գոլ միաւոր, կրէր զկիրսն կամաւոր».

Շար. «Եւ նոյն ծնեալն հօրէ անմարմնաբար՝ ծնաւ ի մօրէ ըստ մարմնոյ. եւ Որդին աստուծոյ եղեւ որդի մարդոյ, ոչ ոմն աստուծոյ որդի, եւ ոմն մարդոյ, զմին որդի յերկուս բաժանելով որդիս՝ ըստ հայհոյութեանն Նեստորի».

Ընդ. Եր. 78: Եւ առ քահանայս Յամայք նահանգին գրէ. «Խոստովանելի է մեզ յետ միաւորութեանն զնա՝ ո՛չ մարդ սոսկ՝ յաղագս մարդոյն, եւ ո՛չ աստուած մերկ՝ յաղագս աստուածութեանն, այլ Աստուած եւ Մարդ. ո՛չ ոմն մարդ՝ եւ ոմն Աստուած ըստ Նեստորի».

Եր. 151:

Արդ շարշարանք՝ խաշ՝ եւ մահ մի եւ նոյն անձին Յիսուսի Քրիստոսի էր, եւ նոյն անձն էր Աստուած եւ Մարդ կատարեալ. ուրեմն Հայոց եկեղեցին չէ՛ սխալած՝ եւ

կամ չէ՝ բնաւ հերետիկոս, երբոր կերգէ մի եւ նոյն անձին համար, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

Շատ մեծ յիմարութիւն է ըսեմ, եւ չըսեմ, որ Նեստորականութիւն է, որ այս Սուրբ Աստուածը խաչեցարիւ ՚ի դէմս Որդւոյն Աստուծոյ երգելնուս համար՝ թշնամաբար եւ զրպարտելով՝ հերետիկոս կըսեն մեզի: Ահա՛ այս անշփոթ եւ անբաժանելի միաւորութիւնը Յիսուսի Քրիստոսի խոստովանելով Հայոց եկեղեցին՝ Սուրբ Աստուածը խաչեցարիւ կերգէ. որովհետեւ սուրբ Գրիգոր լուսաւորիչէն այս ուղիղ եւ ողջամիտ դաւանութիւնը տրված է. «Յանկալի եղեւ մահ՝ մահուամբ Աստուծոյ մերոյ».

Եգաթ: Այս մտօք շարագրեալ ուղղափառ վարդապետութեամբ շարականաց երգերը ունի սուրբ եկեղեցին Հայոց. «Ո՛վ սքանչելի տեսիլահաւոր. զարարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ՚ի խաչին»:

«Յանմահիդ մեռանելոյ զմեռեալ հոգիս կենդանացո՛»:

«Խաչեցար կամաւ հօր վասն մեր, զմեղս սպաներ, Սուրբ Աստուած ողորմեա՛ մեզ»:

«Սուրբ Աստուած՝ որ վասն մեր զմահ ճաշակեցեր»:

Թէ որ կը սխալի Հայոց եկեղեցին Սուրբ

Աստուածը խաչեցարիւ երգելովը. ապա սը-
խալած են շատ նախնի սուրբ Հարք, որոնցմէ
է Գրիգոր աստուածաբանը՝ որ կը գրէ 'ի
Տառն որ 'ի պատկայն. «Յոլովագոյն են ժա-
մանակիս այսորիկ սքանչելիք, Աստուած խաչ-
եալ, արեգակն խաւարեալ, եւ դարձեալ
լուսաւորեալ, վասն զի պարտ եւ արժան էր
ըստ Արարչին շարշարակից լինել եւ արարա-
ծոցս»: Եւ սուրբն Աթանաս առ Եպիկտի-
մոն եպիսկոպոսն Կորնթացւոց կը գրէ. «Աստ-
ուած եւ տէր փառաց գոլով՝ որդի գոյր
յանարգութեան եւ յանպատուութեան՝ բե-
ւեռեալ 'ի խաչին»: Եւ սուրբ Կիրեղ ա-
ղեքսանդրացին չէ՞ որ Ատտիկոս եպիսկոպոսի
ուղղափառական խօսքը ինքն ալ յիշելով կը-
սէ. «Մեռաւ անմահն՝ մահուամբ մեռուց-
եալ զմահ», պարսպ. էր. 455: Եւ սուրբ
Կիրեղ Երուսաղեմի հայրապետն եւս բա-
ցայայտ կը գրէ. «Զի՞ զարմացեալ ես, թէ
աշխարհս ամենայն փրկեցաւ. զի ո՛չ եթէ
դուզնաքեայ ոք էր, այլ Որդի աստուծոյ մի-
ածին, որ եկն եւ մեռաւ վասն մեղաց մե-
րոց». Կոչ. քնձ. Գլ. Ժդ:

Մի՛ թէ այս Երանելիները սխալեցա՞ն, եւ
կամ ասոնց գրաւոր աւանդութիւնները ուղ-
ղափառ ողջամիտ վարդապետութիւն չէի՞ն.

երբ այս երանելիներուն վարդապետութեանը ունկնդիր կըլլաս, հարկաւ պիտի ըսես՝ ուղղափառութիւն է. ապա թէ ո՛չ՝ դու ինքնին շարափառութեան եւ հերետիկոսութեան խորխորատին մէջ կիյնաս, երբ ուզես զրպարտել՝ եւ շարախօսութիւն ընել Հայոց ուղղափառ եկեղեցւոյն վրայ՝ այս վերոյիշեալ վկայութիւնները բոլորովին զանց առնելով, կամ բնաւ իսկ չ՛իշխելով ճշմարտութեան լոյսը խափանելով՝ համարձակիս ըսելու աս անտեղի խօսքս, թէ «Հայք որովհետեւ Սուրբ Աստուածը խաչեցարիւ կերգեն, վասն որոյ են հերետիկոս»:

Ո՛վ բարեմիտ եւ ճշմարտասէր ընթերցող, եկու՛ ասոնց հարցունեմք. թէ որ Աստուած խաչեալ չըսուիր Յիսուսի Քրիստոսի, ապա ուրեմն եւ Յիսուսը խաչողներուն համար պիտի չըսուի աստուածասպան եւ կամ աստուածաշարշար, եւ ըսողները կամ գրողներն ալ սխալած պիտի ըլլան կամ մոլորեալ. ապաքէն սուրբ Գրիգոր աստուածաբանը, սուրբ Իգնատիոս աստուածազգեաց հայրապետը, եւ սուրբն Պրոկղ կոստանդնուպօլսոյ պատրիարքը, ասոնք միթէ մոլորեցա՞ն եւ հերետիկո՞ս եղան, եւ կամ մեր Ներսէս եւ Սարգիս շնորհալիք, եւ Գրիգոր Նարեկացի՝ եւ Ներսէս լամբրոնացի սրբազան հարք մո-

լորեցա՞ն արդեօք. եւ կամ գրածնին ու խօսածնին ողջամիտ ուղղափառութիւն չէ՞. ըզՔրիստոս շարշարող եւ խաչը հանողներուն աստուածասպան եւ աստուածաշարշար կը գրեն. «Եթէ ոք ո՛չ երկիրպագանիցէ խաչելոյն՝ նզովեալ եղիցի, եւ կարգեսցի ընդ Աստուածասպանսն», Գրի. Ըսրո-աշ-ա. յառորս. ճառ թ: «Հաղորդակից է Աստուածասպանիցն, եւ որոց առաքեալսն տեառն կոտորեցին», Իգնա. Ըսրո-ա. 'ի Խո-ղմն ժդ: «Աստուածաշարշար ազգին յանդիմանիչ», Պրոկղ. պար. Կոստ. 'ի ներ. Ստեփ: «Որք 'ի խորհուրդ քո երկնային՝ մեռեալ մեղօք հոգւով մերձին. ընդ Աստուածասպանսն կարգեսցին՝ Կայիափայ եւ Աննային», Ներ. Շնոր. յողք Էրե: «Պարսաւանաց եղեւ անունս այս (Յուդայ) այժմիկ սակս Յուդայի որդւոյն կորստեան, որ Աստուածավաճառն եղեւ եւ Աստուածասպան», Սար. շնոր. մեկ. յո-. Էր. 629: «Ո՛չ 'ի մոլորեցուցիչն կարդալ քեզ Աստուածասպանիցն՝ զօգուած ծնօտիցն բաժանեցեր», Նար. Գլ. ժա: «Ի բարի առաջնորդաց պակասեալք՝ (հրէայք) յԱստուածասպանութիւն ժպրհեցան», Ներ. լամբ. 'ի մեկ. առ-ակ. Գլ. ժա:

Ես կը կարծեմ, եւ դուք ալ պիտի վկայէք, որ այս հերետիկոսութեան զրպարտութիւնը՝ միայն մեր սուրբ Եկեղեցւոյն թշնամիներուն բերնէն լսելով՝ շատերը խաբուած են. եւ մեր ուղղափառութիւնը յայտնող եկեղեցական գրքերնու ծանօթ չեն. թէպէտ գիտցողներ ալ կան, բայց ՚ի հաճոյս մարդկան զիջեալ, եւ սնոտի երկիւղիւ պաշարեալ, գրիչներնին կամաւ սեղմեր են ճշմարտութիւնը բացայայտ գրելէն. բայց մեր սուրբ Եկեղեցւոյ աւանդապահ երանելի սուրբ հարք պակաս չեն թողուցեր արժանը եւ հարկաւորը գրելէն. ինչպէս այս «ո—րջ աստ—» «—ա՞» երգին համար Ներսէս շնորհալի սուրբ հայրապետն մեր կը գրէ. «Վասն երից սըրբասացութեանցն գրեալ էր, զի խաչեցար ասեմք, եւ թէ մեք զսրբասացութիւնս զայս ՚ի դէմս Երրորդութեանն երգէաք՝ որպէս եւ դուք, չար եւ խորին մոլորութիւն էր ասել թէ խաչեցար, այլ զի առ մի անձնաւորութիւնն որդույ բարբառիմք զայսոսիկ. վասն այնորիկ զմեծագոյն երախտիսն՝ որ ՚ի նմանէ առ մեզ եղեալ, դնեմք առաջի նորա, թէ Աստուած եւ հօր եւ անմահ՝ որ մարմնով խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ: Առ ընթեր նմին եւ զմայր բանին Աստուծոյ

բարեխօս եւ միջնորդ ունիմք առ միաձինն իւր, ասելով թէ մատո՛ղ զաղաչանս մեր որդւոյ քո եւ աստուծոյ մերոյ»։ Ընդհ. էր. 62։ Սոյն այս շնորհալին յերգս՝ որ է (Միշտ էիդ). «Սա Աստուած՝ նոյն է մարդ, որ մեզ ցուցաւ, ՚ի յերկրի ՚ի մէջ մարդկան մարդ շրջեցաւ, սա ՚ի խաչ վասն ադամայ բեւեռեցաւ, ճաշակեաց զմահ մարմնով զոր զգեցաւ, էր Աստուած, նոյն էր եւ մարդ, որ խաչեցաւ, դնողն ՚ի կեանս եղեալ ՚ի մահ, կամաւ տուաւ»։ Այսպէս ալ կը գրէ սուրբ Յօհանն իմաստասէր հայրապետն մեր. «Վասն որոյ ո՛չ վայրապար մեք ՚ի կիր առնումք ըզխաչեցարն ՚ի գլուխ սրբասացութեանցն։ Եւ քանզի սուրբ է որդի եւ հօր եւ անմահ, եւ կամօքն Հօր եւ հաճութեամբ Հոգւոյն սրբոյ եկն նա ՚ի շարչարանս խաչին, եւ նովաւ իսկ ծանեաք զՀայր եւ զՀոգին։ Եւ մի՛ պախարակեսցեն այլապէս խորհեցողքն, որք եւ ամօթ եւս վարկանին զփրկութեան մերոյ անօթ։ Եւ մեզ յայլ ինչ մի՛ լիցի պարծել՝ ըստ առաքելոյ, բայց միայն ՚ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ ՚ի մէկն. Ժամակարգ։ Այս օրինակ կը գրէ եւ ճոն Բարսեղ շնորհալի վարդապետն մեր. «Թէպէտ ա-

նարգեցաւ՝ հզօր էր. թէպէտ մեռաւ՝ անմահ էր: Յաղագս որոյ աղաղակեմք առ նա՝ եւ ասեմք. սուրբ Աստուած, սուրբ հզօր, սուրբ անմահ, որ անարգեցար եւ խաչեցար եւ մեռար վասն մեր՝ ողորմեա՛ մեզ»՝ ի մէջն.

ճար. էր. 365:

Ապա ինչու՞ համար Հայոց Եկեղեցւոյն յանցանք կըլլայ սուրբ Աստուածը ՚ի դէմ Յիսուսի Քրիստոսի՝ ըսելը. չէ՞ որ լատինացւոց եկեղեցին՝ տարին մէկ անգամ աւագ ուրբաթ օրը խաչելութեան պատկերին առջեւը գալով՝ մեծ ջերմեռանդութեամբ սուրբ Աստուածը կերգեն ՚ի դէմ որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ըսելով. «Սուրբ Աստուած՝ սուրբ եւ հզօր՝ սուրբ եւ անմահ ողորմեա՛ մեզ»:

Լատինացւոց եկեղեցին միայն կըսէ «Ողորմեա՛ մեզ», իսկ մեր Հայոց Եկեղեցին կերգէ «Որ եւ խաչեցար վասն մեր՝ ողորմեա՛ մեզ», Մի՛ թէ աւելո՞րդ եւ կամ հերետիկոսութի՞ւն կը համարին Յիսուսի Քրիստոսի համար ըսելն իս. «խաչեցար վասն մեր», եւ այն հրեշտակը՝ որ Քրիստոսի սուրբ գերեզմանին կողմը յարութեան օրը երեւցաւ իւղաբեր կանանց, մի՛ թէ հերետիկոսութի՞ւն սորվեցուց որ ըսաւ. «Մի՛ երկնչիք դուք. գիտեմ՝ զի զՅիսուս ըզ-

խաչելեալն խնդրէք». Մատթ. իր. 5: Եւ կամ սրբազան առաքեալները Յիսուս Քրիստոս խաչեալ քարոզելովնին մի՛ թէ հերետիկոսութի՞ւն կը քարոզէին. «Մեր քարոզեսցուք ըզխաչելեալն Քրիստոս». Աորն. ա. 23: Յիսուս Քրիստոսը խաչեալ խոստովանելու է, ո՛չ թէ միայն ձայնիւ երգելով, այլ եւ սրտիւ հաւատալով, կըսէ Լեբրոն լատին աստուածաբանը ՚ի ճառ խաչին. եւ Աւիդիոս երեւելին ՚ի հարց անտի լատինացւոց եկեղեցւոյն կը գրէ առ յոյնս ՚ի ժամանակս Կնափոսի. եթէ «ի դէմս Քրիստոսի ասելով զսուրբ Աստուածըն՝ հա՛րկ է խաչեցարիւ ասել. ապա թէ ո՛չ՝ այդ իսկ է բառնալ ՚ի միջոյ զհիմն քրիստոնէութեան». յերոսոստ նամակ:

Ուրեմն մեր Հայոց Եկեղեցին նախնի հին սովորութիւնը պահելով՝ կըսէ սուրբ Աստուածը ՚ի դէմս Քրիստոսի, որ է Աստուած սուրբ եւ հզօր վասն մեր խաչեալ. ասով կը հետեւիմք սուրբ գրոց, որ կը սորվեցընեն հաւատացեալներուն. խոստովանիլ զՅիսուս Քրիստոս խաչեալ. «Զի ո՛չ եթէ ՚ի մտի եղի գիտել ինչ ՚ի ձեզ՝ միայն զՅիսուս Քրիստոս, եւ զնոյն ՚ի խաչ ելեալ». ա. Աորն. բ. 2:

Հարցու՛ աստուածաբաններուն. երբ որ սուրբ Աստուածը ՚ի դէմս որդւոյն Աստու-

ծոյ Յիսուսի Քրիստոսի պիտի ըսուի, եւ գիտութեամբ այս բառերը «որ խաչեցար վասն մեր», վերցընելու ըլլամք, անշուշտ Նեստորի մոլորութիւնը ընդունած պիտի ըլլամք. ասոր համար ո՛չ զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ կերգէ սուրբ Աստուածը խաչեցարիւ Հայոց ուղղափառ եկեղեցին. ուրեմն այս մասին ալ ո՛վ որ Հայոց Եկեղեցւոյն համար հերետիկոս կըսէ, արդարեւ յանդուգըն զրպարտութիւն ըրած կըլլայ, եւ պարտաւոր Աստուածային արդարադատ ատենին:

ԳԼՈՒԽ ԺԶ

Հայոց սուրբ Եկեղեցին սուրբ Հոգւոյն Աստուծոյ շնորհքներովը զարդարուած ըլլալով՝ եւ սրբոյն Գրիգորի լուսաւորչի ուղղափառ վարդապետութեանը հետեւելով՝ առաքելական ողջամիտ աւանդութիւնները միշտ անփոփոխ պահելով՝ ամեն մէկ հաւատոյ մասանց մէջ ուղղափառ կը հանդիսանայ առաջի ճշմարտասէր ուղղափառաց. եւ ահա՛ մեկ ուղղափառութեանը յայտնի ապացոյցն ալ այս է որ՝ հոգւոց փրկութեան հարկաւոր միջոցները՝ որ սուրբ Եկեղեցւոյ սրբա-

րար խորհուրդներուն մէջ կը տեսնուի, լաւ կը ճանաչէ, եւ ամեն մէկին վայելուչ գործածութիւնը ժամանակին կընէ արժանաւոր արարողութիւնով՝ եւ մեծամեծ ջերմեռանդութեամբ. ասոր համար է՝ որ ննջեցելոց հոգիներուն վրայով ալ սուրբ գիրքերուն համեմատ ուղիղ եւ ճշմարիտ ճանաչումն ունի հաստատ յուսով. որովհետեւ համոզուած է սրբոյն Գրիգորի լուսաւորչի այս քարողութենէն. «Եւ սուրբ եւ արդար հոգեացն ընդ առաջ գան հրեշտակք եւ սրբոցն հոգիք եւ տանին առաջի Աստուծոյ սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգօք հոգեւորօք: Գովեն զամենազօր փառսն տէրութեան ամենասուրբ Երրորդութեանն. եւ գոհանան զերախտաւոր բարերարութենէն, որ փոխէ յերկրաւորացս յերկնաւորսն, յանարգութենէս ՚ի պատիւ, զհրաւիրեալսն եւ զկոչեցեալսն յիւր արքայութիւնն եւ ՚ի փառսն, որ նա միայն է փառաց եւ պատուոյ եւ օրհնութեան արժանի»։ Յաճախ. Էր. 171: Եւ սրբազան Պօղոս առաքեալէն սորված է՝ որ հոգեւորապէս տգէտ եւ յիմար չ'գտնըվի, այլ ճշմարիտ հաւատով եւ աներկմիտ յուսով խորհի ՚ի Քրիստոս Յիսուս ննջեցեալներուն հոգիներուն վրայով. ըստ այնմ. «Ո՛չ կամիմ

եղբարք, եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն, զի մի՛ տրտմիցիք որպէս եւ այլքն՝ որոց ո՛չ գոյ յոյս, եթէ հաւատամք՝ եթէ յիսուս մեռաւ եւ յարեալ, նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ՚ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա», ա ԹԷ. դ. 12:

Ապա նախ կընդունի Հայոց Եկեղեցին ճշմարիտ հաւատով եւ հաստատ յուսով, որ Յիսուսի Քրիստոսի փրկարար մահուան արդիւնքը՝ եւ կենդանարար յարութեան շընորհքը երկնից արքայութեան ճանապարհը բացաւ. եւ մանաւանդ նոյն ինքն իրեն փրկկազործ տնօրէնութեամբը եղաւ հաւատացեալներուն դուռն արքայութեան երկնից. ըստ այնմ. «Ես եմ դուռն ոչխարաց». Յօձ. Ժ. 7: Ահա՛ այս մտօք կերգէ սուրբ Եկեղեցի մեր. «Դուռն կենաց մտից Յիսուս, մո՛յժ եւ զմեզ առ հայր քո եւ հոգի, երգել միշտ զփառս», ՚ի Ժամա:

Ուրեմն արդար եւ սուրբ եւ աստուածահաճոյ հոգիները, որ աստուածային տեսութեան արժանի եղեր են, կը վայելեն հոգւով երկնից արքայութեան ամենացանկալի փառքերը. ինչպէս որ Պօղոս առաքեալ կը փափաքէր հոգւով ժառանգել այն պատրաստեալ փառքը, վասն որոյ կըսէր. «Նեղեալ եմ

յերկոցունց՝ զցանկալն ելանել եւ ընդ Քր-
րիստոսի լինել, առաւել լաւ համարիմ».
Փիլիպ. ա. 23: Այս մտօք է գրածնալ. «Այլ
համարձակիմք՝ եւ առաւել եւս հաճեալ
եմք ելանել ՚ի մարմնոյ աստի՝ եւ մտանել
առ Աստուած». ք Կորն. ե. 8: Եւ չէ՞ որ
Յիսուս ըսաւ աջակողմեան աւագակին. «Այ-
սօր ընդիս իցես ՚ի դրախտին». Ղ. 43:

Այս արդար հոգիներուն ժողովը երկնից
արքայութեան մէջ՝ կըսուի անդրանկաց՝ եւ
կամ յաղթական եկեղեցի. ինչպէս կը գրէ Պօ-
ղոս առաքեալ. «Այլ մատուցեալ էք ՚ի սիովն
լեառն, եւ ՚ի քաղաք Աստուծոյ կենդանույ
Յերուսաղէմ յերկինս, եւ ՚ի բիւրաւոր բանա-
կըս հրեշտակաց, եւ յեկեղեցիս անդրանկաց
գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ամենե-
ցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատա-
րելոց». Եբր. ժբ. 22: Եւ թէ «Զբարւոք
պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կա-
տարեցի, զհաւատսն պահեցի». ք Տիմ. դ. 7:
Եւ սուրբ վկայներուն համար կերգեմք.
«Յաղթանակ համբերութեամբ՝ կատարեցիք
զընթացս ձեր, եւ փոխեցայք յերկրայնոցս ՚ի
յերկինս, ընկալայք ՚ի Քրիստոսէ զպսակս
անապական». Շարք: Արդ՝ այս ճշմարիտ հա-
ւատով եւ աներկբայ յուսով Հայոց Եկեղե-

ցին հաստատ ըլլալով եւ հաւատարիմ աւանդապահ գտնուելով՝ կը խոստովանի առանձնական դատաստանաւ հատուցումն արդար եւ սուրբ հոգիներուն՝ հաղորդ ըլլալ Աստուծոյ երանական տեսութեան ամենացանկալի փառաց, ասոր համար այս երգերը եւ մաղթանքները կընէ. «Ճգնաւորք Աստուծոյ եւ ժառանգորդք երկնից արքայութեան, որք փոխանակեալք զանցաւորս՝ առիք զանանցն բարութիւնս, բարեխօսեցէ՛ք առ տէր վասն մանկանց եկեղեցւոյ». **Շար:** «Տէր բարերար՝ որ մեծաւ զթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշխատելոցն, եւ կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն եւ զտաժանեալսն մեղօք՝ հանգիստ նոցա խոստանալով, շնորհեա՛ եւ մեզ տէ՛ր՝ անխռով խաղաղութեամբ զգիշերս անցուցանել, եւ ՚ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս՝ ապահովեա՛ ողորմութեամբ քով, եւ արժանաւորեա՛ մշտնջենաւոր հանգըստեանն ընդ ամենայն սուրբս քո». **Ի Ժամա:** Ասոնց պէս շատ բացայայտ վկայութիւններ կան մեր եկեղեցական գրոց մէջ՝ որ շատերուն ծանօթ է:

Երկրորդ՝ կը հաւատայ Հայոց Եկեղեցին,

որ սուրբ Պատարագին ամենաբաւական շընորհին, եւ սուրբ Եկեղեցւոյ բարեխօսութեամբը, եւ աղքատաց ողորմութիւն տալով, աստուածային ողորմութենէն կը պարգեւի թողութիւն եւ ներողութիւն այն նընջեցելոց հոգիներուն, որք թէպէտ խոստովանած էին, բայց ապաշխարութիւնը կատարելու ժամանակ չունեցան, եւ կամ ներելի մեղքի մէջ էին, բայց կատարեալ հաւատով եւ հաստատ յուսով ննջեցին ՚ի Քրիստոս Յիսուս. եւ այս հաւատքը սորված եւ համոզուած է ՚ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէ այսպէս. «Եւ արտասուալից աղօթիւք եւ առատ ողորմութեամբք՝ հանդերձ Քրիստոսի պատարագան՝ զԱստուած ՚ի հաշտութիւն ածել՝ եւ հրաժարելոյն մխիթար լինիլ ՚ի հանդերձեալսն: Այսոքիկ են որք զանձըն օգտեցուցանեն, եւ իւրեանց մերձաւոր հրաժարելոցն՝ զմտերիմ սէրն ցուցանեն. վասն հրաժարելոյն յերկրէ հաւատով՝ եւ ննջեցելոյն յուսով»։ Յաճախ. Էր. 175: Եւ այս ճառին մէջ օրինակ կը բերէ Աստուածաշունչէն Յուդա մակաբէին Աստուածահաճոյ յոյսը մեռելոց վրայով. ասոր համար կը գրէ. «Եւ ՚ի զօրս մակաբայեցւոցն երեւի յոյս, որ զնիշ հեթանոսացն ունելով անկան ՚ի պատերազմին, եւ

զնոցա աւարն ետուն ցքահանայսն, զի աղքատաց բաշխեսցեն ՚ի քառութիւն մեղաց նոցա վրիպելոցն ՚ի ճշմարտիցն»։ Ասոր պատմութիւնը կը տեսնաս Աստուածաշնչին մէջ. «Քաջութեամբ խորհրդով շորս սատերս կրկին ժողովէր. եւ տայր տանիլ Յերուսաղէմ. մատուցանել պատարագս վասն մեղացն, կարի բարւոք իմաստութեամբ. զի վասն յարութեան մեռելոց խորհեալ առնէր՝ զոր առնէր։ Զի եթէ յարութեան ակն ո՛չ ունէր, անկելոցն ՚ի պատերազմի, զուր տարապարտուց լինէր վասն մեռելոցն աղօթքս մատուցանել։ Այլ հայէր նա ուղիղ ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զշնորհս պարգեւացն։ Արութեամբ քաջութեամբ վասն մեռելոցն զմտաւ ածէր այց լինիլ մեղացն թողութեան»։ Բ Մակ. Ժբ. 45։

Ի՞նչ ըսեմք՝ Յիսուսի Քրիստոսի սրբարար Պատարագի ամենաբաւական շնորհքը միայն կենդանի եղող հաւատացեալներուն կը ներգործէ, հաւատով եւ յուսով ննջեցելոց հոգիներուն շի՞ ներգործէր։ Այս խօսքով բոլորովին հակառակ խօսած կըլլամք Պօղոս առաքելոյն գրածին. «Քանզի ՚ի նոյն իսկ եւ Քրիստոս մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ կենդանեաց առ հասարակ տիրեսցէ».

Հոգ. ժդ. 9:

Արդ՝ յայտնի եկեցոյց Յիսուս իրեն քա-
ուութեան եւ ներողութեան շնորհաց պար-
գեւը թէ կենդանեաց եւ թէ ննջեցելոց,
այս անժխտելի վճռովը. «Վասն այդորիկ ա-
սեմ ձեզ, ամենայն մեղք եւ հայհոյութիւնք
թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյ-
ութիւն մի թողցի . . . մի յայսմ աշխարհի՝
եւ մի ՚ի հանդերձելումն»։ Մատթ. ժբ. 31:

Հոգւոյն սրբոյ հայհոյութիւնը է բարիին
չար ըսել, լոյսին խաւար՝ խաւարին լոյս.
Եւայ. Է. 20: Կգ. 10: Գործ. ե. 51: Որ է
հակառակասիրութիւն ընդ դէմ յայտնի եւ
վկայեալ ճշմարտութեան. ինչպէս որ հակա-
ռակեցան փարիսեցիները Յիսուսի յայտնի
եւ վկայեալ հրաշքներուն ճշմարտութեանը
դէմ. Մատթ. ժբ. 24, 27: Եւ այս անթողի
մեղք եղաւ անոնց՝ որ ասոր մէջ յամառ-
ուած անզեղջ մնացին. վասն որոյ այս սոսկա-
լի վճիռը տրվաւ Յիսուս անոնց. «Բայց ըզ-
Հոգւոյն հայհոյութիւն մի թողցի . . . մի՛
յայսմ աշխարհի եւ մի ՚ի հանդերձելումն»:

Ապա ուրեմն Աստուածային թողութեան
շնորհը եթէ այս կենաց ժամանակիս մէջ
զղջացող՝ խոստովանող՝ եւ ապաշխարող մե-
ղաւորներուն կը պարգեւի, եւ եթէ՛ ՚ի հան-

դերձեալն, այսինքն զղջացող խոստովանող՝ բայց ապաշխարութիւնը կատարելու ժամանակ շունեցող ննջեցելոց հոգիներուն ալ կը պարգեւի, օժանդակութեամբ աղօթից սուրբ Եկեղեցւոյն՝ Յիսուսի եւ Քրիստոսի սրբարար Պատարագի շնորհիւն, որ կը մատուցանի վասն փրկութեան հոգւոց կենդանեաց եւ ննջեցելոց, այս մտօք կը գրէ Ոսկեբերան ՚ի Տէկն. Եբր. Թղթոյն Պօղ. է. 25: «Կարող է Քրիստոս ապրեցուցանել ո՛չ միայն յերկրի, կամ ՚ի ժամանակիս, այլ եւ յերկինս՝ ՚ի հանդերձեալ կեանս»:

Արդ՝ մեք կը հաւատամք, որ Յիսուսի Քրիստոսի պաշտելի եւ երկրպագելի անունը կարդալով եւ յիշելով, ինչ բարի խնդրուած որ ընեմք, կատարեալ հաւատով եւ հաստատ յուսով թէ՛ իրեն գթութենէն եւ թէ՛ հօր աստուծոյ մարդասիրութենէն՝ հարկաւ կը պարգեւէ. վասն զի ինքն Յիսուս Քրիստոս այս համարձակութիւնը շնորհած է մեզի եւ խոստացած. «Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն». Յօժ. Ժդ. 13: «Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք ՚ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ». Յօժ. Ժզ. 23:

Կը տեսնա՞ւ Յիսուս Քրիստոս տէրն մեր

բացարձակ համարձակութիւն տուեր է մեզի հայցելու եւ խնդրելու հօր Աստուծմէ, եւ իրմէն, ինչ որ բարի է եւ օգտակար մեզի կարեւոր հոգւոց փրկութեան, քաւութիւն մեղաց, եւ ժառանգութիւն երկնից արքայութեան. բայց ո՛չ թէ մեք միայն մեր բարիքը եւ մեր հոգւոյն փրկութիւնը պիտի խնդրեմք անձնասիրութեամբ. այլ եւ մեր եղբայրներուն մեղաց թողութիւնը՝ եւ հոգւոց փրկութիւնը պիտի հայցեմք եղբայրսիրութեամբ. ապա թէ ո՛չ՝ այն Աստուածային պատուէրը զանց ըրած ու ժխտած կըլլամք. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո». Մատթ. ԺԺ. 19:

Անանկ է նէ պիտի հոգամք մեր եղբայրներուն ալ հոգւոց փրկութիւնը եւ մեղաց քաւութիւնը թէ կենդանի ըլլան եւ թէ՛ մեռեալ. տես Յօհաննէս աւետարանիչը ի՞նչպէս բացայայտ կը գրէ. «Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա. զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ: Զի եթէ գիտիցեմք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց. ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցուածան՝ զոր հայցեմք առ ՚ի նմանէ. եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ո՛չ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ եւ տացէ

նմա կեանս՝ մեղուցելոյն ո՛չ առ ՚ի մահ. են մեղք՝ որ մահու չափ են. ոչ վասն այնորիկ ասեմ՝ եթէ խնդրեսցես». ա ՅօԸ. ե. 14:

Այս տեղ բարուք խորհրդածութիւն ընեմք. այս սրբազան աւետարանչիս պատուէրը «հայցուած ընելու եղբայրներուն մեղաց թողութեանը համար՝» կենդանի եղբայրներուն համար է մի միայն, եթէ ննջեցելոց համար ալ. չեմք կրնար աս վճիռը ընել, թէ միայն կենդանի մեղաւոր եղբայրներուն համար է. վասն զի կենդանի մեղաւորները՝ հարկ ՚ի վերայ անձանց իւրեանց ունին իրենք իրենց զղջումը՝ խոստովանութիւնը՝ եւ ապաշխարութիւնը ընելու եւ կատարելու. ինչպէս սուրբ գիրքը մեզի կը յայտնէ. «Եւ լուեալ զայս զղջացան ՚ի սիրտս իւրեանց». Գործ. ք. 37: «Բազումք ՚ի հաւատացելոցն գային եւ խոստովան լինէին, եւ պատմէին զգործս իւրեանց». Գործ. ժթ. 18: Մար. ա. 6: Եւայ. խդ. 26: «Արդ՝ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ապաշխարել». Գործ. ժէ. 30: Բ Տիմ. բ. 25: Մար. դ. 17:

Տեսա՞ր՝ սուրբ գիրքերը ամեն մէկ մեղաւորները կը պարտաւորեն իրենք իրենց մեղացը համար զղջալու՝ խոստովանելու՝ եւ

ապաշխարելու, ապա ի՞նչ է Յօհաննէս աւետարանչին պատուէրը, «Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ո՛չ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ եւ տացէ նմա կեանս մեղուցելոյն ո՛չ առ ՚ի մահ»: Կենդանի մեղաւորը թէ՛ մահացու մեղօք՝ եւ թէ՛ ներելի մեղօք՝ յանցաւոր ըլլայ առաջի Աստուծոյ, պարտաւոր եմք խրատելու զնա, եւ աստուծմէ պիտի խնդրեմք՝ որ անոր դարձի շնորհք տայ, որ ինքնին իրեն մեղքը ճանչնալով՝ զղջումի՝ խոստովանութեան՝ եւ ապաշխարութեան գայ, «Եղբա՛րք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ՚ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանրս, դուք որ հոգեւորքդ էք՝ հաստատեցէ՛ք զայնպիսին հոգւով հեզութեան», Գաղ. գ. 1: «Յառնէ հերձուածողէ՝ յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ՝ հրաժարեսցի՛ր, գիտասցի՛ր՝ զի թիւրեալ է այնպիսին, եւ մեղանչէ անձամբ զանձն դատապարտեալ», Տիմ. գ. 10: Բ ԹԷ. գ. 15: Յակ. ե. 19, 20:

Ուրեմն սրբազան Աւետարանչին պատուէրին աւանդութիւնը հանգուցեալ հոգիներուն համար է, որովհետեւ համարձակութիւն ունեցանք Յիսուս Քրիստոսէն, ինչ որ խնդրեմք՝ պիտի շնորհէ իրեն ողորմութեամբը, աւետարանիչն ալ կը պատուիրէ՝ որ նե-

րելի մեղօք եւ կամ առանց կատարելոյ ապաշխարութիւնը ննջեցեալ եղբայրներնուս համար աղօթեմք. բայց «Եւ ո՛չ առ ՚ի մահ», ըսելովը՝ յայտնի կը նէ, որ ներելի մեղաց համար է. այսինքն անոր, որ զղջացած ու խոստովանած՝ իսկ ապաշխարութիւնը արդէն կատարած չէ՛. վասն զի մեղքը թէ եւ մահացու ըլլայ, գործողը երբ կը զղջայ՝ կը խոստովանի, եւ ապաշխարանքը կատարելու յանձնառու կըլլայ, ներելի կը համարուի այն մահացու մեղքը, եւ ո՛չ է այնուհետեւ ~~ան~~ ՚ի մահ. իսկ ներելի մեղքը, որ գործողը մեղքի տեղ չի դնելով՝ անոր վրայ չ'զղջար՝ եւ չ'խոստովանիր՝ եւ չապաշխարէր, այն ներելին՝ մահացու մեղք կըլլայ. ինչպէս կը գրէ Սարգիս շնորհալին. «Վասն որոյ եթէ ո՛չ զղջացաւ ոք՝ եւ ո՛չ խոստովանեցաւ, թէպէտ եւ փոքր է՝ մահու չափ է: Իսկ որ ՚ի կենդանութեանն զղջանայ ՚ի մեղս իւր՝ եւ կամակար մտօք խոստովանի եւ ապաշխարէ, թէպէտ եւ ծանր իցէ՝ թեթեւանայ եւ յօչէութիւն դառնայ»։ *Պէկն, Կաթ. Եր. 592:*

Բայց թէ որ ՚ի կենդանութեանն իրեն մահացու մեղացը համար զղջացեր է՝ խոստովաներ է՝ եւ ապաշխարելու ալ յանձնառու եղեր է, բայց ժամանակ չէ՛ ունեցեր

կատարելու, այն ժամանակը մահացուն՝ ներելի եղեր է. եւ ինքն ալ ուղղափառ հաւատով եւ հաստատ յուսով ննջէր է ՚ի Քրիստոս Յիսուս. անոր համար Եկեղեցին աղօթք կընէ. սրբարար Պատարագին մէջ ալ կը յիշատակուի, եւ փրկարար խորհրդոյն շնորհին թողութիւն մեղաց կը պարգեւի. այնպէս է նէ՝ Յօհաննու աւետարանչին պատուիրանացը համեմատ է ննջեցելոց հոգւոցը համար աղօթք ընելնիս. եւ փրկարար Պատարագին շնորհքէն թողութիւն եւ քաւութիւն խնդրելնիս կատարեալ դիտաւորութեամբ անոնց համար. եւ այս վաւերական աւանդութիւն է ուղղափառ Եկեղեցւոյն Քրիստոսի. վասն որոյ միշտ ջերմեռանդ դիտաւորութեամբ կը յիշեմք սուրբ Պատարագի մէջ ըսելով. «Յիշեա՛ տէր եւ ողորմեա՛, եւ գթա՛ ՚ի հոգիս հանգուցելոցն: Հանգո՛ զնոսա եւ լուսաւորեա՛ եւ դասաւորեա՛ ընդ սուրբս քո՝ յարքայութեանդ երկնից, եւ արժանի արա՛ ողորմութեան քում». ՚ի Խորհրդ:՝

Այս աստուածահաճոյ դիտաւորութիւնը սուրբ Եկեղեցւոյն՝ կը գովէ, եւ առաքելական աւանդութիւն ըլլալը կը հաստատէ սուրբն Յօհանն ոսկեբերան գրելով ՚ի թուղթսըն Պօղոսի առաքելոյն. Տառ խե. «Ո՛չ վայ-

րապար ինչ եղան օրէնքս այս յառաքելոցն,
 յահագին խորհուրդն յիշել զգնացեալսն,
 գիտէին թէ բազում շահ լինիցի նոցա յա-
 ճախ եւ յոյժ օգուտ: Յորժամ ամենայն
 ժողովուրդն բովանդակ կայցէ ձեռս ՚ի վեր
 համբարձեալ, միահամուռ քահանայու-
 թիւնն, եւ ահագին զենումնն առաջի կայ-
 ցէ՝ մարմին եւ արիւնն Քրիստոսի, զիա՛րդ
 ո՛չ անիծեմք ՚ի հաւան զԱստուած՝ մատու-
 ցանելովն աղօթս վասն նոցա: Այլ զայն վասն
 նոցա՝ որք հաւատովքն երթեալ իցեն»:
 Եւ սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր այս ա-
 ռաքելական աւանդութիւնը մեզի աւան-
 դեց քարոզելով. «Իսկ զհաւատացելոց, մե-
 ղուցելոց, եւ խոստովանողաց եւ ապաշխարո-
 ղաց, եւ հաղորդելոց փրկական խորհրդոյն,
 եւ հրաժարելոց յաշխարհէ, եւ նոցա կատա-
 րեսցին յիշատակք՝ Քրիստոսի պատարա-
 գան, եւ աղօթիւք եւ գթովք տնանկաց եւ
 այլ բարի գործովք. զի վերջնոցն բարեգոր-
 ծութեամբք՝ հանգուցեալքն նորոգեսցին
 նորոգութեամբ կենացն անվախճանից».
 Ճառ-
 ժգ. Էր. 188: Եւ Ներսէս շնորհալի երան-
 եալ հայրապետն մեր հետեւելով ուղղա-
 փառ վարդապետութեան սրբոյն Գրիգորի
 լուսաւորչի կը գրէ առ Միշագետս Յամայք

նահանգին եկեղեցւոյ քահանայներուն. «Զի թէ միանգամ պատարագելով Քրիստոս ՚ի վերայ խաչին՝ զմեզ բնութեան մարդկան ջնջեաց՝ որ յԱդամայ. յորժամ բազում անգամ մատչի յանուն քրիստոնեայ ննջեցելոյն, զի՞նչ արդեօք մեղք իցեն, զոր ո՛չ թողցէ նմա Հայրն երկնաւոր վասն միածնի Որդւոյ իւրոյ զենման: Եւ որ հաւատայ՝ մի եւ նոյն է պատարագն՝ զոր Քրիստոս մատոյց, եւ զոր քահանայքն մատուցանեն. միայն թէ յուղիղ հաւատս եւ ՚ի դարձումն մեղաց լիցի ննջեցեալն ՚ի ժամ վախճանին»։ ԸնդՀ. Եր. 160:

Արդե՛օք խղճմտանք կրնե՞ն այսուհետեւ Հայոց ուղղափառ եւ սուրբ Եկեղեցւոյն համար «հերետիկոս» չըսելու. ինչպէս կըսէին՝ թէ «Հայէ՛ ո՛չ ընդո-նին պխարան, վասն որոյ էն Հերետիկոս»։ Ո՛վ տգիտական բանդագուշանք, հարցընեմք ասանկ յիմարաբար զրպարտութիւն ընողներուն, այդ բառը ո՞ր հին նախնի եկեղեցական մատենագրութեան մէջ տեսնուեցաւ. չէ՞ որ այդ խարանը՝ որ լատինական «բուռկաթօռիում» բառին թարգմանութիւնը պիտի ըլլայ, որ եւ ճիշտ բառին ալ թարգմանութիւնը չէ՛. վասն զի ճիշտ թարգմանութիւնը մախրարան պիտի

ըլլայ. եւ այս բառը սուրբ գիրքերուն մտացը համեմատ բառը չըլլալով նախնի սուրբ հարք եկեղեցւոյ շունեցան ասանկ բառի գործածութիւն մը. վասն զի ննջեցելոց հոգիները՝ թէ որ սուրբ եւ արդար են, ունին իրենց տեղին արքայութիւն երկնից, որ կըսուի սուրբ գիրքերուն մէջ, երկնից արքայութիւն, յաղթական եւ կամ անդրանկաց եկեղեցի օթեւանք սրբոց, վերին հարսնարան, եւայլն. Մաթ. է. 21: Բ ԹԷ՝ ա. ա. 5: Բ ՊԷ՝ Գ. ա. 11: Յայգ. Բ. 7: Գ. 5: Ե՞՞ր. ժբ. 23: ՅօԼ. ժդ. 2: Յայգ. ժթ. 9:

Իսկ անգեղջ շարափառ եւ անյոյս մեռնողներուն հոգիներուն տեղը կանուանի դըժոխք, եւ արտաքին խաւար, եւ գեհեան. Մաթ. ժա. 23: Ղ՝ ու. ժգ. 23: Մաթ. ը. 12: Իբ. 13: Մաթ. ե. 29. 30: Ղ՝ ու. ժբ. 5:

Բայց անոնք՝ որ թէպէտ Յիսուսի Քրիստոսի ուղղափառ հաւատովը եւ հաստատ յուսովը ննջեցին, գղջմամբ սրտի եւ խոստովանելով մեղքերնին, սակայն ապաշխարելու ժամանակ շունեցան, եւ կամ ներելի մեղք ունեցան. ասոնց հոգիները յատուկ տեղի պիտի ունենան, որ Յիսուսի Քրիստոսի սըրբարար Պատարագի շնորհիւն, եւ սուրբ Եկեղեցւոյն աղօթից օժանդակութեամբ, եւ

տրօք աղքատաց, քաւութիւն եւ թողութիւն պիտի ըլլայ Յաստուծոյ անոնց մեղաց պարտաւորութեանն, եւ ապա խառնիլ ՚ի դասս արդարոց երկնից արքայութեան: Վարդապետք եկեղեցւոյ՝ համեմատ սուրբ գրքին անուն տուած են «բանտ» արգելեալ հոգւոց. Մատ. ե. 25: Ղու. ժբ. 58:

Ահա՛ նմանութիւնով կրնամք այն հոգիներուն եղած տեղւոյն բանտ ըսել, ուրկէց ազատուելու յոյս կայ. բայց խաւարանը ուրկից առնեմք. մեր սուրբ Գրիգոր լուսաւորիչը մեզի այդ «Բոսկաթօտիոմ» խաւարան կամ մախրարան բառը շնորվեցոյց, այլ տեղւոյն վրայով միայն կայանքի մը ծանօթութիւն տալով՝ այն հոգիներուն փրկութեան յոյսը յայտնի քարոզեց, ինչպէս վերը գրեցինք. ասոր համար Հայոց Եկեղեցին այդ վերջերը հնարուած եւ իրեն անծանօթ բառը՝ իրաւամբ շնորհունիր. վասն զի է նոր. եւ Հայոց Եկեղեցին ալ նորութեան հետեւող չէ. այլ միշտ հին աւանդութեանց է հաւատարիմ աւանդապահ. այս խաւարան բառին նորահնար ըլլալը եթէ կուզես իմանալ՝ կարդա՛ Հ, Մկրտչի դասական աստուածաբանութիւնը, որ բռնադատեալ ՚ի ճշմարտութենէ կը գրէ այսպէս. «Քաւարանն ՚ի մե-

րըս բարբառ՝ տիրապէս նշանակէ քաւիչ կամ քաւչական, վասն որոյ եւ զաստուծոյ եւ զաստուածայնոց եւ եթ ասի, այլ պիտակաբար սովորութիւն եղեւ ՚ի յետին ժամանակս վարել նշանակութեամբ լատին ձայնիս Բո-ո-կաթ-ո-ի-ո-մ, որ թարգմանի մաքրարան»։ Գլ. գ։

Հիմա տեսա՞ր՝ որ խա-արան բառը իսկապէս այն ննջեցելոց հոգիներուն կայացած տեղերնուն բուն իսկ անունը չէ՛. այլ պիտակաբար անյարմար շինուած բառ է. վասն զի քաւարան բառը՝ մեր լեզուին մեջը կը նըշանակէ քաւիչ կամ քաւչական, որ ըսել է քաւութիւն՝ ներողութիւն տուող, որ միայն Աստուծոյ մարդասիրական զթութեանը կը վայելէ, եւ ո՛չ ուրիշ տեղի մը, ինչպէս որ գրած է «Տէր Աստուած մեր դու լսէիր նոցա. Աստուած դու քաւիչ լինէիր»։ Սաղ. զը. 9։ «Զի ամենեքեան ծանիցեն զիս ՚ի փոքրկանց մինչեւ ՚ի մեծամեծս նոցա. զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա. եւ զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս նոցա այլ ո՛չ եւս յիշեցից»։ Նբր . ը. 11։ Նբեմ. լա. 34։

Ապա ուրեմն Հայոց Եկեղեցին չէ՛ ընդուներ, եւ բնաւ ալ չընդունիր անանկ պիտակաբար յարմարուած խա-արան բառը, որ

ասոր համար ի՛նչ սնոտի յիմարական կռիւներ ծագեր է, որ յիրաւի առաջի ողջամիտ աստուածաբաններուն ծիծաղելի բառական ընդունայն վէճ եւ ունայնաբանութիւն համարուած է: Բայց կատարեալ հաւատով Հայոց Եկեղեցին կը խոստովանի, եւ կընդունի բուն իսկ քառութիւնը եւ ներողութիւնը Աստուծոյ՝ որ կը պարգեւի ներելի մեղօք կամ ապաշխարութիւնը կատարելու ժամանակ շունեցող ննջեցելոց հոգիներուն, սուրբ Եկեղեցւոյն մաղթանօք եւ շնորհիւ սուրբ Պատարագին. այս տեղս բաւական կը համարիմ մեր սուրբ Եկեղեցւոյն այն երկովկայութիւնը, որ միշտ կը լսէ բարեպաշտ ժողովուրդը. մէկը բան մաղթանաց սուրբ Եկեղեցւոյն. «Հոգւոցն հանգուցելոց Քրիստոս Աստուած՝ արա՛ հանգիստ ողորմութեան», եւայլն: «Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. եւայլն: Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ՝ գթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց. յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան քո. արա՛ արժանի ողորմութեան՝ քառութեան եւ թողութեան մեղաց. դասաւորեալ

պայծառացո՛ւ ընդ սուրբս քո. յաջակողմեան դասուն. զի դու ես տէր եւ արարիչ ամենեցուն դատաւոր կենդանեաց եւ մեռելոց».
 Ի Ժամա: Եւ երկրորդն է բան շարականին առ սրբարար խորհուրդն Պատարագին. «Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայ ՚ի բեմի, առաջի սուրբ Սեղանոյն, հուր շրջանի, խաւար մերժի, տրտմեալ հոգիք ուրախանան. զի թողութիւն մեղաց լինի. ողորմած տէր ողորմեա՛ հոգւոցն մեր ննջեցելոց».
 Հար:

Ի՞նչ հուր է այս. դժոխքին անշիջանելի հու՛րն է արդեօք. այն հուրին համար Յիսուս Քրիստոս վճիռ է ըրեր, «Հուրն ո՛չ շիջանի». արդե՛օք նիւթակա՞ն հուր է, ինչպէս էր բաբելոնի հնոցի հուրը, ծիծաղելի է արդարեւ ըսելը, թէ նիւթական հրով քաւարանին մէջ կը տանջվին՝ եւ այն հրով կը մաքրուին: Ապա այս շարականին մեր յիշած հուրը եւ խաւարը ի՞նչ է, եւ ի՞նչպէս պիտի իմանամք. սուրբ գիրքերը մեզի կը սորվեցընեն, որ մեղքերնիս նմանութիւն ունի հրոյ եւ խաւարի. եւ զի այս հուրը մեղաւորին խղճի մտաց այրող եւ տոչորող է ՚ի ներքուստ «Հուր կերիցէ զնոսա». Սաղ. ի. 10: Յով. Լ. ա. 19: «Ոմն եւ բորբոքմունք իւր . . . հնոցն եւ

տապ իւր», նար, զ: Սոյնպէս եւ մեղքն նըմանութիւն ունի խաւարի, վասն զի մեղաւոր անձէն հեռացած է Աստուծոյ շնորհաց լոյսը, ըստ այնմ, «Ոյք նստէին ՚ի խաւարի եւ ՚ի ստուերս մահու», Սաղ. ճգ. 10: «Այստուհետեւ ՚ի բաց արասցուք զգործս խաւարի», Հոով. ժդ. 12: «Անիրաւութիւն ինքն ըստ ինքեան խաւար է», Սար. շնոր. Եր. 112:

Արդ՝ այս սոսկալի մեղաց հուրը կը շիջանի, եւ խաւարը կը մերժի այն հոգիէն, երբ որ սուրբ Պատարագի միջնորդութեամբ Աստուծոյ թողութիւնը եւ ներողութիւնը կառնէ: Ուրեմն Հայոց ուղղափառ սուրբ Եկեղեցին միշտ համեմատ սուրբ գրոց ողջամիտ վարդապետութեամբ հաստատուն կայ եւ մնայ՝ եւ կը հաւատայ, որ սուրբ Պատարագի շնորհիւ եւ բազկատարած մաղթանօք քահանային՝ կը պարգեւի Աստուածային քաւութիւնը եւ ներողութիւնը կենդանի ուղղափառ եւ բարեպաշտ հաւատացելոց եւ ՚ի Քրիստոս Յիսուս ննջեցելոց յուսով կատարեալ փրկութեան, ըստ ուսուցանելոյ Լուսաւորչին մերոյ. «Եւ ՚ի մատուցանել զահաւոր եւ զսարսափելի զփրկական խորհուրդն, յիշէ անդ զմարդասիրութեան նորա զերախ-

տիսն, եւ խնդրէ ջերմեռանդն արտասուօք
զքաւութիւն կենդանեաց եւ մեռելոց եւ
առնու զխնդրելին». Յաճախ. ճառ ժգ. 186:

Արդա՛րեւ սուրբ Եկեղեցին կանուանեմք
քաւարան. յորում կը կատարի սուրբ եւ
կենդանարար խորհուրդ պատարագին, ասոր
համար պատարագիչ քահանայն կը ձայնէ.
«՚ի սուրբ ՚ի սուրբ պատուական Մարմնոյ եւ
յԱրեւնէ տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ, որ
իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի միջի մերում, սա
է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն
եւ թողութիւն մեղաց». Ի խորհրդ:

Այս մտօք կաղաղակեմք բարձրաձայն այս
փառաբանութիւնը. «Ի յարկի սրբութեան եւ
՚ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտա-
կաց բնակարանիս եւ մարդկան քաւարա-
նիս». Ի խորհրդ: Վասն զի որպէս ինքնին Յի-
սուս Քրիստոս մարդեղութեան խորհրդովը
եղաւ քաւութիւն մեղաց մերոց, նոյնպէս
եւ նորին փրկարար մարմնոյ եւ արեան խոր-
հուրդն՝ որ կը կատարի սուրբ եկեղեցւոյ
մէջ, է քաւութիւն մեղաց մերոց. ինչպէս
կը վկայեն սուրբ գիրք. «Առաքեաց զորդի
իւր ՚ի քաւութիւն մեղաց մերոց». ա Յօճ,
գ. 10: «Զոր յառաջն եդ Աստուած ՚ի քա-

ւութիւն ՚ի ձեռն հաւատոց արեամբն նորա»։ Հոգ. գ. 25։ Ապա աստանօր ՚ի վերայ այս նիւթոյս խօսիլ մեր՝ այսչափս բաւ համարելով, կըսեմք, որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։



ԳԼՈՒԽ ԺԷ

Կը յիշեմք այս տեղս Հայոց սուրբ եկեղեցւոյն բարեպաշտական հոգւով ունեցած ջերմեռանդութիւնը, որ համեմատ սուրբ գրոց ամեն մէկ սուրբերուն անուննին տալով, եւ աստուածահաճոյ գործքերնին եւ արդիւնքնին յիշելով, կը գովէ զանոնք հոգեւոր սիրով. եւ անոնց երկնից արքայութեան մէջ ունեցած համարձակութիւննին ճանչնալով կը պատուէ ջերմեռանդութեամբ, եւ Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն մէջ՝ անոնց ունեցած սքանչելի արդիւնքնին, եւ մարտիրոսական նահատակութիւննին մեր մտացը առջեւը բերելով, վկայասիրութեամբ յարգելու պարտաւորութիւն կը ցուցընէ։

Նախ՝ ըսինք որ գովութիւն կուտայ սուրբերուն անուննին տալով, եւ կամ յիշելով անոնց հաւատով ճգնութիւնը, եւ աստուա-

ծահաճոյ արդիւնքը. ըստ այնմ, «Յիշատակ Քրիստոսի սրբոց վկայիցն, եկա՛յք հաւատացեալք զճգնութիւն սոցա հռչակեսցուք». Ի շար, Լուիս: Գովելիք աշխարհի եւ բաղձալիք վերնոցն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան». Յերգո՞ւ արե՛աԳալին:

Հիմա այս տեղ պիտի իմանամք, որ այսպէս հոգեւոր երգերով սրբոց տօնախմբութիւնը ժամանակին կատարելնիս համեմատ է սուրբ գիրքերուն. այո՛ պիտի ըսես, որովհետեւ տե՛ս Յիսուսի Քրիստոսի հրամանն է յիշել եւ գովել իրեն հաճելի բարեպաշտներուն առաքինական գործքերնին «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի ո՛ւր եւ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի, եւ զոր արար դա՛ ՚ի յիշատակի դորա». Մատ. իգ. 13: Եւ Պօղոս առաքեալը կարեւոր հարկ մը կը դնէ Եկեղեցւոյն՝ յիշատակելու հոգեւոր առաջնորդները, որ բանիւ եւ գործով վարդապետեցին սուրբ եւ ուղղափառ հաւատոյ ճշմարտութիւնը, եւ կը յորդորէ՝ որ չէ թէ միայն յիշեն, այլ եւ անոնց բարի վարքերնուն նմանութիւնը ունենան. «Յիշեցէ՛ք զառաջնորդս ձեր՝ որ խօսեցան ձեզ զբանն աստուծոյ, հայեցեալք

յելս գնացից նոցա. նմանո՞ղք եղերուք հաւատոցն», Եբր. ԺԳ. 7: Գրած է աստուածաշունչին մէջ», Գովեսցուք զարս փառաւորագոյնս. եւ զծնողս մեր ՚ի սերականութեան իւրեանց. զբազում մեծարանս արար տէր մեծագործութեամբ իւրով յաւիտենից. տիրողք զօրութեամբ իւրեանց՝ մարդիկք մեծամեծք զօրութեամբ. եւ խորագիտութեամբք իւրեանց պերճացեալք. ճառեալք մարգարէիւք զարժանաւորութիւն մարգարէից. եւ հրամայողք ներկայիս ժողովրդեան... մարմինք նոցա ՚ի խաղաղութեան թաղեցան, եւ անուն նոցա կեայ յազգէ յազգ: Զիմաստութիւն նոցա վիպասանեն ժողովուրդք, եւ զգովութիւն նոցա հոշակեսցէ եկեղեցի: Ենովք հաճոյացաւ Աստուծոյ՝ եւ վերափոխեցաւ ՚ի դրախտն, եւ այլն». Էփէս. խդ. 1. 2, 3, 14 . 15 . 16: Եւ Դաւիթ մարգարէն իրաւամբ կը պարծենայ առաջի Աստուծոյ, սուրբերը՝ գովութեամբ մեծարելով ըստ այնմ. «Ինձ յոյժ մեծարու եղեն բարեկամք քո Աստուած», Սաղ ճլր. 16: Ասոր համար է, որ կը գովաբանէր իրեն ճանաչած սուրբերը. Սաղ. զը. 6—7: Տխր. 5—8:

Արդ՝ թէ որ երկրաւոր թագաւորի մը

մերձաւորները եւ բարեկամները գովաբանութեան եւ մեծարանաց արժանի կըլլան, ապա ո՞րչափ եւս առաւել արժանի գովութեան եւ մեծարանաց են երանեալ սուրբերը՝ որոնք մերձաւոր սիրելի եւ կատարեալ բարեկամ են երկնաւոր թագաւորին. Յօժ. գ. 29. ժե. 14: Յակ. բ. 23:

Եւ երկրորդ երանեալ սուրբերուն երկնից արքայութեան մէջ առաջի Աստուծոյ ունեցած համարձակութիւննին եւ փառքերնին ճանչնալով, արդեօք պատուել հա՞րկ է զնոսա յատուկ ջերմեռանդութեամբ, որովհետեւ սուրբ գիրքերը կը վկայեն սուրբերուն գերազանց փառքերուն համար, որ ունին երկնից արքայութեան մէջ. վասն զի Յիսուսի Քրիստոսի աստուածային մշտնջենաւոր փառացը հաղորդ եղած են. Յօժ. ժդ. 3. 20: բ Աորն. ե. 8: Հոով. ը. 17: Եւս եւ սուրբերը կը վայելեն յայտնի եւ կատարեալ Աստուածատեսութեան ամենացանկալի փառաց լոյսը. Մար. ե. 8: ա Աորն. ժգ. 12: Սաղ. լե. 10: Ի վերայ այսր ամենայնի ունին սուրբերը սքանչելի եւ մեծ պատիւ առաջի Հօր Աստուծոյ. զոր յայտնի ըրաւ Յիսուս Քրիստոս ըսելով. «Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ, եւ ուր ենն եմ՝ անդ եւ

պաշտօնեայն իմ եղիցի, եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայր իմ»։ Յօժ. ժբ. 26:

Արդ՝ այս տեղս լաւ մը խորհինք ո՛վ սիրելիք աստուծոյ, այս արդարները եւ սուրբերը թէ որ հօր Աստուծոյ մեծութենէն պատուեալ կըլլան, ապա մեք ո՞րչափ առաւել եւս պիտի պարտաւորիմք պատուել ըզնոսա, բայց պէտք է որ իմանամք՝ եթէ հայր Աստուած ի՞նչ յատուկ պատիւ տուած է իրեն հաճոյացեալ սուրբերուն. Աստուած իրեն հաճելի սուրբերը պատուեր է եւ միշտ կը պատուէ, նախ՝ այս աշխարհի մէջ իրեն շնորհքներովը և խնամքներովը, ա ՏԻՃ. ե. 17: ԵՔր. ե. 4: Սաղ. խը. 11:

Եւ երկրորդ՝ երկնից արքայութեան մէջ, եւ այս է՝ որ կը յայտնէ Յիսուս Քրիստոս ըսելով. «Պատուեսցէ զնա հայր իմ»։ Ի՞նչ պատիւ է այս, արդե՛օք աստուածային փառաց տեսութեան արժանաւոր ըլլալնի՞ն է, գիտցի՛ր՝ որ սուրբերուն այս յաւիտենական երջանկութիւնը պատիւ անունով չը յիշուիր սուրբ գիրքերուն մէջ, այլ առ հասարակ կըսուի վարձք առաքինական վաստակոց եւ գործոց. «Յնծացե՛ք եւ ուրախ լերուք, ի վարձք ձեր բազում են յերկինս»։ Մատթ. ե. 12: Ղ.՝. գ. 23: «Իւրա-

քանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց», ա Աորն. գ. 8: Եբր. Ժ. 35: Յաղթանակ եւ պսակ արդարութեան. «Զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն» ք Տիմ. դ. 7-8: ա Աորն. թ. 25: Յակ. ա. 12: ա Պեդ. ե. 4: Որդեգրական ժառանգութիւն. «Եւ եթէ որդիք՝ ապա եւ ժառանգք. ժառանգք աստուծոյ, եւ ժառանգակիցք Քրիստոսի», Հռոմ. ը. 17: Գաղ. դ. 7: Եւ հատուցումն հաւատարիմ ծառայութեան. «Որպէս զի եղիցի ողորմութիւն քո ՚ի ծածուկ. եւ հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ. հատուցէ քեզ յայտնապէս», Մատթ. գ. 4. 6. 18: «Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց», Հռոմ. բ. 6: Աողա. գ. 24:

Ապա ի՞նչպէս պիտի իմանամք այն Յիսուսի Քրիստոսի վճռած խօսքը, «պատուեսցէ զնա հայր իմ», վասն զի այլ է փառաւորիլն սրբոց՝ երկնից արքայութեան մէջ աստուածային երանական փառօք, եւ այլ է յատկապէս պատուիլը անոնց՝ հօր Աստուծոյ բարեխնամ հաճութենէն, որ ասով պիտի իմանամք սուրբերուն յատուկ գերազանց

պատիւնին առաջի հօր Աստուծոյ. ըսել է որ հայր Աստուած մէկ յատուկ պատիւ մը տրւած է արդարներուն, այն պատիւը՝ որ իրեն միաժին որդւոյն Յիսուսի Քրիստոսի յատկացուցած էր՝ եւ անոր միայն սեպհականած էր. «Զի ամենեքեան պատուեսցեն զորդի՝ ոչպէս պատուեն զհայր, որ ո՛չ պատուէ զորդին, ո՛չ պատուէ զհայր»,. Յօժ. ե. 23: «Ասէին ձայնիւ մեծաւ, արժան է գառնդ զենեալ առնուլ զմեծութիւն եւ զիմաստութիւն եւ զգօրութիւն եւ զպատիւ եւ ըզփառս եւ զօրհնութիւն», յայտ. ե. 12:

Ահա՛ այս սքանչելի փառքը եւ պատիւը՝ սուրբերն ալ պիտի ունենան երկնից արքայութեան մէջ Յիսուսի Քրիստոսի հաղորդ ըլլալով. որպէս վկայեն սուրբ գիրք. «Հա՛յր՝ զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր եսն եմ, եւ նոքա իցեն ընդ իս, զի տեսանիցեն զփառս իմ զոր ետուրն ցիս»,. Յօժ. ժէ. 24: «Որ յաղթէ՝ տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ. որպէս եւ ես յաղթեցի, եւ նստայ յաթոռ հօր իմոյ», Յայտ. գ. 21:

Հայր Աստուած պատուեց իւր էակից որդին Յիսուս Քրիստոսը հաճելով անոր փրկարար շարչարանօքը եւ խաչելութեամբը եւ կամաւոր մահուամբը հաշտիլ մեզի հետ,

եւ իրեն նեղութեանը եւ արքայութեանը արժանի ըրաւ զմեզ, որ եւ այս մեծ եւ սքանչելի հաճութեանը պատիւը յայտնեց ի Յորդանան եւ ի Թաբօրական լերին ձայնելով յերկնից. «Դա՛ է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ» Մատթ. Ժէ. 5:

Առաջին բառերովը յայտնեց Հայր Աստուած՝ Յիսուսի Քրիստոսի փառքը՝ որդի Աստուծոյ ըլլալուն. վասն զի ըսաւ. «դա՛ է որդի իմ սիրելի»: Եւ երկրորդ բառերովը յայտնեց Յիսուսի Քրիստոսի սքանչելի պատիւը՝ որ ըսաւ «ընդ որ ես հաճեցայ». այսինքն ես հաճեցայ այս փրկագործութեանը եւ տնօրենութեանը սիրելի որդւոյս. ըստ այնմ, «Ահա՛ մանուկ իմ զոր ընտրեցի, եւ սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ». Մատթ. Ժբ. 18: Եւայ. իսբ. 1: Եւ կամ թէ «ընդ որ ես հաճեցայ». այս իմ էակից որդւոյս միջնորդութիւնովը՝ հաճեցայ հաշտուելու մարդկան հետ եւ ներելու անոնց, եւ մանաւանդ երկնից արքայութեանս ժառանգ ընելու. «Մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա . . . Այլ պարծիմք եւս չԱստուած ՚ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով եւ զհաշտութիւնն իսկ ընկալաք». Հոով. ե.

10. 11: «Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն»,
Ղ. 11. Ժբ. 32:

Այս վերոյիշեալ աւետարանի բառերէն Յիսուսի Քրիստոսի փառքը եւ պատիւը մեկնելս, մի՛ գիտնար՝ որ ես իմ մտօքս հնարեցի, եւ կամ ուրիշ մեկնիչներէն համոզուեցայ եւ գրեցի, այլ սրբազան Պետրոս առաքեալէն սորվեցայ. եւ այն վերը քարոզածնիս անոր վարդապետութիւնն է, որ կը գրէ. «Քանզի առեալ յաստուծոյ եւ ՚ի հօրէ ըզփառս եւ զպատիւ, եկեալ յայնպիսի բարբառոյ՝ ՚ի մեծ վայելչութեան փառաց անտի, եթէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ», ք Պէ. ք. ա. 17:

Հիմա այս Քրիստոսի համար եկած երկնային եւ հայրական փառաց եւ պատուոյ ձայնին հետ բազմատէ սրբոյ փառքը եւ պատիւը, որ կը գրէ Պօղոս առաքեալը. «Որ համբերութեամբ են ՚ի գործս բարութեան, եւ զփառս եւ զպատիւ եւ զանեղծութիւն խընդրեն, զկեանս յաւիտենից», Հ. 11. ք. 7: Յիսուսի Քրիստոսի համար գրեց Պետրոս առաքեալ. «Քանզի առեալ յԱստուծոյ եւ ՚ի հօրէ զփառս եւ զպատիւ», ք Պէ. ք. ա. 17: Եւ Պօղոս առաքեալ սուրբերուն համար կը

գրէ. «զփառս եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն», ուրեմն հարկաւ պիտի ըսես. սուրբերը՝ ինչպէս որ Յիսուսի Քրիստոսի փառացը հաղորդ եղեր են. նոյնպէս ալ պատուոյն կցորդ եղած են: Ես ալ քեզի կը բռնադատիմ հարցընելու. այս Յիսուսի Քրիստոսի ունեցած փառքը ի՞նչ է. գիտեմ որ պիտի ըսես, Յիսուսի Քրիստոսի ունեցած սքանչելի փառքերուն ո՞ր տեսակը կը խընդրես իմանալ. որովհետեւ Յիսուս Քրիստոս զանազան գերազանց փառքեր ունի, որոնցմէ երեքը այս տեղս բացատրեմք:

Արդ՝ նախ Յիսուսի Քրիստոսի փառք էր իրեն հրաշալի սքանչելագործութիւնը, որով կը փառաւորի երկրպագելի անուն նորա առաջի մարդկան. «Այն հիւանդութիւն չէ՛ ՚ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնուիկ». Յօժ. Ժա. 4: «Եւ նա ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց». Ղ.՝. դ. 15:

Եւ երկրորդ փառք է Յիսուսի Քրիստոսի իրեն ճշմարիտ եւ ուղղափառ հաւատացեալները եւ բարեպաշտ ժողովուրդները. եւ այս հաւատացեալներուն մէջ կը փառաւորի Յիսուսի Քրիստոսի պաշտելի անունը. «Ոչ վասն

աշխարհի աղաչեմ, այլ վասն նոցա՝ զորս ետտուրն ինձ, զի քո են: Եւ որ ինչ իմ է, ամենայն քո է, եւ որ ինչ քո է, այն իմ է, եւ փառաւորեալ եմ ՚ի նոսա», Յօհ. Ժէ. 9. 10: «Զի փառաւոր լիցի անուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի ձեզ՝ եւ դուք ՚ի նրմա», Բ ԹԷ. ա. 12:

Իսկ երրորդ անճառելի փառքը Յիսուսի փրկչին մերոյ՝ է իսկապէս էական եւ ճշմարիտ որդի Աստուծոյ ըլլալը. ինչպէս որ հայր Աստուած ալ այս էական փառքը յայտնեց ՚ի Յորդանան եւ ՚ի Թաբօր ՚ի վերուստ վրկայելով. «Դա՛ է որդի իմ սիրելի». Ահա՛ այս իրեն էական փառքին համար ըսաւ հրէից. «Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառք իմ ոչինչ են, է հայր՝ որ փառաւորէ զիս» Յօճ. ը. 54: Ժէ. 5: «Տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ՚ի հօրէ», Յօճ. ա. 14:

Արդ՝ տե՛ս դու աստ ո՛վ սիրելի ընթերցող. զի Յիսուս Քրիստոս այս իրեն փառքերուն առաքեալները եւ ամեն սուրբերը հաղորդ ըրաւ. ասոր համար խօսելովն առ հայր Աստուած յայտնեց այս մեծ փառաց պարգեւը. «Ե՛ւ ես՝ զփառսն զոր ետտուր ինձ՝ ետու նոցա», Յօճ. Ժէ. 22:

Ահա՛ այս համառօտ խօսքով՝ իմացուց

Յիսուս մեզի, որ սուրբերը ընդհանրապէս իրեն հրաշագործութեան փառացն ալ կցորդ պիտի ըլլան իրեն շնորհքներովը մեծամեծ հրաշագործութիւններ ընելով. ինչպէս որ յառաջագոյն ալ հրամայած էր. «Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործսն զոր ես գործեմ, եւ նա գործեսցէ, եւ մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ, զի ես առ հայր երթամ», Յօճ. Ժդ. 12: Եւ կամ ինչպէս ճշմարիտ եւ ուղղափառ քրիստոնեաները՝ Յիսուսի Քրիստոսի փառք էին եւ են, այնպէս եւ առաքեալներուն եւ ամեն սուրբերուն ալ փառք են. ահա՛ ասոր վկայութիւնը Պօղոս առաքեալ կուտայ Եկեղեցւոյն Թեսաղոնիկեցւոց ըսելով. «Զի դուք էք փառք մեր», ա ԹԷ. բ. 20:

Արդ Յիսուս Քրիստոս կամեցաւ եւ տընօրինեց, որ երկնից արքայութեան մէջ ալ երանեալ սուրբերը եւ ամեն բարեպաշտ հաւատացեալները իրեն էական Աստուածային փառացը հաղորդ ըլլան. «Հայր զորս ետուն ինձ, կամիմ՝ զի ուր եսն եմ, եւ նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ետուն ցիս», Յօհ. Ժէ. 24: Հոգ. ը. 17:

Հիմա յայտնի եղաւ բաղդատութիւնն իս, որ ըրինք Պետրոս եւ Պօղոս առաքելոց

գրածնուն վրայով, եւ այս բաղդատութեանէն գտանք՝ որ սուրբերը Քրիստոսի հետ փառակից եղած են զանազան կերպիւ։ Ապա կը մնայ մեզի խորհիլ ~~պատի~~ բառին վրայով, որովհետեւ վերը յիշեցինք՝ որ Յիսուս Քրիստոս յայտնի ըրաւ թէ հայր Աստուած պիտի պատուէ սուրբերը, «Պատուեսցէ զնա հայր իմ», նայինք՝ որ այս սուրբերուն պատիւը համեմատութիւն ունի՞ արդեօք Յիսուսի Քրիստոսի պատուոյն, որովհետեւ պատիւն է արտաքին վկայութիւն անձի մը գերազանց արժանաւորութեանը, տե՛ս հայր Աստուած երկիցս անգամ արտաքին վկայութիւնով երկինքէն պատուէց իրեն միածին որդին Յիսուս Քրիստոսը այս երկնային բարբառով, «Դա՛ է որդի իմ սիրելի՛ ընդ որ ես հաճեցայ», ահա՛ այս հաճութիւնը հօր Աստուծոյ՝ վերը խօսեցանք եւ սուրբ գրոց վրկայութիւնով համոզուեցանք՝ որ հայր Աստուած իւր էակից եւ փառակից որդւովն Յիսուսիւ Քրիստոսիւ ընդ մարդկանց հաշտիւր, «եւ հաւատացեալներուն իրեն ներողութիւնը շնորհելը, եւ երկնից արքայութեան մէջ ընդունելը կը յայտնէր, վասն զի Յիսուս Քրիստոս միջնորդ հաշտութեան եղաւ ՚ի մէջ հօր Աստուծոյ եւ մարդկան, ինչպէս կը վկայէ

Պօղոս առաքեալը. «Զի ՚ի նմա հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեանն բնակել: Եւ նովաւ հաշտեցուցանել զամենայն ՚ի նոյն: Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ եւ որ ինչ յերկինս», **Վողս. ա. 19. 20:** «Զի մի է Աստուած, եւ մի միջնորդ աստուծոյ եւ մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս: Որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութեամբ ժամանակաց իւրոց», **ա Տիմ. բ. 5:**

Եւ այս հաշտարար միջնորդութեան ըսքանչելի պաշտօնը՝ Յիսուս Քրիստոս ո՛չ թէ միայն ՚ի վերայ երկրի տնօրէնութեամբը կատարեց եւ աւարտեց, այլ եւ ՚ի յերկինս առաջի հօր Աստուծոյ իրեն փրկարար եւ հաշտեցուցիչ պաշտօնը կը մշտնջենաւորէ մարդասիրութեամբ. եւ այս է որ սուրբ գիրքը բարեխօսութեան բառով կը յայտնէ. «Քրիստոս Յիսուս՝ որ մեռան մանաւանդ յարուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ Աստուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր», **Հռոմ. ը. 34: Եբր. է. 25: ա Յօժ. բ. 1:** Եւ այս հաշտարար միջնորդութեան գերազանցագոյն պաշտօնը Յիսուսի Քրիստոսի՝ Պետրոս առաքեալ բարձրագոյն պատիւ Աստուածային համարելով կը քարոզէ. «Քանզի առեալ

յԱստուծոյ եւ ՚ի հօրէ զփառս եւ զպատիւ»։ ԲՊԵՊ. ա. 17:

Արդ՝ հիմա այս տեղս կը հարցընեմ քեզի ո՛վ բարեմիտ ընթերցող, արդե՛օք սուրբերը այս Յիսուսի բարձրագոյն պատուոյն այսինքն՝ հաշտարար միջնորդութեանը հաղորդ եղա՞ն մի. ինչպէս որ փառակից Քրիստոսի են, նոյնպէս ալ պատուակից եղա՞ն մի. հարկաւ պիտի ըսես այո՛. որովհետեւ Յիսուս Քրիստոս վկայեց. «պատուեսցէ զնա հայր իմ»։ ՅՕԸ. Ժբ. 26: Եւ Պօղոս առաքեալ կը վկայէ. «Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց, որ համբերութեամբ են ՚ի գործս բարութեան, զփառս եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն»։ ՀՊՊՎ. բ. 6:

Ուրեմն այս հաշտարար միջնորդութեան պաշտօնին բարձրագոյն պատիւը՝ որ Յիսուս Քրիստոս ունեցաւ առաջի հօր Աստուծոյ թէ՛ յերկրի եւ, թէ՛ յերկինս տնօրէնութեամբ իւրով. նոյն գերազանց պատիւը՝ շնորհած է սուրբերուն, որ յերկրի եւ յերկինս համարձակութիւն ունին առաջի Աստուծոյ միջնորդութիւն եւ բարեխօսութիւն ընելու. գիտեմէ որ կը համոզուիս Պօղոս առաքեալին բացայայտ գրած խօսքերէն. տե՛ս ինչպէս սուրբերը համանման կընէ Յիսուսի Քրիս-

տոսի, այսինքն փառակից եւ պատուակից, եւ կըսէ՝ որ Հայր Աստուած ասանկ սահմանեց սուրբերուն համար, որ իրեն որդւոյն Յիսուսի Քրիստոսի կերպարանակից ըլլան, ըստ այնմ, «Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն եւ հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ, զի եղիցի նա անդրանիկ ՚ի մէջ եղբարց բազմաց»։ Հոգւ. ը. 29:

Ուրեմն սուրբերը՝ որ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ կերպարանակից են, ՚ի յերկրի եւ ՚ի յերկինս ունին պաշտօն միջնորդութեան եւ բարեխօսութեան. Յիսուս՝ որ է իսկական որդի սիրելի, միջնորդ է եւ բարեխօս վասն մեր առ էակիցն իւր հայր, իսկ սուրբք գոլով շնորհական որդիք սիրելիք՝ միջնորդք եւ բարեխօս են վասն մեր առ նոյն հայրն Աստուած. Յիսուս Քրիստոս է մի միայն բացարձակ միջնորդ եւ բարեխօս մեզի համար իրեն մարմնառիկ տնօրէնութեան արդիւնքովը, իսկ սուրբերը՝ իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի եւ հազարապետս խորհրդոցն Աստուծոյ, ա Սոբն. դ. 1: Հաւատարիմ հետեւողք են Յիսուսի, եւ առաջի Աստուծոյ միջնորդութեան եւ բարեխօսութեան համարձակութիւն ունին: Յիսուս

Քրիստոս է մի միայն սուրբ եւ անմեղ՝ անարատ եւ բարձրացեալ քան զերկինս, մշտնջենաւոր քահանայապետ նոր ուխտին գերազանց շնորհքներուն, եւ արդարութեանը պարգեւող, եւ շնորհող թողութեան մեղաց, եւ միշտ պատրաստ է ընդունելու մեր բարի խնդրուածները եւ կատարելու, եւ առ Հայր Աստուած մեզի համար միշնորդ է եւ բարեխօս, ըստ վկայութեան Պօղոսի առաքելոյն. «Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս . . . ուստի եւ կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալս նովաւ առ Աստուած. քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա: Զի այսպիսի իսկ վայել էր քահանայապետ, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ զատեալ ՚ի մեղաւորաց, եւ բարձրացեալ քան զերկինս»։ Եբք. է. 22. 25. 26:

Արդ՝ կիմանամք սուրբ գիրքերէն, որ այս մեծ եւ յաւիտենական քահանայապետն մեր Յիսուս՝ սուրբերը եւ արդարները իրեն քահանայութեանը հաղորդ ըրաւ, եւ այս բարձրագոյն պատիւը շնորհեց անոնց. ինչպէս կը գրէ Պետրոս առաքեալ ընդհանրապէս ամեն հաւատացեալներուն, որ ըլլան սուրբ եւ արդար, եւ ունենան անարատ քահանայութիւն շնորհեալ ՚ի Քրիստոսէ ՚ի մշտնջենաւոր

քահանայապետէն. «Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր, յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորն պատարագս հաճոյս Աստուծոյ՝ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի». ա Պէգր. բ. 5: «Եւ արար զմեզ թագաւորս եւ քահանայս Աստուծոյ հօր իւրոյ. նմա փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից». Յայգր. ա. 6: ի. 6:

Արդ՝ ես հիմա քեզի կը հարցընեմ, այս սուրբերը եւ արդար հոգիները, որ երկնից արքայութեան մէջ ունին Քրիստոսական քահանայութեան պաշտօնը եւ պատիւը. արդե՞տք իրենք իրենց պաշտօնէն դադարա՞ծ են, եւ միջնորդ եւ բարեխօս չե՞ն երկնից արքայութեան մէջ երկրի վրայ եղող հաւատացեալ քրիստոնեայներուն համար, արդե՞օք չե՞ս կարդացեր Յօհաննու յայտնութեան սուրբ գիրքը. ի՞նչ ձայներ էին որ կը լսուէր երկինքէն «փրկութիւն». ինչպէս գրած է. «Որք կային առաջի աթոռոյն՝ եւ առաջի գառինն արկեալ զհրեամբք հանդերձս սպիտակս՝ եւ արմաւենիս ՚ի ձեռս իւրեանց, աղաղակէին ՚ի ձայն մեծ՝ եւ ասէին, փրկութիւն Աստուծոյ մերոյ՝ որ նստի ՚ի վերայ աթոռոյն եւ գառինն». Յայգր. է. 9. 10:

Այս ի՞նչ փրկութիւն է՝ որ կը խնդրեն

ըսելով, «փրկութիւն Աստուծոյ մերոյ», չեմք կրնար ըսել՝ որ իրենց փրկութիւնը կը խընդրեն. հարկաւ ՚ի վերայ երկրի եղող հաւատացեալներուն, այսիքն՝ զինուորեալ եկեղեցւոյն փրկութեանը համար է. եւ կամ այն սուրբ հոգիներուն աղոթքը, իբրեւ խունկ անուշահոտ կը մատուցանէին ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյն առաջի աթոռոյն Աստուծոյ, ինչու՞ համար էր. մի՛թէ իրե՞նց համար, յայտնի կերեւայ՝ որ մեր փրկութեանը համար էր. կարդա՛ Յայտ. ե. 8: ը. 3: Այս սուրբերուն երկնից արքայութեան մէջ ըրած աղօթքնին խնդրուածքնին մեզի համար առաջի Աստուծոյ բարեխօսութիւն չէ՞ մի. չըլլայ որ միայն այս յայտնութեան սուրբ գիրքին ութը գլուխը եւ մէկ համարը միայն կարդալով համարձակին ըսելու, որ սուրբերը երկնից արքայութեան մէջ միայն լռութիւն ունին. հոգեւորապէս խօսիլ չունին՝ որ բարեխօսութիւն խոստովանիմք. բայց այն լռութիւնը՝ կէս ժամու չափ եղաւ. ինչպէս գրած է. “Եղեւ լռութիւն յերկինս՝ որպէս կէս ժամու», Յայտ. ը. 1: Իսկ բարեխօսութիւննին եւ փառաբանութիւննին առ Աստուած՝ միշտ եւ յամենայն ժամ է. բա՛ց կարդա՛ յայտնութեան այս գլուխները եւ այս

համարները, ա. 6: դ. 11: է. 12: ժա. 13: ժթ. 1, 5, 6:

Սուրբերը երկրի վրայ ի՞նչ պաշտօն ունէին առ Աստուած բաց ՚ի աւետարանական քարոզութենէն՝ եւ ՚ի սրբարար խորհրդոց մատակարարութենէն. կարծեմ որ գիտես. երկու եւս մեծ պաշտօն ալ ունէին: Մէկը գոհութեան եւ փառաբանութեան պաշտօն առ Աստուած՝ Եկեղեցւոյն ստացած երկնապարգեւ շնորհքներուն, եւ հաստատ զօրացուցանելոյն, եւ պայծառ յառաջադիմութեանը համար. տե՛ս Պօղոս առաքելոյն գոհութիւնը. «Նախ գոհանամ զաստուծոյ իմոյ ՚ի ձեռն Յիսուսի քրիստոսի վասն ձեր ամենեցուն, զի հաւատք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ». Հռո. ա. 8: «Գոհանամ զաստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր ՚ի վերայ շնորհացն աստուծոյ՝ որք տուեալք են ձեզ ՚ի Քրիստոս Յիսուս». ա Աորն. ա. 4: «Զի ՚ի նմանէ՝ եւ նովալ՝ եւ ՚ի նոյն ամենայն, նմա փառք յաւիտեանս». Հռո. ժա. 36: «Այլ թագաւորին յաւիտենից՝ անեղծի, եւ աներեւութի, միոյն աստուծոյ՝ փառք եւ պատիւ՝ յաւիտեանս յաւիտենից». ա Տիմ. ա. 17:

Եւ երկրորդ՝ ունէին պաշտօն բարեմաղ-

թութեան եւ բարեխօսութեան հաւատացեալներուն փրկութեանը եւ ամեն կերպ փորձանքներէ ազատ մնալուն համար. “Խրատ եմք՝ յորժամ մեք տկարանայցեմք՝ եւ դուք զօրաւորք իցէք. զդոյն իսկ եւ աղօթս առնեմք զձեր հաստատութիւնդ», ք **Սողոմոն. ժգ. 9:** “Ո՛չ դադարեմք վասն ձեր աղօթս առնել՝ եւ խնդրուածս մատուցանել. զի լնուցուք զգիտութիւն կամացն նորա. ամենայն իմաստութեամբ եւ հոգեւոր հանճարով՝ գնալ ձեզ արժանի տեառն յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան պտղաբերք՝ եւ աճեցունք գիտութեամբն աստուծոյ», **Սողոմոն. ա. 9. 10:** “Սի՛րելի, վասն ամենայն իրաց քոց յաջողութեան եւ առողջութեան աղօթս առնեմ», գ **Յօճ. ա. 2:**

Արդ՝ հիմա եկու՛ խորհրդածեմք քեզի հետ, թէ որ սուրբ գրոց ունիս հմտութիւն, եւ եթէ սուրբ գիրքով կը համոզուիս, ի՞նչ կըսես. Աստուած արգիլե՞ց այն սրբոց համարձակութիւնը, երբոր իրեն արքայութեանը արժանի եղան, չը՞նդունիր անոնց գոհութիւնը եւ փառաբանութիւնը եւ անոնց աղօթքը եւ հայցուածքը. եւ կամ թէ դադարեցա՞ն արդեօք աստուծոյ գոհութիւն տալէն, եւ Եկեղեցւոյն համար աղօթք հայց-

ուածք ընելէն, գիտեմ՝ որ այո՛ւ պիտի ըսես. որովհետեւ Յօհաննու աւետարանչի յայտնութեան սուրբ գիրքը կարգացեր ես, եւ կընդունիս. բայց ողջամիտ հաւատով եւ ջեմեռանդ հոգւով կարգա՛ եւ բարի մտօք խորհէ՛, որ գտնաս սուրբերը եւ արդար հոգիները՝ ինչպէս էին յերկրի Եկեղեցւոյ մէջ գոհացող զաստուծոյ, եւ փառաբանիչ սուրբ Երրորդութեանն, եւ աղօթող հաւատացեալներուն համար. նոյնպէս եւ յերկինս արքայութեան մէջ ՚ի պատրաստի կան նոյն պաշտօնը համարձակ եւ անարգել կատարելու. ինչպէս գրած է. “Անկանէին յերեսս առաջի աթոռոյն՝ եւ երկիրպագանէին Աստուծոյ՝ ասելով, ամէն: Օրհնութիւն, եւ փառք, եւ իմաստութիւն, եւ գոհութիւն, եւ պատիւ, եւ զօրութիւն, եւ շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ՝ յաւիտեանս յաւիտենից»։ Յայտ. է. 11. 12: Ժա. 17:

Տեսա՛ր եւ լսեցի՛ր սուրբերուն եւ արդար գոհիներուն գոհութիւնը եւ փառաբանութիւնը առ Աստուած յերկինս. եկո՛ւ աղօթքնին ալ լսէ՛, որ ամեն մէկը իրենց աղօթքը կը մատուցանեն առաջի աստուծոյ. “Եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի գառինն, եւ ունէին իւրաքանչիւր զքնարս

եւ զբուրվառ ոսկի լի խնկովք, որք են աղօթք սրբոցն եւ երգէին զերգս նորս», Յայտ. ե. 8:

Այս տեղս իմացուց՝ որ ամեն մէկ սուրբ հոգիները իրենց աղօթքը իբրեւ զքնար (սանթուր) եւ իբրեւ զբուրվառ ոսկի ունէին զաղօթսն խնկովք լեցուն եւ կը մատուցանէին առաջի գառին Աստուծոյ: Եւս եւ ուրիշ տեղ ալ կը յայտնէ. որ եթէ հաւատացեալ մը երկնից սուրբերուն անունը տալով՝ եւ անոնցմէ մէկը միջնորդ եւ բարեխօս ունենա նէ, այն սուրբը այն հաւատացելոյն ջերմեռանդութեամբը մատուցած աղօթքը եւ խնդրուածքը կը մատուցանէ առաջի Աստուծոյ, ինչպէս գրած է. “Եւ այլ հրեշտակ եկն՝ եւ եկաց առ սեղանն, եւ ունէր խնկանոց ոսկի, եւ տուաւ նմա խունկ բազում. զի մատուցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյն առաջի աթոռոյն աստուծոյ», Յայտ. ը. 3:

Գիտեմք պիտի ըսես, որ Յօհաննէս աւետարանչին յայտնուածը եւ տեսածը հրեշտակ էր, որ եւ գրուած է. “Եւ այլ հրեշտակ եկն», ես կը կարծեմ՝ որ համոզուած ես սուրբ գիրքերէն. եւ գիտես՝ որ Աստուած սուրբերը հրեշտակ կանուանէ. վասն զի աստուծոյ կամացը եւ հրամանին պաշտօնը կը

կատարեն. “Շրթունք քահանային զգուշացին գիտութեան, եւ օրէնս խնդրեսցեն ՚ի բերանոյ նորա. զի հրեշտակ տեառն ամենակալի է.», “Ահա՛ ես առաքեմ զհրեշտակ իմ.», Մաղաթ. բ. 7: գ. 1: “Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո.», Մաթ. ժա. 10: “Այլ իբրեւ զհրեշտակս իցեն՝ որք յերկինս են.», Մաթ. ժբ. 25:

Հիմա այս վկայութիւններով կարծեմ՝ թէ համոզուեցար, որ սուրբերը հրեշտակ Աստուծոյ ալ կըսվին: Բայց գիտեմ՝ որ պիտի ըսես, թէ այն աղօթքը կըսուի աղօթք սրբոց. վասն զի գրած է. “Զի մատուցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյն առաջի աթոռոյն աստուծոյ.», մի՛ թէ հաւատացեալները սուրբ կը կոչվին: Այո՛, ունիմք սուրբ գիրքերէն վկայութիւն, որ հաւատացեալները սուրբ ալ կըսուին. ուստի այն հրեշտակ ըսուած արքայութեան մէջ եղող սուրբերը կընդունին իրենց անունը կանչող հաւատացեալներուն ջերմեռանդ աղօթքնին, եւ կը մատուցանեն առաջի աստուծոյ իրենց բարեխօսութեամբը. թէ որ սուրբ գրոց կը հաւատաս, անշուշտ պիտի ըսես. այո՛, հաւատացեալ քրիստոնեայնները սուրբք

կանուանին իրաւամբ. վասն զի ունին սրբութիւն հաւատոյ, ինչպէս այս վկայութիւնքս կը յայտնեն. “Եւ եղեւ ՚ի շրջիլն Պետրոսի առ ամենեքումբք, իջանել նմա եւ առ սուրբսն, որք բնակեալ էին ՚ի լիւդիայ»,. Գործ. Թ. 32: “Եւ զբազումս ՚ի սրբոցն ես բանտարգել առնէի»,. Գործ. Իսլ. 10: “Եւ պաշտօնն իմ՝ որ յԵրուսաղէմ, ընդունելի լիցի սրբոցն»,. Հռոմ. Ժե. 31: “Եկեղեցւոյդ աստուծոյ՝ որ է ՚ի Կորնթոս, սրբովք ամենեքումբք, որք են յամենայն կողմանս Աքայեցւոց»,. “Ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն»,. Բ Կորն. ա. 1: Ժգ. 12: “Ազգ սուրբ՝ ժողովուրդք սեպհական»,. ա Պէֆ. բ. 9:

Այս յայտնի վկայութիւններով ալ պիտի չ'տարակուսիս ըսելու՝ որ այն յայտնութեան մէջ գրուածը, այսինքն՝ սուրբերուն արքայութեան մէջ ունեցած պաշտօննին է գոհութիւն եւ փառաբանութիւն տալ Աստուծոյ, եւ մանաւանդ հաւատացեալներուն համար աղօթք խնդրուածք եւ բարեխօսութիւն ընել: Բայց այս տեղս իրաւունք ունիս երկու բան առարկելու, մէկը որ ու՞րկէց սորված է Եկեղեցին՝ սուրբերուն այս ըրած միջնորդութիւնը եւ հայցուածները, բարեխօսութիւն անուանել. չէ՞ որ այս բարեխօսութեան եւ

միջնորդութեան ՚ի մէջ Աստուծոյ եւ մարդկան ծայրագոյն պաշտօնը՝ մի միայն Յիսուս Քրիստոս ունէր. “Զի մի է Աստուած, եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն”,. ա ՏԻՎ. 5. 6:

Եւս եւ Յիսուս Քրիստոս է բարեխօս վասն մեր. Հոգ. ը. 34: Հիմա տե՛ս՝ որ Յիսուսի Քրիստոսի այս միջնորդութեան եւ բարեխօսութեան պաշտօնին հաղորդ եղած են սրբազան առաքեալները՝ եւ անոնց հետեւող ամեն սուրբերը. եւ Հայր Աստուած հաճեալ է անոնց միջնորդութիւնը եւ աղօթքնին եւ խնդրուածքնին ընդունելու. եւ ասոր վկայութիւնը Պօղոս առաքեալ կուտայ գրելով. “Այլ ամենայն ինչ յԱստուծոյ, որ հաշտեցոյց զմեզ ընդ իւր ՚ի ձեռն Քրիստոսի. եւ ետ մեզ զպաշտօնն հաշտութեան. եւ քանզի Աստուած էր, Քրիստոսիւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, եւ չհամարել նոցա զմեզս իւրեանց. եւ եդ ՚ի մեզ զբանն հաշտութեան: Արդ վասն Քրիստոսի պատգամաւորիմք որպէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ մեօք”,. բ. ԱՊՐՆ. ե. 18, 19, 20:

Տեսա՞ր մի՛ այն պաշտօնը միջնորդութեան

եւ հաշտութեան՝ Հօր Աստուծոյ յանձնը-
 ւած է առաքելներուն՝ եւ առաքելապա-
 տիւ սուրբերուն, ասոր համար է՝ որ կըսէ
 Պօղոս առաքել ամենուն բերնէն, “Եւ
 ետ մեզ զպաշտօնն հաշտութեան», եւ այս
 սուրբերուն խնդրուածը եւ աղօթքը կը ճա-
 նաչէ Եկեղեցին բարեխօսութեան բառով
 Պօղոս առաքելին այս խօսքէն առնելով,
 “Արդ վասն Քրիստոսի պատգամաւորիմք,
 որպէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ
 մեօք», Անանկ է նէ այս բարեխօսութեան
 բառը՝ սուրբ Եկեղեցին նոր հնարած չէ՛,
 այլ առաքելական աւանդութիւն է, վասն
 որոյ համեմատ սուրբ գրոց կը քարոզէ սրբոց
 բարեխօսութիւնը սուրբ Գրիգոր լուսաւոր-
 իչն մեր, խօսելով նահատակներուն վկայա-
 կան մահուանը վրայով, “Եւ զմահն իւրեանց
 եղին կնիք հաւատարիմ հաստատական իւր-
 եանց ճշմարտութեանն հաւատոց, որոց ա-
 ւասիկ եւ ճառք ՚ի միջի ձերում պատմին, որք
 կենդանի են առ Աստուած, եւ բարեխօս
 ստացողացն՝ որք մարթիմք ունել զնոսա առ
 Աստուած, քանզի եւ վասն աստուծոյ մե-
 ռան, կարող են եւ զմեռելութիւն բազմաց
 կենդանացուցանել», ԱԳաթ. Եր. 80:

Տե՛ս սուրբ Աւետարանին մէջը այս սրբոց

բարեխօսութեան հանդէսը, որ Յիսուս Քրիստոս ՚ի լեառն Թաբոր պայծառակերպութեան օրը՝ յայտնի ըրաւ երեք Աշակերտաց առջեւը, այսինքն Պետրոսի՝ Յակոբայ եւ Յօհաննու. վասն զի այն տեղը բերաւ ներկայացոյց Մովսէս եւ Եղիա սուրբ մարգարէները. եւ անոնց բարեխօսութիւնը լսել տուաւ այն իրեն աշակերտներուն. ինչպէս գրած է. “Եւ ահա՛ արք երկու խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս եւ Եղիա. երեւեալ փառօք, եւ ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ”,. Առ. Թ. 30. 31:

Ի՞նչ կը մեկնես, Մովսէսին եւ Եղիային խօսիլը Յիսուսի հետը ի՞նչ էր, եւ ի՞նչ կը խօսէին, ահա՛ յայտնի կընէ աւետարանիչը, որ Յիսուսի Քրիստոսի խաչը ելլալուն եւ շարշարանքները կամաւ քաշելուն համար կը խօսէին, որ պիտի կատարուէր Երուսաղէմի մէջ. ի՞նչ ըսենք այս տեղս. Յիսուս Քրիստոս չէ՞ր մի գիտէր իրեն շարշարուիլը եւ խաչուիլը Երուսաղէմի մէջ. եւ այս մարգարէները անոր իմաց տալու համար՞ր եկած էին. ոչ. վասն զի Յիսուս Քրիստոս ինքնին գիտէր՝ որ պիտի շարշարուի՝ եւ խաչուի՝ եւ յարութիւն պիտի առնէ, եւ անոնցմով մարդկան փրկութիւն պիտի ըլլայ. ինչպէս կըսէր առաքեալ-

ներուն. “Պահարտ է որդւոյ մարդոյ բազումս շարշարիլ՝ եւ անարգիլ ՚ի քահանայապետաց եւ ՚ի ծերոց եւ ՚ի դպրաց, եւ սպանանիլ՝ եւ յերիր աւուր յառնել», Ղ.՝. Թ. 22: ՅօԸ, Բ. 24: Ը. 14: Ժգ. 1:

Անանկ է նէ՝ Յիսուս Քրիստոս իրեն նախասահմանած սուրբերուն պաշտօնը յայտնել կամեցաւ ամենուն. թէ անոնց տուեր է համարձակութիւն մարդոց փրկութեանը համար բարեխօսութիւն ընել. ինչպէս յայտնի եղաւ՝ որ Մովսէսի եւ Եղիայի խօսիլը Յիսուսի հետ՝ խնդրուած եւ բարեխօսութիւն էր, որ Յիսուս Քրիստոս իրեն կամաւոր շարշարանքներովը եւ խաչելութեամբը այն շնորհքը պիտի ըներ մարդկային ազգին: Քեզի կը հարցընեմ, դուն ի՞նչ կըսես, այս չէ՞ մի սուրբ Աւետարանին ողջամիտ իմացումը. Մովսէսի եւ Եղիայի խօսածնին բարեխօսութիւն էր թէ շարախօսութիւն. հարկաւ պիտի խոստովանիս որ բարեխօսութիւն էր. ուրեմն այս սրբոց բարեխօսութիւնը՝ սուրբ գիրքերէն քարոզուած աւետարանական ճշմարտութիւն. սուրբ գրոց հին աւանդութիւն է, Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն ուղղափառ հաւատոյ մասն է, իսկ շնորհունիլը եւ ուրանալը սրբոց բարեխօսութիւնը՝ նո-

րահնար աղանդ մը նէ, որ վեշտասաներորդ դարէն սկսաւ. ըսել է որ երկու հարիւր յիսուն տարի է, որ այս սրբոց բարեխօսութիւնը ուրանալու աղանդը երեւցեր է. թէ որ ողջմտութեամբ կարդաս Աստուածաշունչ սուրբ գիրքը՝ հին եւ նոր կտակարանը, շատ տեղերէն դուն ալ ինքնին կը գտնաս, որ Աստուած իրեն ներողութեանը եւ շնորհացը մարդիկ արժանի կընէ սուրբերուն բարեխօսութեամբը. կարդա՛ ելից. Ժէ. 11: Լբ. 11. 12. 13, 14: Բ օրհ. թ. 25: գ Դա՛. Ժը. 36. 37. 38: թէ որ սուրբ Աւետարանին ալ ողջամիտ ունկնդիր ըլլաս, աղեկ կիմանաս՝ թէ Աստուած անանկ տնօրիներ է՝ որ աշխարհիս մէջ եղող մարդոց շնորհք կընէ սրբոց բարեխօսութեամբը. կարդա՛ սուրբ Աւետարանը, իմացի՛ր՝ ե՞րբ եւ կամ ու՞րկէց սկըսեց Յիսուս իրեն սքանչելագործութեան եւ հրաշքին նըշանը յայտնելու. գրուած է «Ձայս արար սկիզբն նշանաց Յիսուս ՚ի կանայ գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր, եւ հաւատացին ՚ի նա աշակերտքն նորա». Յօ՛ւ, Բ. 11:

Տեսա՞ր մի՛ Յիսուս Քրիստոս իրեն հրաշագործութեան սկիզբը այս հարսանեաց մէջ ըրաւ բարեխօսութեամբ ամեներանեալ մօրն

իւրոյ սրբոյկուսին. ինչպէս կը գրէ սրբազան աւետարանիչն Յօհաննէս. «Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի կանայ գալիլեացւոց, եւ անդ էր մայրն Յիսուսի. կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ՚ի հարսանիսն: Եւ ՚ի պակասիլ գինւոյն՝ ասէ մայրն ցՅիսուս, գինի ո՛չ ունին»: Ահա՛ այս խօսքը սրբոյ կուսին «Գինի ո՛չ ունին», եղաւ ազգութարեխօսութիւն մը, որով սկզբնաւորեց Յիսուս իրեն սքանչելագործութիւնը՝ ջուրը գինիի փոխարկելով: Այս տեղս երկու կերպով պատուեց Յիսուս իւր սուրբ կոյս մայրը. մէյ մը՝ որ իւր մայրը հոն ըլլալուն համար ինքն ալ երբոր կաշուեցաւ, իսկոյն գնաց, որով յայտնեց իր մօրը մեծ պատիւը, անոր համար կը գրէ աւետարանիչը «Անդ էր մայրն Յիսուսի, կոչեցաւ եւ Յիսուս»: Եւ երկրորդ պատուեց Յիսուս զսուրբ կոյսն. որուն խնդիրքովը հաճեցաւ սկզբնաւորելու իրեն հրաշագործութիւնը:

Ահա՛ այս սուրբերուն մեծ պատիւ է համարձակութեան, որ աստուծմէ յատկապէս շնորհուած է անոնց. ինչպէս Յիսուս ալ յայտնի ըրաւ. «Պատուեսցէ զնա հայր իմ», Յօճ. ԺԲ. 26: Ահա՛ Դաւիթ մարգարէն սուրբերուն բարեխօսութեան ձայնը իրեն օգ-

նութիւն ունենալով՝ կաղաղակէ առ աստուած, «Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից քոց»։ Սաղ. հգ. 22, 23:

Այս ծայրագոյն միջնորդութեան պաշտօնիւր կրնան պարծիլ սուրբերը, ինչպէս Պօղոս առաքեալ ամենուն բերնէն կը խօսի. “Եւ ետ մեզ զպաշտօնն հաշտութեան», ք. Առքն. ե. 18: Բայց պիտի ըսես թէ ինչու՞ համար գրուած է, որ բարեխօս եւ միջնորդ առ հայր Աստուած մի միայն Յիսուս Քրիստոս է. ինչպէս կը վկայէ առաքեալն Պօղոս. “Քրիստոս Յիսուս որ մեռան՝ մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ աստուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր», ք. Հռոմ. ը. 34: Սոյնպէս կը գրէ Յօհաննէս աւետարանիչ. “Ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս զարդարն եւ զանարատն, եւ նա է քաւութիւն մեղաց մերոց», ք. Յօհ. բ. 1:

Կը պատասխանեմ, թէ որ ուղիղ մտօք հայելու ըլլաս սուրբ գիրքին. կարող կըլլաս Հոգւոյն սրբոյ շնորհիւր հասկընալ թէ ինչու՞ Յիսուսի Քրիստոսի համար կըսվի միայն բարեխօս առ հայր Աստուած. վասն զի Յիսուսի մահուամբը մեզի փրկութիւն եղաւ, եւ անոր յարութեամբը մեզի յաւիտենական կեանք պարգեւեցաւ. եւ ան եղաւ քաւու-

Թիւն մեղաց մերոց. անոր համար Յիսուս Քրիստոս իրեն տնօրէնութեամբը, եւ իւր փրկարար մահուան արդեամբքը մի միայն բարեխօս է առ էակիցն իւր առ հայր Աստուած, եւ անոր նման ուրիշ բարեխօս մի չի կայ մարդկային բնութեան փրկութեանը եւ ազատութեանը սատանայի գերութենէն: Անոր համար կըսէ. «Քանզի մի է Աստուած, եւ մի միջնորդ աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն», ա ՏՅճ. բ. 5—6:

Արդ՝ այս տեղս կը հարցնեմ քեզի թէ ի՞նչ է այն, որ Պօղոս առաքեալ կըսէ Հոգւոյն սրբոյ բարեխօսութեանը համար. «Այլ ինքն հոգին բարեխօս լինի՝ ի հեծութիւնս անմռունչս», Հռոմ. Ը. 26: Տեսա՞ր՝ որ Հոգին սուրբ ալ բարեխօս է եղեր վասն Եկեղեցւոյն. զի նա է Քրիստոսի Եկեղեցւոյն ներքին ուսուցիչ ճշմարտութեան եւ զօրացուցիչ շնորհիւ իւրով՝ եւ յաւիտենական մխիթարիչ. «Իսկ մխիթարիչ Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ հայր յանուն իմ, նա ուսուցցէ ձեզ զամենայն», Յօժ. Ժդ. 26: «Հոգին ՚ի թիկունս հասանէ տկարութեան մերում», Հռոմ. Ը. 26:

Ուրեմն սուրբ Հոգին ալ մեր բարեխօսն

է, որ ճշմարտութեան ու շնորհաց լոյսը մըշտապէս ունենալով, մոլորութեան եւ մոլութեան արիաբար յաղթեմք, եւ իրեն մաքուր տաճար բնակութեան ըլլայ մեր սիրտը եւ հոգին. ասոր համար այս աղօթքը կընէ առ սուրբ Հոգին Աստուած՝ սուրբ Գրիգոր Նարեկացին. “Որ բարեխօսդ ես վասն մեր յանմոռնչ հեծութիւնս առ ողորմածդ հայր: Որ զսուրբսն պահես, եւ զմեղուցեալսն մաքրես եւ տաճարս կազմես կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձրեալդ հօր: Արդ՝ ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց՝ որ ո՛չ է հաճոյ քումդ բնակութեան: Եւ մի՛ շիջցին առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ՚ի տեսականացս աչաց իմաստից»,
ԼԳ. 5:

Հիմա ի՞նչ ըսենք, Յիսուսի Քրիստոսի միջնորդութիւնը եւ բարեխօսութիւնը արդե՛օք կը խափանէ՞ սուրբ հոգւոյն աստուծոյ բարեխօսութիւնը, եւ կամ Հոգւոյն սրբոյ եւ Յիսուսի Քրիստոսի բարեխօսութիւննին կարգիլէ՞ սուրբերուն բարեխօսութիւնը. ոչ, կարծեմ որ պիտի խոստովանիս թէ սուրբերը՝ Յիսուսի Քրիստոսի փրկագործութեան խորհուրդներուն պաշտօնեայ եւ փառացը հաղորդ ըլլալով՝ եւ սուրբ հոգւոյն աստուծոյ

շնորհքներուն եւ զորութեանը ընդունարան ըլլալով՝ անոնք ալ համարձակութիւն ունին առաջի Աստուծոյ բարեխօս ըլլալ վասն մեր անխափան:

Զըլլայ՝ որ միտքէդ անգամ անցընես, թէ Յիսուս Քրիստոս եւ սուրբ Հոգին մեզի համար բարեխօս ըլլալէն ետեւ, ի՞նչպէս սուրբերն ալ այս միջնորդութեան եւ բարեխօսութեան բարձր անունը կրնան ունենալ: Ահա կը պատասխանեն քեզ նախ՝ սուրբ Աւետարանը, նայէ Յիսուս Քրիստոս իրեն համար ըսաւ. «Այլ զի գիտասցի՛ք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ՝ ՚ի վերայ երկրի թողուլ զմեզս». Մար. Դ. 6: Մար. Ը. 10: Եւ Եսայի մարգարէէն առնելով կրսէին դրպիրքը. «Ո՞վ կարէ թողուլ զմեզս, եթէ ոչ՝ մի Աստուած». Մար. Բ. 7: Եւայ. խգ. 25:

Արդ այս իշխանութիւնը չունի՞ն սրբազան առաքեալները՝ եւ անոնց օրինաւոր յաջորդները. թէ որ վերը գրածին նայիս, միայն Աստուած Յիսուս Քրիստոս պիտի տայ թողութիւն մեզաց. բայց սրբազան առաքեալներն ալ ըստ որում պաշտօնեայ Քրիստոսի՝ եւ անոր իշխանութեանը հաղորդ, անոնք ալ ՚ի կողմանէ Քրիստոսի թողութիւն տալու-իշխանութիւն ունէին. «Եթէ ումք թո-

դուցուք զմեզս՝ թողեալ լիցի նոցա»։ Յօճ. Ի. 23: Տե՛ս Յիսուս իրեն համար ըսաւ. «Ես եմ լոյս աշխարհի»։ Յօճ. ը. 12: Բայց իրեն լուսոյն հաղորդ եղող առաքեալներուն ալ ըսաւ. «Դուք էք լքյա աշխարհի»։ Մաթ. ե. 14: Սուրբ գիրքը մեզի կը քարոզէ, որ Աստուած իրեն անունովը անգամ իւր ծառայները պատուեր է. ինչպէս, Աստուած անունը միայն երկնի եւ երկրի Տէրոջը մեզի ստեղծողին կուտամք. վասն զի գրեալ է. «Մեծ ես դու տէ՛ր, եւ առնես սքանչելիս՝ եւ դու միայն ես Աստուած» Սաղ. ձե. 10: «Լու՛ր իսրայէլ, տէր Աստուած մեր, տէր մի է»։ Բ օրհ. գ. 4: Մաթ. ժբ. 29: Այսպէս գրուած սուրբ գիրքին մէջ շատ տեղ կը գտնաս:

Բայց Աստուած իրեն աս անունը շնորհած է իր բարերար եւ մարդասէր կամացը ծառայութիւն ընողներուն ալ, «Աստուած եկաց ՚ի ժողովս աստուծոց»։ «Ես ասացի թէ Աստուածք իցէք»։ Սաղ. ձա. 1. 6: «Ահա՛ ետու զքեզ Աստուած փարաւոնի»։ Ելք. է. 1: Կը հաստատէ Յիսուս այս հին օրինաց մէջ Աստուծոյ տուած արտօնութիւնը իրեն ծառայներուն՝ այսպէս. «Ո՛չ յօրէնս ձեր գրեալ է, ես ասացի թէ Աստուածք իցէք. իսկ եթէ զնոսա Աստուածս ասէ, առ որս

բանն աստուծոյ եղեւ, եւ շէ՛ մարթ եղծանիլ գրոյն»։ Յօճ. Ժ. 34:

Իմաստակները տարակուսելով սրբոց բարեխօսութեան վրայով՝ այս հարցումն ալ կընեն. թէ սուրբերը Աստուծոյ պէս կիմանա՞ն արքայութեան մէջ, իրենց անունը տալով՝ իրենց բարեխօսութեանը յուսացողներուն սրտին բաղձանքը, եւ կամ անոնց աղաղակնին կը լսե՞ն, որ անոնց համար բարեխօսութիւն ընեն առաջի Աստուծոյ. վասն զի Աստուծոյ համար միայն գրուած է. «Ո՞վ է որպէս տէր Աստուած մեր՝ ի բարձունս բընակեալ, եւ զխոնարհս տեսանէ յերկինս եւ յերկրի»։ Սաղ. ճԺբ. 5:

Ես ալ անոնց կը հարցընեմ. կը հաւատա՞ս, որ բացարձակ եւ ամենիշխան գլուխ եկեղեցւոյ է Յիսուս Քրիստոս. մտիկ ըրէ՛ Պօղոս առաքելոյն. «Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն է փրկիչ մարմնոյ»։ Եփեա. ե. 23: Վոդյա. ա. 18:

Բայց այս ալ պէտք է գիտնաս, թէ Քրիստոսի Եկեղեցին երկու կը բաժանի. Նախ՝ գլխո֊որէալ Եկեղեցի. որք են այս աշխարհի մէջ կենդանի հաւատացեալները, որք եւ կըսուին բարոյական մարմին Քրիստոսի. եւ են հոգեւոր զինուոր Քրիստոսի, որք միշտ

պիտի պատրաստ ըլլան յաղթելու ամեն մէկ մոլորութիւնները եւ մոլութեան շար կիրքերը. «Վշտակի՛ց լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի» ք ՏՆԺ. ք. 3: «Զի թէ՛ պէտ եւ մարմնով գնամք՝ այլ ո՛չ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք, զի զէն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ, առ ՚ի քակելոյ զամուրս. զխորհուրդս քակեմք». ք Վորն. Ժ. 3. 4:

Եւ երկրորդ՝ կանուանեմք անդրանկաց եւ կամ յաղթական Եկեղեցի, որք են հոգիք սրբոց երկնից արքայութեան մէջ. «Եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատարելոց». Եբր. Ժք. 22: «Որ յաղթէ, այսպէս զգեցցի սպիտակս, եւ ո՛չ ջնջեսցի անուն նորա ՚ի դպրութենէն կենաց». Յայտ. գ. 5:

Ուրեմն Քրիստոսի Եկեղեցին ո՛չ միայն երկրի վրայ եղող հաւատացեալները պիտի իմանամք, այլ եւ արքայութեան մէջ սուրբ հոգիներն ալ: Արդ՝ եթէ կը հաւատամք, որ Յիսուս Քրիստոս ընդհանրական եւ ինքնիշխան գլուխ է Եկեղեցւոյն. թէ՛ յերկինս արքայութեան մէջ երանեալ հոգւոց արդարոց, եւ թէ՛ ՚ի վերայ երկրի ուղղափառ

հաւատացեալ Քրիստոնէից, եւ ամենքն ալ բարոյական մարմին Քրիստոսի են:

Ապա ամենուն կազդէ եւ կը ներգործէ իրեն զօրութիւնը՝ իմաստութիւնը՝ եւ գիտութիւնը, եւ ամենքը կըստանան նոյն զօրութիւնները հաղորդակցութեամբն Քրիստոսի. ասոր համար է՝ որ կը գրէ Պօղոս առաքեալ. «Զամենայն ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա, եւ զնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք Եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու».
Եփե. ա. 22. 23:

Հիմա տեսա՞ր մի, «ի վերայ ամենայն իրիք Եկեղեցւոյ» ըսելովն՝ յայտնի ըրաւ, որ Յիսուս Քրիստոս է գլուխ եթէ՛ պնո֊որէալ Եկեղեցւոյն, եւ եթէ՛ յաղբական Եկեղեցւոյն. կը մնայ հիմա մեզի իմանալ եթէ ի՞նչ է այս խօսքը. «Որ զամենայն յամենայնի լնու».
նկարագրական միտքը կ'իմացվի՝ որ ամենքը կը լեցնէ. ամենայն կերպիւ. լեցնողը Յիսուս Քրիստոս է. որովհետեւ ինքն է ընդհանրական գլուխ իրեն Եկեղեցւոյն, որ եւ «ամենքը» ըսելով՝ կ'իմացնէ Յիսուսի Քրիստոսի բարոյական մարմինը, որ է Եկեղեցին. «յամենայնի» այսինքն ամեն կերպիւ ըսելովը՝ կը յայտնէ Յիսուսի Քրիստոսի Եկեղեցւոյն շը-

նորհած իրենն ձրիական պարգեւները, որ միշտ ալ այս իրենն շնորհքներովը կը լեցնէ եւ կը կատարելագործէ՝ իր Եկեղեցին, որ իրենն բարոյական մարմինն է՝ եւ ինքն է գլուխ նորին: Ահա՛ ասով կը պարծենայ Եկեղեցին. «Որով ունիմք զփրկութիւն ՚ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց, որ առաւելաւ ՚ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եղ նովաւ ՚ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակեալ զամենայն քրիստոսիւ. որ ինչ յերկինս՝ եւ որ ինչ յերկրի ՚ի նոյն». Եփե. ա. 7, 8, 9. 10:

Ուրեմն Յիսուս Քրիստոս ո՛չ թէ միայն իրենն փրկութեան շնորհքները, եւ մեղաց թողութեան կատարեալ ներողութիւնը կը ներգործէ Եկեղեցւոյն, այլ եւ իրենն զօրութիւնովը եւ իմաստութիւնովը կը փառաւորէ. ըստ որում ինքն է «Աստուծոյ զօրութիւն եւ աստուծոյ իմաստութիւն», ա Վորն. ա. 23: Ասոր համար է՝ որ Եկեղեցին կը պարծենայ. «Որով ունիմք զփրկութիւն ՚ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց:

Որ առաւելաւ ՚ի մեզ ամենայնի իմաստութեամբ եւ գիտութեամբ»։ Եփէս. ա. 7. 8:

Արդ՝ հիմա քեզի կը հարցընեմ. Յիսուսի Քրիստոսի իմաստութեան եւ գիտութեան աղղեցութիւնը միայն աշխարհի մէջ պնդեալ Յկեղեցւոյն կը ներգործէ. եւ երկինքը արքայութեան մէջ՝ յաղթական Յկեղեցւոյն՝ երանեալ սուրբ եւ արդար հոգիներուն շի՞ ներգործեր. կամ թէ՛ Յիսուս Քրիստոս միայն այս աշխարհի մէջ պնդեալ Յկեղեցւոյն գլուխ է, արքայութեան մէջ եղող անդրանկաց Յկեղեցւոյն երանեալ սուրբերուն միանգամայն գլուխ չէ՞ մի. եւ այն սուրբերն ալ Յիսուսի Քրիստոսի բարոյական մարմինը ըլլալով, իրենց գլխոյն Յիսուսի Քրիստոսի հետ փառակից չե՞ն մի: Անշուշտ պիտի ըսես. այո՛, անոր գիտութեանը եւ իմաստութեանը հաղորդուած են. ըստ որում գրեալ է. «Հա՛յր զորս ետունն ինձ՝ կամիմ, զի ուր եսն եմ, եւ նոքա իցեն ընդ իս, զի տեսանիցեն զփառս իմ, զոր ետունն ցիս»։ Յօճ. ժէ. 24: «Հաւատարիմ է բանըս, զի եթէ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին եւ կեցցուք. եւ եթէ համբերեմք, ընդ նմին եւ թազաւորեսցուք»։ Բ Տիմ. բ. 11. 12: «Որով մեծամեծքն եւ պատուական աւետիք

պարգեւեալ են մեզ, զի նոքիմբք աստուածեղեն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք»։ Բ Պէր. ա. 4:

Անանկ է նէ՝ սուրբ արդար եւ երանեալ հոգիները երկնից արքայութեան մէջ կատարեալ եւ յստակ տեսութեամբ ո՛չ միայն կը տեսնան աստուծոյ սքանչելի մեծութիւնը եւ ամենացանկալի փառքերը, այլ եւ Յիսուսի Քրիստոսի հաղորդական գիտութեամբը եւ ազդարար ներգործութեամբը կը տեսնան եւ կիմանան *«Կնո-որեալ Եկեղեցւոյն ջերմեռանդութեամբ խնդրուածք ընողներուն աղաղակը, եւ առաջի Աստուծոյ իրենց նախասահմանուած բարեխօսութեան պաշտօնին կը կատարեն:* Անանկ է նէ՝ սուրբերուն գիտութիւնը առաւել պարզ եւ ամենատես կըլլայ երկնից արքայութեան մէջ. ինչպէս կը վկայեն Պօղոս առաքեալը եւ Յօհաննէս աւետարանիչը. «Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս եւ նայն ծանեաւ զիս»։ ա Վորն. ժգ. 12: «Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք, եւ շեւ եւս է յայտ՝ եթէ զի՛նչ լինելոց իցեմք. գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք,

զի տեսանելոց եմք զնա՝ որպէս եւ էն» ա
ՅօԸ. գ. 2:

Տե՛ս Յիսուս Քրիստոս առաւել բացա-
յայտ ըրաւ՝ որ սուրբ հոգիները երկնից ար-
քայութեան մէջ կիմանան այս *վինո-որեալ*
Եկեղեցւոյն ամեն մէկ անդամներուն ջեր-
մեռանդութիւնը՝ եւ անոնց ՚ի մեղաց դար-
ձը, զղջումը, խոստովանութիւնը եւ ապաշ-
խարութիւնը. վասն որոյ ըսաւ «Զի այսպէս
է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղա-
ւորի՝ որ ապաշխարիցէ», *Ղ.՝. Ժե. 7: Անանկ*
է նէ՝ սուրբ հոգիները արքայութեան մէջ
կը գիտնան եղեր աշխարհի վրայ եղող ա-
պաշխարողներուն զղջման դարձը: Եթէ այս
ուրախանալը հրեշտակաց համար ըսաւ Յի-
սուս Քրիստոս. սուրբ Աւետարանը քեզի
կը համոզէ, որ հրեշտակաց ունեցած ու-
րախութիւնը այլ կերպով յայտնեց Քրիս-
տոս, ինչպէս գրուած է. “Ուրախութիւն
եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ՚ի վե-
րայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ»,
Ղ.՝. Ժե. 10:

Իսկ առաջինը յայտնի կը ցըցնէ *անդրան-*
կաց Եկեղեցին, վասն որոյ ըսաւ. «Զի այս-
պէս է ուրախութիւն յերկինս». Այս «եր-
կինք», բառով կիմացընէ մեզի սուրբ եւ ար-

դար եւ երանեալ հոգիներուն կայանքը, որ է արքայութիւն երկնից. Մար. ե. 12: Մար. ժ. 21: Առդ. ա. 5: Եբր. ժբ. 23: Իսկ հրեշտակաց ուրախանալոյն համար կըսէ. «Ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց աստուծոյ». տես «յերկինս» շքեւութիւնը՝ որոշեց հրեշտակներուն ուրախութիւնը:

Արդ՝ թէ որ այս ճառով չ'համոզուին սրբոց բարեխօսութեանը վրայով, ալ սիրտս պիտի վկայէ, որ յամառեալ կամապաշտութեան ախտը թագաւորած պիտի ըլլայ անոնց սրտին մէջ. եւ Քրիստոսի Յիսուսի այն մեծ պատիւը՝ որ տուաւ սուրբերուն, պիտի չազդէ անոնց: Տե՛ս՝ Յիսուս Քրիստոս սուրբերը իրեն հետը պատուակից ըրաւ հրամայելով. «Որ ընդունի զձեզ, զիս ընդունի, եւ որ զիս ընդունի, ընդունի զառաքիչն իմ»: Այս ո՞րչափ մեծ եւ գերաստիճան պատիւ է՝ որ Յիսուս տուաւ սրբազան առաքելոց. եւ կամեցաւ՝ որ սուրբ Աւետարանին ամեն ողջամիտ հետեւողներն ալ ընդունին եւ պատուեն, ոչ միայն սրբազան առաքեալները՝ այլ եւ ամեն սուրբերը եւ արդարները՝ եւ կը խոստանայ անոնց համար երկնից արքայութեան մէջ պատրաստուած վարձքերնուն մասնակից եւ հաղորդ ընել, եւ անոնց փառացը

հասցընել. «Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ, զվարձս արդարոյ առցէ». Մատթ. Ժ. 40. 41:

Եւս եւ կը յարգեմք սուրբերը մեր մտաց առջեւը ներկայացունելով անոնց ամեն մէկուն աստուածահաճոյ վարքը, առաքելական գործքերը, եւ մարտիրոսական մահներնին. ասոր համար է՝ որ անոնց նկարագրութեան պատկերներուն յարգութիւն կուտամք, չէ՛ թէ իբրեւ զԱստուած կը պաշտեմք. քա՛ւ լիցի, այլ աստուծոյ հաճելի եւ կամակատար եւ հաւատարիմ ծառայ եւ պաշտօնեայ ճանչնալով՝ կը յարգեմք. եւ այս մեր շերմեռանդըն յարգութիւն տալերնիս սրբոց պատկերաց առ Աստուած կը վերաբերի: Զի ՚ի փառս Արարչին աստուծոյ ՚ի գործ կը դըրուի, եւ ոչ ՚ի փառս ստեղծական մարդոյ. ուստի ամենայն աստուածայնոց՝ եւ ինչ որ աստուածային բաներուն կը տրուի պատիւ, յարգութիւն, խոնարհութիւն, եւ ծնրադրութիւն, բոլորն ալ առ Աստուած կը վերաբերին: Կարդա՛ սուրբ աւետարանը. Քրիստոս Տէրն մեր, փարիսեցիներուն կեղծաւոր գործքերնին կշտամբելու եւ յանդիմանելու ատենը՝ տե՛ս ի՞նչ կըսէ, «Որ երգուաւ ՚ի

սեղան, երգուաւ ՚ի նա, եւ յամենայն որ ՚ի վերայ նորա է. եւ երգուաւ ՚ի տաճարն, երգուաւ ՚ի նա եւ ՚ի բնակիչն նորա. եւ որ երգուաւ յերկինս, երգուաւ յաթոռն աստուծոյ, եւ յայն՝ որ նստին ՚ի վերայ նորա».

Մատթ. իգ. 20: Մտածէ՛ հիմա, երբոր սեղանին վրայ երգում ընեմ նէ, Պատարագին վրայ երգում ըրած կըլլամ, վասն զի Պատարագն է սեղանին վրայ, սեղանը՝ Պատարագին հետ յարաբերութիւն ունենալուն համար՝ սեղանին վրայ եղած երգումը Պատարագին կը վերաբերի: Եւ երբ տաճարին վրայ երգում ընեմ նէ, Աստուծոյ կը վերաբերի այն երգումը, զի Աստուած կը բնակի տաճարի մէջ, եւ տաճարը յարաբերութիւն ունի առ Աստուած: Նմանապէս՝ երբոր երկնից վրայ երգում ընեմ նէ, երկինքը Աստուծոյ աթոռը ըլլալուն՝ եւ Աստուած անոր վրայ բազմեալ ըլլալուն համար՝ Աստուծոյ վրայ երգում ըրած կըլլամ, զի Աստուած կը բազմի յերկինս. եւ երկինքը յարաբերութիւն ունի առ Աստուած: Հսել է որ՝ ինչ բան որ առ Աստուած յարաբերութիւն ունին, սեղան, տաճար, անօթ, եւայլն, որ աղօթիւք եւ սուրբ իւղով օծեալ եւ սրբացուցեալ են, անոնց տրուած

պատիւ, պաշտօն եւ յարգութիւն առ Աստուած կը վերաբերին: Ապա Սրբոց՝ որ Արարչին աստուծոյ կամակատարք եւ սպասաւորք են, եւ ՚ի փառս աստուծոյ իրենց արիւնը թափեր զոհ եղեր են, անոնց եղած պատիւ, խոնարհութիւն, տօնախմբութիւն, ընդունելութիւն, եւ ծնրադրութիւն, ինչու՞ առ Աստուած չվերաբերին: Նոյն ինքն Տէրն մեր կըսէ, «Պատիւ ծառային առ Տէրն վերաբերի», ուստի ամենայն Քրիստոնէից ըրած ջերմեռանդութիւնը, աղօթքը, եւ խընդրուածքը՝ որ առաջի Տէրունական կամ Սրբոց պատկերաց կընծայեն. կը վերաբերին իրենց սկզբնատիպներուն, այսինքն Սուրբերուն. եւ անոնցմէ ալ բուն իսկ Ամենատէր Արարչապետին. եւ ասկից չի հետեւիր կռապաշտութիւն կամ անելորդապաշտութիւն, այլ անոր ներհակը՝ ջերմեռանդն Աստուծապաշտութիւն: Զի արդարեւ արուեստակերտ են պատկերները, որոնց առջեւ ծունր կը դնենք. բայց այն արուեստակերտներուն նայելով միտքերնիս կը բերենք անոնց ըսկզբնատիպները, ինչպէս կըսէ սուրբ Գրիգոր նարեկացին, «Զոր ինչ հայի ոք, ՚ի նոյն փոխի եւ մտօք». *Տէն, Երգերգոց*: Եւ կը մտածենք անոնց ՚ի փառս աստուծոյ քաշած չարչա-

րանքնին, նահատակութիւնին, սուրբ վարքերնին, եւ երկնային յաւիտենական փառաց արժանի ըլլալնին. որոնցմով ջերմեռանդըն փափագ մը կիշնայ մեր սրտին մէջն ալ, եւ կըսկըսինք աղօթել Աստուծոյ, որ ինչպէս ան սուրբերը արժանի ըրէր է նէ, մեզ ալ արժանի ընէ իւր մարդասէր կամօքը. եւ մի թէ աս կռապաշտութիւնն է մի: աւաղելի՛ կուրութիւն: Արդ ըսածներէս կը հետեւի, որ արուեստակերտ պատկերաց եղած յարգութիւնը՝ կը վերաբերի իրենց Սկզբնատպին. եւ Սկզբնատպին եղածն ալ կը վերաբերի առ Արարչապետն Աստուած. ուստի պէտք է եղեր այն յարգութիւնը տալ պատկերաց, եւ ոչ արհամարհել. վասն զի երբոր մէկը թագաւորին պատկերը պատուէ նէ, զթագաւորն պատուած կըլլայ. եւ ոչ այն արձանը, որուն առջեւը զլուխը ծռեց: Եւ ասոր ներհակ, թէ որ մէկը ոտքի տակ առնէ, կոխէ, կամ արհամարհէ նէ, շարաշար կը պատժուի. վասն զի այն արհամարհութիւնը թագաւորին տրւած կըլլայ. ինչպէս կըսէ սուրբ Հայրապետն Աթանաս, “որ թշնամանէ զպատկեր կայսեր, զարդար պատիժն կրէ, որպէս թէ զկայսրն թշնամանեալ էր.” ՚ Գործ. Դ. Եօթներորդ Ժողովոյն:

Պատկերք սրբոց նշանակող են, որ մեր մտաց առջեւը կը ներկայացունեն սրբոց Աստուածահաճոյ վարքերնին եւ նահատակութիւննին. եւ յիշել կուտան մեզի անոնց առաքինութիւննին, Աստուծոյ հաճելի հոգեւոր վաստակնին, եւ հաւատոյ ճշմարտութեան վրայով ունեցած ճգնութիւննին եւ արդիւնքնին. մանաւանդ երկնից արքայութեան եւ Աստուածային յաւիտենական փառաց ալ հաղորդ ըլլալնին. ասոր համար ըսինք՝ որ սրբոց պատկերները նշանակող են: Ինչպէս հաց՝ ջուր՝ բառերը երբ կը տեսնամք գրուած. իսկոյն միտքերնիս կը յիշէ այն նշանակող բառերովը նշանակեալ հացը, որ մարդոյս անօթութիւնը կը կշտացընէ. նոյնպէս ջուր բառով ալ կը յիշեմք այն թեթեւ եւ թափանցիկ տարրը, որ զովացուցիչ է ծարաւոյ, մաքրիչ աղտեղութեան, աճեցուցիչ եւ սնուցիչ բուսոց՝ տնկոց՝ եւ կենդանեաց: Ահա՛ այս օրինակաւ պիտի իմանամք սուրբերուն պատկերաց նշանակող ըլլալը. որով նշանակեալ սուրբերը կը յիշատակուին եւ կը յարգուին Աստուածասէր բարեպաշտներէն. եւ այս է Քրիստոնէական պարտաւորութիւն աւանդեալ սրբազան առաքեալէն Պողոսէ. ըստ այնմ «Յիշեցէք զառաջնորդս

ձեր՝ որք խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա, նմանողք եղերուք հաւատոցն». Եբր. Ժգ. 7:

Անանկ է նէ սուրբերուն պատկերները՝ բարեպաշտ քրիստոնեայներուն մտքերնուն հաւատոյ ջերմեռանդութեան զգացմունք կուտան. վասն որոյ Եկեղեցին՝ առաջի աչաց հաւատացելոց հրաշալի պատմութիւն մը կը նկարագրէ երեւեցուցիչ սկզբնատպի իւրեանց. որոց տեսութիւնը լռելեայն քարոզ մի է ոչ՝ ի լսելիս ականջաց հաւատացելոց ազդարար, այլ աչաց եւ մտաց ներգործող եւ ազդեցող սկզբնատպի իւրեանց, այսինքն սուրբերուն պէսպէս Աստուածահաճոյ արդիւնքը՝ ճգնողական վարքերին՝ հաւատոյ ճշմարտութեանը տուած վկայութիւննին՝ եւ մարտիրոսական մահուամբ վախճաննին. վասն զի մարդոյս աչքը ինչ բանի նայելու ըլլայ՝ միտքը անոր վրայով գաղափար կըստանայ. ինչպէս ըսինք սուրբ Գրիգոր նարեկացուն վճիռը, թէ «Զոր ինչ հայի ոք, ՚ի նոյն փոխի եւ մտօք»:

Ուրեմն հայելով ՚ի պատկերս սրբոց առաքինասէր եւ ճշմարիտ հաւատացեալները՝ անշուշտ առաքինութեան եւ բարեպաշտութեան զգացմունքներ կըստանան սրտերնուն

մէջ, եւ կը նորոգի միտքերնին եւ սիրտերնին բարի եւ առաքինական հոգւով յիշելով այն պատկերաց նախատիպները, եւ շար ունակութիւննին կը փոխուի բարի տրամադրութեան. ասոր համար է որ սրբազան Պօղոս առաքեալը Եբրայեցւոց հաւատացեալներուն նկարագրելով սուրբերնուն հաստատուն հաւատքը եւ կատարեալ յոյսերնին, Աստուածահաճոյ գործքերնին եւ առաքինական արդիւնքնին, կը համոզէ զանոնք, որ սուրբերուն նմանին՝ եւ անոնց բարի վարքը ունենան, եւ մոլի կիրքերնին թողուն. եւ վերջը կը գրէ. “Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ՚ի բաց ընկեսցուք՝ եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ընթասցուք ՚ի պատերազմ՝ որ առաջի մեզ կայ,», կարդա՛ Եբ. Ժա գլուխէն մինչեւ ցգլուխն Ժբ. 1:

Գիտեմք՝ որ այս տեղս պատկերատեսացները պիտի խռովին եւ հակառակին ճշմարտութիւնը ստութեան հետ դասելով. ողջամիտ աստուածպաշտութիւնը մոլորաշավիղ կը՝ ուսպաշտութեան հետ միացընելով, ինչպէս իրենց տետրակներնուն մէջ գրերեն, թէ աստուած արգիլած է ձեռագործ շինելը, ձուլա-

ծու պատկերները սուտ աստուածներ հնարել է, եւ անոնց երկրպագութիւն ընելը մեղք է, եւ վկայութիւն կը բերեն, “Թէ մի՛ եղիցին քեզ Աստուածք բաց յինէն, մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ՚ի վեր է, եւ որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի, մի՛ երկիրպագանիցես նոցա, եւ մի՛ պաշտեսցես զնոսա, զի ես եմ տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ», Եւրեյ. ի. 3. 4. 5: իե. 13: Բ օրի. ե. 7. 8:

Այո՛ Աստուած արգիլած է ձեռագործ եւ ձուլածո պատկերներով սուտ Աստուածներ հնարել՝ եւ անոնց երկրպագութիւն ընելը: Ինչպէս ըրաւ հրէից ժողովուրդը, որ երբոր Մովսէս հեռացաւ անոնցմէ, մոռցան Աստուծոյ ամենակարող զորութիւնը, որ անոնք ազատեց Փարաւոնի բռնաւորութենէն. եւ զնացին Ահարոնին, ու ուզեցին՝ որ իրենց ձեռագործ Աստուածներ շինէ, որ զանոնք պաշտեն. ինչպէս գրած է. «Կուտեցաւ ժողովուրդն ՚ի վերայ Ահարոնի, եւ ասեն ցնա, արի՛ եւ արա՛ մեզ Աստուածս՝ որք առաջնորդեսցեն մեզ». Եւրեյ. 1բ. 1: Այս ապերախտ ժողովրդոց մոլորութիւնը կը յիշէ Դաւիթ մարգարէն ալ. «Արարին զորթ ՚ի

Քորեբ, եւ երկիրպագին պատկերին, եւ փոխեցին զփառս Աստուծոյ ՚ի նմանութիւն որթու խոտակերի. մոռացան զԱստուած կենարար իւրեանց, որ արար զմեծամեծս յԵգիպտոս եւ զսքանչելիս իւր յերկիր Քամայ. եւ զահ իւր ՚ի վերայ Կարմիր ծովուն». Սաղ. ԸԵ. 19:

Աս անիրաւութիւնը ըրաւ եւ Յերոբովամ արքայն իսրայէլի, որ երկու ոսկեծոյլ երինջ շինեց, եւ Աստուած կոչեց զանոնք ըսելով իրեն ժողովրդոցը. «Ահա՛ Աստուածք քո իսրայէլ՝ որք հանին զքեզ յերկրէն Եգիպտացւոց». գ. Թագ. Ժբ. 28:

Ահա՛ տեսա՞ր մի, այս է Աստուծոյ ճշմարտութիւնը ստուիթեան փոխել, եւ ճշմարիտ Աստուածպաշտութիւնը կռապաշտութեան դարձընել, Աստուած անուանելով նիւթական բաները, եւ աստուծոյ երկրպագութեան պաշտօնը փառքը եւ պատիւը այն սուտ Աստուածներուն տալ՝ ինչպէս կըսէ եւ Պօղոս առաքեալ. փոխեցին զփառս անեղծին աստուծոյ՝ ՚ի նմանութիւն պատկերի՝ եղծանելի մարդոյ՝ եւ թռնչոց՝ եւ շորքօտանեաց եւ սողնոց . . . որք փոխանակեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ըստ ստուիթեան. հնազանդեցան՝ եւ պաշտեցին զարարածս,

եւ ո՛չ զարարիչն», Լուսն. ա. 23. 25:

Ուրեմն Աստուածային Տնօրէնութեանց, եւ Աստուծոյ սուրբերուն նկարագրութիւնը եւ պատկերացընելը մեղք չէ՛, այլ մեղք եւ կռապաշտութիւնը այն է, որ Աստուծոյ մեծութիւնը եւ ամենակարող զօրութիւնը ուրանալով կամ չը ճանչնալով, նիւթական բաներու Աստուածային երկրպագութիւն կուտան, կամ արարիչը կը ձգեն, արարածները կը պաշտեն: Ողջմտութեամբ կարդա՛ Աստուածաշունչ սուրբ գիրքը, նայէ՛ Աստուած կարգիլէ կըսես ձեռագործ կերտուածները, եւ ձուլածո պատկերները, որ իրեն մեծութիւնը եւ ճշմարտութիւնը կը խափանեն՝ եւ կռամոլութիւն եւ սուտ Աստուածներ կը հրնարեն:

Բայց տե՛ս, երբոր այն ձեռագործ ճարտարութիւնը եւ ձուլածո պատկերները՝ որոնք իրեն Աստուածային մեծութիւնը՝ բարութիւնը՝ եւ ողորմութիւնը պիտի յայտնէին, անոնց համար կը հրամայէ շինելու եւ մարդկանց աչաց առջեւ ներկայացունելու, որոնցմով Աստուածապաշտութեան գաղափարներ ստանան մարդկային միտք, եւ անոնք յիշեցուցիչ եւ ներկայացուցիչ ըլլան Աստուածային մարդասիրութեան շնորհքնե-

րուն՝ եւ բարիքներուն: Ինչպէս տապանակ
 ուխտիին շինութիւնը, որուն վրայ ոսկեծոյլ
 քերօքէներ կային թեւերնին տարածուած.
 եւ այսպէս կը հրամայէ Աստուած Մովսէսի.
 «Արասցես Տապանակ վկայութեան՝ յան-
 փուտ փայտից, յերկուց կանգնոց եւ ՚ի կի-
 սոյ զերկայնութիւն նորա՝ եւ ՚ի կանգնոյ եւ
 ՚ի կիսոյ զլայնութիւն նորա. եւ ՚ի կանգնոյ
 եւ ՚ի կիսոյ զբարձրութիւն նորա: Եւ պա-
 տեսցես զնա ոսկուով սրբով ներքոյ, եւ ար-
 տաքոյ օձցես զնա, եւ արասցես նմա ծնօտս
 ոսկիս շուրջ շրջանակաւ... Եւ արասցես եր-
 կուս Քրօքէս ոսկիս ճախարակեայս. եւ դի-
 ցես զնոսա ՚ի վերայ երկոցունց կողմանց քա-
 ւութեանն: Եւ լինիցին Քրօքէքն մի ՚ի մի-
 ոջէ կողմանէ, եւ մի ՚ի միւսմէ կողմանէ քա-
 ւութեանն: Եւ արասցես երկուս Քրօքէս
 ՚ի վերայ երկոցունց կողմանց նորա, եւ իցէ
 Քրօքէիցն տարածեալ զթեւս իւրեանց ՚ի
 վերուստ. եւ հովանի ունիցին թեւօք իւր-
 եանց ՚ի վերայ քաւութեանն, եւ երեսք նո-
 ցա յանդիման միմեանց. զի ՚ի քաւութիւնն
 հայիցին երեսք Քրօքէիցն. եւ դիցես զքա-
 ւութիւնն ՚ի վերայ Տապանակին ՚ի վերուստ
 կողմանէ».
 Եւ. 10, 11, 18, 20:

Ահա տե՛ս, որ ո՛չ միայն այս Տապանակին

ձեռակերտ շինութիւնը Աստուծոյ ամենա-
 կալ կարողութիւնը կը յիշեցունէր ժողո-
 վրդոց, այլ նաեւ այն քերօքէից ձեռակերտ
 եւ ձուլածու պատկերները՝ Աստուծոյ սքան-
 չելի մեծութիւնը եւ զօրութիւնը յայտնի
 կընէին կռապաշտներուն առջեւ. ինչպէս կը
 պատմէ սուրբ գիրքը. “Եւ առաքեաց ժողո-
 վուրդն ՚ի Սելով, եւ առին անտի զՏապա-
 նակ ուխտի տեառն զօրութեանց՝ որ նստի
 ՚ի Քրօքէս. եւ երկոքեան որդիքն Հեղեայ
 Ուինի եւ Փենեհէս ընդ Տապանակի ուխտի
 Աստուծոյ գնացին: Եւ եղեւ՝ իբրեւ եկն
 Տապանակ ուխտի տեառն ՚ի բանակն, աղա-
 դակեաց ամենայն իսրայէլ մեծածայն. եւ
 հնչեաց երկիրն: Եւ լուան այլազգիքն զբար-
 բառ աղաղակին. եւ ասեն այլազգիքն. զի՞նչ
 է բարբառ մեծի աղաղակին այնորիկ ՚ի բա-
 նակի Եբրայեցւոցն. եւ գիտացին՝ եթէ Տա-
 պանակ տեառն եկն ՚ի բանակն: Եւ երկեան
 այլազգիքն՝ եւ ասեն. այն Աստուածք նոցա
 եկին ՚ի բանակն. ապրեցո՛ր զմեզ տէր այսօր.
 վա՛յ մեզ զի ո՛չ եղեւ մեզ այսպիսի յերէկն
 եւ յեռանդն: Վա՛յ մեզ՝ եւ ո՞ ապրեցուցէ
 զմեզ ՚ի ձեռաց Աստուծոց հզօրացն այնո-
 ցիկ. այն Աստուածք են որ հարին զԵգիպտոս
 ամենայն հարուածովք, եւ յամենայն յա-

նապատին», ա ԹՊԳ. դ. 4. 8:

Կը հարցունեմ այս տեղս Աստուածաշունչ կարդացողներուն. որուն միջոցաւր Աստուած կործանեց այն մեծ դրոշուած Դագոնայ կուռքին պատկերը, որ կը պաշտէին Ազովտացի կռապաշտները. չէ՞ որ տապանակ ուխտին միջոցաւր եղաւ այն հրաշքը. ինչպէս կը պատմէ Աստուածաշունչ գիրքը. «Եւ կանխեցին Ազովտացիքն ՚ի վաղիւ անդր՝ եւ մտին ՚ի տուն Դագոնայ՝ եւ տեսին զԴագոն կործանեալ ՚ի վերայ երեսաց իւրոց ՚ի գետնի առաջի տապանակին Աստուծոյ... Եւ եղեւ իբրեւ կանխեցին ընդ առաւօտն ՚ի վաղիւ անդր, եւ ահա՛ Դագոն կործանեալ կայր ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի տապանակի ուխտին տեառն».

ա ԹՊԳ. ե. 3. 4: Կը տեսնա՞ս մի, երկուքն ալ ձուլածու եւ ձեռակերտ շինուած են. կուռքն Դագոնայ, եւ տապանակ ուխտին քերօբէներուն պատկերներովը զարդարուած: Բայց Դագոնի պատկերը մարդոց առջեւ կռապաշտութիւնը կերեւցընէր, իսկ տապանակ ուխտին իրեն ունեցած քերօբէներուն պատկերովը Աստուծոյ ամենակալ եւ ամենակարող զօրութիւնը կը նկարագրէր: Նայէ՛ ՚ի միտ ա՛ն Պօղոս առաքե-

լոյն գովութիւնը, որ այն քերօքէից պատկերներուն կուտայ. «Եւ ՚ի վերայ նորա քերօքէքն փառաց՝ որք հովանի ունէին ՚ի վերայ քաւութեանն», Եբր. թ. 5: Քերօքէքն փառաց ըսելով՝ յայտնի կընէ որ այն քերօքէից պատկերները եւ տապանակ ուխտին՝ Աստուծոյ սքանչելի մեծութեան փառքը առաջի մտաց մարդկան կը բերէին. որով Աստուածապաշտները միշտ Աստուծոյ խնամքը եւ մարդասիրական ողորմութիւնը կը յիշէին:

Հիմա դուն այս տեղս խորհրդածութիւն մը ըրէ՛՝ բաղդատէ՛ մէկզմէկու հետ Աստուծոյ երկու կերպ ամենագոյու եւ անժխտելի հրամանը, որ ըրաւ Մովսէս մարգարէին. առաջին հրամանն էր այս. «Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան», Ելբ. ի. 4: Իսկ երկրորդ հրամանը. «Արասցես՝ երկուս քերովբէս ոսկիս ճախարակեայս», Ելբ. իե. 1 8: Կը գտնաս մէկզմէկու ներհակ. «Մի՛ արասցես», եւ «Արասցես», բայց թէ որ ողջամիտ խորհրդով մը տածես այս երկու կերպ հրամանին վրայ, շուտով կը համոզուիս ըսելու, որ այն առաջին աստուծոյ հրամանը կարգիլէր կռապաշտութեան պատկեր շինելը, եւ աստուծոյ տալու երկրպագութիւնը այն շինծու կերպա-

րանքներուն տալը. «Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան»: Իսկ երկրորդ հրամանը կը պատուիրէ իրեն երկնային պաշտօնեայններուն, այսինքն քերօբեներուն պատկերները ոսկիէ շինելու, եւ ժողովրդոց աչաց առջեւը ներկայացունելու, որոնցմով աստուծոյ փառքը եւ մեծութիւնը կը յայտնուի. վասն որոյ կը հրամայէ. «Արասցես տապանակ վկայութեան . . . արասցես երկուս քերովքէս ոսկիս ճախարակեայս», եւ այլն:

Ողջամիտ եւ ուղղափառ քրիստոնեայնները երբոր սրբազան պատկերները կը տեսնան, կամ աստուծոյ սքանչելի մարդասիրութեան եւ ամենակարող զօրութեան գերազանցութիւնը կը յիշեն, եւ կամ աստուծոյ հաճոյացեալ սուրբերուն ստացած շնորհքներուն՝ եւ երանական փառքերուն գերազանցութիւնը իրենց մտքին առջեւ կը բերեն, արդարեւ բարեպաշտութեան յայտնի նշան. քանզի ուղղափառ Քրիստոնեաներուն սրբազան պատկերաց յարգութիւն տալը, եւ անոնց առջեւ Աստուծոյ մեծութիւնը եւ գերազանցութիւնը յիշելով՝ Աստուծոյ երկրպագութիւն ընելը՝ Աստուծոյ հաճելի պաշտօն է, եւ ճշմարիտ Աստուածապաշտութեան նշան:

Ինչպէս Յակոբ նահապետը երբոր աստուծոյ այցելութեան խնամքը, եւ գերազանց բարութեան շնորհքը վայելեց՝ դէպ 'ի միջագետս ասորւոց որ կերթար, արձան մը կանգնեց՝ եւ իւղով օծեց, եւ անոր առջեւը Աստուծոյ ուխտ ընելով, այն արձանը Տուն Աստուծոյ կոչեց. ինչպէս կը պատմէ սուրբ գիրքը. «Եւ յարեալ Յակոբ ընդ առաւօտըն, եւ էառ զվէմն զոր եդ սնարս իւր, եւ կանգնեաց զնա արձան, եւ էարկ իւղ 'ի գլուխ նորա . . . եւ ուխտեաց Յակոբ ուխտ... եւ վէմս զոր կանգնեցի արձան, եղիցի ինձ տուն Աստուծոյ». ԾՆՆ. իր. 18. մինչեւ 'ի 22 համարն կարդա՛:

Տեսա՞ր մի՞ Յակոբ նահապետը իրեն աստուածպաշտութեան նշան այն արձանը կանգնեց, եւ միւս կռապաշտութեան արձաններէն որոշելու եւ զատուելու համար օծեց իւղով. ի՞նչ կըսես, Յակոբ նահապետին այս գործը աւելորդապաշտութի՞ւն էր, թէ աստուածպաշտութիւն: Հարկաւ պիտի ըսես, թէ Աստուածպաշտութիւն է եւ ո՛չ աւելորդապաշտութիւն. Յակոբ նահապետ իրեն դիտաւորութիւնը ուղղելով առ Աստուած՝ այն արձանը որ յառաջ իրեն գլխոյն բարձ ըրած էր, Տուն աստուծոյ կը կոչէ, եւ ասանկ մեծ

յարգական անուն տալով կը մեծարէ այն վէմը, որ ընդ սնարս իւր ունեցաւ. ԾՆՆ. իր. 11:

Միտքերնիս բերենք այս տեղս սուրբ գիրքին տուած պատկերաց ապացոյցներուն մէկ ուրիշն ալ. երբոր հրէից ազգը ապերախտ գտնուեցաւ աստուծոյ այնչափ բարերարութեանցը, քիչ մը հացի եւ ջուրի կարօտութիւն ունենալնուն համար սկսան մէջերնին տրտունջ ընել՝ բամբասել զԱստուած եւ զՄովսէս: Աստուած ալ անոնց պատիժ տրվաւ նոյն անապատին մէջ այն կոտորիչ օձերը, որոնց թիւնալիր խայթոցներէն շատերը մեռան: Ուստի այս արագահաս պատիժէն զգաստանալով՝ երբոր մնացեալ ժողովուրդը մեղայի եկան, ու խնդրեցին մարգարէէն՝ որ աղօթք ընէ առ Աստուած, որ ողորմի իրենց. լսեց Աստուած Մովսիսի աղօթքը, ու հրամայեց, որ օձի պատկեր մը շինէ պղնձաձոյլ, եւ մէկ փայտեայ նշանակի մը վրայ զետեղելով՝ բարձրացունէ, որ ամեն օձահարները անոր նային, ու անով բռժկուին, ինչպէս գրուած է. «Եւ ասէ տէր զՄովսէս, արա՛ դու քեզ օձ, եւ դիցես զնա՛ ի վերայ նշանակի. եւ եղիցի յորժամ հարկանիցէ օձ զմարդ, ամենայն օձահար՝ որ

տեսանիցէ զնա՝ կեցցե։ Եւ արար Մովսէս
 օձ պղնձի՝ եւ կացոյց զնա ՚ի վերայ նշանա-
 կին, եւ լինէր՝ յորժամ հարկանէր օձ զմարդ,
 հայէր ընդ օձն պղնձի, եւ կեայր»։ Թ՝-ոց.
 Իա. 8. 9:

Ի՞նչ կըսես ո՛վ բարեմիտ ընթերցող, իրա-
 տունք շունէ՞ր մի երանելի մարգարէն Մովսէս
 համարձակելով ըսել աստուծոյ. դու՛ տէր
 Աստուած ամենակալ, դու էիր, որ կանխաւ
 պատուիրեցիր ինձի սաստիկ. «Մի՛ արասցես
 դու քեզ կուռս ըստ ամենայն նմանու-
 թեան»։ հիմա կը հրամայես շինել ձուլեալ
 պատկեր մը ըստ նմանութեան օձի. ու՞ր մնաց
 այն առաջին հրամանդ։ Մի թէ այս յան-
 դգնութի՞ւն կըլլար Մովսէսի երբոր ըսելու
 ըլլար. բայց գիտցաւ Մովսէս մարգարէական
 ոգւով, որ այն պղնձաձուլ օձակերպ պատկերը
 խորհրդաւոր նշան մը է Աստուծոյ մարգասի-
 րական գթութեանը եւ ընդհանուր հոգւոց
 ազատութեանը, որ պիտի կատարուէր ՚ի Գող-
 գոթայ կամաւոր խաչելութեամբ կենարարին
 մերոյ Յիսուսի։ Ահա՛ այս մեծ եւ սքանչելի
 խորհրդոյն տիպ եւ նմանութիւնն էր, զոր եւ
 ինքն Քրիստոս հաստատեց ըսելով. «Եւ որ-
 պէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի,

նոյնպէս բարձրանալ պարտ է որդույ մարդոյ», ՅօՒ. գ. 14:

Կարծեմ՝ որ համոզուեցար, թէ աստուածահաճոյ պատկերաց յարգը որոշուած է կռամոլութեան անարգ պատկերներէն. վասն զի այլ է աստուածահաճոյ սուրբ պատկերաց խորհրդաւոր նկարագրութիւնը, եւ այլ է կռապաշտից սնոտի կուռքերը:

Ուրեմն Եկեղեցին Քրիստոսի որչափ սըրբոց պատկեր ունի, որ հին եւ նոր օրինաց մէջ յայտնըված են, եւ կամ Յիսուսի փրկչին մերոյ մարդեղութեան եւ հրաշագործութեան նկարագրութիւնները, եւ անոնց ջերմեռանդըն յարգութիւն կուտան բարեպաշտ ժողովուրդք Քրիստոսի՝ ուղիղ դիտաւորութեամբ երկրպագութեան եւ փառաբանութեան պաշտօն նուիրելով Աստուծոյ, ինչպէս կը գրէ սուրբ Ներսէս շնորհալին. «Պա՛րտ է արարածոցս Արարչին միայնոյ եւ փրկչին նրկարագրեալ կերպարանի զերկրպագութիւնն ընծայել. իսկ զմտերիմ ծառայիցն աստուծոյ զպատկերս եւ զանուանս՝ որ են բնութեամբ ծառայակիցք մեզ, պատուել եւ յարգել՝ ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն, եւ զառաքինութեան նոցին զվարս՝ ՚ի տեսլենէ պատկերի իւրոցն իւրաքանչիւր պատկերացն՝

օրինակ առնուլ մեզ բարեաց, զմտաւ ածելով զզանազան ճգնութիւն նոցա որ վասն ճշմարտութեանն, եւ որ անարգէ զնոսա՝ ոչ զնիւթ պատկերին համարեսցի անարգել, այլ զայն՝ յորոյ անուն պատկերն է նկարագրեալ, եթէ՛ զտեառն եւ եթէ՛ զծառայից նորա».

ՌնդԸ. Էր. 87:

Գիտեմ՝ որ պիտի ըսեն, եւ շատերուն բերնէն ալ լսեր եմք, թէ սուրբերուն պատկերները իրենց վարուցը պատմութիւններէն առնելով կը նկարագրեն, եւ Յիսուսի Քրիստոսի տնօրինական եւ զանազան սքանչելի հրաշագործութեան պատկերները նոր կը տակարանէն առնելով կը գծագրեն. բայց հօր Աստուծոյ եւ սուրբ Հոգւոյն Աստուծոյ պատկերը ու՞րկէց առնելով կը նկարագրեն: Զէ՞ որ այս խօսքերը շատ անգամ կը խօսին պարզամիտներուն, եւ շատերուն գայթակղութիւն կուտան ըսելով. սուրբ գիրքը կը գրէ, Աստուած անտեսանելի է մարդկային աչաց տեսութեան. ինչպէս ըսաւ Աստուած Մովսէս մարգարէին. «Ո՛չ կարես տեսանել զերեսս իմ, զի ո՛չ տեսանէ մարդ զերեսս իմ եւ ապրի»,. Ելից. 14. 20: Արդ՝ ու՞մ նմանեցուցիք զտէր, եւ որո՛ւմ նմանութեան նմանեցուցիք զնա: Մի թէ պատկե՞ր կոփ-

եաց զնա հիւսն, կամ ոսկերի՞չ ձուլեաց զոսկի, եւ պատեաց զնա ոսկւով, ՚ի նմանութիւն պատկերի կերպարանեաց զնա»,. Եւայ. Խ. 18. 19: “զԱստուած ո՛չ ոք ետես երբէք, բայց միածին Որդի՛ որ ՚ի ծոց հօր, նա պատմեաց»,. ՅօՒ. ա. 18. ա ՏԻԿ. զ. 16: ա ՅօՒ. դ. 12:

Արդ՝ գիտցի՛ր որ Հայոց սուրբ Եկեղեցին ալ համեմատ սուրբ գրոց զԱստուած կը խոստովանի անտեսանելի մարմնաւոր աշաց, վասն որոյ կը գրէ սուրբն Սահակ Դենշապուհ պարսից իշխանին. “Արարիչն ամենեցուն աներեւոյթ է ՚ի մարմնաւոր աշացս, այլ մտաց իմանի զօրութիւն նորա»,. Եւ ՚ի շարականի երգէ. «Առանց որքանութեան, առանց որպիսութեան, առանց տեսութեան»: Եւ սուրբ Գրիգոր նարեկացին ՚ի գումարք խմբիցն գրէ. «Աշաց մարդկութեան զանտեսն ՚ի մարմնի ետուր նկատել»:

Այս խոստովանութիւնը համեմատ սուրբ գրոց տալով, սուրբ Եկեղեցին Հայոց կը մերժէ շարայոյզ աղանդը Ենոմեանց եւ Այերեանց, որք ՚ի դ դարուն երեւեալ հնարեցին եւ համարձակեցան ըսել հակառակ սուրբ գրոց բարբանջելով, թէ բնական տեսութիւնով կը տեսնուի ու կը ճանչցրվի Աստուծոյ

անքննելի եւ անտեսանելի իսկութիւնը, եւ կը գիտցըվի Աստուծոյ ինչ ըլլալը: Եւս կը հերքէ Հայոց Եկեղեցին Բեգուարտեանց եւ Բեգունեաց աղանդը, որ ժդ դարուն երեւեցան, եւ կը շաղփաղփէին՝ թէ այս աշխարհիս մէջ հնարաւոր է մարդկան անմեղանշական ըլլալու, եւ բնական տեսութիւնով դէմ յանդիման տեսնալ Աստուծոյ տեսութիւնը՝ ամենեւին կարօտ չըլլալով Աստուածային գերբնական փառաց լուսոյն, որ այս ամենքը հակառակ սուրբ գրոց է. «ի քէն է տէր աղբիւր կենաց եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս»։ Սաղ. 15. 10: «Ամենայն ինչ տուաւ ինձ՝ ի հօրէ իմմէ, եւ ո՛չ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ո՛չ հայր, եւ ո՛չ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ո՛չ որդի, եւ ում որդին կամիցի յայտնել»։ Մատթ. Ժա. 27:

Ահա՛ այս բացայայտ եւ անժխտելի վկայութիւններով կը հաստատի, որ անհնար է մարդկային մարմնաւոր աչօք տեսանել Աստուծոյ անշափ մեծութիւնը դէմ յանդիման, եւ անոր պատկերը նկարագրել, որ հանդերձեալ յաւիտենական կենաց մէջ պիտի տեսնան եւ վայելեն սուրբ եւ երանեալ հոգիները լուսով փառացն Աստուծոյ: Իսկ այս անցաւոր եւ մահկանացու կենաց մէջ յայտ-

նեցաւ աստուծոյ սքանչելի տեսութիւնը սուրբերուն՝ եւ եկեղեցւոյն պաշտօնեայնե-
 րուն, մասնաւոր եւ անմիջական տեսութեամբ, որչափ կը տանէր մարդկային աշաց զօրու-
 թիւնը, եւ բաւական կըլլային նկատելու Աստուածային փառաց յայտնութիւնը լու-
 սով երկնաձիր շնորհացն: Ահա՛ այս մտօք է Պօղոս առաքելոյն տուած վկայութիւնը ըսելով. «Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայե-
 լի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման, այժմ խելամուտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայն-
 ժամ գիտացից՝ որպէս եւ նայն ծանեաւ գիս»․ ա Կորն, ժգ. 12: Եւ սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր համեմատ սրբազան առա-
 քելոյն քարոզեց մեզի. «Զի անբաւ է մար-
 դոյ տեսանել զԱստուած գոյիւ իւրով՝ որ-
 պէս մոմ զհուր, զի եթէ լերինք ոչ կարեն տեսանել զնա, զի յորժամ հայեցեալ ընդ նոսա՝ հալեսցին . . . ապանա ըստ մերոյ փո-
 քրկութեանս երեւի, որպէս զի մի տարրական արարածք կիզցին յահէ փառացն . . . եւ յե-
 րեւիլն իւրում արդարոցն՝ զահն իւր ՚ի յին-
 քըն ամփոփէր, եւ մարդատեսիլ եւ հրեշ-
 տականման երեւէր, մտահաս ըստ հանդուր-
 ժելոյ աշաց: Ո՛չ արարածք կարեն քննել զարարիչն, եւ ո՛չ զանգուած զզանգիչն գի-

տէս»։ ԱԳՊԻ. Եր. 125:

Այնպէս է նէ Աստուծոյ զանազան տեսութիւնը յայտնուէր է ժամանակ ժամանակ Աստուածահաճոյ սուրբերուն հին օրինաց մէջ, եւ սուրբ Հոգին Աստուած ալ նոր շնորհական օրինաց մէջ յայտնեցաւ՝ ի Յորդանան՝ տեսլեամբ աղանւոյ, եւ սուրբ Սիօն վերնատունին մէջը իբրեւ հրեղէն լեզու յայտնեցաւ սրբազան դասուց Առաքելոց։
Ղու. գ. 22: Գործ. բ. 3:

Թո՛ղ այս տեղս ստրջանալով՝ ունկնդիր ըլլան նորազանգք, որ եւ տետրակներով կուզեն համոզել տկարամիտները հակառակ սուրբ գրոց խօսելով, եւ կը գրեն իրենց հեղինակէն առնելով, որ «Աստուած չէ երեւցած մէկու մը, ի՞նչպէս Աստուծոյ նմանութիւն եւ կերպարանագրութիւն կուտան պատկերներու մէջ», թո՛ղ լսեն Յսայի մարգարէին՝ որ յայտնի կը խօսի. «Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ, եւ լի էր տունն փառօք նորա: Եւ Սերօբէքն կային շուրջ զնովաւ . . . Եւ ասեմ, վա՛յ է ինձ՝ ես այր տառապեալ՝ զիա՛րդ կամըս հիացեալ, զի մարդ եմ եւ պիղծ շրթունս ունիմ, եւ ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես, եւ զՏէր զօրութեանց

տեսի աչօք իմովք»։ Եսայ. գ. 1, 2, 5։ Թո՛ղ կարդան Դանիէլ մարգարէն. «Տեսանէի՝ մինչեւ ավթոռք անկանէին, եւ Հինաուուրցն նստէր, հանդէրձ նորա սպիտակ իբրեւ ըզ- ձիւն՝ եւ հեր գլխոյ նորա իբրեւ զասր սուրբ. ավթոռ նորա իբրեւ զբոց հրոյ. անիւք նորա իբրեւ զհուր բորբոքեալ . . . տեսանէի ՚ի տեսլեան գիշերոյ՝ եւ ահա՛ ընդ ամպս երկ- նից իբրեւ Որդի մարդոյ գայր, եւ հասանէր մինչեւ ՚ի Հինաուուրցն, եւ մատուցաւ ա- ռաջի նորա»։ Դան. է. 9։

Ահա՛ այս սուրբ գրոց վկայութիւններով կը հերքուի նորադանդից ունայնաբան վար- դապետութիւնը. վասն զի Քրիստոսական սուրբ Եկեղեցին սուրբ գիրքերէն առնելով Աստուածային յայտնութիւնը իբրեւ սկզբնա- տիպ կը նկարագրէ սրբազան պատկերներու մէջ. եւ այն պատկերները ջերմեռանդու- թեամբ կը յարգեն բարեպաշտ քրիստոն- եայք, եւ անոնց առջեւ միտքերնին կը վե- րացընեն առ Աստուածային ճշմարտութիւնը. եւ երկրպագութիւն կընեն Աստուծոյ սրտի մտօք աղաղակելով Դաւիթ մարգարէին պէս. «Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բը- նակեալդ ես ՚ի յերկինս»։ Սաղ. ճիբ. 1։

Արդ՝ վերջավորեմք այս գլխուս մէջ բա-

ւական համարելով առ այժմ ճշմարտութեան իրաւամբք եւ սուրբ գրոց անժխտելի վկայութեամբք խօսածնիս եւ գրածնիս ընդ դէմ զարհուրելի զրպարտութեամբ՝ եւ ոխերիմ թշնամութեամբ յանիրաւի բամբասողաց զանմեղ եւ զանարատ Եկեղեցին մեր, ըստ մարգարէին Դաւթի. «Ահա՛ մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց, պատրաստ արարին զնետս ՚ի կապարճս՝ ձգել ընդ խաւար այնոցիկ՝ ոչք ուղիղ են սրտիւք», Սաղ. Ժ. 2:

Ահա ասոնք են, որ բազմատեսակ տետրակներով եւ բազմաձախ դրամ վատնելով ընդ ծով եւ ընդ ցամաք քարոզիչներ կը խըրկեն ՚ի քաղաքս եւ ՚ի գիւղս, որ Հայոց Եկեղեցւոյն պարզամիտ մանկունքները գայթակղեցընելով բաժանեն ՚ի հոգեսնունդ գրկաց նորին, եւ հուսկ ապա իւրացուցանեն եւ սեպհականեն իբրեւ ժողովուրդ իւրեանց: Մէկ կողմը կը քարոզէ եւ կը յորդորէ քաղցրաբանութիւնով միայն հոովմէական Եկեղեցւոյն հպատակ ըլլալու, եւ անոր գահակալը ընդհանուր Եկեղեցւոյն Քրիստոսի գլուխ ճանչնալու, եւ անոր միայն հնազանդելու, խոստովանելով զնա իբրեւ անսրխալ վճռահատու եւ տէր ամենայն պատրիարքաց, իսկ միւս կողմը խաբէական ձեռ-

նարկութիւններով՝ աւետարանական բառերով որոգայթ լարելով, նորաղանդից ինքնահնար վարդապետութեան հետեւեցուցանել կը ջանայ:

Ո՛վ սոսկալի առիթ գայթակղութեան, որ կուտան քրիստոնէական ճշմարտութեան լուսաշաւիղ ճանապարհին մէջ բարւոք ընթացողներուն, միտ դիր՝ տե՛ս մէկ կողմը ըստ քմաց մեկնելով սուրբ գրոց վկայութիւնները, կը ջանան հռովմէական Եկեղեցւոյ գահընկալին արտաքոյ կանոնի չափազանց արտօնութիւններ տալու, եւ զայն ճանչցունելու ամեն հաւատացեալներուն իբրեւ հեղինակ հաւատոյ՝ եւ տարածող քրիստոնէական վարդապետութեան, եւ արտաքոյ այսր ճանաչման և խոստովանութեան փրկութիւն չըլլալու պայմանաւ, տե՛ս ՚ի տետրակն անուանեալ «Իս-անո-թի-ն ո-ղղափառ Ըս-արոյ» տպեալ ՚ի Հո-ովմ, Երեւ 17—21: Ասով յայտնի կըլլայ՝ որ Պողոս սրբազան առաքելոյն յանդիմանութիւնը վրանին առած կըլլան, որ երբեմն Կորնթացւոց Եկեղեցւոյն իբրեւ յանդիմանութիւն կը գրէր, որ Պօղոսի, եւ անոր աշակերտին Ապօղոսին, եւ Կեփային, այսինքն Պետրոս առաքելոյն անուններովը կը պարծէնային, մեղադրելով անոնց այս դրութիւնը,

կը գրէր. «Եւ արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ ասէ, ես Պօղոսեան եմ, եւ միւսն՝ եթէ ես Ապօղոսեան. եւ միւսն՝ եթէ ես Կեփայեան, եւ միւսն՝ եթէ ես Քրրիստոսեան: Իսկ արդ՝ բաժանեալ ի՞նչ իցէ Քրիստոս. միթէ Պօղոս ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն Պօղոսի՞ մկրտեցարուք». ա Վորն. ա. 12. 13:

Գանք միւս կողմին տուած նորօրինակ գայթակղութիւններուն, որ իբրեւ նոր հեղինակ քրիստոնէական ճշմարտութեան կը ձեւանան. բայց բուն իսկ քրիստոսական խորհուրդներուն ներքին զօրութիւնները եւ շրնորհքները կ' ուրանան: Եւ սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի հին՝ խորհրդաւոր՝ եւ առաքելական անգիր աւանդութիւնները, որ ամեն ուղղափառ Քրիստոնեայ ազգաց Եկեղեցին՝ ճշմարիտ աւանդապահ ըլլալով պինդ հաստատուն ունին եւ կը պահեն, ասոնք մերժելով կը հերքեն, չ' համոզուելով Պօղոս առաքելոյն գրութիւններէն, որ յայտնի կը գրէ Եկեղեցւոյն Թեսաղոնիկեցւոց եւ Կորնթացւոց. «Այսուհետեւ եղբարք՝ հաստատուն կացէ՛ք, եւ պինդ կալարու՛ք զաւանդութիւնսն՝ զոր ուսարուք, եթէ բանիւ եւ եթէ՛ թղթով մերով». բ ԹԷ. բ. 14: ա

Աորն. ժա. 2. 34:

Չեն համոզուիր եւ Յօհաննէս աւետարանչին խօսքէն. «Բայց է եւ այլ ինչ բազում, զոր արար Յիսուս. զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ եւ ոչ աշխարհըս բաւական էր տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին». Յօժ. իա. 25: Եւ մանաւանդ սուրբ աւետարանին բացայայտ նկարագրական միտքերը այլաբանութիւն է ըսելով կայլայլեն, եւ աստուածաշունչին մէջէն իրենց հեղինակներուն նորահնար վարդապետութեանը համեմատ չեկած խօսքերը հանելով սուրբ գիրքէն, բնագրին մէջ չի կար կըսեն:

Եւ օրէ օր տեսակ տեսակ տետրակներով սուրբ Աւետարանին ճշմարիտ վարդապետութիւնները խափանելու՝ եւ այլայլելու կը ջանան. որով ուղղափառ քրիստոնէից մէջ ալ գայթակղութիւն եւ շփոթութիւն ձգելու կ'աշխատին: Ահա՛ ասոնց պէս էին Պօղոս առաքելոյն ժամանակը Գաղատացւոց Եկեղեցւոյն մէջ յայտնուած անձինքը. որ աւետարան կը քարոզեմք ըսելով՝ աւետարանի քարոզիչ կը ձեւանային՝ եւ կը ջատագովէին սուրբ Աւետարանը. բայց՝ ի ներքուստ սըրտովնին եւ մտքովնին սուրբ Եկեղեցւոյն ուղղափառ հաւատոյ պարզութիւնը պղտորելու

ետեւէ էին: Ասոր համար Պօղոս առաքեալ կը գրէ նոյն Գաղատացւոց Եկեղեցւոյն, զարմանալով անոնց փոփոխամիտ ըլլալուն վրայով. «Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ՝ որ կոչեացն զձեզ ՚ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ աւետարան, որ ո՛չ գոյ այլ, բայց եթէ իցեն ոմանք որ խոռվեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին շրջել զաւետարանն Քրիստոսի: Այլ եթէ մեք՝ կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի» . Գաղ. ա. 6. 7. 8: Կրնայ ըլլալ, որ այս շարամիտ թշնամիները սոյն գրուածոցս մէջէն ոմանց բառերու կամ իմաստներու ալ ծուռ եւ օտար մեկնութիւններ տալով, մոլորական միտքեր հանեն, զոր օրինակ, Սրբոց համար գրածնիս ՓԼՌՆԿԻՅ ՊԵՏՌՆԿԻՅ բառերը՝ զոր մենք ուղղափառական մտօք ըստ Սրբազան Առաքելոց եւ ըստ սրբոց հարց «ՔՐԻՍՏՈՍԻ ՓԱՌԱՅՆ ՀԱՂՈՐԴ» նշանակութեամբ դրած եմք, անոնք

* Հոռով. Ժե. 7: ա. պեդ. Ե. 10 11: Է. պեդ. ա. 4: ա. յով. 4. 2:

«Եւ այդ են սքանչելիք աստուծոյ սիրոյն, զի զշնորհաց որդիսս զմեզ՝ պատուակիցս եւ փառակեցս եւ ժառանգորդս արար բնութեամբ որդւոյն» ա. յով. Ծառ. դ:

դարձը-նեն էԱԿԻՅ քառի մտքով մեկնութիւն տան, յորմէ ծուռ եւ մոլորական իմաստ կելլէ, որ հեռի է բլորովին՝ ի մէնջ եւ յամենայն ուղ-ղատեսից, որոնք ուղիղ մտօք կիմանան սուրբ գրոց եւ Սրբազան հարց գրուածները:

Արդ՝ Եկեղեցին Հայոց այս երկու կողմէն զինքը անարգողներուն եւ հալածողներուն մէջը պաշարուած ըլլալով, Երեմիայ մարգարէին պէս կը բողոքէ առ Աստուած հաստատ յուսով համբերատար ոգւով. «Դու գիտես տէր, յիշեա՛ զիս, այց արա՛ ինձ. անարատ արա՛ զիս ՚ի հալածչաց իմոց, եւ մի՛ յերկարեր վասն իմ, ծանի՛ր ո՛րչափ առի վասն քո նախատինս»։ Երէմ. Ժե. 15:

Ի վերայ այսր ամենայնի Հայոց Եկեղեցին այս մխիթարութիւնը ունի. որ ամենեւին յայտնի բողոք մը չընէր առ մարդ, եւ խռովեալ հոգի մը չունի, այլ միշտ անսասանելի հաստատուն կը մնայ իրեն ուղղափառ հաւատքին վրայ, եւ հաստատուն յուսովը՝ իրեն առաքելական եւ Աստուածահաճոյ հանդիսարանը կը յայտնէ՝ սպասելով ակնկալեալ ժառանգութեան քրիստոսական երանութեանն, ըստ այնմ. «Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ա-

սիցեն զամենայն բան շար զձէնջ սուտ վասն իմ: Յնծացէ՛ք եւ ուրա՛խ լերուք. զի վարձք ձեր բազում են յերկինս», Մատթ. ե. 11. 12:

Այս երանաւէտ յուսով Հայոց Եկեղեցին իրեն համբերութեան Աստուածահաճոյ հանդէսը կը յայտնէ ըստ Պօղոսի Սրբազան Առաքելոյն. «Պարծիմք յուսով փառացն Աստուծոյ. եւ ո՛չ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ՚ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս. յոյս ո՛չ երբէք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ՚ի սիրտս մեր, ՚ի ձեռն Հոգւոյն սրբոյ որ տուաւ մեզ». Հռոմ. ե. 2. 3. 4. 5: «Գիտասջի՛ք զի հանդէս ձերոց հաւատոցն յօրինեալ գործէ զհամբերութիւն: Իսկ համբերութիւն գործ կատարեալ ունիցի. զի իցէք ողջանդամք եւ կատարեալք, եւ ո՛չ իւրիք նուազեալք». Յակ. ա. 3. 4:

Ուրեմն թող գան մեր անարատ Եկեղեցւոյն վրայ անարգանք եւ հալածանք ասկից ու անկից, բայց որչափ որ գան, չեն կրնար բնաւ խանգարել եւ կործանել մեր Քրիստոսական ուղղափառ հաւատոյ ողջմտութեան հանդիսարանը, որ ըստ Քրիստոսեան բանին անշարժ հաստատեալ կայ ՚ի վերայ վիմի ուղ-

դափառ դաւանութեան, եւ ոչ ՚ի վերայ աւազոյ այլ եւ այլ մարդկահնար կարծեաց եւ աղանդից. ըստ այնմ թէ «Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ վիմի: Իջին անձրեւք՝ եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին զտունն. եւ ո՛չ կործանեցաւ. քանզի ՚ի վերայ վիմի հաստատեալ էր»։ Մատթ. է. 24. 25:

Վ Ե Ր Զ




Կ Ն Ի Ք ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻՍ



“Գրեալ է ՚ի մարգարէս, եւ եղիցին ամենեքեան ուսեալք յաստուծոյ. ամենայն որ լսէ ՚ի հօրէ՛ եւ ուսանի, գայ առ իս,» Յօհ. գ. 45:



“Փութասջի՛ր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան: Այլ ՚ի պղծոց եւ ՚ի սնոտի խօսից մերժեսջի՛ր. զի առաւել յառաջ գայցեն յամբարըշտութիւնս, եւ բանք նոցա իբրեւ զքաղցկեղ ճարակ գտանիցեն,» ք Տիմ. բ. 15—17:



“Զճշմարտութիւնն սիրողաց արժան է ո՛չ սովորութեանն ծառայել որպէս տգէտ, եւ ո՛չ անիրաւութեամբ արդարանալ որպէս վիճաբան, այլ ՚ի հոգեւորական դրախտս յաստուածաշունչ գիրս շրջել մտօք եւ խնդրել ՚ի նոցանէ զպտուղն ճշմարիտ, եւ ապա ճաշակել,» Ընդհ. էր. 81:



ՅՈՒՑԱԿ

ԳԼԽԱԻՈՐ ԻՄԱՍՏԻՑ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻՍ

Ազգաւ եւ լեզուաւ զանազան բազմութիւն ուղղափառ հաւատացելոց մի՞ են հաւատով՝ յուսով՝ սիրով՝ եւ շնորհիւ մկրտութեան	121
Անեղ՝ ըսելով սուրբ Հոգւոյն ի՞նչ կիմանամք	104
Անձանսիրութիւն մայր է անմիաբանեութեան	21
Անմիաբանութենէ աստածոյ շնորհքը եւ բարութիւնը կը հեռանայ	26
Անտեսանելի կըսվի՞ Քրիստոսական սուրբ Եկեղեցւոյն	126
Ապաշխարութեան խորհուրդը ի՞նչ է	345
Առանց խոհեմութեան խոսողը կամ՝ գրողը յետոյ ամոթով կըլլայ	12
Առաջին Արքեպիսկոպոսը սրբոյ ամբողջութեան Երուսաղէմի ո՞վ եղաւ	230

Առաքեալք ամենայն համահաւասար պաշտօնեայ Քրիստոսի՞ են . . .	216
Առաքեալք երկրորդաբար կըսվին հիմն եւ վէճ հաւատոյ սուրբ եկեղեցւոյ	194
Աստուածաբանից “ Արտաքոյ եկեղեց- ւոյ չի՞ք փրկութիւն, ըսած վճիռը սուրբ գրոց ո՞ր խօսքէն առնըված է, եւ ի՞նչպէս իմանալու է . . .	151
Ատելութեան կիրք ունեցողը ուղիղ դատումն չի կրնար ընել . . .	200:
Աւանդութիւն եկեղեցւոյ որ կըսեմք, սահմանը ի՞նչ է	253
Բարեխօս բառը սրբոց համար եկեղե- ցիս Հայոց ու՞րկէց է սորվէր . . .	432
Գայթակղութիւն ժողովրդոց յերեսաց հոգեւորականաց	15
Գլուխ առաքելոց անուանելը զսուրբ Պետրոս առաքեալը ու՞րկէց առնելով կը գրեն վարդապետք եկեղեցւոյ	226 . 233
Դրոշմը ի՞նչ է	307
Եկեղեցին Քրիստոսի է առաքելական	180
Եկեղեցին Քրիստոսի է ընդհանրական	174
Եկեղեցին Քրիստոսի է մի	158
Եկեղեցին Քրիստոսի է սուրբ	171
Եկեղեցւոյ խորհուրդը քանի՞ է, եւ Մկրտութիւնը ի՞նչ է	300

Երանեալ սուրբերը իրենց բարեխօսութեանը յուսացողներուն ձայնը ի՞նչպէս կը լսեն եւ կիմանան	443
Երանեալ սուրբերը յիշատակող եւ պատուող քրիստոնեայք ալ մասնակից եւ հաղորդ կըլլան անոնց փառացը եւ պատուոյն	450
Երանեալ սրբոց արքայութեան մէջ համարձակութիւննին եւ փառքերնին ճանչնալովնիս՝ հա՞րկ է պատուել անոնք	410
Երանեալ սրբոց յիշատակութիւնը Հայոց եկեղեցւոյն մէջ ՚ի սուրբ գրո՞ց է	407
Երանեալ սուրբք ի՞նչպէս բարեխօս կըսվին	421
Ընդհանրական եկեղեցին Քրիստոսի անսխալ է առաջնորդութեամբ սուրբ գրոց	148
Ընդհանրական եկեղեցին Քրիստոսի է անսխալ պարգեւօք շնորհաց Հոգւոյն սրբոյ	141
Թշնամիի լեզուէ ազատելու ւ համար արժա՞ն է բարեկամը ցաւցունել	5
Ի՞նչ էր Եւտիքէսի մոլորութիւնը	96
Ի՞նչ էր Մակեդոնի հերետիկոսութիւնը	79
Ինչ էր Նեստորի մոլորութիւնը	90 . 372

Ի՞նչ էր Սաբէլի հերետիկոսութիւնը	79
Ի՞նչպէս իմանալու է՝ որ երբեմն բո- լոր առաքեալքը մէկ տեղ կը կոչեմք հիմն հաստատութեան սրբոյ եկե- ղեցոյ, եւ երբեմն մասնաւորապէս այս կամ այն առաքեալը	184
Լատինացոց եկեղեցին Քաւարան ը- սելով տեղի մի կիմանայ . եկեղեցիս Հայոց ի՞նչ կիմանայ	399
Խորհրդածութիւն Մխիթարեան տետ- րակին վրայ	1
Կաթողիկէ եկեղեցոյ որդի եմ ըսելը, ի՞նչ ըսել է	198
Կալվինականք ինչու՞ անտեսանելի է կը- սեն եկեղեցին	136
Կապելոյ եւ արձակելոյ հոգեւոր իշ- խանութիւնը	218
Կապելոյ եւ արձակելոյ հոգեւոր իշխա- նութիւնը Քրիստոս ե՞րբ խոստացաւ առաքելոց, եւ ե՞րբ կատարեց իւր խոստումը	222, 347
Կատարեալ ըսելով սուրբ Հոգւոյն՝ ի՞նչ կիմանամք	108
Հաղորդութեան խորհուրդը ի՞նչ է	318
Հայոց ազգը այսօրուան օրս թէ՛ ըստ հոգւոյ եւ թէ՛ ըստ մարմնոյ մասնա-	

ւորապէս խեղճ չէ	67
Հայոց եկեղեցին ուրիշ ուղղափառ եկեղեցւոյ առաքելոց յաջորդները ի՞նչպէս կը ճանաչէ	208
Հայոց եկեղեցւոյն Սուրբ Աստուածը խաչեցարիւ երգելուն դիտումը	371
Հայոց եկեղեցւոյս բաղարջիւ եւ անապակ գինեաւ պատարագելուն վրայ Հայոց կաթողիկոսին Քահանայապետ ըսելը հի՞ն սովորութիւն է, թէ նոր	274
Հայոց ուղղափառ սուրբ եկեղեցւոյ հաւատքը՝ սխալական մէկ մարդու վրայ հաստատված չէ, այլ Աստուծոյ վրայ	33
Հայոց ուղղափառ սուրբ եկեղեցւոյս շքնդունած վարդապետութիւնները սուրբ գրոց հակառակ են	475
Հայոց սուրբ եկեղեցին երանութեան արժանի է	265
Հայոց սուրբ եկեղեցին Հոգւոյն սրբոյ համար՝ բղխումն ՚ի հօրէ եւ յորդւոյ շքնելուն պատճառը	116
Հայոց սուրբ եկեղեցւոյն դաւանութիւնը առ Հոգին սուրբ Աստուած	101
Հայոց սուրբ եկեղեցւոյն մէջէն գլխաւոր հերետիկոս մը կամ աղանդապետ	

մը ելած չէ	258, 281
Հայոց սուրբ եկեղեցւոյն վրայ ո՞ր ժամանակ հերետիկոսութիւն լսված է .	40
Հայր Միքայէլ շամշեանին Վահան հաւատոյ ձեռագիր մատեանը վասն ուղղափառութեան հայոց յօրինելը, եւ գողութեամբ յայտնուելով՝ դատաստանի ներքեւ իյնալը	267
Հանդէս համբերութեան ուղղափառ եկեղեցւոյն հայոց	284
Հօր աստուծոյ եւ Հոգւոյն սրբոյ պատկերը ու՞րկէց առնելով կը նկարագրեմք	470
Ձեռնադրութեան խորհուրդը ի՞նչ է	354
Մարգարէները ի՞նչպէս կըսվին Հիմն Քրիստոսի եկեղեցւոյն	182
Մի է տէր ըսելով՝ ի՞նչ պիտի իմանամք	159
Մի հաւատ ըսելով՝ ի՞նչ պիտի իմանամք	164
Մի մկրտութիւն ըսելով՝ ի՞նչ պիտի իմանամք	167
Մխիթարեան երեք պատուելիք յամի տեառն 1820, Սամաթիոյ սուրբ Գէորգ եկեղեցին գտնըվելնին, եւ ըրած խօսակցութիւննին	9
Մխիթարեանց ամենասխալ դատումներուն մէկը, թէ “Հայք”, եւայլն	30

Մխիթարեանց եւ գօլէջցւոց անմիա- բանութեան պատճառը * * *	20
Մխիթարեանց իրենց անունը աղտո- տելը * * * * *	3
Մխիթարեանց “Հայ՝ կաթողիկ՝ ա- մենը մէկ է, խտրութիւն չի կայ,” ըսելը * * * * *	8
Մկրտութիւնը կրկնելի՞ խորհուրդ է	305
Մուրատեան եւ ռաֆայելեան դըպ- րոցաց դիտումը Հայոց աշակերտաց վրայ * * * * *	3
Յիսուս Քրիստոս է բացարձակ եւ ա- մենիշխան գլուխ ամենայն եկեղեցւոյ	443
Յիսուսի Քրիստոսի ամենակարողու- թեանը վրայ * * * * *	323
Յիսուսի Քրիստոսի իւր հրաշագործու- թեան սկզբնաւորութիւնը ամենօրհ- նեալ սուրբ Աստուածածնի բարեխօ- սութեամբը * * * * *	436
Յիսուսի Քրիստոսի մարդեղութեանը վրայ հայոց ունեցած ուղղափառ հաւատքը * * * * *	86
Յիսուսի Քրիստոսի մի միայն բարե- խօսութիւնը առ Հայր Աստուած՝ ի՞նչ մտօք իմանալու է * * *	438
Յունաց եւ Լատինացւոց եկեղեցիք	

- Ի՞նչ պատճառաւ Քրիստոսի ծնունդը դեկտեմբերի 25, եւ Մկրտութիւնը յունվարի 6, կը կատարեն 294
- Ներելի մեղօք եւ կամ ապաշխարանաց ներքեւ մեռնողները ի՞նչպէս թողութիւն կը գտնան * * * 388
- Ներումն կը գտնա՞յ այն անձը, որ իւր ուղղափառ եկեղեցիէն զատված է 205
- Ննջեցելոց հոգւոց համար եկեղեցիս հայոց ի՞նչ ճանաչումն ունի * * 385
- Նովատեան հերետիկոսաց աղանդը * 352
- Ո՞ր եւ իցէ աստիճանի մէջ գտնւված մարդ մը ինքնին կրնա՞յ սխալիլ * 6
- Ուղղափառ ազգի մը եկեղեցւոյ մեծ մասէն՝ որ է հասարակութիւնը, աստուածաբանական գիտութեան եզերքներով յատուկ խոստովանութիւն հաւատոյ կը պահանջուի՞ * * * 278
- Պակասութիւն աստուածապարգեւ սիրոյն յատելութենէ եւ ՚ի խոռվութենէ կըլլայ * * * * * 23
- Պատկեր ձեռագործ կամ ձուլածոյ Աստուած ի՞նչ մտօք կարգիլէ * 457
- Պատկեր ձեռագործ կամ ձուլածոյ Աստուած ի՞նչպէս հրաման կուտայ շինել * * * * * 460

Պատկերք սրբոց ի՞նչ կը նշանակեն, եւ ի՞նչ մտօք կը յարգեմք	455
Պետրոս եւ Պօղոս առաքեալք ու՞ր նա- հատակեցան	245
Պսակի խորհուրդը ի՞նչ է	357
Սիրոյ պտուղները ի՞նչ է	24
Սկիզբն եւ առաջին հիմն հաւատոյ քրիստոնէութեան	75
Սուրբ գրոց մէջ Երէց բառով՝ հոգե- ւորականաց ո՞ր աստիճանը իմանալու է	210
Սուրբ Հաղորդութեան խորհրդոյն գոյ- ափոխութեանը հակառակողներուն դէմ	330
Սրբոյն Պետրոսի առաքելոյն զլիսաւո- րութեան պատիւը միւս առաքեալ- ներուն վրայ զատաբար գերագոյն իշ- խանութիւն մը կրնա՞յ ցուցնել	236
Վերջին բառը՝ որ եօթներորդ խորհրդ- ոյն վրայ դրվելով, վերջին օծումն ըս- վեր է, ի՞նչպէս պէտք է հասկըցուիլ	370
Վերջին օծման իւղի զանցառութիւնը Հայոց եկեղեցւոյս, եւ թէ ի՞նչպէս երբեմն գործածութիւն եղեր է	364
Վերջին օծման խորհուրդը ի՞նչ է	358
Վերջին օծման հեռաւոր եւ մերձա- ւոր նիւթերը որո՞նք են	360

- Տիեզերական երեք սուրբ ժողովոց մէջ
 Հայոց հայրապետները որո՞նք են * 42
- Քաղկեդոնի ժողովը որո՞յ համար էր * 51
- Քաղկեդոնի ժողովոյն մէջ Հայոց հայ-
 րապետներէն ո՞վ կար * * * * 44
- Քրիստոսական սուրբ եկեղեցւոյն ճըշ-
 մարտութիւնը * * * * 70
- Քրիստոսի ծննդեան տօնը յունվարի
 վեցին ընելը, եւ ՚ի նոյն օրը Մկրտու-
 թեան սուրբ խորհուրդը կատարե-
 լը, Հայոց եկեղեցին ու՞սկէց է սոր-
 վէր * * * * 288
- Քրիստոսի միայն Պետրոս առաքելոյն
 “արածեա՛ զոչխարս կամ զգառինս
 իմ”, ըսելը՝ ի՞նչ դիտմամբ էր * 239